





ԱՉԳԵԼԻՆՆՈՒԹԻՒՆ  
ՏՈՂՄԻՆ ՅԱԲԵԹԵԱՆ

3047. 925  
Յօրինեալ 'ի Մովսիսէ Խորենացւոյ  
Յեռամեծ Վարդապետէ, և Յող-  
նէրատս ՔերթողաՏօրէ . 'ի խնդ-  
րոյ Պաշաղատաւարտի Սա-  
հակայ Բազրատունւոյ :

Տղտղտեցեալ էրի-տերութի Ս-րդ-ի վար-  
դապետ և Արտեղի-խորտ կր-տանդը  
նա-դըլեց-ոյ : Ըստ Ինչոյ Տեղանէ-  
Չեղկաւոյն Սեղբ-եան . -- 'ի լի-  
նէլ յիշտ-տի բարի ան-ման' Հ-մանն  
Ս-րդ-ի Յ-ր-մի Գ-եր-դ-տի-ն Իշ-  
խ-նի 'ի Ք-ն հ-մ-դ-ցեալ :

Ի Հայրապետութի Սիյ Էջմիածնի .  
Տն Մինասայ Ախեղցոյ Հայոց  
Կաթուղիկոսի :

Յ-Դ Տն . 1752 . 'ի Մ-յի-տ . 12 :



273

Ի Վ Է Ն Է Տ Ի Կ .  
'ի Տպարանի Անտոնի Պառթօլի .  
Հր-մ-ն-ս Մեծ-տ-ր-ոյ :



Ատ-իւ Չըտուի՝ Տ-հիւ Քըտը.  
Ատ-իւ Ատ-իւ, Ո-տ-իւ Շ-իւ:

Ա ընթերցանեք Բարեկէտք :


 Բարտ աւանդեն լեալ Սոկրատայ, և Սենեքայի առ ուսումնականս ասացեալ գոյթէ գարտ է իմաստն-վարժելոցն գոր-դել նաև յանցելոց գործաբար-բէնց վերծնա-նէ ս-ի յասորանսիւլըր-դէն : Վնդի՛ եթէ տեսակք և յիշատակք վաղնջականաց իրաց, և իրակաթնց ներ յիշողականութե՛ն նոցին տպաւորիցին, բաց ՚ի զն՝ քանագէտս գործելոյ, ներգործէ նաև ՚ի նս՝ զմարթացումն կանոնաւորելոյ բարոյականարար զկեանս, և ճողոպրելոյ զինքեանս ՚ի ներհակ զխառնածոց վերապատասնցելոյ . քանզի յանցելոյ ասենք Ես-ի-ս-րէիլ գիտունք - գունի սանկ-վոց Ի-ռ-հ-ո-ր-դ-է : Ուստի զմեծէն վիպկ պատմարանն զԱղէքսանդրաւ . թէ տիւր յաժարանցս ընկալնոյր նա զնորհաբոյ յախոցանէ, որք վաղեմաագունից էին պատմութենց գիտակք, քան ՚ի ճառմարան Ֆիլոսոֆոսից՝ որք էին զանազան իմաստից գտակք : Քանզի թէև զպերճաչուքս արդիւնաւորեցան ՚ի ճընունն զգիտաս զերասանքաւ զովեսսից՝ յագունք ՚ի Կորովմիտ հանճարաւ

նակաց, որք զերևելի գործ ինչ զօրե  
 ցին հաստել մինչ կելինն 'ի կենի յայս  
 միկ: Բայց և ոչ սակաւ ներբողենից  
 համարժանք դտանին և ը իմ վարկման՝  
 նաև այնք բնաւք քաջաջանք, որք ըս  
 նացին զերազանց ոճիւ իմս մատենա  
 գրել զանցս վաղեմնականս ճշգրտա  
 պէս, զորս եթէ չգրիցէինն, անհետա  
 ցեալք լինէին ամենևին հնուծք բազ  
 մանցից ժամանակաց՝ ոպ զայլ անծիւ  
 չգրեցեալս: Եւ աստուտ է, որ բա  
 ջիմաստ Հայրն մեր Մովսէս Խորե  
 նացի, որոյ և Պատմագիր է. 'ի Պրակն  
 2. Աւարնոյ հատորին, հակեցուցա  
 նէ զբան իւր 'ի պարսաւուսն իմաստա  
 տեաց բարուց մերայնոց, և 'ի բարե  
 բանուսն քաղաքացւոց, Հելլենաց  
 ւոց, Ասորւոց, և Եգիպտացւոց՝ մինչ  
 ասէ: Արդուհ գ-լ-ու-ն-է արժ-ն-ի- ս-յն-  
 'ի-ն-գ-ու-ր-ոց-ից-էն, որս գրով և գ-տ-  
 մ-ութ շի-ր-է-անցն ի-ր-գ-է-ցին հ-տ-տ-ե-լ  
 շի-մ-ն-ի-ս, և շի-ր-թ-ի-մ-տ-ութե-ան, և  
 շի-մ-ն-ի-ի-ր-տ-ան-լի-ր- արժ-ն-ոց-ոցին 'ի  
 լի-ր- և 'ի գ-տ-մ-ութի-ս. և այլն:

Եւ մեծաւ իրաւամբ համարիմ զայս  
 ասել նա. վասն զի եթէ հեղգացեալք  
 իցէին նաև սորա հանգոյն մերայնոց՝  
 արձանագրել 'ի մատենի զանծիւ մե  
 ծագործութիս իւրեանց, զոր իրակե  
 ցին, զայնքան երջանկութիս՝ զոր վայե  
 լեցին, և զտարբարս ձախորդութիս՝

զոր երբեմն կրկնցին . արդարեւ չէր հնար  
 մը զ գիտել զիր ինչ յայնքան նշանաւոր  
 գործոց , որովհետեւ 'ի խորս ունայն  
 ութն սուզեալք լինէին աննշմարարար  
 իրր գնդեալս երբեք : Ան զի' այնքան  
 յաղթանակումք , հնարագործութիք ,  
 և հանդիսավեհութիք Մակեդոնա  
 ցոյն Ալեքսանդրու' ուր արդեօք ե  
 րուկին , եթէ գանդադիցէր վիտադրել  
 Գովթինոս պատմիչն իւր զայնչանէ :  
 Մի' թէ կարելի իցէր յղիանալ Յու  
 նաց , Լադինայւոց , Պարսից , և այ  
 լոց' քաց 'ի մէջ , այնքան հազարաւոր  
 հատորիք Պատմադրութեց , եթէ չի  
 յէինն 'ի զանազան դարս ծաղկեալք  
 բազմազան պատմաբանք հեղինակա  
 ւորք : Եւ եթէ չէր ծնեալ աշխարհի  
 Յովսէփոս Երրայեցին , ո' իշխեր ա  
 սել զստոյգ ինն զհնութեցն հրեից ,  
 նաև զթշուառութեց նոցին Տրտարի  
 և Աեսպիանոսի' իրակեցեալ : Եւ 'ի  
 վեր քան զքնուս , եթէ զբանջի' ի  
 յերևալ 'իխալն Նեղոսի կայսաասն  
 սին Մովսէս , ս'վ էր այն' որ ճառեր  
 մը յաշնէ : Լալ զսակզճումն աշխարհի  
 միով ակնարկութի Ածային կամաց .  
 նաև զպատրի'ն Նախկին մարդոյն 'ի  
 սանյէ , զԱրտաքսին 'ի գրախառն , ըզ  
 մահն Աբելի , զվերացումն Ենովքայ ,  
 զգինումն Տապանին , զյորդուին Զոհե  
 դեղին , զբաժանումն Լեզուաց , և զայլ

այսպիսիս բազումս : Եւ հակիմ յատ  
 կարար և ս'ի խօսիլ առ մերայինս . ո'  
 թերև կարէր գիտել 'ի մնջ մասնա  
 ւոր պարագայիւք՝ զուստն , և զզիարդն  
 կացութե՛ն Արիխաւորչին հողոց մե  
 րոց , և Հօրն հաւատոց Սէ՛յն Գրիգո  
 րի , և թէ զնց առնուցոյր զաշխատանօր  
 ճշմարտապատուին Ագաթանդեղոս :  
 Սոյնդունիկ , վարկեմ թէ համբանայաք  
 մք 'ի պատասխանել հարցողաց այլոց՝  
 լինիլ Ազգի մեր յառաջացեալ 'ի Զարե  
 թական գաւազանաց , 'ի Թորդոմական  
 սերնդոց , 'ի Հայկածնունդ տոհմոց ,  
 և 'ի Մարամեան շառաւղաց : նաև ու  
 նիլ զկարգ պսակողարգ Թադաւորաց ,  
 Ղիաւառ նշանաւոր , զԼեզու հնագոյն ,  
 զԱրիութի կորովի , և զՀամբաւ պայ  
 ծառափայլ , և թէ շաղաչեցեր Բարձրա  
 գունից գովութեց արժանաւոր Սա  
 հակ Բազրատունի իշխանն մեր՝ առ Ե  
 առմեծն Մովսէս Խորենացի՝ զոյս  
 ցանէ բնաւից վիպաբանել մի լը միտջէ :  
 Եւ այսբանեօք առ բերեցելովք բա  
 նիւք՝ ցուցանել կամիմ բանասէր ան  
 ձանց զօգտակարութին Պատմագրա  
 կան մատնից և արձանագրութեանց  
 անցից վաղնջականաց , 'ի ձեռն որոց  
 վերատեղծանին չբացեալ ներդործու  
 թիք , կենդաննան մահացեալ վէպք ,  
 սաղարթանան իրամբայել յիշատակք ,  
 ներկայանան անցեալ ժամանակք , պայ

Ծառանան ընթերցասիրաց միտք, և  
 ծնանին զանազան օգտակարութիւնք:  
 Եւ աստուտ է, որ տակաւին անգա  
 դար շարադրի տեսանեմք ՚ի մէջ այ  
 լոց ազգաց՝ զՌեծամեծ Հատորս պէս  
 պիտեաց պատմութեանց նոր ՚ի նորոյ,  
 թէ և ունիցինն զհազարաւորս: Եւ այս  
 այնքան յաճախ, մինչ զի ո՞վ զխտողաց  
 քաջայայտ է՝ սպառեալ զպատմելի  
 նիւթս խրայնացն, գրեն նաև տարա  
 ծարար զբազմադիմի գործոց և զխո  
 ռածոց այլոց գաւառաց, և ազգաց  
 աշխարհի: Ըստ որում և մի ոմն յայս  
 պիտեաց ընտիր հեղինակաց Դեկտաց  
 ւոց, որ արդէն աշխատասիրէ ՚ի մատ  
 նագրել զլիալիր հատորս լարատարած  
 պատմութեց, երոյց ինձ զոմանս մե  
 ծամեծ Վատեանս հնադունից պատմա  
 գրութից ՚ի Լազին լեզու շարադրեալ,  
 ՚ի յորս գրեալք կային վս մեր սքանչա  
 նալի պատմարանութիբ ոմանք, զորս ոչ  
 երբէք լուեալ էր իմ յումեքէ, և ոչ ևս  
 ընթերցել ՚ի գիրս յայտքան ժամանկ  
 Բայց գիտեմ իսկ ամենեին ՚ի զուրաշ  
 խատիլ ինձ ՚ի գրել զայստսիկ. որովհե  
 տև գիտակ եմ գտանիլ արդէն յԱզգի  
 մերում աւելի բն զբոսան Պատմագիրս:  
 Եւ լէ Բն--ին Ժոյն Ինչ ՚ի Բերոց, Կ--ճ յոյ  
 լոց շոր--դրեցեալ լինելն նոյին, և Կ--ճ ըն  
 տեր, և ոչ ընտեր Գ--նելն. այլ ցաւիմ  
 միայն առ այս, զի գերիս միայն տեսա

նեմ յայնքանեաց տպագրեցեալ գոլ  
 մինչև ցայժմ. իսկ զմնացելոցն կարեմ  
 ասել՝ ուր և տեսեալ եմ բաղմիցս, թա  
 ղեալք լինել ի խորշս գրգատանց վանո  
 րեից ի մէջ փոշեաց: Եւ պատճառն ուր  
 յայտ է բանագիտաց, է սեփհական  
 արտն անուսումնասիրու թէ մերոյ, որ  
 ոչ թողլարէ մը փորձառել գրադո  
 րագոյն ճաշակն պատմագրական մա  
 տենից, ուր նաև սլոց գրեանց: Եւ  
 գիտեմ և սհատատապէս, զի թէպէտ  
 յԱզգէ մերմէ ոչ պակասին միշտ ու  
 սումնական և գիտուն անձինք և կեղե  
 ցականաց՝ և աշխարհականաց, որոց  
 պատկան էր պարտապիլ ըստ կարեաց  
 յայսախի գործ ինչ, մինչ ճանաչեն  
 ունիլ այժմ Ազգի մերոյ՝ զպակասուի  
 պէսպիսեանց սխառնոր գրեանց: Բայց  
 սրանչանամ յոյժ, ոչ գիտելով թէ յոր  
 մէ ոգւոյ թելը գրին ի բաց թողուլ  
 զարդիւնական աշխատասիրու թին յա  
 ռաջ անելոյ զողտաւէս գրեանս, յո  
 րոց օգտին բաղումք, և յայժառանայ  
 բոլոր Ազգ մեր. և բաղձան շարչարել  
 զինքեանս ի շարագրել միայն զգրեանս  
 վիճաբանութե և կռուոյ, իրք թէ մին  
 չև ցայս վայր գրեցեալքն յոմանց՝ չի  
 ցէին բաւական՝ ի լինիլ լուցիկ ասելու  
 թէ և երկպառակութե: Թղենին ա  
 սացեալ գոլ ընթեռնումք բարտոնա  
 պէս ցծառս, որք խնդրէին դինքն օծա

նել թագաւոր ինքեանց . ( դատ . 9 . 11 )  
 Չէ՛րդ Բողէւլ շաւղբո-՛ւթի՛ թ՛ , և շքեբ-  
 բարո-՛ւթի՛ թ՛ , և էրնայցէ՛ իշխան լինիլ  
 ի-յոթից : Սոյնգումակ , զհարդէ և մեզ  
 սիրելիք իմ , ՚ի բաց լելէ է՛ի-է ի-բէ՛ճ , զշա-  
 բադբունն քաղցրագունից զրեանց ,  
 յորս փառաւորի ւնձ՝ և հեշտանան մար-  
 դիկք , և երթայցեմք աշխատիլ առ ՚ի  
 լինիլ հեղինակ կոստարանութնց , ո-  
 բովք ուննջ օգտեցան , որք այնպէսն զք  
 նացին . Աս զի՛ ո՛ կարէ արդեօք յազգի  
 մերում ցուցանել ումեք՝ արդէն շա-  
 բադրեալ դող բուն իսկ լեզուաւ մե-  
 ղով , և յատուկ ՚ի մերոց հեղինակաց՝  
 զԱճարանական դրեանս լիակատար ,  
 զՓիլիսոսիայական մատեանս նրբւ՛ճառ ,  
 և զՄեկնաբանութն հատորս սք դրոց  
 լայնատարր : Ո՛ կարէ թերևս հաւաս-  
 տել՝ լինիլ նաև ՚ի մեզ , ոնց և ենն յայլ  
 ազգ Քրիստոնեայս՝ անհամար դրեանք  
 յոգնազանից մակացութնց , և հիա-  
 նալեաց դիտութնց , և ւնձ կերպ աւ-  
 ուեստից , խրատուց , կրթութնց , բա-  
 բոյականութնց , աղօթից , պատմագր-  
 բութնց , և այլոց նիւթոց , զորոց ա-  
 նուանս միայն ՚ի շա-՛ճի՛ր գրել՝ վարկեմ  
 թէ ճաշոյն հանդերձ յայսմաւորաւ  
 մերով ռչ բաւականանայ : Ընդ է՛ր է  
 մեզ ուրեմն ոչ երկասիրել յալ՛գս այս  
 պիսեաց՝ տունցելովքն ՚ի մեզ քանքա-  
 բօք , և մանաւանդ ՚ի փուշ զօշաբա-

զու թե հեղձուցանել զսերմանեցեալն  
 'ի մեզ պահ ՏԵ . և որ վատթարա-  
 դոյն է՝ զերկասիրոզսն ու զխտեմ որ-  
 պիսի Ամենասուս բարութանօք թշնա  
 մանել, և վատարանել:

Եւ լաւագոյն համարիմ թողուլ զայս  
 պիսի զառանցական բազաղմունս ո-  
 մանց՝ յուղիղ Ենթադատութե շրջա-  
 հայեցից, առ 'ի կշսողապէս մտածել  
 վս շտալոյ այժմ ընթերցասիրացդ ըզ  
 ձանձրոյթ: Եւ դառնամ ծանուցանել  
 խուն ինչ զապագրութե Պատմագրու  
 թես, որոյ ներկայ տպագրումն եզե  
 աշխատութի անարժանութե մերոյ,  
 վս ինկրոյ և աղաչանաց Չրնագագարմ  
 Յօհաննէս Չէլիգոյն Սեպրոսեան: Որ  
 յազագս մեծի սիրոյն, զոր ունէր, և  
 սնի տակաւին առ մեծագատի՝ Ս-հ-դ  
 ուղոյն իւր. քի առ հանդուցեալ Հո-  
 վաւենց Մահակսի Զարութե Բարե-  
 պաշտօն Իշխանն, կամեցաւ նսիրել և  
 արձանագրել զգիրքս այս 'ի ձեռն ար-  
 պագրել տալոյ, իրր արձան սիրոյ բու-  
 ըհամբաւ անուան նսրին. ուն թէ նոյն  
 ինքն հանդուցեալ Հովաւենց Մահ-  
 ակսի Զարութե իցէր տպագրել տու-  
 օղն: Բայց վայելչապէս սրտասեցաւ  
 այտպէս անօրինիցն յոյ, զի ուն յայն-  
 ժամ անուամբ Մահակայ Բագրատու  
 նւոյ Բարձրագատի Իշխանի Հայոց  
 շարագրելու ունա՝ 'ի Մոսկովաէ իւր

րենացւոյ, ուն յայտ է ՚ի յառաջարանու-  
թն նորին: Սոյնգունակ և այժմ ար-  
պագրեցաւ յինէն անուամբ վերոգրե-  
ցեալ Գերասիմափի իշխանին հանդու-  
ցելոյ ՚ի Քրիստոս . զհոգի որոյ Տէր  
լուսաւորեցէ, և Շքեղազարդ որդ-  
ւոց նորին՝ զերջանկափառ կեանս պար-  
զեացէ:

Սերջապէս յայտ լիցի նաև այս, զի  
կամեցաք ՚ի միասին տպել և զհամա-  
ռօտ Աշխարհացոյցն՝ արարեալ նոյնոյ  
Երանելոյ Հօր մերոյ Սովսիսի Խո-  
րենացւոյ . քանզի՝ միականի լինիլ ա-  
սեն պատմագրութիւն՝ թարց ժամանա-  
կագրութն և աշխարհագրութն: Ե-  
յաղագս չունելոյ մեր աստ զձեռագիր  
գաղափար, միայն ՚ի Յ-Ն-Թէլ-Ե-Մ-Տ ար-  
պագրեցելոյն օրինակեցաք . և ոչ իշխե-  
ցաք նաև ՚ի բժախնդրացն ահէ՝ փոխել  
զոմանս նշանաւոր սխալանս, զորս ՚ի  
ձեռագրաց ուղղադրեալ տեսաք ՚ի ար-  
պագրեցեալն ՅԻՒԷԼԻԵ-Մ: Այլ ե-  
րաք զայնս ուրոյն, ՚ի վերջն մերոյ տպա-  
գրեցելոյն . թուագրով համանշանել  
ղերեան, և զառղն և նոսր գրով ևս ցու-  
ցեալ զսրբագրեցեալ գիրն, բառն, և  
բանն, առ ՚ի գիրաւ ճանաչիլ յընթեր-  
ցասիրաց: Եւ որքան առ սխալանս  
տպագրութեան, անմեղադիր առնել  
զմեզ աղաչեմ . զի սակս գոյոյն իմ  
միայնակ, վրիպէին յաչացս՝ թէև ըլ

գուշանայաք, որպէս ասացեալ եմ և  
 յայլ գրեանս տպագրեցեալ յինէն :  
 Եւ ոչ կամեցաք բառնալ նաև զբաղ-  
 մութիւն աւելորդ բժանշանից, որք  
 եղեալք էին ՚ի վր բառից բազմաց, նոյն  
 պէս զստորակէտս, և զմիջակէտս, և  
 մանաւանդ ՚ի բազում ուրեք զԳլխա-  
 գիրս, վն վերոյիշեցելոյ դիտման : Եւ  
 որքան առ թիւն՝ ծանիցէ բանասեր ըն-  
 թերցողն. զի և մեզ բարւօք տեսանե-  
 ցաւ սակաւաւոր թուով տպագրել,  
 ըստ որում և այսպէս լինիլ պատահել  
 էր նախկին տպագրեցելոյն ՚ի մեծէ  
 Վանանդեցւոյ : Եւ զայս արարեալ  
 մեր ՚ի փառս Աստուծոյ, և ՚ի յօգուտ  
 Ազգի մերոյ .

որոյ միշտ մնամ պտրնտկան  
 ծառայ

Ստրտիւ Վրդիւ կոտանդնոցւոյն .  
 և Արտիւիւրոց կետրոյ Գծի :



Մ-Է-Է- Խորենացի Խաչատր Բագր-  
 տանայ՝ Ինքուլ:



ՐՆՐՄՊՐՈՒ ԽՐ.

դացմունս Աճայնոցն՝ ի բերդ  
 շնորհացն, և դանդուլ հոգ  
 ւոյն ի վի՛րքոյ խնայուա-

ծոցդ զշարժմունս՝ ծանկայ ի ձեռն զև  
 զէջիկ խնդրոյս, առաջ քան զժարմը  
 նոյդ, զհոգւոյդ ընկալեալ զծանո-  
 թութի. որ և սիրելի խնոց խակ ա-  
 խորժացս է, առաւել ևս սովորու-  
 թեցս: Աս որոյ, և ոչ միայն դովել  
 արժան է զբեղ. այլ և ի վի՛րքո աղօ-  
 թել՝ առ ի լինիլ բեղ միշտ այսպիսի:  
 Չի եթէ վսբանին. Մեք ( ուն ասի )  
 Պատկեր Այ: Եւ դարձեալ առաքի-  
 նութի բանականին, է խոհականու-  
 թի, և քո յայտոսիկ անհատ ցանկու-  
 թի. ապա ուրեմն զկեղեցիկ մտածու-  
 թեամբ զխոհականութեդ քո՝ վառ,  
 և բորբոք պահելով զկայծակն, զար-  
 դարեսս զբանն, որով մնաս առ ի լինիլն

պատկեր . 'ի ձեռն որոյ և զայսորիկ  
 զՍկզբնատիպն ասիս ուրախացուցա-  
 նել . գեղեցիկ , և չափաւոր մալուծք  
 յայստիկ մալեալ և զակատեալ : Աս-  
 որով տեսանեմք և զայս . զի եթէ ,  
 որք յառաջ քան զմեզ և կամ առ մօր  
 եղևն Հարուստք , և իշխանք աշխար-  
 հիս Հայոց , ո՛չ ընդ ձեռամբ անկե-  
 լոց խրեանց արդեօք գտեցելոց իմաս-  
 նոց , զայսպիսեացս հրամայեցին կար-  
 գել զիշխատակս բանից , և ո՛չ յարտա-  
 բուստ ուստեք այսոցիկ 'ի ներքս ա-  
 ծել խորհեցան , զժամդակուծիւնս  
 իմաստից , և քեզ այսպիսի այժմ ե-  
 ղեալ ծանեաք : Այս յայտ է ու-  
 բեմն ' թէ ամենեցուն քան զքեզ նա-  
 խադունիցն ճանաչիս վեհադոյն , և  
 բարձրադունից արժանաւոր գովու-  
 թնց , և յայսպիսիս պատկանաւոր զը-  
 նիլ յարձանադրութիւս բանից : Յա-  
 զագս որոյ , հեշտարար ընկալեալ ըզ-  
 րս ինդիրդ՝ աշխատասիրնցայց ածել  
 'ի կատարումն , յանմահ 'ի յիշատակ  
 թողուլ զայս քեզ . և որ զկնի բոյ-  
 ինքն են գալոց ազգք : Չի և աղղի և ս-  
 նախնահանի , և քաջ՝ և արգասաւոր .  
 ո՛չ միայն 'ի բանս և 'ի պիտանաւոր իտ  
 հակամութիւս . այլ և 'ի մեծամեծս և  
 ի բազում գործս արժանափառս՝ զորս  
 յիշատակեսցուք 'ի կարգի պատմու-  
 թնս , յորժամ զորդի 'ի հօրէ ծնըն-


գաբանելով, ազգարանիցեմք զբովան  
դակն : Իսկ զՀայաստանեայցս նա  
խարարութիս զամենեցուն զճւտն :

և ըզ զհ'արդն՝ յայնելով համա  
ստ, որպէս հաւաստի . ՚ի

Յունականս ոմանս կայ  
պատմութիս :







Ն Ա Տ Ո Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

Պրակ 1.

Թե՛ ընդէ՛ր լաւն զի 'ի Քաղղէացոց' և  
, Ասորէսփանէաց Տափէնից, ցանկաբոյն  
էն հր իրս . և 'ի Յամախանէն իս  
հցոս հս ցոցանէլ:



Ի ՐՆԴ ԱՅՍ

Սի՛ սք Չարմասցի, և  
Թէ բաղում աղղաց  
լեալ Մատենագիրք .  
ոնք ամենեցուն և յայտ  
նի, մանաւանդ Պար  
սից, և Քաղղէացոց . յորս առաւել  
աղղիս մերոյ գտանին բաղում ինչ ի  
րաց յիշատակք . մեք զՅունացն միայն  
յիշեցաք զՊատմագիրս, և անդուստ

դայտարարութի մերոյ աղգաբանու-  
 թե՛ս՝ իստացաք յանդիման կացու-  
 ցանել : Քանզի, ո՛չ Թազաւորք Յու-  
 նաց միայն, ո՛նչ աշխարհակալութիւն  
 այլ և որ ինչ իմաստութեան ջանք՝ փոյթ  
 յանձին կալան, աւանդել Յունաց յետ  
 զառանին իւրեանց յարմարեալ իրս :  
 Ո՛նչ և Պտօղոմէոսն, որ և Եղբայր ա-  
 սերն, պէտարարեալ զամ աղգաց ըզ  
 Մատեանս և զսէտս՝ ի Յոյն լեզու  
 փոխարկեալ : Բայց մի՛որ աստանօր-  
 անուսումն զմեզ համարեալ բամբասի-  
 ցե՛ իբր զանվարժս ոմանս և զսոգէտս՝  
 ո՛նչ թէ Եգիպտացւոց լեալ Թազա-  
 ւոր . մեք այժմ զնա Յունաց գրեցաք :  
 Քանզի նու՛ճեալ նո՛ և զՅոյնս՝ ընդ  
 իբով ձեռամբ՝ անու՛անեցաւ Աղեկ-  
 սանդրի և Յունաց Թազաւոր . ո՛նչ և  
 ո՛չ մի զօք ի Պտօղոմեանցն . կամ յայ  
 լոցն տիրելոյ Եգիպտացւոցն, անու՛ա-  
 նեցաւ որ երբեք : որ և վն՛ առաւել  
 Յունասէր բարս ունելոյ՝ ի Յոյն լե-  
 զու՝ զիւր աշխատութին ժողովեաց :  
 Է և այլ բազում այսպիսի ինչ պատ-  
 ճառ՝ վասն ասելոյն մեր զնա Յունաց  
 Թազաւոր : այլ վն՛ համարօտելոյ մեզ  
 զճառս՝ բաւական լիցի ասացեալս վն  
 նո՛ : Այլ և բազում Արք անու՛անիք՝  
 և իմաստութե՛ պարապելալք ի Յու-  
 նաց աշխարհէն հողացան, ո՛չ միայն  
 զղիբ Ղիւ՛անաց այլոց աղգաց Թազաւ

ւորաց՝ և զՄեհենից լեզու ՚ի Յոյն  
 բան. ուն դասները դոյն, որ և զԲե-  
 րիսս ոմն յայս յորդորեաց. Այր Քաղ  
 դէպոյի՝ և վարժ ամ իմաստութիւն : Աւ  
 և զմեծամեծս՝ և զզամանաբոյ արժա-  
 նաւորս յարուեստից. և որքեք որքեք  
 գանձ աշխատութիւն. հաւաքել ժողովոցն  
 ՚ի Յոյն լեզու : ուն, զայր՝ առ քե : և ըզ  
 զայ, և ըզ թոյ, առ փեր : և ըզ կենն.  
 առ ե : և ըզ շայ, առ սե : ( Այսինքն,  
 Աւելի՛ ք-չէ-ց-ոյ՝ -- խի՛ Յ-ն-ոյ :  
 Զէ՛ և թի՛ ք-չէ-ց-ոյ՝ -- փի՛ Յ-  
 ն-ոյ : Այն՛ ք-չէ-ց-ոյ՝ -- Է-Ր-Ե-Ր՝ Ե  
 Յ-ն-ոյ : Ան՛ ք-չէ-ց-ոյ՝ -- Սի՛ Է-  
 ՚ն Յ-ն-ոյ : ) Եւ յողովեալ զայսասիկ  
 արանց՝ զորոց և մեք զանուանան հա-  
 ւաստի գիտեմք նըսիրեցին ՚ի փաստ  
 Հեղինացոց աշխարհին : Եւ գովելիք  
 են՝ ուն իմաստասիրեցեալքն յազազս  
 ջանին և իմաստութենն՝ առ ՚ի յայլոցն  
 լինելոյ դասիք, առաւել ևս՝ որք ըն-  
 կալան՝ և պատուեցին զայսպիսի Գի-  
 տութեան իմաստից : Ասորոց՝ և զհոգոյիս  
 զՅոյնս, ոչ զանգաղիս, Մայր՝ կամ  
 ՚ի Կայեակ ասել իմաստից. և վն Յու-  
 նացն զբուցարանս՝ զակնարկութի մե-  
 րոց պիտոյիցս առնելոյ՝ բաւական է  
 այսչափ :

## Պրակ 2.

Յարգելի սիրտերս բարաց. Աստուծոյն հետ թագաւորաց՝ և իշխանաց :



Ասիմ և ոչ զանխմաստասեր  
բարս՝ Առաջնայն մերոց  
Նախնեաց, առանց յիշատա  
կի բամբաստանաց թողուլ  
այլ և աստէն իսկ յիսկզբան մերոյ գոր  
ծառնու թէս, զվասն նոյ կշտամբու թէ  
յարմարել զբանս : Չի թէ՛ արդարեւ  
զսփու թէ արժանի այնք ՚ի թագաւո  
րաց իցեն. որք գրով և պատմութիւն  
զիւրեանցն կարգեցին հաստատել ըզ  
ժամանակս, և զգործս իմաստութե,  
և զբաշտութի իւրաքանչիւր՝ արձանա  
յուցին, ՚ի վէպս և ՚ի պատմութիւնս :  
Ըստ նոցանէ, և պարապեալքն այսպի  
սեաց ճգնութեց. Գիւանազիրք մա  
տենից. ներբողականաց ՚ի մենջ ար  
ժանի եզեն ասից : Ի ձեռն որոց,  
և մեր ընթեռնուին՝ զսո՛ր նոցանէ շա  
բածս բանից, ըստ աշխարհօրէն կար  
գաց, իմաստանանալ ասեմք, և քաղա  
քականս ուսանիլ կարգս : յորժ սք զայս  
պիսիս ընթերցասիրեմք իմաստութե  
ճառս և զրուցաարութիւնս, որք են  
Քաղզկացոց, և Չեւլենացոց, Ասո  
րեստանեայց՝ և Եզիարացոց : Առ այ  
սօքիւր, և փափագ իցեմք և սարդեօք՝


Իմաստութեան արանցն այնոցիկ, որք  
 զայսպիսի փոյթ յանձին կալան: Ապա  
 արեւն ամենեցուն մեզ յայանիէ՝ Թա  
 զաւորացն մերոց, և այլոց Առաջնոց,  
 առ'ի յիմաստն աղամարութի, և անկա  
 տարութի ոգւոյն բանականի: Չի թէ  
 պէտ, և եմք ամու փոքր. և թուով  
 յոյժ՝ ընդ փոքու սահմանեալ՝ և զօ  
 րութիւն տկար, և ընդ այլով՝ յոյժ ան  
 զամ նուաճեալ Թագաւորութի: Սա  
 կայն՝ բաղում գործք արութեան գտա  
 նին գործեալ և 'ի մերում աշխարհիս.  
 և արժանի գործոյ յիշատակի. զորոց  
 և ո՛չ մի որ 'ի նոցանէ պէտ յանձին կա  
 ռա մատենագրել: Արդ այնոցիկ՝ որք  
 և ո՛չ անձանց խորհեցան բարի առնել  
 և անուն յիշատակի աշխարհի թողալ.  
 զի՛արդեօք և մեղադրութի մեր՝ այն  
 պիտեացն 'ի ճահ սրտասիցէ. զևս մե  
 ծագոյնս 'ի նոցանէ պահանջել՝ և որ  
 ինչ հնադոյն քան զնս: Այլ ափցէ որ  
 արդեօք. վս ո՛չ լինելոյ Գիր, և Իւր  
 րութի 'ի ժամանակին. կամ վս պէտ  
 պէտ պատերազմացն, որ կուռ զմե  
 մեանց զինի անհետ 'ի վերայ գային.  
 Այլ ո՛չ արդարեւ՝ այսոցիւք կարծեցե  
 ալք լինին. քանզի՛ դառնին և միջոցք  
 լեալ պատերազմացն՝ և դիր Պարսից,  
 և Յունաց՝ որովք այժմ, զեւրոյց՝ և  
 գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց  
 առ անձնականութեց, և հանուրց հա

կատակութեց, և դաշանց այժմ առ  
 մեզ գտանին անբաւ դրուցաց մատե-  
 անք. մանաւանդ՝ որ սեփհական աղա-  
 տութէ Պայազատութիւն: Այլ ինձ  
 թուի՝ ունչ այժմ, և առ հինան Հայաս-  
 տանեայց, լեալ անսիրելութի իմաս-  
 տութե, և երգարանաց ջանաւորաց.  
 վն որոյ, աւելորդ է մեզ, և այլ յա-  
 զադս անբանից արանց՝ թուլանտաց  
 վայրենեաց ճառել: Բայց Է քո յոյժ  
 զարմացեալ եմ, ընդ մտացդ ծննդակա-  
 նութի. որ յիսկզբանց մերոց Ազգաց  
 մինչև ցայժմուսս միայն դատար՝ զայս-  
 պիաւոյ իրէ բաւան հարկանել. և մեզ  
 հայդ ինչոյս առաջի արկանել՝ երկար.  
 և շահաւոր դարձով զազդիս մերոյ կար-  
 դել զՊատմութի, ճշդի՝ զԹ.ազաւո-  
 րացն և զՆախարարականացն ազգաց  
 և տոհմից. թէ՛ ո՛վ յուժմէ. և, զինչ՝  
 իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ դարձեաց.  
 և ո՛վ որ ՚իցնզիցս որոշելոյ՝ ընտանի.  
 և մեր աղնի՛. և ո՛յք ումանց ե՛կք ըն-  
 տանացեալք, և մերազնացեալք: Աւ-  
 զգործս՝ և զժամանակս իւրաքանչիւր  
 դրով դրոշմել՝ ՚ի ժամանակէ անկարդ  
 Անբարտակին շինուածոյ՝ մինչև ցայժմ:  
 Գեղեցիկ զայս բեզ համարեալ ՚ի փառս՝  
 և անջան հաշտութի: Առ որ այսչափ  
 միայն ասացից: Մի թէ մատեան մերձ  
 կայցէ ինձ՝ ունչ ասէ Յօր. կամ զպրու-  
 թիք քոց Հայրենեաց. որովք նմանա

գոյնք արդեօք Եբրայեցւոցն Պատմա  
 դրաց. 'ի վերաւստ 'ի բեզ իջուցանեմ  
 անսխալ. կամ 'ի քէն' և այլոց սկսեալ  
 անդր 'ի վեր հանիցեմ, 'ի սկիզբն: Բայց  
 սակայն՝ սկսայց թէպէտ և զանի՛ մի-  
 այն. թէ և շնորհակալ որ մերոցս գը-  
 տանիցի լեալ աշխատութեց: Եւ ըսկ  
 սայց յորոց և այլքն. որք յեկեղեցւոջ,  
 և որք ըստ քի: Սւելորդ համարելով  
 զարտաքնոցն երկրորդէլ յազազս 'ի ըս-  
 կզբանն առասպելս: Բայց եթէ՛ ըզ-  
 կնիսն ժամանակ ինչ արդեօք, և զարսս  
 յայանիս. որում և Մծայլնքն 'ի ճահ  
 գայցնն պատմութիք բանից. մինչև 'ի  
 հարկէ երթեալ հասանիցեմք 'ի Հե-  
 թանոսականան զրուցակարգութիս.  
 սակայն և 'ի նոցանէ, զոր ինչ հաւաս-  
 տին կարծեմք առնուլ:

Պրակ 3.

Յուզո՛ւ ըն ոչ սին Արմայ. և այլոց  
 Նիւդեթոյն՝ հիւնեցան Այլ՝ ի  
 Պարմոյրոց:



Ազազս Արմատոյն հանուրց  
 մարդկութես. կամ թէ՛ հա-  
 ճոյ ումք թուեսցի սակէ  
 ծայրին. պարտ էր մեզ սա-  
 կաւ ինչ անցանել բանի՛. թէ ընդէ՛ր  
 հակառակ Հոգւոյն խորհել անմարտ

նեցան Աղբն ՚ի Պատմադրաց : զԲե  
 րիտա ասեմ, զբաղմալիպէն՝ և զԱբի  
 զենայ : կամ զնոյն ինքն զՆաւակա  
 ռուցէն՝ և զայլոց Նահապետացն : ոչ  
 միայն վնանուանց՝ և ժամանակաց, այլ  
 վն ոչ սկիզբն զառ ՚ի մենքն Հաւացն  
 կարդելոյ ազգի մարդկան : Բանզի ա  
 սէ վն նորա Աբիզենոս՝ հանգոյն այ  
 լոցն : այսպէս և զնա տմենախնամն Աճ  
 եցոյց հովի, և առաջնորդ ժողովոց  
 եանն : Յետ որոյ՝ ասէ Թադաւորեաց  
 Աշորոս շարս տասն . որք լինին ամբ  
 36000 . նոյնպէս և յաղագս Նոյի՝ այ  
 լով անուամբ վարին՝ և ժամանակօր  
 անբախիք . Թէպէտ և վն զբոյն սաստ  
 կու Թն՝ և ապականու Թն՝ երկրի՝ զոյգ  
 հոգևորացն բարբառին բանից : Նոյն  
 դունակ՝ և զԹն Նահապետացն՝ տասն  
 Բսիսու Թրնու հանգերն Թուեն : որ  
 ոչ միայն ըստ բոլորման առ ՚ի յարե  
 զակնէ . չորեք ժամանակեան ը մեզ  
 լինելոյ տարւոյն հետանայ յամաց մե  
 բոյնացն , մանաւանդ՝ Թէ և յԱճայ  
 նացն : այլ և ոչ ոյ Նգիսպտացիքն ըզ  
 լուսնականան հաշուին ծագմունս . նա  
 և ոչ՝ զառ ՚ի դիցն ոմանս ասացելալ .  
 Եթէ տարիս որ վարկցի զուգեալ հա  
 մեմատեն Յոյն Թուոց առարկու Թնցս  
 առ ՚ի հաւատել ճշմարտութեն . եր  
 բեմն նուազ՝ և երբեմն սասախի՝ զհա  
 ւարումն դումարելով : Արդ՝ օրէն է

մեզ աստանօր զկարծիս նոցա յայտնել  
 թէ զի՞նչ իւրաքանչիւրօք ՚ի նոցանէ  
 խորհեցան այսպէս, զայսոսիկ գրել :  
 Այլ վն երկարութե առաջի կայ գոր  
 ծոյս, այլում տեղոյ՝ և ժամանակի զայ  
 սասիկ թողեալ՝ հասուցուք աստա  
 նօր զբանս : Ըսկսանելով յաղաղս այ  
 սորիկ՝ ուն և հաւատացեալ եմք : Ա  
 զամ նախաստեղծն : Սակեցեալ ամս,  
 230. ծնանի զԱթ : Աթ կեցեալ  
 ամս՝ 205. ծնանի զԵնօփս : սորա եր  
 կուքն յարձանադրութեցն՝ ընդդէմ եր  
 կուց հանդերձելոցն : ուն ասէ Յովսէ  
 փոս. թէպէտ և ուրանան յայտ : Ե  
 նօփս՝ որ յառաջին յուսացաւ կոչել  
 զԱճ : Եւ ընդէ՛ր արդեօք այս, և կամ  
 վն որոց պատճառանաց նախնիս՝ կո  
 չեցեալ կոչեցելոյն զԱճ : և կամ, որ  
 պէս՝ կոչելն իմանի : Քանզի՛ է Առամ  
 ճշմարտապէս Աճաստեղծ : Եւ սա ՚ի  
 բերանոյ ԱՅ առեալ ասի պատուէք :  
 այլ և յանցուցեալ, և թաղաստեան  
 եղեալ : զո՛ւր ենն՝ յԱՅ. և ո՛չ յայլն  
 ումեքէ հարցանի : սասպէս՝ և զվճի  
 վարկին՝ ՚ի նորին բերանոյ լսէ : Իսէ յե  
 տոյ՝ և Աբէլ մերձաւոր՝ և ծանօթ  
 ԱՅ լեալ Պատարագ մատուցանէ՝ և  
 ընկալեալ լինի : արդ՝ սոցա այսպէս  
 յընդունելութի և ՚ի ծանօթութիւն  
 ԱՅ լինիլ. է՛ր աղաղաւ՝ սա առաջին  
 ասիկոչել զԱճ, և այս Յուսով : Արդ՝

զայն վն սորա 'ի տեսութնց 'ի հրաւր  
 բեալն մեր յազարկեսցաւ քտեղի : Իսկ  
 որ 'ի ձեռն պատրաստն է' ասացաւ ք  
 Քանդի 'ի պատուիրանազանցութեան  
 դտեալ Առաջինն 'ի մարդկանէ . 'ի դը  
 բախակն' և յԱյ, շարութն աղագաւ  
 սոյ ասացեալ է' գտան արտասահմա  
 նեալ : Չկնի և ընտանեզոյն Այ յորդ  
 ոսցն Ագամայ, 'ի հարազատեն իւրմէ  
 սպանանի յեղբորեն : Յետ որոյ' ոչ  
 բանի ինչ Աճայնոյ' և ոչ յայտնութե  
 ինչ իրիք եղելոյ . 'ի տարակուսանս ,  
 և յանյաւսութի ազգ մարդկան հա  
 տեցեալ լինի : այլ' և ինքնահաճոյ ար  
 դարև գործս : Յորոյ միջի սա բաշա  
 յոյս եղեալ' ուղղութի հանդերձ կո  
 լէ զԱՃ : Իսկ կոչելոյ' կրկնակի իմա  
 նի . կամ անուանեալ սոյ զժողացեալ ,  
 կամ յօգնականութի կարգալ : Արդ  
 անուանելն իբրև զժողացեալ' ոչ է 'ի  
 դէպ : զի ոչ բաղձութի ամաց' ընդմէջ  
 անցեալ' որ 'ի ժողացումն նոյ զԱՃդ ա  
 ծէք անուն . և կամ զնոյն ինքն' որոյ  
 անունն . և ոչ գարձել մահու' և թաղ  
 ժանս դեռևս ըստեղծեալն յԱյ հա  
 տեալ : Ապա սրենմն' յօգնականութի  
 կալէ սա զԱՃ : Սա կեցեալ ամս' 190 .  
 ծնանի զԿայնան : Կայնան կեցեալ  
 ամս' 170 . ծնանի զԱ' աղազիկի : Մա  
 ղազիկի կեցեալ ամս' 165 . ծնանի զՅ  
 սեղ : Յարեգ կեցեալ ամս . 162 . ծնա

նի ՂԵՆՈՎԲ : ԵՆՈՎԲ կեցեալ ամս .  
 (65. ծնանի զՄաթուսաղայ) . Երկե-  
 րիւք ամս արժանի՝ և հաճոյ վարս ստա-  
 ցեալ, ուն գիտէ՝ որ հաճեցան, փո-  
 խեալ աստի՝ ի միջոյ ամբարշտաց՝ զս-  
 րոյ զպատճառն յետոյ հատուցուք :  
 Մաթուսաղայ կեցեալ ամս, 167. ծը-  
 նանի զՂաակք : Ղաակք կեցեալ ամս,  
 188. ծնանի որդի՝ և անուանեաց զա-  
 նուն նորա Նոյ :

Յ-Է-Կ- Նոյ :

**Լ**ՆՎԷՐ արդեօք զսա միայն Արդ-  
 ոյ անուամբ յորջորջեաց :  
 Իսկ զն այլոցն ամենեցուն պարզաբար-  
 ասէ թէ՝ ծնաւ . զոր ընդգէմ իմն մար-  
 գարեանայ Հայրն . սա՛ ասէ հանգուս-  
 ցէ զմեզ ի դործաց . և ի արամութե՛  
 ձեռաց . և յերկրէ՛ զոր անէծ Տի ԱՏ :  
 Արեղև՝ ո՛չ հանգիստ, այլ ջնջուին՝ որ  
 ինչ միանգամ ի վի՛ Երկրի : Ինչ թուի՛  
 հանգուցանելն՝ դադարեցուցանելն է :  
 Իսկ դադարեցուցանելն՝ զամբարշտու-  
 թն, և զարիս սաստակմամբ մարդկան  
 զաղքագործաց՝ դարուն երկրորդի :  
 Բանդի՛ գեղեցկաբար ասաց՝ թէ՛ ի  
 դործոց մերոց, որ է յանօրէնութեց .  
 և ի արամութե՛ ձեռաց, որովք կատա-  
 րեմք զպղծութիւնս : Բայց՝ և հանգիւն  
 արդարեւ ըստ այսմ մարդարեութն .  
 ո՛չ ամենեքին . այլ կատարեալքն յա-

քննութեան ոգիք : յորժամ շարիք՝ ուն  
 հեղեղաւ ջնջեալ մարբին , իբրև առ  
 Նոյի՝ մոլեալքն ՚ի շարիս : Իսկ Որդ  
 ւոյ անուամբ մեծարեաց զնա Գիր ,  
 իբր զյայտնի՝ և զնշանաւոր , և արժա  
 նաւոր ժառանգ հայրենականաց առա  
 քննութեանց :

## Պրակ 4.

Յուզեա հասարակ զուր Սրբաբանանի  
 երեց որդւոյն Նոյի . յԱբրահամ , և  
 յԻսահակ , և յԱբրահամ : Եւ երեց Նոյի  
 Կամ , ու Բեւել , և ուր որդի  
 Բեւել .

**Ի** այս յայտնի է ամենեցուն՝  
 զի զժողովարահաւար , և աս  
 ժանեղի է՝ ուն զիւր ժամա  
 նականցն ՚ի սկզբանէ մինչև  
 առ մեզ . առաւել և ս զիւր որդէճնու  
 թն Նաբարարականաց ծննդոց՝ յե  
 րեց անտէ որդւոցն Նոյի . ցորբան կամք  
 իցեն խոզիկ ու մեք ըստ իւրաքանչիւր  
 դարուց : Մանաւանդ՝ զի Աճայնոյն  
 գրոյ զիւրսն ՚ի բաց հատեալ յինքն  
 սեփհական աղջ Սեմայ՝ ելիք զայլոցն  
 իբր զարհամարհելեացն . և իւրոյն ա  
 նարժան կարգելոցն բանից : Զորոյ  
 մեք սկսեալ հասեցուց , որքան է կա  
 թողութի , որպէս գտար զհաւաստին

ի հնոց պատմութեց, մերով մասամբ  
ամենեւեմ անսուտ: Իսկ դու ո՞վ ու-  
շիմ ընթերցասերդ՝ հայեաց աստա-  
նօր ընդ հաստատութի կարգի՝ երկոց  
ազգացդ, մինչև ցԱբրահամ, ցՆե-  
նոս՝ և ցԱբամ, և զարմացի՛ր: Սեմ  
կեցեալ ամս, 100. յետ երկուց ամաց  
ըջհեղեղին, ըստ Աճային բանից՝ ծնա-  
նի զԱբիաբսաթ:

Ս Ե Մ:

- 1 Սեմ ամս 100. ծնանի զԱբիաբ-  
սաթ:
- 2 Աբիաբսաթ ամս 135. ծնանի ըզ  
կայնան:
- 3 կայնան ամս 120. ծնանի զՍաղայ:
- 4 Սաղայ ամս 130. ծնանի զԵբեբ:
- 5 Եբեբ ամս 134. ծնանի զՓաղեկ:
- 6 Փաղեկ ամս 134. ծնանի զՌադա:
- 7 Ռադա ամս 132. ծնանի զՍե-  
բուբ:
- 8 Սեբուբ ամս 130. ծնանի զՆա-  
բով:
- 9 Նաբով ամս 179. ծնանի զԹարայ:
- 10 Թարայ ամս 70. ծնանի զԱբրա-  
համ:

Ք Ա Մ:

- 1 Քամ ծնանի զՔուշ:
- 2 Քուշ ծնանի զՄեգորիմ:
- 3 Մեգորիմ ծնանի զՆեբրոսթ:

1815

27

- 4 Ներքովթ ծնանի զԲաբ :
- 5 Բաբ ծնանի զԱներիս :
- 6 Աներիս ծնանի զԱրբէլ :
- 7 Արբէլ ծնանի զՔայազ :
- 8 Քայազ ծնանի զԻւս Արբէլ :
- 9 Արբէլ ծնանի զՆինաս :
- 10 Նինաս ծնանի զՆինուաս :

### Յ Ա Բ Ե Թ :

- 1 Յաբէթ ծնանի զԳամբեր :
- 2 Գամբեր ծնանի զԹիրասա :
- 3 Թիրասա ծնանի զԹարգում :
- 4 Թարգում ծնանի զՀայկ :
- 5 Հայկ ծնանի զԱրմենակ :
- 6 Արմենակ ծնանի զԱրամայիս :
- 7 Արամայիս ծնանի զԱմասիայ :
- 8 Ամասիայ ծնանի զԳեղամ :
- 9 Գեղամ ծնանի զՀարմայ :
- 10 Հարմայ ծնանի զԱրամ :

Արդ՝ զԿայնան չորրորդ ՚իՆոյէ՝ ամենայնք ՚ի ժամանակդրացն գրեն. և ՚ի Սեմայ երրորդ : Նոյնպէս և ըզԹիրասա՝ չորրորդ ՚իՆոյէ : Իսկ Յաբէթայ՝ երրորդ : Թէպէտ՝ ըստ մերում Թարգմանութն, ո՛չ ուրեք ՚ի ընազրի գտանի : Իսկ՝ զՍեսարայիմ չորրորդ ՚իՆոյէ՝ և երրորդ ՚ի Քամայ, ո՛չ ՚ի մերում Թարգմանութնս՝ և ՚ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք : Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ՚ի

յՈւշմագունէ ու մեմնէ՝ և Լնթերցա  
 սիբէ Ասորայ : և հաւատարիմ թա՛ն  
 ցաւ մեղ ասացեալն : Քանզի Մեւտ  
 րայիմ է՝ Մեծբայիմ . որ խմանի՝ Եզիպ  
 ասու : Եւ բազումք ՚ի խամանակագը  
 րաց . ՂԱԵՐՐՈՎԹ՝ որ է ԻԷԼԵԹՈՎԱԿ  
 ցի գոլ ասելով . հաւանեցուցին զմեղ  
 այսպէս հաւատարի լինել . յաղագս բը  
 նակութն սահմանացն Է Եզիպասու :  
 Յետ որոյ ասացուք և զայս : զի թէ  
 պէտ և ամբ ժամանակաց ճննողոցն Քա  
 մայ մինչև յՆինաս՝ ոչ ուրեք գտանին  
 թա՛նեալ . և կամ թէ առ մեզ՝ ոչ հա  
 սեալ . այլ հաւատեալ՝ և ոչ նորին  
 ինքեան Նինասի : Իսկ մերոյն Յարե  
 թի ամենեւին ոչ : Սակայն ասացեալ  
 ազգաբանութիւնդ հաւատարիէ՝ երե  
 ցունց ցեղիցն մետասան դոյով ցԱԲ  
 րահամ . և յՆինաս . և ցմերն Արամ : զի  
 Արայն երկուսասաներորդ է՝ յետ Նի  
 նասի . մանուկ տիովք վախճանեալ . և  
 է ճշմարիտ . և մի՛ որ յերկուսացի . բան  
 զի՝ պատմէ մեղ զայսոսիկ յովով իրս .  
 հաւատարիմն Արիդե՛նոս՝ և ասէ .  
 այսպէս : Նինոս Արբէեղայ : Քայաղ  
 Արբէեղայ : Անէերայ : Բարեբայ՝ Բե  
 լայ : Նոյնպէս և զմերն ՚ի Հայկայ մին  
 լև ցԱրայն գեղեցիկ՝ զոր սպանեալ  
 կաթոան Համիրամ . թա՛նէ այսպէս :  
 Արայն գեղեցիկ . Արամեայ՝ Հարմեայ .  
 Դեղամեայ՝ Ամասեայ՝ Արամօսեայ

Արամենակեայ . որ եղև հակառակ Բե  
լայ միանգամայն՝ և կենսխուղ : Եւ  
զայս մեզ՝ Աբիդենոս յիւրում առաջ  
նում արձանականի՝ ՚ի մանր աղջարա  
նու թն ասէ . զոր աստ ուրեմն՝ յետոյ  
ամանք բարձին : Այսոցիկ վկայէ և կե  
ֆաղիմոս . քանզի ասէ ՚ի միում գլխոյն  
այսպէս , մանր զամենայնսն : յիակզբան  
մերոյ աշխատութեւս . սկսաք գրել զազ  
գարանութիսն ՚ի Դիւանացն Արքու  
նի : այլ առաք հրամանն ՚ի Թաղաու  
րաց . թողուլ զաննշանից , և զվատաց  
արանց ՚ի հնոցն զիշխատակն . և գրել  
միայն՝ զբաջան , և զիմաստունսն , և  
զաշխարհեալս Նախնիս : և մի՛ անպէտս  
զժամանակս մեր ծախել՝ և զայլսն :  
Այլ՝ այս մեզ ամենեկն օտար և արտա  
քոյ ճշմարտութեն . որք զՆինոս Բե  
լայ ասեն որդի . կամ թէ՛ նոյն ինքն  
Բեկ : զի ո՛չ աղջարանութի , և ո՛չ ա  
մացն ժողովուրմն այսոցիկ վկայէ , բայց  
թէ՛ ըստ նշանաւոր , և անուանի լինել  
լոյ՝ որ պատե՛հ համարեալ . այսնպէս կար  
գիցէ զհետին մօտաւոր : Եւ՝ զտաք զայ  
ստեիկ արգարև Յունաց դպրութի :  
Զի թէպէտ և Յոյսք ինքեանք՝ ՚ի  
Քաղզեացոցն փոխեցին յիւրեանց լե  
զուն . և թէպէտ՝ և Քաղզեացի որ  
ինքնակամ յօժարութի . և կամ , ՚ի հը  
րամանէ Թաղաւորաց հարկեալ զայս  
իրագործել . ոնյ Ասիոս օմն՝ և այլք

բազումք : Սակայն՝ մեք Յունաց հա-  
մարիմք՝ որպէս ՚ի նոցանէ ուսեալք :

Պրակ 5.

Յ-լագ- Բէ է Ինչ՝ որ հասար : Ե՛ է ,  
որ օտոր ՚ի Ս՝ Բէ-Է-Է Կ-Է-Է Այլն  
Հն-Է-Է : Ե՛ յ-լագ- Ու՛ Կ-Է  
Կ-Է-Է Է-Է-Է-Է-Է-Է-Է-Է  
Է-Է-Է-Է-Է :



Հաւաստին՝ որչափ կարա-  
ցեալ ՚ի բազմացն ընտրեալ  
բանից. կրգեցաք զճնունդս  
երկց որդւոցն՝ Նոյի : ցԱբ-  
րահամ. և ցՆինոս . և ցԱբամ : որում  
ո՛չ զոք ընդդիմանալ կարծեմ ՚ի միտս  
ուսողացն : Բայց թէ՛ զճշմարտութեն  
ոք խորհելով քակել զոճ . առասպելս  
զճշմարիտ բանս ախորժելով փութայ  
ցէ : և այսորիկ իւրաքանչիւր միտք ունի  
կամին ուրախասցին : այլ թէ՛ շնորհա  
կալ և մերոյս տքնութեց՝ և ջանից լի  
նիցիս՝ ո՛վ Ուսումնասէր դու՝ և զմեզ  
այսմ աշխատեցուցող . անցից սակաւ  
բանիւք յիշատակաց : Յաղաղս որոյ՝  
վերագոյնդ կարգեցաք՝ թէ՛ ունի առա-  
ջինքն ՚ի Վիպադրացն՝ յաղաղս այսո-  
րիկ հաճեցան շարագրել . թէպէտ՝ և  
ո՛չ ունիմ այժմ ասել յամբարանոցս  
մատենից Թագաւորայն արդեօք զը

տեալ :


անալ: Եթէ ըստ արտօմելոյ ուր կա  
մեցան իւրաքանչիւրքն փոփոխել զան  
ուանան՝ և զգրոյցս՝ և զժամանակս . և  
կամ այլ զինչ և իցէ պատճառ: Բայց  
ոպ ՚ի սկզբանն՝ երբեմն ՚ի Տշմարտէն,  
և երբեմն ՚ի ստէն. ոպ յազազս Նա-  
խաստեղծին՝ ոչ առաջին մարդ ասե-  
լով զնա, այլ Թագաւոր: Սոյնպէս ա-  
նուն իմական նմա՝ և աննշանակ կողմ  
լով՝ և անս տալով նմա. 36000: Իսկ  
Թուով Նահապետաց՝ ՚ի ջրհեղեղին յի-  
րատակաւ. զոյգ՝ և հաւասար Մով-  
սիսի: Նոյնպէս և յետ ջրհեղեղին՝  
երիս կարգելով արս անուանիս. յա-  
ռաջ քան զաշտարակաշինու թին. զկնի  
նաւարկու թէն Բոսիու թրեայ՝ ՚ի Հայս  
Տշմարտէն: Իսկ անուանցն փոփոխ-  
մամբ՝ և բազմօք այլովք ստեն: Բայց  
ես այժմ ուրախացայ՝ հաւ առնելով  
առաջի կայիցս իմոց բանից ՚ի սիրելոյն  
իմեկ. և քան զլատս արդարախօսողէ  
՚ի Բերիստեանն Արելլեայ: Յառաջ  
քան զբարգն ասէ՝ և զբազմօրարբաւն  
լինելոյ ձայնի ազգի մարդկան՝ և զկնի  
նաւարկու թէն Բոսիու թրեայ՝ ՚ի Հայս  
Չրուանն. և Տիտանն. և Յապետոս  
Թէ՝ լինեին իշխանք երկրի: Որք ինձ  
Թուին՝ Սեմ. Բամ. և Յարեթ: Եւ  
՚ի բաժանել սոցս ասէ զյմ արեղերս՝  
ընդ իւրեանց իշխանու թի, հարտա-  
ցեալ արեկ ՚ի վերայ երկացունցն: և ս

Ջրուանն՝ զոր աստ Ջրադաշտ .  
 Մոգ , արքայ Բաղարիացւոց , որ է  
 Մեզայ՝ սկիզբն և հայր աստուծոցն  
 ասաց լինիլ : և բազում այլ ինչ զնմա  
 նէ առասպելեաց . զոր անտեղի է մեզ  
 այժմ երկրորդել : Արդ՝ ՚ի բռնանալն  
 ասէ Ջրուանայ՝ ընդդիմացան նմա .  
 Տիտանն և Զապետասթէ . ՚ի մարտ պա  
 տերազի ընդ նմա զրդուելով . վնդի  
 Թագաւորեցուցանել զարդիս իւր ՚ի վն  
 ամենեցուն խորհէր , և այսպիսում իւր  
 ռան , յաճշտակեաց Տիտան՝ ասէ , ըզ  
 մասն ինչ ՚ի մտաւնդուլն սահմանաց  
 Ջրուանայ : աստի ՚ի մէջ անցեալ  
 քոյրն նց Աստղիկ՝ համազեալ զազա  
 րեցուցանէ զաղմուկն : և յանձնառ  
 նուն Թագաւորել Ջրուանայ . բայց  
 զաշինս ուխտից՝ և երդմանց ՚ի միջի  
 հաստատեն , սպանանել զամ արա՝ որ  
 ծնանիցի Ջրուանայ . զի մի՛ ազգաւ ՚ի  
 վն նց Թագաւորեացէ : Ուստի՝ և արս  
 հզօրս ՚ի Տիտանացն ՚ի վն ծննդոց կա  
 նանց նորս կարդէին : Եւ սպանեալ  
 զերկուս ոմանս վն երդման ուխտին  
 հաստատուն կալոյ : Խորհի այնուհե  
 տե քոյրն նց Աստղիկ՝ հանդերձ կա  
 նամբք Ջրուանայ՝ հաւանեցուցանել  
 զոմանս ՚ի Տիտանացն . ապրեցուցանել  
 զայլ մանկունս՝ և յարեւմտս կոյս յու  
 ղարիկել . ՚ի լեառն՝ որ անուանեալ կար  
 դային՝ Դիւցընկեց : Իսկ այժմ կոչի՝

Արեւմտայն : Արդ զայսոսիկ՝ թէպէտ  
 առասպելս որ՝ թէպէտ ճշմարտութի  
 հաշուել համարեսցի . բայց ևս՝ ունի հա  
 ւանեալ ևս, բազում ինչ ճշմարիտ է :  
 Քանզի՝ և որ ՚ի Կիպրացւոց Կոստան  
 դեայ եպիսկոպոս Եպիփանոս ՚ի հեր  
 ձուածոցն յանդիմանութն, յորժամ  
 ճշմարիտ՝ և արդարագատ՝ զԱՃ ձեռն  
 արկէ ցուցանել : Եւ վս ջնջելոյ որդ  
 ւոցն Իլի, զեօթն աղղան . ասէ՛ այս  
 պէս : Եթէ արդարագատասպէս ԱՃ  
 զաղղան զայնոսիկ ջնջեաց յերեսաց  
 որդւոցն Իլի : զի ՚ի բաժնի որդւոցն  
 Սեմայ՝ հասեալ էր երկիր Կալուածոցս  
 այսոցիկ՝ բռնութիւն Քամ ՚ի վր եկեալ  
 յափշտակեաց : Իսկ Այ իրաւունս պա  
 հեալ զերզման ուխտին վրէժ հատու  
 ցանէ աղղին Քամայ . ՚ի բաց դարձու  
 ցանելով զժառանգութիւնն Սեմայ :  
 Այլ զՏիտանան և զԸռափայիման յի  
 շեն Աճային գիրք : Բայց պարտ է մեզ  
 զամանց անգիր հին զրոյցս՝ որ պատ  
 մեալ եղեն վաղ ուրեմն ՚ի մէջ Իմաստ  
 նոց Յունաց . և հասին մինչև ՚ի մեզ  
 այս զրոյցք . ՚ի Գորդի՝ և ՚ի Բանան  
 անուն կոչեցելոց . ևս՝ և երրորդ ոմն  
 Գաւիթ . թէպէտ և յոյժ սակաւուք  
 երկրորդել : յորոց մի ոմն ՚ի նոցանէ  
 վարժեալ փիլիսոփայութիւն՝ ասէր այս  
 պէս : Թէ՛ ո՛վ ձերք, յորժամ էի ՚ի  
 մէջ Յունաց զիմաստութի վարժելով

դէպ եղև միում աւուրց , զի վասն աշխարհադրութեց՝ և բաժանմանց աղգաց . 'ի մէջ արանց իմաստնոց՝ և հըմտագունից բան ճառիւր . սմանք այլաղգարար՝ և սմանք այլաբանարար զբոյց մատենից տային : Իսկ որ կատարելաղոյնն էր 'ի նս Արամպիողորոս անուն՝ այսպէս ասաց : Պատմեցից ձեզ ասէ , զբոյցս անդիրս . յաւանդութէ 'ի մեզ հասեալ զորս՝ և բազումք 'ի դեղջկաց զբուցեն մինչև ցայժմ : Մատենան լեալ զՔսիսութրեայ՝ և զորդւոց նր , որ այժմ ոչ ուրեք երևի . յորժամ ասեն կարգ լեալ բանից՝ այսպիսի : Յետ նաւելոյն Քսիսութրեայ 'ի Հայս՝ և դիպելոյ ցամարի , դնայ՝ ասէ , մի յորդւոց նր կոչեցեալն՝ Սիմընդ արևմուտս հիւսիսոյ՝ զիտել զերկիրն . և դիպեալ դաշտի միում փոքու . առ երկայնանատի՛ միով լերամբ , գետոց ընդ մէջ նր անցանելով , 'ի կողմանս Ասորեստանի . դադարէ առ գետովն երկուսնեայ աւուրս . և անուանէ յանուն իւր զլեառն՝ Սիմ , և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ ուստի եկն : Իսկ՝ 'ի կրտսերադունից որդւոցն նր՝ Տարբան անուն 30. ուստերօք՝ և 15. դստերօք , և նոցին աբամբք՝ մեկնեալ 'ի հօրէն ընտիկ անդրէն 'ի նոյն գետեղերն . յորոյ անուն՝ և զդաւառն անուանէ՝ Տարօն : և զա

նուն տեղոցն որ բնակեցան, կոչե՛  
 Տրոնա. զի անդ՝ զառաքինն սկիզբն ե-  
 ղև բաժանելոյ որդւոցնորա՝ ի նմանէ :  
 Կորին դարձեալ՝ և առ եղերքն սահ-  
 մանացն՝ Բակարիացւոցն ասէին բնա-  
 կիլ սակառ աւուրս : Մնացեալ՝ և մի  
 ամն անդ՝ յորդւոցն նորա. քանզի կող-  
 մանքն արեւելից՝ Չրուան, զՍիմ կո-  
 շեն : և Չարուանդ՝ զգաւաւն անուա-  
 նեալ ասեն՝ մինչև ցայժմ : Բայց առա-  
 շել յաճախողոյն, Հինքն Արամազ-  
 նեացն ի նուագս բամբռան, և յերդս  
 ցցոց՝ և պարուց : զայսասիկ ասեն յիշա-  
 տակօք. և այսոցիկ զրոյցք սուտք : և կ՛մ,  
 Թէ արդարև ըսալք. մեզ չե՛ ինչ փոյթ :  
 Այլ՝ վն դիտելոյ բեղ զմձ, որ ինչ ՚ի  
 լոյ, և որ ինչ ՚ի գրոյ. անցանեմ ընդ  
 բնան ՚ի դիրս յայս. զի իմասցիս զառ-  
 բեղ պարզամտութիւն իմոցս խորհր-  
 դոցս :



Պրակ 6.

Յայտարարուի՛ն սխառու՛ թե ըստ սրտո՛ւ  
 Եղև սուղեւէ Բեւր, ըստ Աձոյն  
 Բանի՛ Նեբրովի է :



Բեւրոյ՛ առ որով նախնին մեր  
 Հայկ բազումք բազում ինչ  
 այլ ի այլոյ պատմեն . բայց  
 ես ասեմ զԿաօնսոյ անուն .

և զԲեւ . Նեբրով թ լեալ : ուն Եգիպ  
 տացիք թունեն հաւասար Մովսիսի :  
 Եփեսոսս , արեդահն . Կաօնս , որ է  
 Քամ , Քուչ՝ Նեբրով թ . թողել ըզ  
 Մեատրայիմ : Չի առաջին ասեն իւ  
 բեանց մարդ լեալ զԵփեսոսս՝ և զԸ  
 տակ հրոյ . և ընդէր սա դտակ հը  
 բոյ . և կամ Պրովիթեոս . զողացեալ  
 զառ ՚ի յԱճոցն հուր . և ճարհեալ  
 մարդկան . որ է այլաբանութի . և ոչ  
 բերէ ասել կարգ բանիս : որում և  
 հարբատութեցն Եգիպտոսցոց կարգ՝  
 և ամ ժողովուրն ՚ի հովուայն հարբա  
 տութե մինչև ցԵփեսոսս՝ վկայէ հա  
 ւասար Երբայեցոյն լեալոր է Յով  
 սեփոյ ժամանակայն : մինչև ցՍեմ .  
 Քամ . և ցՅարեթ : Եւ այսորիկ բա  
 ւական լիցին ասել այսչափ : Չի եթէ  
 զիօմ եղևալս յաշտարակազ որժու թէն  
 մինչև առ մեզ . ՚ի հաստղութի բեզ ՚ի  
 միջ ամել ջանայցեմք պատմութիւն :  
 Երբ ապա յրդալին քս հասանիցեմք

զբուցաց պատմութիւն: մանաւանդ զի  
առաջի կայս թիւրք Երկարէ՛ զարծ . և  
ժամանակ մահկանացունաց՝ սուղ՝ և  
անյայտ: Այլ սկսեալ ցուցից քեզ ըն  
մերն՝ թէ ուստի և որպէս .

## Պրակ 7.

Թիւ ո՛րով՝ իմ ո՛ւստի զայսո՛րո՛ս եգիպտոս  
Ջրուցութանս թիւնն:

Րչակ թիւ Արքայ Պարսից՝ և  
Պարթևաց . որ և ազգա  
խակ Պարթև: ապա տաճրեալ  
ասեն ՚ի Մակեդոնացւոցն .  
և թագաւորեալ ՚ի վր՝ ամ արևելից և  
Ասորեստանեաց . և սղանեալ զԱն  
տիոքոս թագաւոր ՚ի Նինուէ: հնա  
զանդեցուցանել զամ արեղերս ը ձե  
ռամբ իւրով: Սա թագաւորեցուցա  
նէ զեղբայր իւր զԱղարշակ ՚ի վերայ  
աշխարհիս Հայոց . սրտնէ՛ իմն համա  
րեալ այսպէս անշարժ իւրոյ թագա  
ւորութենն լինիլ: Եւ քաղաք թագա  
ւորութե տայ նմա զՄծրին՝ և սահ  
մանս հասանէ նմա զմասն ինչ յարև  
մտեայ Ասորւոց՝ և զՊաղեստին , և  
զԱսիայ . և զամ Միջերկրեայս՝ և ըն  
թիւտալիս: ՚ի ծովէն Պոնտոսի՝ մինչև  
՚ի տեղին ո՛ւր կաւկաս յարևմտեանն  
յանչի ծով . և զԱրարատական , և այլ՝

որչափ միայն քո. և քաջութի՛ն հասաննն:  
 զի սահմանք Քաջաց՛ ասէ, զէնն իւր  
 ևանց. որքան հասանէ՛ այնքան ունի:  
 Սորա կարգել զիշխանութի՛ն իւր մեծա  
 պէս. և հաստատեալ զԹագարութի՛ն  
 իւր. կամ եղև գիտել սր, Թէ ո՛յք՝ և  
 ո՛րպիսի արք տիրել են՝ ի վր աշխարհիս  
 Հայոց մինչև ցնա. զՔաջաց արգեօր.  
 Եթէ զՎատաց անցեալ ունի՛ զտեղի:  
 Եւ՛ զանէ՛ զունս Ասորի, Մարիբաս կա  
 տինաց, այր ուշիմ և վարժ. Քաղզէա  
 յի՛ և Յոյն գրով, զոր յղէ առ մեծ եղ  
 քայրն իւր Արշակ. արժանի ընծայիւք.  
 բանալ նմա զԴիւանն Արբունի: և գը  
 րէ առ նա ձև բանից օրինակ զայս:

Պրակ 3.

Թագաւոր Աղաբաբայ արտայն Հայոց, ս  
 Կէն Արշակ արտայ Պարսկոց:



Րչակ Թագաւոր՝ երկրի, և  
 ծովու. որոյ անձն և պատ  
 կեր՝ ունի՛ և է իսկ մեր աստու  
 ծոց, իսկ բախա՛ և պատա  
 հունն ՚ի վեր քան զամ Թագաւորաց.  
 և մտաց լայնութի՛ն՝ որչափ երկնի՛ ՚ի վր  
 երկրի. Վաղարշակ կրտսեր եղբայր քո՛  
 և նիզակակից. որ ՚ի ջէն կարգեալ  
 Արբոյ Հայոց. ո՛ղջ լեր ամ յաղթու  
 Թի: Քանզի պատուէր ընկայայ ՚ի ջէն՝

բաշտութն, և խնամութն հոգ առնել: ո՛չ երբեք անփոյթ արարեալ ընդոյնն իրատու. այլ խնամտարել հոգացայ անի. որչափ միայն և հասողութն բաւեցին: Եւ այժմ, ՚ի բունմէ իր նամակալութն զետեղեալ Թադաւորութիս: խորհուրդ ՚ի մտի եղի դիտել թէ ո՛չք ոմանք յառաջ քան զիս իցեն արեալ աշխարհիս Հայոց. և ո՛ւտի նախարարութիւնս՝ որք աստ կան: Զի ո՛չ կարգք ինչ լեալ աստ յայտնի. և ո՛չ մեհենից պաշտամունք, և ո՛չ գըլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնիէ, և ո՛չ վերջինն. և ո՛չ այլ ինչ օրինաւոր. այլ խառն ՚ի խառն լծմ, և վայրենի: Այս որոյ աղաւթմ զքո Տնութեդ՝ հրամայեա բանալ զ՚Ինանդ արքունի՝ ընդդէմ Անդեկէլոյ առաջի բոյոյ՝ Հղոր Տէրութեդ. զի գտեալ զընթացն եզրօր քո՝ և որդւոյ, բերցի զքատոյցն փութապէս: և զմեր հաշտութիւնս՝ որ ՚ի կամակատարութէ լեալքաջ գիտեմ ինդութի բեզ լեալ ո՛ղջ լեր երեւելիդ՝ բնակութի ՚ի մեջ Դից: Եւ ընկալեալ Արշակայ մեծի՝ զգիրն ՚ի ձեռաց Մարիբա Կասինայ. մեծաբրջմտութիւն հրամայե՛ առաջի առնել նմա զ՚Ինանն արքունի՝ որ ՚ի ՚Նինունէ: միանդամայն և ուրախացել այսպիսի միտս ունել եզրօր իւրոյ. որոյ զկէս Թադաւորութն իւրոյ հաւատացեալ

էր: Եւ խաղեալ աբ դամ մատենանն. զտանէ մատենն մի Հելլեն գրով. որոյ վի էր՝ ասէ, վերնագիրն այսպէս:

Ս Ի Լ Բ Ն Մ Ի Բ Ե Կ Ե Ի Ը :

Այս մատենն՝ հրամանաւ Աղեքսանդ րի, ՚ի Քաղզէացոց բարբառոյ փոխեալ ՚ի Յոյնն. որ ունի զքունն հը նոց՝ և զնախնեայնն բանս. որոյ ըս կիզնն լեալ ասէ զԶրուանն, և զՏի տանն, և զԱպետութէ. յորում և զիւրաքանչիւրոք ՚ի ծննդոց երկց նա խարարակնացս այսոցիկ արանցս. զարս անուանիս կարդաւ շարագասել. յիւ րաքանչիւր տեղիս մինչև ցրազում ամս: Յայսմ մատեննէ Մարիբաս կա տինայ. զմերոյ աղգիս միայն. հանել զպատմութի հաւաստի՝ բերէ առ Ար բայ Աղաբշակ ՚ի Մժբին՝ Յոյն, և Ասորի գրով: Զոր առեալ Անանա գեղոյն՝ և Քաջ աղեղան արին Աա զարշակ, Կորովաբանոյն, և Հանճա բեղի. առաջին իւրոյ դանձունն համա բելով. զնէր յարքունիսն՝ ի պահեստի մեծսա զգուշութի. և զմասն ինչ ՚ի յարձանի հրամայէ գրոշմել: յորմէ մեր հաւաստի ՚ի վի հասեալ կարգի զրու ցացս. երկրորդեմք այժմ քոյ հարցա սիրութեդ՝ ձգելով զմեր բնիկ նախա բարութիս՝ մինչև ցՔաղզէացոց Սար դանապալայ՝ և ևս մտաագոյն: յորմէ

սկիզբն բանիցս այսպիսի: Ահեղք՝ և  
 երևելիք, առաջինքն՝ ի դիցն. և աշխարհ  
 ՚ի մեծամեծ բարեաց պատճառք. որ  
 սկիզբն աշխարհի և բազմամարդութե:  
 Եւ ՚ի սոցանէ հասել զտան ազգ Հըս  
 կայից. անհեղեղք՝ յազթանդամք մար  
 մնով՝ և զիծխարիք. որք յղացեալ ամ  
 բարտաւանութք ծնան զամբարիշտ  
 խորհուրդ աշտարակաշինութեն. և ՚ի  
 նոյն լինէին ՚ի գործ անկեալք. յոր  
 հողմս ահագին ինն՝ և Ածային շնչե  
 ցեալ ՚ի դիցն ցասմանէ, ցրիէ զԱմբար  
 տակն: և մարդկանն անլուր բարբառս  
 ի բաքանիւր ամբք բաշխեալ. ազմուկ  
 շիտթի՝ ՚ի մէջ արկանէին: Երոց մի  
 էր և Յապետոսթեանն Հայկ անուա  
 նի, և քաջ նախարարն կորովաձիգ՝ և  
 հաստաղեղն: Եւ այս կարգ զբուցա  
 բանութն դադարումն առցէ. զի հան  
 դեսէ մեր՝ ոչ զպատմութենն որջարա  
 նութն գրել՝ այլ ջանալ ցուցանել զա  
 ռաջինան մեր, և զբուն հին Նախնիս:  
 Արդ՝ ՚ի նոյն մատենէ սկսել ասաշից՝  
 Յապետոսթէ. Մերոզ, Սիրաթ,  
 Թակլաթ՝ որ է Յարէթ. Գոմեր, Թի  
 րաս, Թորգոմ: Յետ որոյ՝ նոյն յա  
 մանակագիր յառաջ մատուցեալ ասէ՝  
 Հայկ. Արամենակ. և զայլն ՚ի կար  
 զի՝ զորոյ յառաջագոյն ասացաք:

Պրակ 9.

Յ-Լ-Գ- -ԳԳԳ-Ի- -ԲԷՆ Հ-Գ-Գ- :

**Ա** Յստակ Հայկ' Գեղապատ-  
 շաճ և Անձնեաց . Քաջա-  
 դանդուր . Խայտակն , և  
 Հաստարազուկ : Սա 'ի մէջ  
 Հսկայիցն քաջ և երևելի լեալ ընդդէ-  
 մակաց ամենեցուն . որք ամբասանային  
 զձեռն 'ի միապետել 'ի վն ամ Հսկայ-  
 իցն և Գիւցաղանց : Սա խրոխտացել  
 ամբարձ զձեռն լքէմ բանաւորութեն  
 Բէլայ : 'ի տարածմե ին ազգի մարդկան'  
 ընդ լայնութի ամ երկրի 'ի մէջ քաղ-  
 մակայտ Հսկայիցն . անհուն խօլաց' և  
 ուժաւորաց : Քանզի անդ մտն զնեալ  
 այր իւրաքանչիւր սուր 'ի կող ընկերի  
 իւրոյ ձգելով , ջանային տիրել 'ի վերայ  
 միմեանց . ուր սպառահմունք 'ի գէպե-  
 լանէին Բէլայ , բանանալ ունել զամ  
 երկիր . որում ոչ կամեցեալ Հայկայ  
 հնազանդ լինիլ Բէլայ' յետ ծնանելոյ  
 զորդի իւր զԱրամենակ 'ի Բաբելոնի-  
 լու արարել զնայ յերկիրն Արարա-  
 զայ . որ է 'ի կողմանս հիւսիսոյ . հան-  
 դերձ որդւովք իւրովք' և դստերօք .  
 և որդւոց որդւովք արամքք զօրաւո-  
 րօք : Թունով իրբև՝ 300-և այլովք ընդ ո-  
 ծնօք' և եկօք յարեցելովք 'ի նս . և  
 բոլոր աղսին : Երթեալ բնակէ 'ի լեռ

նտաբ միում 'ի գաշտավայրի . յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին : զորս հնազանդ իւր արարեալ Հայկ . շինէ անդ տուն բնակութե կալուածոց' և տայ 'ի ժառանգութի կազմեայ . որդւոյ Սրամնակայ : այս արդարացուցանէ' զանդիր հին ասացեալ զրոյցս : Եւ ինքն խաղայ' ասէ . այլով աղբիւն ընդ արեմուտս հիւսիսոյ . զայ բնակէ 'ի բարձրաւանդակ գաշտի միում . և անուանէ զանուն լեռնադաշտակին' Հարբ . այսինքն աստէն բնակեալցս աղդ 'ի տանն թորգոմայ : Շինէ և զեւզ մի' և անուանէ իւր անուն' Հայկաշէն : Յիշի' և աստանօր պատմութիւնս հարաւոյ կողմանէ գաշտիս այսորիկ . առ երկայնանստիւ միով լերամբ' բնակեալ յնշագոյն արբ սակաւք . ինքնակամ հնազանդիւ Ղիւցազինն : արդարացուցանէ' և այս զասացել զրոյցս անդիրս :

Պրակ 10.

Յուզիս գործերս շին' և ճարտարն Բելայ :



Ե յառաջ մատուցեալ ըզբանս իւր . ասէ . թէ 'ի հաստատել Տիտանեանն Բելայ զթագաւորութիւնս առ ամենեւեան . առարկ 'ի կողմն հիւսիսոյ

զիս սին յորդուց իւրոց առ Հայկ . ա-  
 բամբք հաւատարմօք՝ դալ նմա ՚ի հնա  
 զանդուծի, և կեալ խաղաղութիւն . բը  
 նակեցեր առ ՚ի մէջ ցրտութեն սառ-  
 նամանեաց . այլ ջնոուցեալ մեղկեալ  
 ցրտութի սառուցեալ քո հստարու-  
 ցեալ բարուցդ . և հնազանդեալ ինձ  
 կեաց ՚ի հանդարտութեն . ուր հաճոյ  
 է քեզ յերկրիս իմում բնակութեն : Եւ  
 ՚ի բաց դարձուցեալ Հայկիս զպատգա-  
 մաւարսն Բէլայ՝ խստութիւն պատասխա-  
 նեաց՝ դառնայ առաքեալն սնդրէն ՚ի  
 բարեւոն : Ապա զօրածողով լինի ՚ի  
 վերայ նր՝ Տիտանեանն Բէլ՝ ամբոխի-  
 հեռեակաց զօրաց, դայ հասանէ ՚ի հի-  
 սիսի յերկիրն Արարադեայ՝ փախտա-  
 կան լինի կազմառ առ Հայկ . քաջըն-  
 թաց իսկ առաքի իւր առաքէ . դիտեալ  
 առէ, ո՛վ մեծդ Իրեցազանց՝ զի դիմեալ  
 դայ վր՝ քոյ Բէլ Յաւերթիւք Քաջօք .  
 և երկայնադիզօք հասակօք՝ Հսկայիւք  
 մրցողօք : Եւ իմացել իմ զմերձ լինիլն նր՝  
 տուն իմ փախեալ, և դամ ահաւասիկ  
 սաղմաւալ : Արդ՝ աճաղարեալ խոր-  
 հրէ՛լ՝ որինչ գործելոց ևս : իսկ քէլն՝ յան  
 դուզն, և անճոռնի զօրութիւն ամբոխին,  
 այ յորձան ինչ սաստիկ չէ դառ ՚ի վայր  
 հեղեալ՝ փութայր հասանել ՚ի սահ-  
 մանս բնակութեն Հայկին . ՚ի սիրա՛ և  
 ՚ի մարմին վստահացեալ արանց զօրա-  
 ւորաց : Ասա Ռշիմ, և խոհեմ Հըս

կայն Քաջազանդուրն՝ և Խայտակն :  
 աճապարեալ հաւաքէ զորդիս իւր , և  
 զԹոռունս՝ արս քաջս , և աղեղնաւ  
 արս , Թուով յայժ նըւազունս . և զայլ  
 ևս՝ որ ընդ իւրով ձեռամբ . հասա  
 նէ յեղս ծովակի միոյ . որոյ աղի են  
 ջուրք . մանունս ունելով ձկունս յին  
 բեան : Եւ կոչեալ զջորս իւր՝ ասէ .  
 ջնասա . յերանելն մեր հանդեպ ամբո  
 խին Բեկայ՝ զիպեալ ջանասցուք տեղ  
 ւոյն՝ ուր անցեալ կայ ՚ի մէջ խաան քա  
 ջացն Բեկ : զի կամ մեռցուք՝ և աղի  
 մեր ՚ի ծառայութիւն Բեկայ կացցէ .  
 կամ զսոսողութի մատանց մերոց ՚ինս  
 ցուցեալ ջրուեսցի ամբոխն , և մեր Ե  
 ղիցուք յաղթութի ստացեալս : Եւ  
 յառաջ կոչս անցեալ բովանդակ աս  
 պարեզս , հասաննն ՚ի միջոյ ինչ զաշ  
 տաձե լերանց բարձրագունից , և յաշ  
 մէ ջուրցն հասանաց ՚ի բարձրաւան  
 դակունս կուռ կալով ՚ի տեղւոյ : ՚ի  
 վեր գերեսս ամբարձեալ երևեցաւ նյ  
 բազմութի անկարգ հասակի ամբո  
 խոյն Բեկայ . ցան և ջիբ յանդուզն  
 յարձակմամբ ընդ երեսս երկրին սու  
 բալով : Իսկ Բեկ , հեղձ և հանդարտ  
 ամբոխի՛ մեծաւ ՚ի ձախմէ ջուրցն ՚ի  
 վթ ստոյ միոյ իրրե ՚ի զխաանոցի : Ծա  
 նեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկա  
 արն . յորում Բեկ առաջի ամբոխին Ե  
 կեալ հասեալ ընտրիւք և վառելովք

ովամբք .

սմանքք . և երկար միջոց ճանապարհին  
 ընդ նա՛ և ընդ ամբոնն : և ինքն գըլ  
 խանաց աղուցեալ երկաթի՛ նշանաւ .  
 որք վերջօք՛ և տախտակս պղնձիս թի-  
 կանց՛ և լանջաց , և պահպանակս բար  
 ձից՛ և բազկաց , դօտեարեալ զմէջն .  
 և ահեկէ զտախն երկսայրի . և նիզակն  
 արի՛ ի ձեռին իւրում աջոյ . և յահե-  
 կումս վահան . և ընտիրք յարմէ և ի  
 ձախմէ : Եւ՛ տեսեալ Հայկն զՏրտա-  
 նեանն կուռ վառեալ . և արս ընտիրս  
 ընդ նմա՛ աջիս՛ և ահեկինս : Կարդէ  
 զԱրմենակ երկու եղբարք ընդ աջմէ .  
 և զԿաղմոս՛ և զայլս երկուց որդւոց  
 իւրոց ի ձախմէ : զի արք կորովիք էին  
 յաղեղն՛ և ի սուսեր . և ինքն առաջի .  
 և զայլս հրասակին զկնի իւր կարգեաց՛  
 երեք անկիւնի իմն կարգեաց ձեռի .  
 հանդարտ յառաջ մատուցանելով : Եւ՛  
 հասեալ երկոցունց կողմանց հսկայ-  
 իցն ի միմեանս , ահագին գղղղիւն ի վր  
 երկրի առնէին շահատակելովը , և ահս  
 պակուցանողս տարազուք յարձակ-  
 մանցն : զմիմեանքք հարկանէին . անդ  
 ոչ սակաւք յերկոցունց կողմանց հըս  
 կայիցն յաղթանդամք բերանոյ սրոյ  
 զիպեալք տապալ յերկիր կործանէին .  
 և մարտն յերկոցունց կողմանց մայր  
 անսպարտելի : Չայսպիսի անահնունե-  
 լի գիպուած տարակուսանաց տեսեալ  
 Արքայն Տրտանեան՛ զարհուրեցաւ .

և 'ի նոյն ըլուր' ուստի էջն, վերջո-  
 տեալ ելանէ . քանզի խորհէր 'ի միջո-  
 ցի ամբանալ ամբոխին' մինչև հասցէ  
 բովանդակ զօրն . զի միւս անգամ ճա-  
 կատ յօրինեացէ : Զայս իմացեալ ա-  
 զեղնաւորին Զայկայ' յառաջ վարէ  
 զինքն, մօտ հասանէ յարքայն, լի բար-  
 շէ պինտ զլայնալիճն' դիպեցուցանէ  
 զերեք Թեւեանն կրծից տախտակին, և  
 շեշտ լինից Թիկանցն Թափանցիկ լեալ'  
 յերկիր անկանի սլաքն . և այսպէս ճո-  
 խացեալն Տիտանեան, կործանեալ յեր-  
 կիր զարուցեալ' և փշէ զողին : Իսկ  
 ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին  
 դործ քաջութեն . փախեան իւրաքան  
 չիւր դէպ երեսաց իւրեանց : Եւ վասն  
 այսորիկ' այսչափ բովանդակ լիցի ա-  
 սել : Բայց զտեղի ճակատուն շինէ դաս  
 տակերտ . և անուն կոչէ Զայք . վասն  
 յաղթութեան պատերազմին, այսորիկ  
 աղաղաւ . և գաւառն այժմ անուանի  
 Զայոց ձոր : Իսկ ըլուրն' ուր Քաջա-  
 մարտիօքն անկաւ Բէլ . անուանեաց  
 Զայի' գերեզմանս . որ այժմ ասին' գե-  
 րեզմանք : Բայց զդիակն Բէլոյ' պա-  
 ճուճեալ ինն ասէ գեղօք : հրամայէ  
 Զայի տանել 'ի Զարք, և Թաղել 'ի  
 բարձրաւանդակ տեղւոյ' 'ի տեսիլ կա-  
 նանց' և որդւոց իւրոց : Իսկ անուն  
 աշխարհիս մեր կոչի յանուն նախնւոյն  
 մերոյ Զայկայ' Զայք :

Պրակ 11.

Յուզգո՛ւ որ ՚ի Հայնոյ ազգո՛ւ և ծնունդո՛ւ,  
 և ի՛նչ շինչ ի-բարսանչի-բարս ՚ի նոցանէ  
 Գ-բժե-ց :



Ազում ինչ զկնի այսորիկ  
 պատմի ՚ի Մասենին . այլ  
 մք՛ որ ինչ պիտոյն մերոյ  
 հաւաքմանս է՛ շարագրես-  
 յուք : Չկնի այսորիկ դառնալ՝ ասէ .  
 Հայկին ՚ի նոյն տեղի բնակութե՛ն : և  
 կազմեայ թոռին իւրոյ՝ բազում ինչ  
 յանկածէ պատերազմին պարզեւեաց :  
 և իւրոյ ընդոճնացն արս անուանիս .  
 հրամայէ զնոյն տեղի բնակութե՛ն ու-  
 ՚իլ նմա . զառաջնոյ իւրոյ տանն : և  
 ինքն երթեալ դադարէ յանուանեալ  
 տեղին Հարբ : Սակեցեալ ամս՝ ծնաւ  
 զԱրամենակ ՚ի Բաբելոնի՛ ուն զերա-  
 դոյն ասացաք : յետ որոյ՝ կեցեալ և  
 այլ ևս ամս՝ ոչ սակաւս՝ մեռանի .  
 յանձնառնելով զբովանդակ ազնն՝ Ար-  
 մենակայ որդւոյ իւրոյ : Իսկ նր թո-  
 ղեալ երկուց եզրարց իւրոց զԽառ .  
 և զՄանաւազ ամ աղիխն իւրեանց .  
 ՚ի կողեցեալն Հարբ . և զորդի Մանա-  
 ւազայ զԲաղ . յորոց Մանաւազ ժա-  
 աանդէ զՀարբ : Իսկ որդի նր Բաղ՝  
 յարեմոսից հիւսիսոյ, եզր ծովուն ալ-  
 ւոյ . զգաւառն՝ և զծովն անուանէ ի

բով անուամբն : Եւ ՚ի սոցանէ ասնն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան, և զԲզնունեաց, և որ Գնուին անուանել. որք աստ ուրեմն յետ Սրբոյն Տրդատայ, բարձեալ ասնն ՚ի միմեանց պատերազմաւ : Իսկ Խոսն ՚ի կողմանս հիւսիսոյ բաղմանայ՝ կարգէ զէնս իւր, և ՚ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խորհորունեաց. արք բարձր՝ և անուանիք : սոյ և որք առ մեօր են այժմ երևելիք : Իսկ Արմենակայ առեալ զսմ բաղմութիւն՝ խաղայ յարևելն հիւսիսոյ. և երթեալ իջանէ ՚ի խորին դաշտավայրի մի ՚ի բարձրագագածանց պարսպեալ լեռանց. գետս կարկաջասահ ՚ի յարևմտից ընդ մէջ անցանելով. և զդաշտն արևելից իմն դողցնն իբր որսայել ՚ի ՚ի ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ. և ստորատովք լեռանցն բազում ականակիտ բղխեալ աղբերք. որք գետոց հաւարումն եղեալ հեզաբար առ սահմանօք նոցա, ծնիւք լեռամբք, և եղերօք դաշտին պատանիսմանք՝ իբր երիտասարդութիւն ճեմիցին : Այլ հարաւայինն արեգակնաճեմ լեռան սպիտակափառն ունելով գագաթն՝ ուղղորդ ՚ի յերկրէ բուսեալ երեք օրէի : սոյ աստ ուն ՚ի մերոցն բաջազօտոյ առն շրջապատեալ հաւարարհաւ, և առ փոքր՝ փոքր ՚ի շէշ

տու մն անկեալ : Ճեր ոմն արգարե  
 լեառն 'ի մէջ երիտասարդացեալ լե-  
 րանց : Յայսմ խորութե՛ն դաշտի բնա-  
 կեալ Արամնակայ . շինէ զմասն ինչ  
 'ի հիւսիսոյ կողմանէ դաշտին . և զտո-  
 լերինն 'ի նոյն կողմանէ : և զլեառն ան-  
 ուանէ յանդադոյն իւր անուն՝ Արա-  
 դած . և զկալուածսն, սոն Արագա-  
 գածու : Բայց սքանչելի իմն՝ ասէ ,  
 Պատմագիրն , թէ 'ի յօլով տեղիս գը-  
 տան բնակեալք 'ի մարդկանէ յերկրիս  
 մերում : ցան և ցիրք սակաւք յառաջ  
 բան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն  
 Հայկայ : Այս Արամանեակ կեցեալ  
 ամս՝ ծնաւ զԱրմայիս : և յետոյ կե-  
 ցեալ ամս շատ՝ մեռաւ : Իսկ որդի նո-  
 րա Արմայիս՝ շինէ իւր տուն բնակու-  
 թե՛ն 'ի վի՛ ստոյ միոյ՝ առ եզերք զե-  
 տոյն , և անուանէ իւր անուն՝ Արմա-  
 յիր : և զանուն զետոյն . յանուն թո-  
 ռին իւրոյ Երաստայ , Երասիս : Եւ  
 զորդի իւր զՇարայ , զյօլովածին , և  
 զչատակեր . առաքէ ամիս իւրով աղ-  
 խիս՝ 'ի դաշտ մի մօտաւոր՝ արգաւանդ  
 և բերրի , յորում գնան ջուրք ո՛չ սա-  
 կաւք 'ի թիկունս հիւսիսոյ լերինն՝ որ  
 անուանեցան Արագած : յորոյ անուն  
 ասեն՝ և զգաւտան անուանեալ Շի-  
 րակ : Վն՝ որոյ սորա թուի արգարա-  
 նալ առասպելին՝ որ ասի 'ի մէջ զեղջ-  
 կայ . թէ բո Արայի որկորն է՝ ասէ ,

մեր Շիրակայ ամբարքն շին: Այս Ար  
 մայիս կեցեալ ամս. ծնանի զորդի ի ր  
 զԱմասիա: 'ի վր' որոյ կեցեալ' և այլս  
 ամաց' մեռաւ: Ամասիա բնակեալ  
 յԱրմաւիր' յետ ամաց ծնանի զԳե  
 զամ, և յետ Գեղամայ զՓառափարի,  
 և զՅորակ: և յետ ծնանելոյն զսոսա'  
 անցանէ զշեատովն մերձ 'ի յեառնն հա  
 բաւոյ: և շինէ անդ առ խորշիւք լեռ  
 նստինն մեծապէս ծախիւք երկուս  
 տունս. զմինն, յարեւելից կուսէ մօտ  
 յականս աղբերացն, որք առ ստորո  
 տով լերինն ելանեն: իսկ զմիւսն յա  
 րեմուտս կոյս նորին տանն բացադոյն:  
 իրք մեծ հասարակ առւր միոյ հետեա  
 կադնացի տուն ճանապարհորդի: և ետ  
 զնն 'ի ժառանդութի' երկուց որդւոց  
 իւրոց, Արուոյն Փառափտաի, և կայ  
 տառին Յորակայ: յորս բնակեալ յի  
 բեանց անուն զտեղիսն անուանեցին:  
 'ի Փառափայ' Փառափտա: և 'ի Յորա  
 կայ' Յորակերա: Բայց զլեառն, Ամա  
 սիա' անուանէ իւրով անուամբ' Մ'ա  
 սիա: և ինքն դարձեալ յԱրմաւիր, ե  
 կաց ամս սակաւս' և մեռաւ: իսկ Գե  
 զամ, յետ ամաց անցելոց ծնաւ զՀար  
 մա' յԱրմաւիր. և թողեալ զՀարմա  
 յԱրմաւիր. հանդերձ որդւովք բնա  
 կիլ. և ինքն զնաց զմիւս կողմամբն  
 արեւելից հիւսիսոյ յեզր ծովակի միոյ,  
 շինէ զեզր ծովակին' և թողու անդ ըր

նակիրս : և յիւր անուն՝ և սա զլեւոսն  
 անուանէ՝ Գեղ, և զէնսն՝ Գեղաբա-  
 նի, որով կոչի՝ և ծովն : Աստ ծնաւ  
 զորդի իւր զՍիւակ, զայր սեգ, և անձ  
 նեայ, բարեգեղ՝ կորովաբան, գեղեց-  
 կազեղն, սմա զմեծ ժամն ընչից իւրոց  
 առեալ՝ և ծառայս անձինս բազումս :  
 սահմանս հասանէ նմա ժառանգա-  
 թն, ՚ի ծովէն ընդ արեւելս՝ մինչև ՚ի  
 դաշտ մի. ուր գետն իշրասիս հասա-  
 նէ զբարանձաւս լեւանց, անցանէ ի  
 խոխոմս ձիգս՝ և նեղս, ասագին գլ  
 զըջմամբ իջանէ ՚ի դաշտ մի : Աստ բնա-  
 կէ Սիւակ, ըստ շինութիւն զսահմանս  
 իւրոց բնակաթնն : և զաշխարհն կոչէ  
 իւրով անուամբն՝ Սիւնիք : այլ Պարսք  
 յառակադոյնս և ս Սիւական կոչնն :  
 ՚ի սարս ծննդոց աստ ուրեմն առաջին  
 ՚ի Պարթևայ Վաղարշակ Արքայ Հայ-  
 օց՝ գտեալ արս անուանիս, Տեարս  
 աշխարհին կարգէ, ուն Սիւակ անդ :  
 և զայս առնէ Վաղարշակ. ՚ի պատ-  
 ժաթն ստուգեալ : այլ այս՝ թէ ո՞նչ,  
 յիւրում տեղւոջ պատմեացուք : Բայց  
 ինքն Գեղամ դառնայ ՚ի դաշտ անդր,  
 և առ ստամբ նորին լերին՝ ՚ի ձորակի  
 միում ամբոջ՝ շինէ ձևակերտ մի, և  
 կոչէ զանուն նր՝ Գեղամի. որ յետոյ  
 ՚ի Կառնկայ թոռնէ նորս անուանե-  
 ջաւ՝ Գառնի : ՚ի սարս ծննդոց աստ  
 ուրեմն առ Արտաշէսիս, թորամբ

Վաղարշակայ՝ ոմն վարաժ անունն պա  
 տանի՝ յաջող յորս եղջերունաց՝ այժե  
 մանց, և վարազուց. գեղեցիութի  
 նեախց կորովի: զսա՝ ի վերայ որսոց  
 արքունականաց կարգէ: և շէն պար  
 գեէ նմա առ եզր գետոյն, որ անունն  
 նեալ կոչի. Հրաստան: և ի սմանէ՝  
 ասեն ինիլ զտունն Վարաժնունի:  
 Այս Գեղամ, սոյ ասացաք՝ յետ ամաց  
 ծնանի զՀարմայ. յետ որոյ կեցեալ  
 և այլ ևս՝ և մեռաւ: և հրամայէ որդ  
 ւոյ իւրում Հարմայ բնակիլ յարմաւիր:  
 Այս Հայկ՝ որդի Թորգոմայ, որդւոյ  
 Թիրասայ, որդւոյ Գամիրայ, որդւոյ  
 Յորեթի, Նախնի Հայաստանեայցս,  
 և այս ազգք նի, և ծնունդք, և աշ  
 իարհ բնակութե նոյ: և յայտ հեռէ  
 ասէ, սկսան բազմանալ և ընուլ զեր  
 կիրն: Իսկ Հարմայ կեցեալ ամս՝ ծը  
 նաւ զԱրամ: Արամայ բազում գործք  
 բաջութե պատմին մարտից նահատա  
 կութե, և ընդարձակել զսաճմանս  
 Հայոց յամ կողմանց: յորոյ անուն, և  
 զաշխարհս մեր անունենն լծմ աղղք:  
 սոյ Յոյնք՝ Արմէն: Իսկ Ասորիկք՝ և  
 և պարսիկք. Արմէնիկք: բայց զընդ  
 արձակութի պատմութե սորա, և ըզ  
 գործ բաջութե՝ Թէ զի անդ, կամ  
 առ ո՞րով ժամանակի՝ Թէ կամիցիս այ  
 սորիկ գրոց կարգեսցուք, և կամ Թող  
 ցուք: ապա Թէ ոչ ի սմին:

Պրակ. 12.

Յուզիւ ընդ Արեւելեայս պատերազմն՝ և  
յուզեռնիք՝ և հահունն Նիսոսըն  
Մարտոս :

**Ի** վնդի՝ հաճոյ թուեցաւ  
մեզ աշխատութի՛ն որ ՚ի վի  
րոյ հրամանիդ համարել  
հեշտութի. առ ՚ի յայլոցն .  
որ ՚ի կերակրոց և յրմակելեաց լինին իւր  
ախճանութիք , հաւանեցաք անցա  
նել սակաւուք . և ընդ կարգ բանից  
պատերազմացն՝ որ ՚ի Հայկեանն Արա  
մայ : Սա այր եղեալ Հայրենասէր , և  
աշխատասէր , ունցանէ նոյն Պա  
մազիր , լաւ համարէր զմեռանիցն ՚ի  
վերայ Հայրենեացն , քան տեսանէ ի  
զորդիս օտարածնաց՝ կոխելով զսահ  
մանս Հայրենեացն , և հարազատից  
արեան նի , տիրել արանց օտարաց :  
Սա այս Արամ , սակաւուք ամօք . յա  
ռաջ քան զտիրելն Նինոսի Ասորես  
տանեայց , և Նինուէի , նեղեալ յազ  
դացն , որ շուրջ զիւրե , ժողովէ ըզ  
բազմութի արանց բաջաց , և աղեղնա  
ւորաց , և որք ՚ի տեղ նիզակի կամա  
կարօշք , նորասիր , և հարուստք , յոյժ  
յաջողաձեռնութիւն , իսկ երեսօք ՚ի  
սիրտ և ՚ի պատրաստութի պատերազ  
մի , իբր թէ բիւրս հինգ . պատասէ

Մեզացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւքար ոմն՝ ասացեալ Մադէս, այր հպարտ, և պատերազմասէր, ունի ցուցանէ նոյն ինքն Պատմադիրն, յեզերս սահմանացն Հայոց: որոց մի անդամ, Քուշանաբար հին՝ սմբակակոխ արարեալ՝ զսահմանս Հայոց ծառայեցոյց, ամս երկուս: որում յանկարծօրէն ՚ի վր՝ հասեալ Արամ, յառաջ քան զժողիլ արեգական, սասակեաց զբազմութիւն անբոխիցն, և զնոյն ինքն Նիւքարն՝ կողեցեալ Մադէս, ձերբակալ արարեալ՝ անէր յԱրմաւիր: և անդ ուրեմն, ՚ի ծայրս աշտարակի պարսպին, ցից վարեալ ընդ ճակատն, յորմն վարսել՝ հրամայէ, ՚ի տեսիլ անցաւորացն, և ամ կկելոցն անդր: և զաշխարհն, մինչև ՚ի լեռան՝ անուանեալ Չարասպ, ՚ի ծառայութե կալաւ հարկի, մինչև ցլծաղաւորութիւն Նինոսի, ՚ի վր՝ Ասորեստանի, և Նինուէի: իսկ Նինոս թագաւորեալ ՚ի Նինուէ՝ յիշատակ բնու, զՆախնւոյն խրոյ, ունէր ՚ի մտի, զԲէկոյ, ՚ի զրուցաց ուսեալ, և զայս խորհէր, հատուցանել յամս ձիգս, նկատել՝ որսալ զյաջողութիւն բառնալ՝ ջնջել զամ ճետ սահմանեալ յարանց Քարին Հայկայ: այլ երկիւզ կատկածանաց լեալ խրոյ թագաւորութեն, զայսպիսիս համարեալ իրադործութիս, ծածկէ ըզ

արու թի՛ն , և հրամայէ նմա , զնոյն իշխանու թի՛ն անկասկածարար ունիլ և հարձակու թի՛ն տայ նմա , վարսակալ ամեն մարգարտեայ , և Երկրորդ նորա կոչել : Այլ այս շատասցի՛ ասել այսչափ . քանզի՛ զթողացուցանէ զմեզ որ առաջիկայս է իր , յեզերումն յամեն այսր պատմութի՛ն :

Պրակ 13 .

Յ-ը-գ-ւ ընդ Ա-ս-ի-ե-ս-անէ-այ-ն ի-ս-ն-ն , և յ-ս-ի-ս-ի-ն , և Պ-ո-ւ-ո-ւ-ն Ք-ը-ն-ն : Ի-ն կե-ս-ո-ւ , և Ա-ս-ի-ն , և այլոց անձանէ-ւ Հ-ո-ր-ց :



Արդևսցուք դոյն իշխա-  
կաւ բանից , և որինչ զկնի այ սորիկ , յարևմուտս սորա դործք բաջութի պատմին , ի նոյն մատենի , որ ընդ Ասորեստանեայս կառնոյն , զպատճառս , և զգորութի իբաց միայն յայանելով . և զերկարութի դործոյն համառօտ բանի՛ յանդիման կացուցանել : Նոյն այս Արամ , յետ վճարելոյ ճակատուն , որ ը Արևելեայս , խաղայ նոյն զօրու , ըզկողմամբ Ասորեստանի , դառնէ զոմն և անդ , ապականիչ երկրի իւրոյ , ըսրիւք բիւրովք վառելովք հեռեւեղք ,

և հնգիւք հազարովք հեծելազօրու .  
 Բարշամ անուն, յազգէ Սկայիցն : Ե-  
 րոյ սաստիագոյնս նեղեալ՝ հարկաց  
 խտութիւն, անապատ զշրջակայն իւր  
 առնէր . Սմա ՚ի հակատու պատերազ  
 մի, ՚ի դիմի հարեւ Սրամ, հալածա-  
 կան ընդ մէջ Կորդուաց, ընդ դաշտն  
 Ասորեստանի արկանէ, զբազումս ՚ի  
 նոցանէ սաստիկելով . իսկ Բարշամ,  
 առաջի զինակրաց նիւ պատաստեալ մե-  
 ռանի : և զայս Բարշամ, վսիւրոց ա-  
 ժութեց գործոց՝ աստուածացուցել  
 պաշտեցին Ասորիք՝ բազում ժամա-  
 նակս ՚ի ծառայութե հարկաց : Այ-  
 սր ինչ յարեմուտս ընդ Տիւանեայն  
 սորա գործ բազութե՝ ասել կայ մեզ  
 առաջի : Աստ յարեմուտս շարժեւ ՚ի  
 վս առաջնոյն շորիւք բիւրովք զօրա-  
 լար հեռակօր, և երկու հազարօք հե-  
 ծելովք՝ հասանէ ՚ի կողմանս Կապա-  
 դովկացոց, ՚իտեղի մի՝ որ այժմ ասի  
 Կեաթլու : և ըսնզի՝ զարեւելայնն,  
 և զհարաւայինն նուաճեալ՝ յանձնել  
 էր ՚ի ձեռն այնոցիկ երկուց Յեղիցն,  
 Սիսակեանցն զարեւելս, և որք ՚ի Կադ-  
 մայ տանէն զԱսորեստանին, ո՛չ ինչ  
 այնուհետե կասկած շիտթից ուտեք  
 ունէր : Վս որոյ՝ յերկարեւ ժամանկս  
 իննիւ յարեմուտս՝ պատաստե նմա Պայս  
 պա Բաղեայն Տիւանեան պատերազ  
 մաւ . որ բռնացեալ ունէր զիջոց էր

կուց ծովուց մեծամեծաց, զՊանտաց  
 ւոցն, և զՈվկիանու: որում 'ի զիմի  
 հարեալ վանե փախստական արկանն  
 լով 'ի կղզի ինչ Ասիական ծովուն: և  
 իւր թողեալ զոմն Մշակ անուն՝ յաղ  
 դե իւրմէ՝ և բիւր մի 'ի զօրացն 'ի վե  
 րայ աշխարհին, և ինքն դառնայ 'ի  
 Հայս: բայց հրաման տայ բնակչաց  
 աշխարհին՝ ուսանիլ զսօսս, և զլեզուս  
 Հայկական: Ամ որոյ՝ մինչև ցայսօր  
 ժամանակի՝ անուանեն Յոյնք՝ զկե  
 մայն զայն Պրօթուան Արհիման, որ թարգ  
 մանի՝ Աաթինն Հայք: Եւ զգաստա  
 կերան՝ զօր շինեաց յանուն իւր՝ Մշակ  
 կողմնապետն Արամայ, փոքրագու  
 նիւք պարսպեալ որմովք, անուանեն  
 Հինք աշխարհին՝ Մաժաք, ուն՝ ո՛չ  
 կարելով ուղղախօսիլ: մինչև յետոյ  
 յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ ան  
 ուանեցաւ Կեսարեա: ըստ նմին օրի  
 նակի՝ 'ի տեղեացն այնոցիկ մինչև ցը  
 բուն իւր սահմանս, զբաղում անբը  
 նակ երկիր՝ ելից բնակչօք, որք Երկ  
 բորդ՝ և Երրորդ՝ անուանեցան Հայք,  
 այլ և՛ Չորրորդ: Այս է աաթին, և  
 Տնաբիտ պատճառն՝ մի անուանելոյ  
 զարեմտեայն մեր կողմն, և Աաթին,  
 և Երկբորդ՝ այլ և՛ Երրորդ, և Չոր  
 բորդ Հայք: Իսկ որ՝ այլ ասի՝ 'ի Յու  
 նական կողմանսն, մեզ ո՛չ է հաճոյ,  
 այլ որոց՝ որչափ կամէ իցեն: Արդ սա՛

այսպէս անուանի և հզօր եղեալ յա-  
նուն սորա մինչև ցայսօր, ուն աննն  
ցուն յայանի է, որ շարք զմօք ազգք  
զաշխարհս մեր անուանեն: Բազում,  
և այլ գործք արութն ՚ի սմանէ գտա-  
նի կատարեալ այլ մեզ բաւական լիցի  
ասացեալք: Բայց թէ՛ բնօրէն այսո-  
րիկ ՚ի բուն Մատեանսն թագաւո-  
րացն, կամ ՚ի Մեհննից պատուութիս  
ոչ յիշատակեցան: մի՛ ոք ընդ այս երկ  
բայացեալ տարակուսեցի: մի՛ զի յա-  
ռաջ բուն Նինոսի ժամանակ թագաւո-  
րութենէ, յորում ոչ որ այսպիսեաց  
իրաց՝ փոյթ յանձին ունէր: երկրորդ  
զի՛ ոչ հարկք, և ոչ տէտք ինչ կարե-  
որք էին նոյն զազգաց օտարաց՝ և զաշ-  
խարհաց բացեալ, և զհամբաւս հինս  
և զրոյցս նախնականս՝ ի բեանց թա-  
գաւորաց, կամ Մեհննից զրիւ Մա-  
տեանս: մանաւանդ՝ զի և ոչ պար-  
ծանք ինչ նոյն, և կամ բարգաւաճանք  
օտարաց ազգաց բաշութի, և գործք  
արութն: բայց թէպէտ՝ և ոչ ՚ի բուն  
Մատեանսն, սակայն՝ ուն Մարիբա-  
կասինաց պատմէ՝ ՚ի փոքունց օմանց,  
և յաննչանից արանց՝ ՚ի դուստկանէն  
այս գտանի ժողովեալ ՚ի Դիւանի Ար-  
բուճականաց: Ատէ, և այլ իմն պատ-  
ճառս նոյն այր՝ թէ որպէս ուսայ՝ հը  
պարտ՝ և անձնասէր գորով Նինոս,  
և կամեյով զինքն միայն աշխարհակա-

լուծեան՝ և բազումքն , և լառութե  
 ցուցանել սկիզբն : հրամայե՛ զբազում  
 Մատեանս , և զզրոյցս՝ Առաջնացն՝  
 տեղեաց՝ տեղեաց՝ և ուրուք՝ ուրուք՝  
 գործ բազումն՝ այրել . իսկ որ առ ի  
 րովք ժամանակօք՝ դադարեցուցանել  
 և որ ինչ՝ վն իւր միայնոյ գրել . արդ  
 զայս աւելորդ է մեզ երկրորդել : բայց  
 Արամ՝ զի զկնի ամբ կենաց իւրոց՝ ծը  
 նաւ զԱրայ , յետ որոյ՝ և այլս բա  
 զումս կեցեալ ամաց մեռաւ :

Պատկ 14.

Յ-ԼԳ- Արայի , և Տահմաննորս՝ գործ  
 բազումն ՚ Ը-ԿԵ-ՏԵՐ :

**Ա**րայ՝ սակաւ ամօք յառաջ  
 քան զվախճանիկն՝ Նինոսի ,  
 ինամակալեաց իւրոց Հայ  
 բնեւացն՝ նոյնում արժանա  
 ւորեալ շնորհաց ՚ի Նինոսէ՝ որում և  
 Հայրն նորա՝ Արամ : Բայց վազաշն  
 ախն՝ և բորբորիտանն՝ Սափրամ , ՚ի բա  
 զում ամաց լուեալ զդեղեցկութե նր՝  
 ցանկայր տեսանել . այլ ո՛չ ինչ այսպի  
 սի՝ յայնմտպէս իշխէր գործել : Իսկ  
 յետ վախճանելոյն , կամ փախտապան  
 լինելոյն՝ ուն հաւանեալ եմ , Նինոսի  
 ՚ի Կրիտէ՝ համարձակ պատուելով Շա  
 միրամայ զախան՝ առաքէ հրեշտակս՝

առ Արայն գեղեցիկ, ընծայիւք՝ և պա-  
 տարագործարգում աղաչանօք, և խոստ-  
 մանքք պարգևաց՝ գալ առ նա՝ ի Նի-  
 նուէ. կամ առնուլ կնութե՛ն և թագա-  
 ւորել ի վր նմի, որոց տիրէր և Նի-  
 նոս. և կամ կատարել զկամս ցանկա-  
 թե՛ նք՝ և դառնալ պատարագօք, և  
 խաղաղութիւն ի տեղի իւր: Եւ ի բա-  
 զում անգամ՝ երթ և եկութի՛ն հրեշ-  
 տակազնացութե՛ն լինելոյ, և յոչ հա-  
 ւանել Արայն՝ ի սաստիկ ցամառն լել  
 Սամիրամայ՝ ի վախճանել պատգամա-  
 ւորութեանն, առնու զբազմութե՛ն զօ-  
 բաց իւրոց՝ և փութայ երթալ հաս-  
 սիլ յերկիրն հայոց՝ ի վերայ Արայի-  
 բոցց սրբափ դիմացն էր նշանակեալ  
 ոչ այնչափ ի տպանանել զնա՝ և հարա-  
 ծել փութայր, բան թէ նուաճել կի՛  
 զբաւաք անել՝ զի լոցէ՛ զկամս ցանկա-  
 թե՛ն իւրոց. զի առ յոյժ ցանկականի մօ-  
 լեզնութե՛նն ի բանսն, որ զնմանէ՛ ուր  
 ի տեսութե՛ն շամբշու թի՛ վառեալ էր:  
 Քայ հասանէ ի դաշտն Արայի տազ-  
 նապա, որ և յանուն նք անուանեալ  
 Արարատ. և ի լինիլ ճակատուն, պա-  
 տուէր տայ զբրայեւոաց իւրոց, թէ  
 զէպ լինիցի՛ հնարել ապրեցուցանել  
 զԱրայն: Իսկ ի լինիլ մարտն՝ հար-  
 կանի զօրն Արայի՛ մեռանի և Արայն  
 ի պատերազմն, ի մանկանոցն Շամի-  
 բամայ: Ի սակապուտս Տիկիրնն օռտ

բէ յետ յաղթութեն՝ ՚ի տեղի ճակատուն՝ ինդրել ՚ի մէջ դիականցն անկէլոց՝ զըշափն իւր, և զտարփածուն։ զտաննն զԱրայն՝ մեռելալ ՚ի մէջ քաջամարտկացն։ հրամայէ՝ զնա զնել ՚ի վերնատան Ապարանիցն։ Իսկ ՚ի գլխի զըռել միւս անգամ զօրացն հայոց՝ ՚ի մարտ պատերազմի ընդ Տիկնոջն Սամիրամայ, քինախնդիր լինիլ մահուանն Արայի։ ասէր՝ հրամայեցի Սատուծոցն իմոց լիզուլ զվերն Արայի, և կենդանասցի։ միանգամայն և ակնունէք դիւթութիւն վհութն իւրոյ, կենդանացուցանել զԱրայ՝ ցնորեալ ՚ի առօրեական ցանկութիւն։ Իսկ իբրև ներսեցաւ զի նորա, հրամայէ ընկենուլ ՚ի վիհ մի մեծ՝ և ծածկել։ զի ոմն ՚ի համանեաց իւրոց՝ զարդարեալ ունելով ՚ի ծածուկ՝ համբաւէ զնա՝ այսպէս։ լիզել զԱրայ աստուծոցն՝ և կենդանացուցեալ լցին զփափագս մեր, և զհեշտութիւն։ Այսորոյ առաւել յայսմ հետեւ, ՚ի մէնջ պաշտելիք են՝ և փառաբերել ՚իբրև հեշտացուցիլք՝ և կամակարք։ կանգնէ՝ և նոր իմն պատկեր յանուն դիւաց, և մեծապէս զոհիք պատուէ։ ցուցանելով ամենեցուն՝ իբր թէ՛ այս զօրութիւն աստուծոց՝ կենդանացուցին զԱրայ. և այսպէս համբաւեալ զնմանէ ՚ի վր երկրին հայոց, և հաւանեցուցեալ զամենեւեան՝ զազա

րնցուցանէ զհազմն: Եւ յաղագս Ա-  
բայի կարճառօտի՛ն այսչափ՛ շատ լիցի  
յիշատակել: սա կեցեալ ամս՛ ծնանի՛  
Գ.սս:

Պրակ 15.

Թէ որդեւ յեք Տհււնն Աբայի, Ս-  
Իրմ շնէ զաշուն՛ և զսխրութի  
հեռոյն՛ և զբուն իւր:

Սկզկնի՛ այսպիսեաց իրաց՛  
աջողութեց, դադարէ Հա-  
մբամ առուրս ինչ սակաւս  
ի դաշտին, որ անուանեալ  
կոչի յանուն Աբայի՛ Այրաբաւ. ե-  
լանէ ի լեռնակողմանս՛ երկրի հարաւա  
կողմանն, քանզի ժամանակ ամառնայ  
ին եր՛ զքօսնուլ կամելով ի հովիտս.  
և ի դաշտս ծաղկաւետս: Եւ տեսել  
զղեղեցկութի երկրին՛ և զօգոցն մաք-  
րութիւն՛ և զաղբերաց յատկազոյն  
բղխումն, և զկարկաշահսութի գե-  
տոց բարեգնացից. սպարա է՛ ասէ, մեզ  
յայսպիսում բարեխառնութե՛ն օգոց  
և մաքրութե՛ն ջուրց՛ և երկրի, քաղաքս՛  
և Արբունիս շինել՛ բնակութե՛ն, ույ  
զի՛ զօրրորդ մասն ի բոլորմանէ տար-  
ւոյն՛ որ է ամառնային յեղանակ, ըստ  
ամ բարեվայելութե՛ն՛ անցուցանեմք  
ի հայս. և զայլս ևս՛ երիս որոշմանս  
օգոյն զովութեան՛ տածիցեմք ի՛ Նի-

նսուէ . և անցեալ ընդ բազումս 'ի տե  
 դեաց , գայ ' հասանէ ' յարևելից կողմս  
 նէ ' յեզր ծովակին Աղւոյ . և տեսեալ  
 առեզերք ծովուն ' երկայնաձև մի բը  
 լուր , որոյ նիստ երկայնութեանն ' ի  
 մասս կոյս ' և յարեգակնոյ , սակաւ  
 ինչ առ ' ի կողեալ ' ի հիւսիսոյ . իսկ ' ի  
 միջօրեաց կողմանէ ' դէպ ուղիղ առ եր  
 կին նայելով բարանձառ կանգուն ան  
 շեղ . և ' ի սմանէ զհարաւ ' բացառոյն  
 հովիտ լինեալսաւաձև , և երկայնաձև ' յարևելից  
 կողմանէ լերինն ' ի ջանելով  
 յեզր ծովուն ' ընդարձակ , և զեզեցիկ  
 ձորաձև . որոյ ընդմէջն ' հասանք ջուրոյ  
 բարեհամաց ' ի լեռնէն ի ջանելով ' ի  
 ծործորոց , և ' ի հովտաց բամբալք ' և  
 ' ի հիմանց փեղկից լերանց միառեւէք ' ի  
 ծառալուսնի դետոց ' սերճանային . և  
 շէնք ոչ սակաւք ' հովտաձև ձորակին ,  
 յաջմէ և յահեկէ ջուրոյն յօրինեալք .  
 և յարևելից կողմանէ հաճեցեալ բը  
 բոյն ' լեռան մի փոքրազոյն : Աստիճ  
 ակնակատոց կողեալ Արասիրան այն ' և  
 կաթնուն Համիրամ , հրաման տալ  
 լորից բիւրաց , և երկուց հազարաց  
 արանց անարաւեստից ' դործաւորաց  
 յԱսորեստանեաց , և մեց հարւեր  
 ընարելոց ' յսմ արաւեստաւոր դործա  
 ւորաց ' բարի , և փայտի պղնձոյ , և  
 երկաթոյ . որք ամենեին կատարեալք  
 իցեն ' յարաւեստ դիտութն . ամել ան

Խափան՝ ի փափուգեալ տեղին. և գործն՝  
 հաւասար հրամանին՝ առնոյր զկասա-  
 բուն: Եւ վաղվաղակի անեալ լինէին  
 իտանազանճից գործաւորաց, և բա-  
 զում արուեստից Հանճարեղաց ի-  
 մասանոց: և հրամայէ նախ՝ զամբար-  
 տակ գետոյն. ապառաժիւք, և մե-  
 ծամեծ շինել վիժօք. կրով՝ և աւազով  
 մածուցեալ բազում լայնութիւն. որ  
 կայ հաստատուն մինչև ցայսօր ժամա-  
 նակի: և ՚ի սպասուածս նոյն ամբար-  
 տակի գետոյն այժմ, ուն լսեմք՝ մար-  
 զիկ աչխարհին ՚ի շէնս, և ՚ի դաղթա-  
 կանս փախստեամբ ամբանան՝ իբր ՚ի  
 ծայրս քարանձաւաց լերանց ամբացե-  
 ալք: և եթէ՝ զփորն առնուլ դէպ ու-  
 մեք լինիցի, և ոչ իբր՝ պարստակաց  
 ըստ մի արժանաւոր ՚ի շինուածոյ ամ-  
 ամբարտակին՝ խլել որ զօրեացէ, թէ և  
 մեծաւ աշխատութիւն՝ որ ջանասցէ, և  
 ՚ի հեղուսուածս արուեստին, որ զքա-  
 բամբն հայեցալ սրուք, ուն ՚ի ճար-  
 սոյ ինչ հեղման՝ հայեցողացն երևե-  
 ցուցանէ կարծիս: և այսպէս՝ ընդ բա-  
 զում ասպարէզս անցուցեալ զամբար-  
 տակն՝ հասուցանէ ՚ի նկատեալ տեղի  
 բազարին: և անգ հրամայէ՝ զամբարն  
 ՚ի բաղում դասս որոշել. և ՚ի վիճիւրս  
 բանիւրոց դասուց՝ կարգել վարդա-  
 պետս զընտիրս ՚ի ճարտարաց: և այս-  
 պէս, ՚ի սաստիկ ճգնութեւն պահեալ



բայանիսա , և ծածուկս ինն ահա  
 գինս՝ որոյ արպիսու թի՛ն դրու թե՛ն յօրի  
 նու՛ածոյ՝ ո՛չ ի լսելիս մեր հասեալ ճը  
 մարտու թի՛ն յու մեքէ , և ո՛չ մեր ի պատ  
 մու թի՛նս հիւսել հաւանիմք . այլ ասեմք  
 միայն՝ թէ՛ ան թաղաւորականաց գոր  
 ծոց՝ ուն լու՛ար , առաջին՝ և վեհագոյն  
 համարեալ : Իսկ զԵնդեղեմ արեգական  
 կողմն անձաբն : ուր և ո՛չ գիծ մի եր  
 կա թուլ՝ այժմ վերագրել սք կարէ :  
 զայսպիսի կարծրութի նի թոյ՝ պէս  
 պէս տաճարս , և սենեակս օթից՝ և  
 տունս գանձուց , և վիհս երկարս՝ ո՛չ  
 գիտեմ թէ՛ որպիսեաց իրաց պատրաս  
 տութի՛ն հրաշակերտեաց : Իսկ զերեսս  
 ան քարին՝ իբրև գրչաւ զմտ հար  
 թեալ՝ բազում գրեաց ի նմա գիր . ու  
 որոյ հայեցու՛ածն միայն՝ դամենայն որ  
 ի զարմացումն ամէ : Եւ՛ ո՛չ միայն այս՝  
 այլ և ի բազում տեղիս արձանս հաս  
 տատեալ յաշխարհիս հայոց , նովին  
 գրով՝ յիշատակ ինչ իւր հրամայէ՝ գը  
 բել : և ի բազում տեղիս՝ սահմանս ,  
 նովին գրով հաստատէր : Արդ՝ որ ինչ  
 յաղագս Սամիրամայ , և որ ինչ գոր  
 ծոց նորին ի հայս՝ ասացեալէ :



Պրակ 16.

Յուզո՛ւ Հորհրդանքս՝ ինչ է՞ր աշխատանքս  
 Կարգաբանքս ինչ է՞ր . և ինչն ո՞ր է՞ր  
 Կարգաբանքս ինչ է՞ր Կարգաբանքս՝ Մ  
 ինչ է՞ր Կարգաբանքս . և Կարգաբանքս ինչ է՞ր  
 Կարգաբանքս Կարգաբանքս  
 Կարգաբանքս :



**Ս** Կարգաբանքս յամենայն  
 սրն , ինչպէս ինչպէս , ի  
 կարգաբանքս հիւսիսոյ՝ ի քա  
 ղաքն Կարգաբանքս ինչ է՞ր  
 նեաց ի հայս : կարգաբանքս և վերա  
 կացու Կարգաբանքս և Կարգաբանքս .  
 Թողու Կարգաբանքս Մոգ , և Կարգա  
 անքս Մարաց . և ինչպէս աշխատանքս  
 յամենայն կարգաբանքս Կարգաբանքս  
 մայ , ամենայն հաւատայ նմա յարգա  
 բն՝ զիւր ինչպէս ինչպէս : Եւ քարոզ  
 անքս յամենայն կարգաբանքս յարգա  
 վն վարձաբանքս արտակարգաբանքս ինչ է՞ր  
 բաց , կարգաբանքս զամենայն սեան , և արք  
 կրտսերաց ինչպէս միայն՝ որ է՞ Կարգաբանքս :  
 Կարգաբանքս և համանեաց ինչ է՞ր արգ  
 դեւեղով զիւր ինչպէս ինչպէս և զգանձս ,  
 ոչ ինչ զիւր արգաբանքս ինչ է՞ր վարձ  
 ձին ունէր : Կարգաբանքս և արք նի՞ Կարգա  
 անքս ոչ արք մեռեալ թաղեցաւ ինչ է՞ր  
 մանէ ի Կարգաբանքս Կարգաբանքս . արգ  
 ինչպէս զարտասեր բարս նի՞ և զիւ

բասկր, թողեալ զթագաւորութիւնն՝  
 փախստական անկանի՝ ի կրիտէ : Իսկ  
 ի հասակ, և ի միտս հասեալ որդւոց  
 նորա՝ յիշեցուցանեն նմա զայն ամ,  
 կարծելով՝ ցածուցանել զնա ի դիւա-  
 կան պակշտութեն, և աւանդել զիշ-  
 խանութեն, և զգաննս որդւոց իւրոց .  
 ընդ որ առաւել զայրադնեալ սատա-  
 կէ զամենեւեան, և մնայ միայն՝ սնդ  
 վերագոյն ասացաք՝ Նինուաս : Իսկ ի  
 մեկ սխալանաց ինչ Ջրագաշտի առ  
 Տիկինն, և հակառակութեն ի ներքս  
 անկանելոյ, պատերազմ ի վր նր յա-  
 րուցանէ Համիրամ. քանզի բռնանալ  
 ի վր ամի՛ խորհէր Մարն : և ի սաքս  
 կանալ պատերազմին, փախստական ի  
 նի Համիրամ յերեսաց Ջրագաշտին  
 ի Հայս. աստ ժամանէ վրէժխնդրու-  
 թեան, զի պատեհ գտեալ Նինուա-  
 սայ՝ սպանանել զՄայրն, և ինքն թա-  
 գաւորէ ի վր Ասորեստանի, և Նի-  
 նուէի : Ահա ասացաք՝ և յազագս մա-  
 հուանն Համիրամայ, թէ ս'ւտի՛ և  
 ս'րպէս :



Պրակ. 17.

Յ-լ-գ-ս Բե՛ հ-ս-ս-ս-ս-ս Լ-տ-ի՛ լե-լ գ-ս-ս-  
 ր-լ-՛ Լ-ր-՝ Ի Հ-Լ-Ի-Ի-՝ և լի՛նի՛ հ-հ-հ-հ-հ  
 Լ-ր-՝ Ի Հ-ս-ս-՝:

**Ռ** Ինիմ՝ իմտի՛ և զկեֆաղեօ-  
 նին վն՝ ո՛չ տալ զմեզ՝ բազ  
 մաց ծաղրել. զի ասէ, ՚ի  
 բազմաց այլոց, նախ յալազս  
 ծննդեանն Սամիրամայ, և ապա՛ և ըզ  
 պատերազմն Համիրամայ ընդ Ջրա-  
 դաշտի, և զյաղթին՝ ասէ, Համիրա-  
 մայ՝ և ապա ուրեմն զպատերազմն Հնդ-  
 կաց: այլ հաւաստի մեզ թու՛եցաւ՝ որ  
 ՚ի Մարիբաս Կատինայն է՝ քննութի  
 քաղդէական Մատենից, քան զայսո-  
 սիկ. քանզի ոճով իմն ասէ, և զպատ-  
 ճառս պատերազմին յայտնէ: Իսկ առ  
 այսորիք, և առասպելք աշխարհիս մե-  
 րոյ՝ զբազմաճմուտ Ասորին արդարա-  
 ցուցանեն. աստ ուրեմն՝ զմահն ասել  
 Համիրամայ, և զհետեակ փախուստն,  
 և զպատերազմնն՝ և զիղձս ջրոյն, և  
 զարբումնն: այլ և ՚ի մօտ հասանիլ Սու-  
 սերաւորաց, և զյուռութան ՚ի ծով՝ և  
 քան ՚ինմանէ, ուլունք ՚ի ծով Համի-  
 րամայ: այլ ախորժես առասպել՝ և  
 Համիրամ քար, առաջին քան զՆիո-  
 բէ: արդ՝ այս շատ է: Բայց մեք՝ որ  
 զկնի այսորիկ:

## Պրակ 18.

Որ ինչ շնի հանձնեն Ս-Ռրոմայ,

Արմարեալ զայսոսիկ՝ կար-  
**Յ** զեցից քեզ ի գիրսս յայսո-  
 սիկ, զազգիս մերոյ Աւա-  
 զազոյն Արա՝ և Ղախնիս,  
 և որ ինչ զն նոցա զրոյցք, և իրակու  
 թիք ի բաբանչիւր՝ ոչ ինչ կամաց մտա  
 ծական, և ոչ ինչ անպատշաճ ի ամա յօ  
 բինելով բան, այլ՝ որ ինչ ի գրոց. իսկ  
 ը նմանեացն ապա՝ և որ ինչ ի բանից  
 արանց իմաստնոց. և յայսոսիկ քաջա  
 խոհաց, յորոց մեք արդարապէս քանա  
 ցաք հաւարել զհնադրութիւնս. և ա-  
 սեւք լինիլ արդարաբան ի պատմու-  
 թնս յայսոսիկ ըստ մերոյ յօժարութն,  
 և ուղղամտութն: իսկ ըստ որոց հա-  
 ւարումն Այ լինիլ յայտնիս. և մարդ-  
 կան զովելիս՝ կամ բասրելիս: մեք այ  
 նոցիկ օտար, և իբաց կացեալ. բայց  
 զուգու թի բարբառոց՝ և հաւասարու-  
 թի թուոյ կարգի պատանեաց, զճք  
 մարտասիրութիւն աշխատասիրութնս  
 մերոյ՝ ակն արկէ. և այսոցիկ այսպէս  
 կարգեցելոց՝ կամ հաւասար, և կամ  
 դոյզն ինչ կասեալ յարդարոյն:  
 Ահասոյց քեզ՝ և որ ինչ զինի այսոցիկ՝  
 ի հիւսման պատմութի բանից: Արդ՝

յետ մահուանն Համերանոյ 'ի Չամե  
 սեայ որդւոյ իւրոյ՝ որ է Նինուա .  
 որ և յետ սպանանելոյ զԱրամն , այս  
 պէս հաւատանաւ տեսցուք զհարզ քա  
 նիս : Թաղաւորէ Նինուա՝ սպանեալ  
 զմայրն հեշտասէր , և խաղաղական  
 կեցեալ . և առ սովաւ՝ Արբաշամա  
 աւորք քանալք :

Հաճեալսն ի մտքսնսն է ազգիս հե  
 ռոյ ընդ Հեբրայեցոցն , և ընդ Քու  
 շեցոցն , թիւն յԱրքանագալսոս , որ է  
 ընդ՝ Թունս կանխեալս :

- 11 Արբաշամ
- 12 Խաշակ
- 13 Զակոր
- 14 Ղևի
- 15 Կահակ
- 16 Արամ
- 17 Մովսէս
- 18 Զեսու
- 19 Գաթանիկէ
- 20 Ասղղ
- 21 Բարակ
- 22 Գեղեօն
- 23 Արիմեէլք
- 24 Թովդոյ
- 25 Զայիր
- 26 Զեփթայ
- 27 Եսերօն

Ի մահնէ յառաջ ու  
 ըստ ազգի՝ այլ ըստ յ  
 յառաջորդեալսն է ա  
 ռանց՝ զի և մահնէ  
 յետն յԱրքանագալս  
 Ի ստորինն որո ըն  
 յառանցիս՝ անցի  
 ՚ի մահնէ քսիսս .  
 ինչ յԱգոսս՝ նա  
 սելս ՚ի Թարսիս :

28	Էջօն	Ե յայտնի զբարձրօքն՝
29	Արզօն	որ յարձանան Աֆրի
10	Սամփսոն	իեցաց ալիարհին գլ
11	Հեզի	բեւլ ինն Բնիկ յայ
32	Սամուէլ՝ Սաւ	որ ծամանսիտ արդ
13	Դաւիթ	բողես այողես :
14	Սալմոն	Ի Յեռուայ գաղղ
15	Ռոբոզամ	իտիտացեալ Բ
36	Աբիամ	Նտիտորբս ամա
37	Ասայ	նացաց՝ եխտ բնա
38	Յոսափատ	իկա տա՝ յորոց Բ : Ե
19	Յորամ	Քանանիտա զա
		մանիւնագոյն Բր ի
		Հոյ :


Եւ որոհեալ հասարի՝ գտա զտերանդա  
ալգին Գիտանեաց : Ի մանէ առանց հա  
յառայութի վեւ շոյս , Ե բարս արանց ալ  
գի յայտնեն Քանանացի գալ :

11	Նինուա	Արամ
12	Արիս	Արայն զեղեցիկ
13	Աալիս	Արայ Արայեան
14	Բուկոս քեռքսր	Անուշաւան
15	Արմաթրիտէս	Փարեա
26	Բելորոս	Արբակ
17	Բալէոս	Չաւան
18	Ազատադոս	Փառնաս
19	Մամիգոս	Սար
20	Մաքրալէոս	Հաւանակ
21	Սիառոս	Աշտակ
22	Սամիլոս	Հայկակ

23	Սփառէտես	Ամբակ
24	Ասկատաղէս	Առնակ
25	Ամենդէս	Հաւարչ
26	Վատասկար	Նորայր

Իսկ հերոյն Արայի որդի Արայի ի Սփառսայի հուշեցելի ի զհործ վերսիցսն ինքն ընդարհիս նմահասարցեալ: Իսկ նք Անուշասան: Ղշայիսի ստն լիծել սոթել լոսոսիս, և ամբիս ին որորեալ սնորհարդս՝ և հոսնել ի նիս:

27	Սուսանիս	Գոռակ	
28	Ղամպանիս	Հրանտ	
29	Պանեաս	Ընձաք	
30	Սոսանոս	Գղակ	
31	Միթոնէս	Հորոյ	
32	Տեմանոս	Չարմայր	Սո՛ սփնս
33	Թինեւոս	Պերճ	հն զսոսոս
34	Դեակիւղ	Արբուն	իս, և սոսոյ
35	Եւպաղոս	Բաղուկ	ստեալ ընդ
36	Պակիւծիս	Հոյ	Երսիցոյի
37	Փառասէս	Յուսակ	չորսն՝ հ
38	Աղաղանիս	Կայսրակ	սանի ի ս
39	Սարգանս պաղոս	Սկայորդի	ընցն Հեւս նոցոյ:



## Պրակ 19.

Առն Արայեան Արայի . և ի է սորա որդի  
Անուշանն՝ որ Սոս անանի-դ :

Յի անդէն իսկ ՚ի կենդանու  
Թն իւրում Համերամ , ըզ  
ձնեալն ՚ի Նուարդայ՝ ՚ի սի  
րելի կնոջէն Արայի , որ էր  
երկոտասանից մնացեալ ամաց՝ ՚ի մա  
հուանն Արայի . վասն առաջին իւրոյ  
խանդաղատանաց՝ որ առ Արայն Գե  
ղեցիկ՝ կողէ զանուն նորա՝ Արայ . և  
կարգէ զնա ՚ի վերակացու թի աշխար  
հիս , մտերմութի հաւատացեալ ՚ի նա :  
զորմէ՝ և մեռանիլ առնն ընդ Համե  
րամայ՝ ՚ի պատերազմի : բայց յարէ ըզ  
կարգ բանից՝ զկնի այսորիկ՝ այսպէս .  
Արայեանն Արայ մեռանի ՚ի պատե  
րազմի ընդ Համերամայ , թողլով ա  
րու զաւակ՝ ամենահարուստ և շատա  
հանճար՝ յիր , և ՚ի բան՝ զՆուշաւանն  
սօսանուէր : բանդի ձօնեալ էր՝ բա  
սաշտամանց , ՚ի Սոսիան Արամանե  
կայ , որ յարմարի . զորոց զսաղար  
թուցն սօսալին՝ հանդարտ , և սաս  
տիկ շնչելոյ օդոյն և և թ՝ սասոց շար  
ժուին , սովորեցան ՚ի հմայս յաշխար  
հիս Հայկազանց . և այս ցրաղու մեծա  
մանակս : Այս Անուշաւան՝ բաւական  
ժամանակս արհամարհութի կրեալ ՚ի

Չամեակայ Տուայտի, 'ի դրան Ար-  
բունի . իսկ օգնեալ 'ի բարեկամաց՝ շա-  
նի զմանն ինչ աշխարհիս՝ Հարկահա-  
նութի ինամեալ . զկնի ապա՝ և զքո-  
լորս : այլ կարի շատ լինի, եթէ զման-  
որ ինչ արժանն իցէ՝ ասիցեմք 'ի Տա-  
ռիս զնախակարգեցելոց Արանդդ՝ ԸԸ  
գործս, և զքանս :

Պատկ 20.

Առ 'ի Սիւյ որդոյն՝ Պորոյր առնին 'ի  
Հոյս Բագորէ . օգնիւն լինի Վար-  
իւնայ Մարի . Բանուլ զԲագ-  
որսնին 'ի Սորդանդալ :



Ողջով զոչ կարեորագոյնս  
'ի բանից, ասասցուք՝ որ ինչ  
հարկաւորն : զԵրջին սոցա,  
որք Արեւստանեայց թա-  
գաւորութիւն . և որք 'ի Համիրամայ,  
և կամ թէ՛ 'ի Նինասէ, զմերս ասեմ .  
Պորոյր՝ առ Սարգանապալեաւ . որ ոչ  
փորք ինչ՝ օգնականութի տունեալ զը-  
տանի 'ի Վարբակայ Մարի, բառնա-  
լով զԹագաւորութիւն 'ի Սարգանա-  
պալայ : Եւ այժմ, ահա զուարճացայց  
ոչ փորք ինչ կրելով ինչութի, հա-  
տանելով 'ի տեղիս՝ յորում մերոյ իսկ  
Բնիկ նախնոցն 'ի Թագաւորութեանն  
հասանին յաստիճան . Վն որոյ՝ արժան

է աստանօր, մեծ գործ կատարել՝ և բազումս ասել՝ առարկութիւն բանից՝ զորոյ մէջէն իսկ զհիմանս այսպիսեաց բանից՝ ընթեռնուլ արժանաւորեցաք ՚իչորս հազներդութիւն, զարգաստորին՝ ՚իբանս, և զհիմասանոյն իսկ, և ՚ի մէջ իմաստնոց իմաստնագունի։ Քանզի Արրակիս, գաւառա Մեզացի. ՚ի փարունց կողմանց, ՚ի ծագաց գաւառին՝ Ամրագունի. իտրամանկազոյն ՚ի կենցաղազարութե. ՚ի մարտս՝ երեսուոր։ ծանուցեալ՝ զանմարդի բարս, և զհեշտասէր թուլամորթութիւն յաղթութե. թունոյ կոնկողեռայ։ իայտացուցանէ՝ բարուցն, և ձեռացն առատութիւն, ՚ի Քաջաց, և ՚ի Պատանեաց արանց բարեկամս։ որովք՝ և աշխարհակալութիւն Ասորեստանի՝ առ այնու ժամանակօք՝ վարիւր յայտնապէս մեծաւ հաստատութիւն։ յինքն և զՔաջմեր Նախարար, յանկուցանէ՝ զՊարոյր, թագաւորութե շուք, և ձեռնմա իստտանալով։ և բազում ամբոխս՝ արի արանց՝ և որբ, ՚ի տէգնի զակի՝ և յաղեղն, և ՚ի սուսեր աջողա ձեռնագոյն՝ գումարէ։ և այսպէս ըզթագաւորութիւն ՚ի Սարգանապալայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի՝ և Նինուէի. բայց Արակացու զայլս թողլով, փոխէ զթագաւորութիւն ՚ի Մարս։ այլ զայս՝ եթէ առ այլս՝ այլ

Լազարար պատմի, մի՛ ինչ սքանչանար:  
 զի՛ ուն զերազոյնն ուրեմն՝ յառաջին  
 ճառան՝ ամբաստանեցաք զԱռաջնոցն  
 մերոց՝ Նախնեացն՝ անխմաստասերբա  
 րուց՝ և արտօմակաց, այս հանդիպի  
 և ատանօր, քանզի՛ որք՛ ՚ի հօրե՛ Նարու  
 գոգոնոսորայ զրեցան՝ իւրենց յիշողու  
 թնց՛ ՚ի Աերակացուաց. իսկ մերոյն՝ ո՛չ  
 այսպիսի ինչ խորհեցելոյ, մնաց աննշա  
 նակելի ՚ի Աերջինան: Ապա՛ թէ ասի  
 զևս՝ ուստի մեզ՛ Նախնեացն մերոց,  
 զիտել զանուանս՝ այսպէս իսկ զԲազ  
 մաց և զգործս: Ասեմ, զհնոցն Գի  
 լանայ Բողղէացուց, Ասորեաց, և  
 Պարսից. զս՝ մտելոց անուանց, և զոր  
 ծոց նոյ՛ ՚ի Քարաէս Արքունի, իբրև  
 Աերակացուաց, և Գործակալաց աշ  
 խարհիս, ՚ի նոցանէ կարգեցելոց, և  
 մեծաց Կողմնակալաց աշխարհիս, ՚ի նո  
 ցանէ կացելոց:


Պրակ 21.

Կոր՛ թա՛գասորաց, և իւրեանոց մերոց.  
 և համար նոցանոց, Արդ՛ ՚ի հօրե՛ անուան:



րդ՛ այժմ անցից ՚ի թիւս ա  
 րանց մերոց՝ մանուանդ թէ  
 թազաւորաց՝ մինչև ցուե  
 րութիս Պարթևաց: քան  
 զի՛ այսորիկ Արք. ՚ի մերոց թազաւո

բաց են սիրելիք՝ ունի Բնիկք, և իմոց  
Արեանառաք՝ և հաւաստի հարա-  
զաօք: և սիրելի էր ինձ՝ յայնժամ դալ  
Փրկչին, և զիս գնել. և առ նորօք՝  
զիմ յաշխարհ զմուտն լինիլ, և նոցա  
Տէրութեանն զուարճանալ՝ և յար-  
դեացս ասլրիլ վտանդիցս. այլ վաղ ու  
րեմն էանց ՚ի մէնջ՝ պատաստմն այն,  
թէ արդեօք և վիճակ: Բայց արդ՝ ևս  
առ Օտարաց Թաղաւորութիւն կա-  
ցեալ՝ ընդ նոցայն, զմերս ազգի՝ ա-  
ծից զկարգ Թաղաւորացն. զի մերոյ  
աշխարհիս՝ Բնիկք Պատկաւորք Արք  
այնորիկ. զորոց զանուանան, ՚ի նոցա  
նէ գրուցն սոցոք: Եւ զի՝ արդարև զայ  
նու ժամանակաւ՝ էր մերոյ Ազգիս  
Թաղաւորութիւն՝ վկայէ և Երեմիա  
մարգարէ, ՚ի բանս իւր հրախրելով  
ընդդէմ Բաբելոնի, ՚ի պատերազմ: Տը  
բանան տար՝ տակ՝ Այրարատեան  
Թաղաւորութեն, և Ասրանազեան  
Կնդին: ( Երէկո. 51. 27: ) Եւ այս  
հաւաստի մերոյ գոյոյ Թաղաւորու-  
թենն՝ առ այնժ ժամանակաւ. այլ մեր  
զկարգն կանոնելով առ ընթեր, և ըզ  
Մարաց Թաղաւորան:



Մտայ Առնիւն	Ինչ էր Առնիւն վեր բնայ գոտիւն :
40 Արբաղիս	Պարոյր ռդի Սկայ
41 Մանդաղիս	Հրաչեայ
42 Սասարմաս	Փառնուաս
43 Առտուկաս	Պաճոյճ
44 Կարդիկեա	Կոռնակ
45 Գեւորկիս	Փառաս
46 Արտունիս	Միս Հայկակ
47 Կվարաաթիս	Երուանդ սակաւա
48 Ածղահակ	Տիգրան . կեայ

Քանզի՛ և վերջին Երուանդս՝ և Տիգրան, ՚ի սոցանէ՛ ըստ յուսոյ՝ կոչեցեալ ասեմ, արդեօք ո՛չ կարի հեռագոյն դարով ժամանակին : յիշեցուք զանուանա այսոցիկ . Հրաչեայ սա կոչի վն առաւել պայծառ երես, և բոցակ նագոյն իմն լինելոյ . Առ սովա՛ ասեն կացեալ զՆարուգոդոնոսար Արբայ Բարեւաջուոց, որ գերեաց զԷրէայս, և սորա՛ ասեն զ՚ի ՚ի գլխաւոբաց հերբայեցոցն գերելոց՝ ինդըրեալ ՚ի Նարուգոդոնոսարայ, Համբաթ անուն, ամեալ՝ բնակեցոյց մեծա պատուով . և ՚ի սմանէ, ասէ Պատմադիրն՝ լինիլ զԱզդն Բաղրատունի՛ և հաւաստի է :

## ՏՆՈՒՄ ՄՏԻՄՈՅ :

Բայց թէ՛ սրպիսի ջան եղև Թա-  
գաւորացն մերոց՝ զնոսա, ՚ի պաշ-  
տօն կոսցն խոնարհեցուցանել . և  
կամ թէ՛ քանի՛ք, կամ ո՛չք՝ ՚ի նոցանէ՛  
որք Ածաբաշտութեամբ վճարեցին ըզ-  
կեանս, յետոյ պատմեսցուք սճով .  
Քանզի՛ ասելն յոմանց անհաւաստի  
մարդոց՝ ըստ յօժարութե, և ո՛չ ըստ  
ճշմարտութեան, ՚ի Հայկայ՝ զԹագա-  
ղիբ ւող Բագրատունեաց լինիլ . վճ-  
որոյ՝ ասեմ, մի՛ այսպիսեաց քանիցս՝  
հաւանիր յիմարութեանց . զի և ո՛չ  
մի շախի՛ կամ ցուցումն դոյ յասա-  
ցեալսդ՝ որ զարդարութի ակնարկէ .  
զի ՚ի բայ քանից՝ և անոճ իմն՝ յաղագս  
Հայկայ՝ և աննմանեացն՝ կակաղէ .  
Բայց ծանխի՛ր՝ զի Սմբատդ անուն՝ զոր  
յաճախ՝ Բագրատունիքդ ՚ի վճ Պա-  
տանեկաց կուեն . ճշմարտութեամբ է,  
Համբայ՝ ըստ նախնի իւրեանցն խօսից՝  
որ է հերբայեցի :



Պրակ 22.

Յազգո արքայն Սէնէսարիմայ . և թէ՛  
Արծրանիտ , և Գնանիտ , և Բոյեշիտ՝  
անանէւ ի Աշխէտայ , ի նոյնէ եւ  
փրէւս . Եւ ի նոյն Տաւր , թէ՛  
անգէլ Կանն ի Պատմայ :

**Ա** Յի՛ յառաջ քան զձեռն ար-  
կելն ՚ի բանան՝ որ յազագս  
Մեծին Տիգրանայ , որ ինն  
երորդ ՚ի Բնկայ մերոց Պա-  
կաւորաց էր , հուժկու անուանի՛ և  
յաղթող՝ ընդ այլ Աշխարհակալս , ճա-  
ռեացաբ որ ինչ կարեորագոյն է՝ ո-  
ճոյս մերոց ըանկց : Եւ ՚ի մտառոյումն  
եկն արդեօք . թէ՛ այն լինիցի՛ յազագս  
Սենեքերիմայ : Քանզի ութսուն ա-  
ւելի , կամ պակաս ամօք՝ յառաջ քան  
զթիւրութիւն Նարագողոնսարայ ,  
էր Սենեքերիմս կոչելի՛ Արքայ Ասորես  
տանի , որ զէկմ պաշտօնց առ Եզեկիայ  
իւ Հրէից առաջնորդաւ . զոր սպանելի  
որդւոց նորա՝ Ագրամելայ՝ և Սանա-  
սարայ , եկին փախստական առ մեզ :  
յորոց զմինն՝ յարեմոից հիւսիսոյ մե-  
րոյ աշխարհիս , մերձ ՚ի սահմանս նո-  
րին ասորեստանի՝ բնակցուցնէ Սկայ  
որդի քաջ մերնախնին , ցի է՛ զՍանա-  
սարն : և ՚ի սմանէ՛ աճումն , և բազմա-  
սերութիւն լեալ՝ լին զՍիւնն , ասացեալ

լեառնն : Իսկ պերճագոյնք 'ի նոցանէ՝  
 և դ լեառորս գոյնք , յետոյ ուրեմն՝ մը  
 տերմութի վաստակոց առ թագա-  
 ւորսն մեր ցուցեալ՝ Բզեչխութի կող-  
 մանցն՝ արժանաւորեցան առնուլ : Իսկ  
 Արզամուզանն՝ յարեւելից հարաւոյ՝ նո-  
 բին կողմանն բնակեալ . 'ի սմանէ՝ ա-  
 սէ Պատմագիրն , լինիլ զԱրծրունիս :  
 արդ՝ յեշեշն մեր զՍենեքերիմ , պատ-  
 ճառս է այս : բայց զանդեղ առնն ,  
 առէ նոյն Պատմագիր , 'ի Պատքամայ  
 ու մեծէ , 'ի Հայկայ թոռնէ լինիլ :

## Պրակ 23.

Եւրգ - Տեգրանոյ՝ Բէ Երդիտի - Բ  
 Եւրգի :


 Այց անցցուք այսուհետեւ՝  
 որ ինչ յաղագս Տեգրանայ .  
 քանզի սա ամենեցուն թա-  
 դաւորացն մերոց հարստա-  
 գոյն՝ և խոհեմագոյն , և արանցն այ-  
 նոցիկ՝ և ամենեցունց բազաք : որ և՛  
 կերտսի աջակցեալ զՄարացն 'ի բաց  
 բառնալով զիշխանութի . և զՅոյնս՝  
 ոչ սակաւս ժամանակս՝ ընդ իւրով  
 հնազանդեալ նուաճեալ . և զսահ-  
 մանս մերոյ բնակութի ընդարձակեալ  
 'ի հինն մեր հասուցանէր յեզերս ծայ-  
 րից բնակութեց . և ամենեցունց՝ որք

առ իւրովքն էին ժամանակօք՝ նախան  
 ձելի . և զկնեացն ըղձալի , ինքն՝ և  
 ժամանակ իւր : զի՝ ո՛վ որ ՚ի ճշմարիտ  
 արանց՝ և որոց ՚ի բարս արուծն , և  
 ի սոհականութն՝ սիրելութի կայցէ , սո  
 բա յիշատակօքս՝ ո՛չ զուարճացի , և  
 յորդորեսցի այսպիսի լինիլ Այր . Ա  
 րանց Գլուխ, արուծի ցուցեալ զազգս  
 մեր բարձրացոյց . և զնոր լծով կացելն՝  
 լծադիրս բազմաց , և հարկապահանջս  
 կացոյց . միտերս սկւոյ՝ և արծաթոյ ,  
 և քարանց պատուականաց , և զգես  
 տուց , և պէսպէս դունից՝ և անկուա  
 ծոց , արանց միանգամայն , և կանանց  
 հասարակաց՝ բազմացոյց . որով ազե  
 ղագոյնքն՝ իբրև զգեղաւորս երևէին  
 զեղեցիկք . և զեղաւորքն՝ ըստ ժա  
 մանակին՝ առհասարակ Գիւցազնա  
 ցեալք : Հեռեամարտքն , ՚ի վերայ ու  
 սոց ձիոց բերեալք . և Պարսաւորքն՝  
 առհասարակ զիպաղեղունք՝ և շնչ  
 տաւորք , ՚ի սուսեր , և ՚ի նիղակ վա  
 ռեալք : մերկքն՝ վահանօք , և զգես  
 տօք երկաթեօք պարածածկեցեալք .  
 որոց ՚ի մի վայր հասեցելոց՝ բաւական  
 էր տեսիլն միայն՝ որ ՚ի նոցայն պահ  
 պանակաց , և զինուց փայլմունք , և  
 շողիւնք զթշնամիսն արտահալածել :  
 խաղաղութն՝ և շինութն բերօղ . իւ  
 ղով և մեղու զամ հասակս պարարել :  
 Այս՝ և որ այլ այսպիսիք բազում , և

բեր մերայ աշխարհիս՝ յարտեաշա այս,  
 և աղղերեկ ծայրիս՝ Երուանդեանս  
 Տեգրան . երեսօք դունեան , և մե-  
 ղունակն՝ աննեայ . և թիկնաւեան առայ  
 գաքարձ , և գեղեցկանս . պարկեշան ,  
 ի կերակուրս՝ և յըմպելիս , և առ իրախ  
 ճանութիս օրինաւոր : զորմէ ասէին ի  
 շինան մը՝ որք քանդ աւաճին երգէին .  
 լինիլ սմա՝ և իցանկութիս մարմնոյ՝ չա-  
 փաւոր , մեծիմաստ՝ և պերճարուն . և  
 յիմ որ ինչ մարդկութիս պիտանի :  
 Եւ՝ զինչ ինձ ի գիրս յայսօսիկ իցե-  
 ռանս սիրելի , քան թէ՝ որ յազազս սո-  
 րա կին գովեսաց , և պատմութիւնք  
 յերկարել . արդարադատ՝ և հաւասա-  
 րասէր կշեռս ունելով յիմի . զիմ ու-  
 բոք զկենցաղ մտացն լծակշեռ . ո՛չ  
 ընդ լաւադոյնան՝ ինդայր , և ո՛չ զսրա-  
 բուկն արհամարէր , այլ ամենեցուն  
 հասարակաց հնարէր զնամակցն իւրոց  
 ի վթ տարածել զգետա : Սա , նախ յա-  
 ռաջադոյն՝ որ ի Մարացն էր Աժդա-  
 հակ եղեալ՝ տայ նմա դքայր իւր Տեգ-  
 րանուհի կնութիւն ըղձիւք զնա ինդ-  
 րելով Աժդահակայ : քանզի ասէր ,  
 կի՛ ի ձեռն այսպիսոյ մերձաւորութե՛-  
 սէր հաստատուն առ Տեգրին հարսակ-  
 կի՛ գիրաւ զնա այսպէս դաւաճանեալ  
 ի սպանումն . զի էր նա ինքի՛ կամաց  
 իւրոց , մարդարեւ թի՛ իմն՝ յո՛չ կամաց  
 լեալ նմա առաջի կայ գիպունածն :

Պրակ. 24.

Ասն երիտ-ընդ-ի-ժ-ն-ցն Ածբ-հ-ւ-յ,  
 'ի Բ-բ-ն-ու-Բ-Է սերոյն Կե-բ-ո-Բ' և  
 Տեգ-ն-այ :



Այ՛ց՝ էր նիւթ այսպիսի խո  
 հախանութի, դաշնաւորու  
 թի մտերմութեն՝ որ՛ի կի  
 րակն առ Տիգրան : յարմե  
 բաշում անդամ, և աստ քնոյ իբաց  
 փախուցեալ լինէր ՚ի նմանէ՛ յիշատա  
 կօք այսու՛իկ . և խորհրդակցացն իւ  
 րոյ՛ անդուլ առնէր հարցումն՝ վասն  
 այսպիսոյ պատճառի : զի՞նչ պիտի՛ հը  
 նարիք լուծանել կարացուք՛ զկապ  
 սիրոյ Պարսկայնոյն, և Հայկազնոյն  
 բազմաբիւրաւորի : Եւ՛ այսպիսում  
 շփոթման խորհրդոյ՛ հասանէ նմա  
 առաջիկայիցն յայանութիւն, ՚ի ձեռն  
 անբրջականաց իմն նախատեսութեց  
 օրինակաւս այսու՛իկ՝ ասէ, որ պատ  
 մէն :



## Պրակ 25.

Թե՛ որդե՛ ՚ի ի՛նչի՛ լինելով Սփարահայ՝  
 ըստ ընդ զի գտնուեալսն արան  
 զեւեկ երազէ:




Մասէ՛ յաւուրսն յայնսսիկ՝  
 ո՛չ սակաւ ինչ վտանգ՝ որ ՚ի  
 Սարահայ Սփարահայ ՚ի  
 միարանութենէ կերտսի,  
 և Տիգրանայ: Ան որոյ՝ և ՚ի սաստկու  
 թէ ծփանայ խորհրդոցն՝ լինէր նմա  
 ՚ի տեսլեան երազոց, և երևութանայ  
 ՚ի բուն գիշերոյ՝ զոր ո՛չ երբէք յարթ  
 նութե՛ կտես աչօք, և ո՛չ ՚ի լուր ա  
 կանջաց լուաւ. ուստի՛ և ընդստ ՚ի  
 բնոյ լինելով. ո՛չ մնաց՝ ըստ սովո  
 թութե՛ կարգին, ՚ի ժամ խորհրդակա  
 նութեն. այլ՝ այն ինչ գիշերոյն՝ ո՛չ  
 սակաւ ժամս ունելով շայնէ զխորհր  
 դակիցսն, և տրտում երեսօք՝ յերկեր  
 հայելով ՚ի խորոց սրտին, մանչէ յոգ  
 ւոց հանութիւն. և զվասն էրն, ՚ի խոր  
 հրդակցայն հարցանիլ յերկարէ ժամս  
 ինչ զպատասխանին. և ուր ուրեմն՝  
 հեծութիւն սկիզբն արարեալ յայտնէ  
 զամ, որ ՚ի ծածուկս սրտին խորհուրդք՝  
 զիրս ահաղին տեսլեանն: Էր ինձ՝ ա  
 սէ ո՛վ Սիրելիք՝ այսօր լինիլ յերկրի  
 անծանօթում, մերձ ՚ի լեառն մի երկար  
 յերկրէ բարձրութիւն, որոյ զազաթն՝

սասակու թի սառնամանեաց պատելե  
 ասեին, գողցես՝ յերկրին Հայկազնեայց  
 զայս լինիլ : և ՚ի նայել ինձ յերկարա  
 գոյսա ՚ի լեառնն , կին ոմն ծիրանազ  
 գեսա , երկնադոյն ունելով զիւրե  
 տեռ , նստեալ երեւցաւ ՚ի ծայրի այն  
 պիւոյ բարձրութե . աչեզ՝ բարձրա  
 հասակ՝ և կարմրայտ , երկանց ըմբ  
 նեալ ցաւովք : և ՚ի յերկարագոյնս  
 նայել իմ յայպիսի երեւումն , և ՚ի հիաց  
 ման լինիլ . ծնաւ յանկարծակի կինն՝  
 երիս կատարեալս ՚ի Դիւցազանց հա  
 սակաւ , և բնութի : առաջինն՝ զե  
 բանան ՚ի վի առիծու ածեալ՝ սրանայր  
 յարեմուտս : և երկրորդն՝ ՚ի վի ընծու  
 ՚ի հիւսիսի հայելով : իսկ երրորդն՝ ըզ  
 վիշապ անարի տանձեալ ՚ի մերոյս վե  
 բայ շահատակեալ՝ յարձակէր տերու  
 թե : Եւ ՚ի մեջ խառնից այսպիսեաց  
 երազոց՝ թուէր ինձ կալ ՚ի վերայ տա  
 նեաց իմոց արքունեացս , և զնոյն ինքն  
 ՚ի վերին երեսս տեսանել յարկացս ,  
 զեղեցկօք՝ և բազմադունիւք յօրինել  
 շատրուանովք : և զպսակօզան մեր ըզ  
 դիան՝ հրաշատեսիկ տեսլեամք ՚ի վերայ  
 կացեալս , և զիս ձեօք հանդերձ , պա  
 տուել զնս զոհիւք՝ և ինկովք : և յան  
 կարծակի ՚ի վեր հայեցեալ , զայն՝ որ ՚ի  
 վերայ վիշապին հեծեալ էր այր , ար  
 ծուոյ իմն սլացման՝ թեովք թուէր  
 յարձակեալ . որ մտահասեալ խորհէր

կործանել զգրան: Իսկ՝ եւ Աժդահակ  
խորոյ ընդ մէջ անկեալ՝ յիս զայնպի-  
սիս ընկարոյ յարձակումն, մարտ ընդ  
սքանչելոյն յառնելով Գիւցաղին:  
եւ նախ՝ ի տեղ նիղակաց զմարտինս եր-  
կաքանչիւրոց յոչելով՝ վտակս արեան  
հասեցաւցար: և զարեգակնատեսս ե-  
րեսս ապարանիցս՝ արեան հասեալ  
ցուցար ծով. այսպէս՝ և զկնի այլովք  
զինուք՝ ժամս ոչ սակաւս: Բայց զի՝ նչ  
օգուտ ինձ՝ և խօսիցս երկարութի՝,  
զի վախճան դործոյն՝ իմն լինիլ կործա-  
նումն. սուսի՝ և ի քրտան սասակու-  
թեան յայսպիսում եղեալ վտանգէ,  
փախեալ յինէն քունն: և ոչ այսու  
հետեւ թուիմ եւս կենդանի. զի ոչ  
այլ ինչ այսպիսիս նշանակէ երես-  
թիցն շարժումն, եթէ ոչ՝ որ ի Հայ  
կազմոյն Տիգրանայ մեզ հասանելոց  
է բանութեան յարձակումն: Բայց  
ո՛վ արգեօք՝ յիս անոցն օղնականու-  
թեան՝ քանի՛, և դործով մեզ օգուտ  
խորհելով՝ ոչ զինքն կարծիցէ թագա-  
ւորակից մեր լինիլ: Ա՛յ բազում ինչ  
ի խորհրդակցացն լուեալ օգտութե-  
մամբութի, շնորհակալութի զնոսա  
պատուէ:

Պատկ 26.

Յորդանոսի որ ի Իրիւրորդանցն բան, շինի  
 -դ-ն և որ ինչ ի-ր Տարածութի. և ի  
 2-յն հետե՛ արն զործ :



Ազում ինչ՝ հանճարով. և ի  
 մաստուծի՛ ի ձէնջ լուեալ  
 աւէ՛ ո՛վ սիրելիք, ասացից  
 և որ ինչ իմ, յետ Աճոցն  
 օգնականութե՛ յայտոցիկ՝ օգտակարա  
 գոյն բան՝ և իմաստութիւն : Քանզի՛  
 ո՛չինչ առ թշնամեացն զգուշութի՛ վե  
 հադոյն բերէ օգնականութիւն, և ծա  
 նօթութիւն նոցայցն առաջի արկելոց  
 գործոցն, քան թէ՛ որ ի ձեռն սիրով  
 դաւելոյն՝ զկորուստ խորհեացի. և զայս  
 դարձեալ՝ ո՛չ ի ձեռն դանձուց, և ո՛չ  
 ի ձեռն բանից պատրազաց՝ այժմ մեղ  
 նարաւութի՛ է՛ կատարել, եթէ ո՛չ  
 ունի կամք են ինձ՝ այժմ գործել, և այն  
 է նիւթ կատարման խորհրդոյս, և հը  
 նարբ որոգայթիցս՝ Գեղեցիկն ի կա  
 յայս, և խոհեմն քոյր նորա՝ Տիգրա  
 նուհի զի այսպիսիքս իսկ արտաբուստ  
 և եկամուտ հարազատութի՛ք՝ համար  
 ձակ զդաւելն ի ձեռն երթևեկութե  
 անյայտարար՝ ընդարձակ մարթեցու  
 յանիցեն վարժել. կամ յանկարծ օրէն  
 իւրոց Մտերմաց՝ ընկիք, և խոստ  
 մամբ պատուոց՝ տալ հրաման խողիւս

զէլ սրով . և կամ հնարիք գեղոց . և  
 կամ զՄտերիմս նորա՝ և զԿուսակալս՝  
 ընչիք ի նմանէ ի բաց մերկանալ . և  
 այսպէս՝ իբրև տղայ անզօր, ի բուն  
 առցուք : Եւ տղաք համարեալ բա-  
 րեկամացն՝ զայսպիսի խորհուրդ, նի-  
 թեն և զգործն . ի ձեռն միոյ ուրումն  
 խորհրդակցացն տուեալ բազմութի  
 գանձուց, ի ձեռն թղթոյն՝ օրինակաւս  
 այսուիկ յուղարկէ :

Պրակ 27.

Թուշ Աժդահայ, յեռ արայ՝ և յած-  
 բութ Տէգրանայ, և յաւուրիւն  
 Տէգրանահայ ՚ի Մուր :



Թուէ սիրելի Եղբայրութեդ  
 քա, ոչինչ օգտակարագոյն  
 ի կեանս աշխարհիս ՚ի Պիցն  
 մեզ պարգևեալ՝ քան զՍի-  
 րելեաց բազմութի . և այսօրիկ, իմաստ  
 նոց արդեօք՝ և հզօրագունից : զի այս  
 պէս՝ և արտաքուստ՝ ոչ ՚ի վր համար-  
 ձակին խառնութիբ . իսկ և կեալքն վաղ  
 վաղակի հերքին . իսկ ՚ի ներքս՝ ոչ ըզ-  
 մուան յումքէ գտեալ՝ այսպիսոյ շա-  
 րութեն, հալածել լինին : արդ՝ զայսպի-  
 սի շահ օգտութն՝ որ ՚ի բարեկամա-  
 թենէ լինի, տեսանելով խորհեցայ և  
 ես՝ հաստատուն, և խորագոյն գտերն

հաստատել 'ի միջի. զի երկոքեանս յիմ  
 կողմանց ամբոցեւ 'ողջ' և անշարժ զուե  
 բաւ ևս մեր կալցուք. և այն լինի 'ի տալն  
 ըս' զՕրհորդդ Հայոց մեծաց' զքոյր քո  
 Տիգրանուհի' ինձ կնուէ. թէ արդեօք'  
 և բարի դմա համարիցիս, Թագուհի  
 Թագուհեաց դմա լինիլ: ո՛չ ըլեր' Թա  
 գակից մեր' և սիրելի Եղբայր: Եւ ա  
 ռանց յերկարելոյ զքանս' ասացից. դայ  
 առաքեալն և կատարէ յաղագս Օրհոր  
 դին Կեղեցիկ: զի յանձն առեալ Տիգ  
 րանայ' տալ զքոյր իւր Տիգրանուհի' Աժ  
 գահակայ կնուի. և չե և ս գիտելով  
 զառ 'ի նմանէ դաւաճանութիւն, յա  
 ղարկէ զՔոյր իւր' օրինօք Թագաւո  
 րաց: Չսա առեալ Աժգահակայ' ո՛չ  
 միայն վս նենգին, որ 'ի սրտի իւրում,  
 այլ և' վս գեղեցկութեն, առաքին ի  
 րոց կանանցն կարգէ. և զչարսութիւն  
 'ի ներքոյ ստայն հանէ:

Պրակ 28.

Եւ իւր օրդեւ յայտնեցաւ նենգութիւն, և  
 գրտնեցաւ իւրտն. յորտմ, և իմն  
 Աժգահակայ:



Կնի այսորիկ' ասէ, թէ 'ի  
 հաստատել Աժգահակայ ըզ  
 Տիգրանուհի 'ի տիկնութե.  
 ո՛չ ինչ' առանց կամաց նր.  
 'ի Թագաւորութեան իւրում դործէր.

այլ բերանով նո կարդէր զիմ. և հը  
րամանի նո, ամենեցուն հրամայէ հնա  
զանդիլ: Եւ յորինեալ զայս այսպէս,  
սկսանի նմա մեղմով զպատրանս մա-  
տուցանել: ոչ զիտես, ասէ՛ զի և զ-  
բայր քո Տիգրան իմանդացաւ զՏիկնու  
Թի քոյ՛ ՚ի վի Արեաց, ՚ի Չարուհեաց  
կնոջէ իւրիէ զբոգակալ. և զի՛նչ լինի-  
զի այն, և Թէ ոչ՛ մեռանիլ ինձ նախ՛  
և առաջին, և ապա՛ լինիլ զՉարու-  
հի ՚ի վերայ Արեաց, և զաստուածու-  
հեաց ունիլ զուեզի: Բայց անդ՛ ընտրելի  
է քեզ այժմ՛ զմի յայտցանէ: կամ լի-  
նիլ Եզրայրասէր, և կործանուան իայ  
տառապէալ՛ յանդիման Արեաց՛ յանձն  
տանալ. և կամ զանձին իմանալով ըզ-  
բարի՛ իտրհուրդ օգտակար ՚ի մէջ բե-  
րել, և յազագս՛ առաջի կախցն հոգալ:  
Բայց էր ՚ի մէջ այսպիսում խորաման  
կուԹե՛ Թարուցեալ և զայն, զմեռա-  
նիլն Տիգրանուհեաց, Թէ ոչինչ՛ ըստ  
կամաց, խորհեացի Մարա Պարսաց  
ւոյն: Այլ իմացեալ Խորադիտոյն, և  
Գեղեցկին՛ զայսպիսի դատաճանուԹի,  
պատասխանի առնէ սիրելի բանս՛ Աժ  
դահակայ: և արագագոյն՛ ՚ի ձեռն Մը  
տերմաց՛ պատմի Եզրոյն զնենգուԹիւն  
և ձեռնարկէ՛ այնուհետև ՚ի գործն,  
՚ի ձեռն պատգամաւորուԹե՛ դալ նո-  
ցա ՚ի միտքանուԹե՛ տեսուԹե՛ ՚ի տեղ  
ւոր միում, տահմանաց երկացունց Թա

զատութեց . իբր բան ինչ՝ և զործ  
 հարկաւոր հասեալ՝ որ 'ի ձեռն գրոյ,  
 և հրեշտակութե՝ կատարել ոչ կարո  
 լութի, եթէ ոչ՝ և դէմք երկոցունց՝  
 անդէպ երկաքանչիւրոցն՝ երևեսցին :  
 Այլ գիտելով Տիգրանայ զառաքեցե  
 ւոյ իբնն զկատարումն, ոչ ինչ՝ յորոց  
 նորհէրն Աժգահակ՝ ծածկէ, այլ 'ի  
 ձեռն գրոյ յայտնէ, որ ինչ՝ 'ի նի խո  
 թութե սրտին . և յայտնեալ այսպիս  
 ւոյ շարութե, ոչինչ էր՝ այնուհետե  
 բան, և խորամանկութե, որ զայսպի  
 սիս առագաստէր զշարութե, այլ յայտ  
 նի այնուհետե՝ գրգռէր խաղին : Եւ  
 ժողովէ այնուհետե՝ Արքայն Հայոց  
 'ի սահմանաց Կապպադովկացոց, և  
 որչափ ընտիրք Արաց՝ և Աղսանից,  
 և զամ իսկ ընտիրս Հայոց Մեծաց :  
 և խաղայ ամ զօրութի իւրով 'ի կող  
 մանս Մեղացոց : վտանգ այնուհե  
 տե՝ հարկ առնէ Աժգահակայ՝ պատա  
 հէլ պատերզմաւ Հայկազինն՝ ոչ փոքր  
 ինչ ամբոխի : և երկայնէր հակառա  
 կութին մինչև յամիսս հինգ . քանզի  
 հիւանդանայր զործն արագ, և առողջ  
 յորժամ զնտաւածէր՝ վն Քեռն իւրոյ  
 Սերելոյ՝ Տիգրան : զի այսպիսի իմն  
 զէլս իրոցն հնարէր, իբր՝ զի որջ մի  
 այն՝ ապրիլ ճար լիցի՝ Տիգրանուհեայ  
 պատասէ և այս, և ժամ մարտին մեր  
 ձենայ : Բայց՝ գովեմ զքաջ Կահա

տակն իմ, և զՔաջ նիզակաւորն, և զամենեկն բոլոր անդամօք համեմատ, և գեղեցկութիւն աւարտեալ հասակի. բանդի՛ առողջ ամենեկն՝ ըստիրեալ պատշաճեալ՝ և ուժով, և ո՛չ զօր ունելով զոյգ: և Ձի՛ երկայնեմ զբանս. բանդի՛ ՚ի լինիլ մարտին, նիզակաւ՝ օրի նակ իմն՝ օրպէս ջուր հերձեալ՝ զերկաթ՝ ՚ի հանդերձն, շամիրէ զԱժգահակ՝ յընդարձակ տեղ նիզակին. և յամ փոփել միւսանդամ զձեռնն, արտաքս զկէս մասին թորոցն՝ հանդերձ զինուն ՚ի դուրս բերէ: Բայց մարտն էր սբան լելն, զի Քաջք զիպեալ Քաջայ՝ ո՛չ վաղվաղակի զթիկունս ՚ի միմեանց դարձուցանէին: Վասն որոյ՝ յերկարեալ գործ պատերազմին՝ մինչև ՚ի ժամս ձիգս: Իսկ վախճան գործոյն՝ առնէր մահն Աժգահակայ: և այս պիտի դիպուածս՝ ՚ի բարեբախտութիւն յաւելեալ՝ փառս յաճախէ Տիգրանայ:



Պրակ 29.

Յաշտոս Բե՛ է՛ր աշտոս յաշտոսեաց ըլ  
 սոյր Ի Ե Տե՛գրանուհի՛ Ի Տե՛գրանուհի Ե ր .  
 Ե յորո՛ժ , լեան Անուշո՛յ՝ սուսնոյ  
 Ինըն Աժդահակայ , Ե Բնակու  
 Ի Եան գերոյն :



Աստի Ե այս՝ Եթէ զկնի այս  
 պիտոյ իրաց կատարելու  
 Թե՛ , յուզարկէ կատարելա  
 լապէս զքոյր իւր Տեգրա  
 նուհի՛ մեծաւ ամբոսիս՝ Ի Հայս , յԱ  
 ւանն՝ զոր շինեաց յիւր անուն՝ Տեգ  
 րան , որ է՛ Տեգրանակերտ . Ե զգա  
 ւառան զամենեւեան՝ Ի ծառայութի  
 նմա հրամայէ . Ե զՊատանն անուա  
 նեալ՝ կողմանցն այնոցիկ ազատութի .  
 Ի զարմից սորա ասէ՛ լեալս իբր Թա  
 զաւորական զարմա : Իսկ զԱնոյ՛ զա  
 ռաջին ասացեալ կինն Աժդահակայ ,  
 Ե զքաղումս Ի սերմանէ Աժդահա  
 կայ Ազդիունս՝ հանդերձ Պատանե  
 կօք , Ե բաղմութի՛ն դերեացն՝ արափ  
 Թէ աւելի քան զբիւր մի՛ բնակեցու  
 ցանէ յարեւելայ ուսոյ՝ մեծի լերինն .  
 մինև Ի սահմանս Գողթան , որ է՛  
 Տամբատ , Ոսկի , Կողայ , Իժգոյնք .  
 Ե որ այլք՝ առեղերք գետոյն դասա  
 կերաք . յորոց մինն է՛ Արնջունիք , մին  
 Ե հանդէպ ամբոցին՝ Նախճաւանու .

և զերիս աւանս՝ զխրամ՝ զՍուղայ՝  
 և զխոշակունիս : Իսկ ՚ի միւս կողմս  
 մանկ դեռոյն , զբուր դաշտն , որոյ  
 գլուխն՝ Աժդանականն է՝ մինչև ցնոյն  
 ինքն ամուրն՝ Նախճաւանու : Բայց  
 զնախասացեալ կինն Անոյ՝ բնակեցու  
 ցանկ որդւովք իւրովք՝ յանդ որրու թէ  
 սպառուածի՝ փլածի մեծի լերինն , զոր  
 մէ լեալ ասեն՝ յահագին ինն շարժմա  
 նէ , զոր պատմեն , որք բազմաշրջու  
 թի՝ հրամանաւ Պտղոսմոյ՝ ասպա  
 ըրիզօք զբնակութիս մարդկան՝ չափե  
 ցին . այլ և՛ մասն ինչ զծով՝ և զանբը  
 նակս , յայրեցածէն՝ մինչև ցՔիմեո  
 նոս : Իսկ պաշտականս տայ Անուշայ՝  
 ՚ինոյն Սարայ՝ որք առ սամամբ լե  
 ըինն բնակեցան : Յայտնեն զայս ճը  
 մարտապէս՝ և թուե լեացն երգք , զոր  
 պահեցին ինն ախորժելով՝ ուն լսեմ ,  
 մարդիկք կողմանն՝ Գինեէտ դաւառին  
 Գողթան . յոր շարին բանք երգոյ՝  
 զԱրտաշիսէ , և զորդւոց նի յիշելով  
 այլաբանաբար , և զարմից Աժդահա  
 կայ՝ վիշապազունս՝ զնս կոչելով . զի  
 Աժդահակդ՝ ՚ի մեր լեզուս՝ վիշապ է :  
 Այլ և ճաշ՝ ասեն զործեալ Արդա  
 ւանայ՝ ՚ի պատիւ Արտաշիսի , և խոր  
 դաւանակ լեալ ինն ՚ի տաճարին վիշա  
 պայ : այլ և Արտաւաղչայ՝ ոչ գտել  
 քաջ՝ յորդւոյն Արտաշիսի՝ Գեղեցիկ  
 սարսրանից ՚ի հիմնանայն Արտաշատու

նա էանց, ասէ՛ գնաց, և շինեաց՝ ի մէջ  
 Մարաց՝ զՄարակերտ, որ է՝ ի դաշ  
 տին՝ որ անուանեալ կոչի՝ Հարուրա:  
 այլ և՛ տենչայ Սաթենիկ տենչանս,  
 զարտախուր հաւասար խաւարտ . և  
 զտից հաւարծի, ՚ի բարձիցն Արդաւա  
 նայ: Եւ՛ արդ՝ ոչ արդեօք առաւել  
 աստանօր զարմասցիս ՚ի վերայ մերոյ.  
 Տշմարտապատմութես, և թէ՛ ո՞րպէս  
 պատմեցաք զանյայտ իրս վիշապաց,  
 որք են՝ յազատն ՚ի վեր ՚ի Մասիս:

Պրակ 30.

Թե՛ ոչք ո՛մանք՝ սորս Չորճք . և ոչք  
 ՚ի մանէ որչեւէ Տեչք:



Աւաստի պատմեալ զարդա  
 րե՛ զբուն, և զստաջին Տիգ  
 րանն, և որ ինչ ՚ի նմանէ  
 գործք: սիրելի՛ ոնկ ինձ պատ  
 մողիս ՚ի մէջ խնոց բանից՝ որ ինչ յա  
 զադս Էրուանդեանս Տիգրինայ՝ բանք  
 եղիցի և Քեզ Ընթերճողիդ՝ ոնկ այրն  
 և գործքն . այսպէս՝ և զբստ նմանէ  
 գործք, սոյնպէս՝ և զնմանէ բանք:  
 Վն որոյ՝ սիրեմ կոչել այսպէս՝ ըստ  
 բաջութն . Հայկ՝ Արամ՝ Տիգրան .  
 բանդի ըստ բաջացն՝ ազգքն քաջք . իսկ  
 միջոցն ոնկ դէպ ումեք թուիցի կոչել:  
 բայց՝ ըստ դիցադնութնն կարծեաց:

հաւասարի է և ասելս մեր, ոչ Արամազդ որ, այլ 'ի կամեցողսն լինն լինիլ՝ Արամազդ. չորից' և այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ : Չի այսպէս՝ բաղումք անուանեալք Տիգրանք՝ մի է, և միայնակ 'ի Հայկազանցս՝ որ զԱզդահակ էսպան, և զտուն նր 'ի դերու թէ՛ վարեաց և զԱնոյշ՝ Մայրն վիշապաց . օժանդակ կամօք՝ և յօժարու թի՛ր՝ Կիւրոս ունելով յինքն՝ զիշխանութիւն Մարաց՝ և Պարսից յափշտակեաց : Սորա որդի, Բար՝ Տիրան՝ Վահագն, զորմէ ասեն Առասպելք աշխարհիս :

Երինէր երին, երինէր երին, երինէր և ծէրանի ծռէ . երին 'ի ծռէն ունէր՝ և շիւրհրինն ելէ գնիլ, ընդ ելէ գնն՝ գոչ ծռի էլանէր, ընդ ելէ գնն՝ գոչ բոց էլանէր, և 'ի բոցոյն լուչեր Խորտեւշ Պատմեիիլ, նահոր հեր ունէր, ապա Ռէ՛ բոց ունէր հորոսն, և ալս՝ ունքն՝ էին արեգօհոսնք :

Եւ զայս երգեալ ոմանց փամբռամբ . լուաք մերովք իսկ ականջօք . յեա որոյ՝ և ընդ վիշապաց ասէին՝ յերգին կռուել նմա՝ և յաղթել . և կարի իմն նմանադոյնս՝ զՀերակլեսոյ նահատակութիւնն նմա երգելոյ : Այլ ասեն, զսա և անուանեալ՝ և Անդրի 'ի Վրաց աշխարհիս կանգնեալ՝ չափ հասակի նր՝ սպառուէին զոհիք : և սորա ասեն զարմ, Վահուսիք . 'ի սորա կրօներ որդ

ւոյն՝ Ասաւանայ, Ասաւենեանք . սո-  
րա՝ Ասաւան . սորա՝ Ներսէհ . սո-  
րա՝ Չարեհ . ՚ի սորա դարմից՝ և որ  
Չարեհաւանիցն կարդան ազգ . իսկ  
առաջինն սորա՝ Արմազ . սորա՝ Բա-  
զամ . սորա՝ Վահան . սորա՝ Վահէ .  
սա՝ ընդվզեալ մեռանի յԱղեքսանդ-  
րէ Մակեդոնացւոյ : Յայսմ հետե՛-  
մինչև ցԹագաւորութիւն Վաղարշա-  
կայ ՚ի Հայս՝ ո՛չինչ ճշմարտագոյնս ու-  
նիմ պատմել քեզ . քանզի՛ շիտթ իմս  
ամբոխից լեալ այր դարամբ ելանէին  
տիրել աշխարհիս . և վն այսորիկ՝ զի-  
րամուտ ՚ի Հայս լեալ Արշակ մեծ ,  
Թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վա-  
ղարշակ ՚ի վն աշխարհիս Հայոց :

Պրակ 31 :

Թե՛ ելի-իւն գտերսդ՝ սո Տեգոսա-  
ւ Կէ Չարեայր ընդ Են-Վրոյի չո-  
բան վնելոյ սոխոտոս , և ՚ի  
նոյն հահ :

 Րկուք այսորիկ են՝ որ աշ-  
խատութիւն մեզ տազնա-  
պաւ ՚ի վերայ՝ ՚ի քումմէ  
հասուցանեն հարցասիրու-  
թենէ՛ համառօտասիրութիւն , արա-  
զարանութիւն : և այսորիկ՝ պերճք՝  
և պայծառք , Պղատոնականք իբր և

զանիւ բանք՝ հեռի ՚ի ստուծէ, և լի՝  
 որ ինչ ընդ գէմ ստուծն. և զայսուսկ  
 յառաջին մարդոյն՝ Թնչև ցրեզ՝ պատ  
 մել. և այսոցիկ ՚ի միասին պատահելի  
 անհնարին է: Քանզի՝ որ զամ ստեղծ՝  
 կարող զոլով ՚ի բթթել ական ակնար  
 կութք, զամ կացուցանել՝ ո՛չ այսպէս  
 հաստատէ, այլ՝ աւուրս որոշէ՝ և կրգս  
 ՚ի ստեղծուածս. քանզի են ոմանք ա  
 ռաջնայ, և ոմանք երկրորդի՝ և երրոր  
 դի, և այլոցն աւուրց ստեղծուածք.  
 և այսու ինն այսպիսի մեզ ակնարկէ  
 կարգս՝ վարդապետութի Հոգւոյն:  
 Իսկ զբո փափազ, արտաբոյ այսպիս  
 ւոյ ինն տեսանեմք սահմանի, զի ար  
 զարե բնան առժամայն՝ ամենայնքն  
 բեզ եղիցին ասացեալ: Այլ՝ առ ՚ի  
 Տենք այսոցիկ՝ կամ յերկար, և բեզ լի  
 կամաց, կամ փոյթ, և բեզ՝ ո՛չ հաճե  
 լիք. զի այսպէս բեզ ՚ի հասկ ճեպելոյ,  
 ահա՝ ո՛չինչ յազարս Մակեդոնաց  
 ւոյն, և ո՛չ վս Եղիականին՝ ՚ի կար  
 գին նշանակեցաք. այլ՝ զողեմք աւա  
 սիկ: ո՛չ ոմնիմք ասել իմաստուն՝ կամ  
 անհանճար աստանօր լինիլ մեզ՝ հիւսն  
 պատկանաւոր: Վասն ո՛չ զայնոցիկ  
 այժմ ուրեմն՝ զկնի հալովելով բանս  
 զկարե որան, և մե բոյս արժանի շարադը  
 բուծն: և ո՛յք առաջինք արդեօք՝ այս  
 պիսեաց ճառից, Եթէ ո՛չ որք ՚ի Հո  
 մբուսէ պատմին. այն որ վս Եղիակա

նին պատմին պատերազմին , առ Տե-  
տամաւ Ասորեստանեայց . և մեր Չար  
նայր 'ի ծառայութեան սահաւոր թ  
Եթովպացի դորուն օգնական Պախ  
մաւ : և անդ 'ի Քաջացն Հելլենաց  
ւոյ վերաւորեալ մեռանի . այլ կամիմ  
Աքիւղեայ , և մի' յայլմէ ումեքէ 'ի  
Քաջացն :

Ա-տ-ր-է-ն-ը Գ-ի-ր-ս Ա--ը-ն-ը ծն-դ-ը-  
ն--ի-է-ն-ը Հ-յ-ը Ս-է-ծ-ը :

'ի Պ-ր-ի-ն ---դ-է-լ-ը' Յ-ը-գ-ը Բ-ի-  
ր--դ-է-ն-ը Ա-ժ-ր-ի-ն-ը :



Այ' զի' նչ արդեօք տարինք  
քեզ' և Բիւրասպի Աժդահա  
կայ , փշուն' և անճոռի' առւտակելքն  
իցեն . և կամ , է'ր սակս զմեզ Պար  
սից անյարմար' և անոճ բանից , մա  
նաւանդ թէ' առաւել վասն ամբաս  
տանութեան' առնես աշխատ . և ան  
բարի' առաջնոյ նորա բարեբարու  
թեանն , և Գիւաց' նմա սպասառ  
բութե . և ո'չ վրիպեցուցանել կարե  
լոյ զվրիպեալն' և զսուան . և ուսոցն  
համբուրումն , և անդուստ վիշապայն  
ծնունդ , և յայնմ հետէ' չարութեան  
յաճախութե' ծախել զմարդիկ 'ի պէտս  
որովայնի : Իսկ սպա' և Հրողանայ  
ու մեմն զնա կասկել' սարեօք պղնձեօք ,

և ի լեառնն տանել՝ որ կոչի Ռամբաւընդ . այլ և՛ ի ճանապարհն նրն շեշն Հրոզանայ . և Բիւրասպեայ քար շեշ ի բլուրն . և ի զարթնչիւն Հրոզանայ , և տանել զնա յայրս ինչ լերինն , և կապել , և զինքն Անդրի ընդդէմ նորա հաստատել . յորմէ պակուցեալ և հնազանդեալ կայ շղթայիցն , և ո՛չ զօրե ելանել՝ և ապականել զերկիր : զինչ քեզ՝ առ այսօրիկ կարօտու թիւն առասպելք սուտք . կամ զինչ պէտք՝ անմիտ , և անհանձար բանից յարմարանս : մի՛ արդեօք՝ Զունական պերճ , և ողորկ առասպելքն իցեն՝ հանդերձ պատճառաւ , որք զճշմարտութի իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ : այլ ասես մեզ՝ պատճառս տալ այլաբանութն նոցա , և զարդարել զանզարդան : նոյն առ՛ ի յինէն՝ քեզ բան , զինչ այսօրիկ կարօտու թիւք . որ պիտի իղձք անբաղձարոյ իրիք բաղձալ , և մեզ յաւելուլ աշխատութիւն : այլ տացուք զայսօրիկ Մանկականի քոյ Տիոց , և անհասութն խակութեան լեալ տարփանք : վասն որոյ՝ եզիցի և աստանօր՝ ընուլ մեզ զփափագ՝ կամաց քոց :



ՍՄԵՐԻՆԻ՝ որ էնչ սու շնք ԲԻՐԱՍ  
դեռ հասարակն:



Պղատոնականն՝ համարձա  
կազոյն այժմ բարբառիմ:  
Իսկ արդ՝ արդեօք իցէ սիրե  
լու այլ որես . քզի՝ և չէ իսկ  
որ: Բնզի և ՚ի վի այլոցն ան  
հնարից՝ հնարաւոր վնքոյ արարեցե  
լոց մեր, կատարեմք և զայս . զի՝ զորոցն  
ատեմք և զբանս՝ և զգործս, և այնո  
ցիկ լուր մանաւանդ՝ զբէթէ՝ և զլսե  
լիս մեր տաղտկացուցանէր . այսօր ի  
մովք ձեռօք՝ շարագրեմ զայնասիկ,  
միտս անմտութե նոցա տալով . և ըզ  
կարի վազուց նց իրս՝ և նց անհասա  
նելիս, աւասիկ յայտնեմ . միայն թէ՝  
և քեզ այսօրիկ ուրախութի՝ և կամ  
չահօգտութե: Այլ՝ ծանիր զատելու  
թի մեր՝ առ այսպիսի բան . զի՝ ոչ յա  
ռաջինս մեր ասացեալ ՚ի գիրսս, և ոչ  
՚ի վերջին բանս՝ արժանաւորեցաք շա  
րել, այլ դատ՝ և որիշ . և սկսայց այսոյ:  
Ասացեալն ՚ի նոցանէ՝ Բիբասպի Աժ  
դահակ, առ ներքովթաւ նախնի նց:  
բանզի՝ և ՚ի բաժանել լեզուացն՝ ընդ  
ամ երկիր, ոչ խառնիխառն՝ և ոչ անա  
ռաքնորդ այս լինէր, այլ Աճայնոյն  
ինն տկնարկութի՝ Գլխաւորք, և Յե  
ղապեաք որոշեալք՝ զիբարբանչիբ սահ  
մանս ժառանգեցին՝ կարի զօրութի:

և զայս Բիւրասպետոյ՝ հաւաստի ա-  
 նուն՝ ճանաչեմ ես, Կենտօրոս Պախ-  
 զեայ, ՚ի Քաղղէականի գտեալ մատե-  
 նի: սա՛ սչ քաղութի քան թէ՛ հարը-  
 տութի, և Տարտարութի՛ զՏեղապե-  
 տութի ազգին իւրոյ՝ ունէր հնազան-  
 զեալ Ներբովթայ. և հասարակաց՝  
 զկենցազս կամէր ցուցանել ամենե-  
 ցունց. և ասէր՝ սչինչ իւր առանձին  
 ումբ ունիլ պարտէ, այլ՝ հասարա-  
 կաց ամենեցուն. և ամ ինչ նի՛ յայտ-  
 նի էր քան՝ և գործ. և ՚ի ծածուկ՛ ինչ  
 սչ խօսէր, այլ զամ յանդիման արտաքս  
 լեզուա՛ զծածուկս սրտին. և զէլ՛ և  
 զմուտ բարեկամացն՝ որպէս ՚ի տուրն-  
 ջեան, նայնպէս՝ և զիշերի սահմանէր:  
 և այս է՛ առաջի նի՛ ասացեալ անբարի  
 բարեբարութի: Այլ քանզի՛ Աստեղա-  
 բաշխութի հզօր եղեալ յօժարեցաւ  
 ուսանիլ և զկատարեալ շարութին, և  
 այսօքիկ անկարելիք նմա. քանզի՛ ուն զե-  
 բաղոյնն ասացաք, սովորութի ունէր՝  
 պատրանաց աղաղաւ՝ առ բազումս սչ  
 ինչ ՚ի ծածուկ գործել: և զայնպիսի  
 վերջին, և կատարեալ շարութի յայտ-  
 նի ուսանիլ կարողութի սչ էր. հնարի  
 այսպիսում ուսման՝ դառնութեան հը-  
 նարս, ցուս ինչ յորովայն ունիլ բազ-  
 բաջեր շարաշարս, որ՛ սչ այլով ի՛նք՝  
 քան թէ քանի ինն, և անուամբ սոս  
 կայեալ բժշկիցի, զոր վայրապար լսել

ուսեք՝ ոչ է կարուծի. և զայս սովո-  
րեալ որ զարուծին նիւթէր: ուսու-  
ցանէր նմա՝ ի տան, և ի հրապարակս  
անկասկած՝ զգլուխն՝ ի վի դնելով ու-  
սոց Բիւրասպեայ, և խօսելով յա-  
կանջան՝ ուսուցանէր զանբարի արու-  
եսան, զոր յառասպելին՝ մանուկ Սա-  
տանայի ասեն՝ սպասաւորելով լինէր  
կամակատար. և ապա՝ վս որոյ պարզ և  
ի նմանէ խնդրել՝ համբուրել զուս:  
Իսկ վիշապացն բուսուին՝ կամ, կատա-  
րելապէս վիշապանալն Բիւրասպեայ  
որ ասի, է այսպէս: քանզի մարդիկ ան-  
բաւ՝ սկսաւ զոչել Գիւաց, մինչև  
տաղտկանալ ի նմանէ քաղձուծն, և  
միարանեալ ամենեցուն՝ և հալածեալ  
և փախել նմա ի նախ ասացեալ լե-  
րինն. և ի սաստկագոյնս զնա վարելոյ  
թօթափեցաւ ի նմանէ ամբոխն նորա.  
յայս վստահացեալ վարողացն զնա,  
թաքեան աւուրս ինչ՝ զտեղեօքն: Իսկ  
ժողովեալ Բիւրասպեայ զցրուեալսն՝  
յանկարծօրէն հասանէ ի վերայ, վաս-  
տաստիկ առնելով. այլ յաղթէր քաղ-  
ձուծին, և փախտապան լինի՝ ասա-  
ցեալն Բիւրասպի, և հասեալ սպանա-  
նեն զնա՝ մերձ ի լեռան, և ընկենուն  
ի վիճ մեծ ծծմբոյ:

Ասրտեցու Գիրս Առնէրոր:





# ՆԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԿ

Պրակ 1.

Մովսէսի Խորենացոյ, Բան՝ Քլաի պատմութեան Գրոց Նստեաց:



ՐԵՄ ՔԵԶ ԱՅԺՄ  
 որ ինչ՝ առանձին մերոյ աշխարհիս՝ գործք, երկրորդ առնելով զգիրս: Սկսեալ ՚ի Թագաւորութեն՝ Ադերսանդրի, մինչև զԹագաւորութի՛ն Սրբոյ, և Քաջի Առնն՝ Մեծին Տըր դատոյ. կարդաւ, որ ինչ՝ աստ եղևաւ գործ քաջութե՛ն, և արութե՛ն, խմաստից, և կարգաց՝ միոյ միոյ ուրուք ՚ի նոցանէ. որք յԱրքայէն Պարսից՝ յԱրշակայ, և ՚ի Վաղարշակայ՝ եղբորէն նորա, զոր մերոյ ազգիս Թագաւորեցոյց. և որ ինչ՝ որք յևա նորա եղևն

Թագաւորք՝ աշխարհիս մերոյ, ՚ի նս-  
րին սերմանէ, որդի ՚ի հօրէ առնլով  
զտէրութիւն, անսուանեցան Արշակու-  
նիք՝ յԱրշակոյ: Աւելորդքն յաղգ՝ և ՚ի  
մեծութիւն անեցեալ, և միակք ՚լն կար  
դի հետեանաց ՚ի Թագաւորութիւնն:  
Բայց՝ գրեմ կարճ ՚ի կարճոյ՝ որ ինչ  
անկնէ, և զաւելորդսն թողում: քան  
զի՝ բաւականէ յաղագս այլոց ազգաց  
որ ինչ՝ ՚ի բազմաց ասացեալ եղև: Յետ  
տիրելոյ Իմ տիեզերաց՝ Աղեքսանդրի  
Մակեդոնացւոյ՝ որդւոյ Փիլիպպոսայ  
Ալիմպիաոյ, որ էր՝ քսան և չորս և  
բորդ յԱբիւլեայ, բազմաց ասլով ըն-  
տէրութիւն կտակաւ, զի ամենևին իշ-  
խանութի Մակեդոնացւոցն անսու-  
անցի, ինքն մեռանի: Չկնի որոյ՝ թա-  
գաւորեաց Բարսիլոնի Սելևկոս, զյո-  
լովից կորզելով զիշխանութիւն. ուստի՝  
և զՊարթևս հնազանդեցոյց՝ մեծա-  
պատերազմաւ, և կոչեցաւ՝ Արկանով  
բայ, նորին աղաղաւ: Սորա՝ թագա-  
ւորեալ ամս՝ երեսուն և մի, թողու  
զիշխանութիւն որդւոյ իբրում, Ան-  
տիոքոյ անսուանեցելոյն: սա տիրե-  
աւս՝ 19. զսա՝ յաջորդէ Անտիոքոս՝ ա-  
սացեալն Թևոս, ամս 10. և ՚ի մետա-  
սաներորդին՝ այստամբին Պարթևք  
՚ի ծառայութիւն Մակեդոնացւոց: ուս-  
տի՝ և Թագաւորեաց Արշակ Քաջ՝ որ  
էր ՚ի զաւակէն Աբրահամաւ, ՚ի Քեա-


տուրական ծննդոց . առ ՚ի հաստատել  
բանին Տեառն՝ առ Աբրահամ . Թէ՛  
Թագաւորք Ազգաց ՚ի բէն ելցեն .  
Ծննդոց . 17. 6 :

## Պրակ 2 .

Թ-ճ-Յ-Յ-Յ-Յ-Յ Արշ-ի-յ , և յրդ-ոցն . զ-  
Եր-ւմ շնդ Մ-ի-է-Տ-Յ-ցի-ս , և -է-ր  
շնդ Հ-ո-մ-այ-ե-ցի-ս :

**Ո**րպէս ասացաք , յետ վաթ-  
սուն ամի մահուանն Աղեք  
սանդրի՝ Թագաւորէ ՚ի վի-  
Պարթևայ՝ Արշակ Քաջ՝ ՚ի  
քաղաքին , որ կոչի Քահլ՝ յառաւօտին  
յերկրին Քուշանաց , և տայ պատե-  
րազմունս տաստիկս յոյժ , Թափելով  
յինքն զամ Արևելեայս . հարածէ ՚ի  
Քարիճոնէ՝ զՄակեդոնացւոց իշխա-  
նութին . լսէ և զզօրանալն Հռոմայե-  
ցւոց ՚ի վերայ ամ Արևմտոց , և ծո-  
մու . և եթէ՛ ՚ի Հիսպանիացւոց Թա-  
փեցին զբովսն , ուստի՛ ոսկի , և ար-  
ծաթ հատանի . և զՔաղաւտացիս հա-  
րեալ՝ ընդ հարկաւ արարին , և ցԹա-  
ղաւորն Ասիացւոց՝ Հրեշտակս առա-  
քեալ ինդրէր զզաշնաւարութիւն , զի  
մի՛ օգնեացեն Մակեդոնացւոց , ոչ  
տալով հարկս , այլ պատարազս ամի  
ամի միայն՝ 100. քանքար : Այսպէս՝

տիրեալ ամս՝ 3: և յետ նր՝ Աբրա-  
 շէս որդի նորա՝ 26: զսա պայազատէ  
 նորին որդին Արշակ, որ կոչեցաւ՝  
 Մեծ, պատերազմի ընդ Դեմետրեայ՝  
 որդւոյ Դեմետրի Անտիգոնեայ: քան  
 զի ի վերայ նորա եկն ի Բաբելոն Մա-  
 կեդոնէական զօրու, և պատերազմել  
 ի պարտութի մատնեցաւ. զոր կալել  
 Արշակայ՝ տարաւ ի պարթևս՝ հան-  
 դերձ երկաթ եղեն կապանօք. ուստի՝  
 և Սերիպիդէսն կոչեցաւ: և իմացել  
 եղօր նորին Սիդիացւոյ Անտիգոյ  
 զզնայն Արշակայ, գայ՝ ունի զԱս-  
 տիա: Իսկ Արշակայ երկուտասան ըի-  
 րու՝ անդրէն դարձեալ. և Անտի-  
 քոս՝ ի սաստիկ ձմերայնօքս հերքեալ  
 պատահի նմա պատերազմաւ՝ յանձուկ  
 տեղիս, և կորնչի հանդերձ զօրօքն: և  
 Արշակ տիրէ՝ երրորդ մասին Աշխար-  
 հիս. ունի յերկայցն Պատմութեցն  
 Հերովդիտեայ՝ է ուսանիլ ի շորրօր  
 շէն, որ յազազս բաժանելոյ զքաղօր  
 երկիրս՝ յերիս մասունս. և կոչել զոմն  
 Եւրոպէ, և զոմն Արեւել, և զոմն Ա-  
 սիա. որում և տիրեաց Արշակ:



## Պրակ 3.

Թագորեցոցանէն զԱւրուի Աւ-  
 Իրիւ Հայոց:

Ժամանակին յայնմիկ՝ Թագա  
 ւորեցուցանէ զեղբայր իւր  
 զԱզարշակ՝ Աշխարհիս  
 Հայոց, զՏիւսիսի, և զա-  
 րեմուտս տալով նմա սահմանս: Սա  
 ( ոպ՝ յառաջնուծն մերում Մարտնի  
 գրեցաք ) Այր քաղ, և իտէմ . ըն-  
 դարձակ տիրեաց ՚ի վր սահմանաց իւ-  
 րոց: և կարգս կենցաղականս, որչափ  
 մարթ էր, շնորհեաց Աշխարհիս, և  
 Նախարարութիւս. և նոցին նախարա-  
 րութեցն՝ նահապետութեա հաստա-  
 տեաց զԱրս պիտանիս՝ որք ՚ի Չաւա-  
 կէ Մերոյն Հայկոց, և որայլս: քան  
 զի՝ և յետ սանձահարելոյն զՄակե-  
 զոնացիան, և զաղարելոյն պատե-  
 րազմացն, սկիզբն առնէ բարեգործու-  
 թեցն՝ Պարթևն Քաղ: նախ՝ և առա-  
 ջին, փոխարէն բարեաց հատուցանե-  
 լով Առն Չորասորի, և իմաստոյ,  
 որ ՚ի Հրեկց Համբոյ՝ Բաղարատ. տա-  
 լով նմա իշխանութի ազգաւ Թագա  
 գիր լինիլ Արշակունեաց. և որ ՚ինը-  
 մանէ ծնեալ ազգ, լինիլ կոչմամբ յա-  
 նուն նր՝ Բաղարատունի. որ է այժմ:

մեծ նախարարութի ՚ի մէջ աշխարհիս :  
 քանզի՛ այս Բաղարատ , նախանձն  
 զինքն մատոյց ընծայ՛ ըստ կամաց Վա  
 զարշակայ , յառաջ քան զպատերազ  
 մունս Արշակայ ընդ Մակեդոնացի  
 ցոց զօրութեն . և այս՛ ՚ի գրան Ար  
 քունի : Իսկ՛ ՚ի ծայրս Հայերէն խո  
 սից՛ կողմնակալ իշխան թիւրաց , և հա  
 զարաց յարեմոսից կողմանէ : Բայց՛  
 շարձցուք անդրէն ՚ի վեր , պատմելով  
 յաղագս պատերազմին Վազարշակայ  
 ընդ Պոնտացիս , և որ՛ ՚ի Փոխզիս , և  
 վն յաղթութեն նորա :

Պրակ 4.

Եւս՛ սրդես Դիւնեալ Վարշակայ ըն  
 Քնն Հայց ՚ի Կորնոս քրս , Ի  
 27 ՚ի վերայ Մովսէսի ցոյցն  
 Երեւնոց :

**Ե**ս պատերազմին Արշա  
 կայ ընդ Մակեդոնացիս .  
 և սունելոյ զԲարեւոն , և զա  
 թեւելեայս Ատրեւստանի , և  
 զարեմոսայս . Միաբանէ Վազարշակ  
 զօր բազում Ատրպատականէ , և ՚ի  
 Հայոց , որ ՚ի միջոց աշխարհիս՛ Արս  
 Անունիս , և Քաջս , և որ առ սա՛  
 մանօրն Ատրպատականի՛ զկողեցեալն  
 Բաղարատ , և որք ի նովա՛ Քաջս .

և գծովեղերեայն՝ Մանկունք , որք  
 ՚ի Գեղամայ՝ և որք ՚ի Քանանացուց ,  
 Հարայի ծնունդք՝ և Գուշարայ , և առ  
 ընթեր՝ Միսակեանն , և Ղկաղմեա  
 կանան , և զսոցայն մերձաւորան , ոպ  
 թե՛ զկէս մասն աշխարհիս , հասանէ  
 ՚ի միջոց աշխարհիս վերագոյն՝ քան զա  
 կունս Մօրին մեծի յափն Երասխայ ,  
 մօտ յարմաւիր՝ որ ասի բլուր , աւուրս  
 շատս առնելով անդ՝ ոպ պարտէ ա  
 սել . զի ոչ գիտէին զկարգս ինչ : և  
 աստ միաբանեալ զկողմանս աշխարհիս՝  
 հասանէ առ սահմանօք խաղտեաց :  
 բանդի՛ Լաղկիկայ , Պոնտոս , Մաժար ,  
 Փախգիայ , և այլք՝ ոչ գիտելով ըզ  
 համբաւ պատերազմին Արշակայ առ  
 Մակեդոնացուց պետութին , զմիա  
 բանութի դաշանցն հաստատուն առ  
 Մակեդոնացիսն պահէին : Ան որոյ  
 ոմն Մորփիլիկեայ միաբանեալ զասա  
 ցեալսն զայնոսիկ կողմանս , և զբզուի  
 ՚ի պատերազմ չ Աղարշակայ . բայց  
 պատահեն միմեանց առ բարձրաւան  
 դակիմիոզ բլրով բարագագաթնիւ , որ  
 այժմ ասի՛ Կոլանիա . և մօտեայք առ  
 միմեանս՝ ճիգ ասպարիզովք միջոցացն ,  
 ամբանան կողմանքն երկօրին՝ բովան  
 դակ աւուրս :

## Պատկ 5.

Պատերազմ Մորիսիկէն, և Քնդուհուր  
Տակ:

Կնի անցանելոյ քաղաւմ աւուրց' ամրանալոյ կողմանցն երկոցունց. գրգռի պատերազմ 'ի մերմէ կողմանէս զի մեալ: Վսորոյ՝ յարգարե կամաւ' կամ ահամայ, և Մորիսիկէնայ զ'ւր կողմանն ճակատ' հատանէ յանդուգն յար ձակմամբ. քանզի' այր սրտեայ էր, անդամօք երկար, և ըստ իրեարս պատշաճ, զոյգ մարմնով, և ոյժ սաստիկ ունելով. ամրացեալ պղնձով' և երկաթով, և այլովք ընտիր վառելովք, ոչ սլակաս ինչ թուով' տասպատ յերկիր արկանէ' արս ընտիրս' քաջս' 'իման կանցն Աղաբաշակայ. և ջանայր հասանել յԱրքայն Հայոց' 'ի մէջ խմբի միոյ մեծի' և զինու ամրացելոյ. և մտանցեալ յաջողեցաւ ձգել զսուրնն. քանզի' էր կորովի, և երկայնամիդ հեռի յաշտենս յարձակել' ունի' ի թախս սրաթև հաւուց. այլ' ոչ ինչ կարի յամցին' ընդ մէջ անցեալ Արք Բաջք և Ասուանիք 'ի Չարմիցն Հայկայ, և Ասորեստանուոյն Սենեքերիմայ. և հարեալ աշտեխբ գրաջն' տատակեցին. և

զգորան՝ առաջի արկեալ, ՚ի փախո՛ւստ  
 քարձուցանեն: բազում վտակս արեան  
 ՚ն զեալ՝ զերկիրն սոսգանէին՝ իբրև հե  
 շեղօք անձրեաց . և յայն՛հետէ դա  
 քարեալ իազաղէր երկիրն՝ նս՛ւածեալ  
 ընդ ձեռամբ Ազարշակայ . և Մ՛ակե  
 դովնացւոցն դադարէր գոռն:

## Պրակ 6.

Ե՛թէ՛ զ՛րդէս ի՛րօ՛ղոց Ազարշակ շարձ  
 հաստ հրոյ = շի՛րօ՛ղ = և շի՛րօ՛ղ:

**Ե** Ի այսպէս կատարեալ կար  
 դէ զսահմանս Մ՛աթաբայ,  
 և Պոնտացւոց, և զԵգե  
 բացիս . դառնայ զհիւսի  
 սեալ՝ առ ստորտով Պահարեայ ՚ի  
 Տէջ Տայոց, ՚ի գիճին՝ և ՚ի մառախլուս  
 տեղիս մայրեաց, և ՚ի լոռաւէտս, զե  
 ղեցիկ իմն անդ կարգելով զերկիրն .  
 հաւասարելով զլեռնայինն՝ և զջեր  
 մայրտն ՚ի բարեխառն, և ՚ի զուգագե  
 ղեցիկ վայելու[թ]ի իւրոյ [Թադաորու  
 Թեանն. ամառնային ժամանակին՝ հո  
 վանոցս պատրաստելով՝ յորժամ զհի  
 սիսեալ երթիցէ . դոմս զերկուս տա  
 փարակն անտառախիտս՝ հանդերձ լե  
 բամբրն կազմելով և որսոյ տեղիս . և  
 զջերմու[թ]ին Արդայ ՚ի Մ՛արմանդս այ  
 զեաց, և բուրաստանաց: այլ՝ խորեմ

առա, վն սիրն լի առնն՝ յայտնի գրել  
 զմմ, և մանրապատում. զի անցից նը  
 շանակելով միայն զտեղիսն հաւատի,  
 և զոճն՝ ի բաց թողեալ, վասն զկապ  
 սիրոյ զհրաշարոյն՝ անխղելի պահելոյ.  
 Ի՛նչ առա՛ կոչեցեալ զվայրենի՛ եկա  
 մուտ ազգն հիւսիսոյ, և որ զստոր  
 տով մեծի լերինն կաւկասու՝ և որ ՚ի  
 հովիտան, կամ ՚ի ձորս երկայնաձիգս  
 խորացեալս՝ զհարաւով ՚ի լեռնէն ՚ի  
 վայր՝ մինչև ՚ի դաշտաբերանն մեծ ի  
 բաննն. պատուէր առնելով զաւաղա  
 կութի, և զմարդադատութիւն յին  
 բեանց ՚ի բաց քնցուլ, և հրամանաց,  
 և հարկաց Արբունի հպատակ լինիլ.  
 ուն՝ զի միսանգամ տեսեալ զնոսա՛  
 Առաջնորդս, և իշխանս՝ հանդերձ գե  
 ղեցիկ կարգօք՝ հաստատեսցէ. և ար  
 հակէ զնոսա՛ հանդերձ արամբ քիմաս  
 նովք, և վերակացուօք յիւրիկ: և ինքն՝  
 արձակեալ զԱրեմաւեայ բազմութիւն,  
 իջանէ ՚ի տեղիս խտտաւէտս՝ մերձ ՚ի  
 սահմանն Հարայի, զոր՝ Հինքն ան  
 փայտ, և Աերին Բասեան՝ կոչէին:  
 Իսկ յետոյ՝ վասն հատուածին վնդուր  
 Բուլլարայ, Վնդոյ բնակելով ՚ի տե  
 ղիսն, յանուն նորս անուանեցաւ՝ Վա  
 նանդ: և անուանք շինիցն յանուն եղ  
 բարց, և զարսից նորս՝ անուանեալ  
 կուին՝ մինչև ցայժմ. Իսկ ՚ի ցրտանալ  
 հիւսիսոյ, և ՚ի գառն հովմ փչելոյ,

խաղայ՝ իջանէ՛ ՚ի դաշտն մեծ , և անդ  
 զափամբ Մօրին մեծի՛ բնակի՛ ՚ի տեղ  
 ւոջ , ուր դեան մեծ՛ ՚ի ծովակէն հիւ-  
 սիսոյ՝ սկիզբն առեալ իջանէ , և խառ-  
 նի ՚ի Մօրն մեծ : և անդ կարգեալ ըզ-  
 ղօրս աշխարհիս , և թողեալ Վերակա-  
 ցուս յինքննէ . և իւր առեալ զԳըլ-  
 խաւորսն զամ , շուէ՛ ՚ի Մծբին :

## Պրակ 7.

Յըրնու՛մ Ռագա՛որո՛ւնն , էիէ՛ ու-  
 րի զե՛տար՛բն իւր գէտց , և ո՛ր  
 դե՛ս և զի՛ սրբ , իե՛նց շու՛ղբիւ  
 հրամայեաց :

**Ա** Յս դրու՛ագ մեծ՛ և հաւա-  
 տի սլատմութիւնի , և արժա-  
 նից սղորկագունաց՝ և յուս-  
 վից : Քանդի՛ բազում ինչ  
 աստ կարգաց՝ և յօրինու՛ածոց , Տանց՝  
 Ազգաց՝ Քաղաքաց՝ Շինից՝ Դաստա-  
 կերաց , և համայն ասել՝ օրէն թա-  
 դաւորութե՛ , և որ ինչ՝ շուրջ շխա-  
 դաւորութնն . Չօրաց՝ Չօրապետաց՝  
 Կողմանց՝ Կողմնակալաց՝ և որ նման  
 այսոցիկ : Արդ՝ նախ , և առաջին օրի  
 նագրէ թադաւորն զինքն , և զՏուն  
 իւր , և սկիզբն առնելով՛ ՚ի դիտոյ իւր-  
 մէ , և ՚ի թաղէ : Չկոչեցեալն՝ որ  
 ՚ի շրէից Բագարատ , շնորհակալու-

թի նմա՝ վն յառաջագոյն անձնատու  
 ձեռն տուաւ թնն առ թագաւորն՝ և  
 միամտութն, և քաջութնն. և զյա  
 ռաջ ասացեալ՝ Տանուտերական պա  
 տիւն՝ ազգին պարգևելով. և իշխել  
 նմա՝ թագ ՚ի զլուխ դնել թագաւո  
 րին, և կոչել թագադիր, այլ և՛ Աս  
 պետ. և առանց սուկոյ, և ականց՝ ըզ  
 կրսեր մարգարիտն՝ երեքտակեան՝ վար  
 սակալ ածել. յորժամ յարբունիս ՚ի  
 Տան թագաւորին շրջիցի: Եւ զգե  
 ցուցանօղս իւր զձեռս, ՚ի զաւակէ Բա  
 նանացոց, և անուն կոչէ ազգին՝ Գըն  
 թունիս՝ ոչ գիտեմ, էր աղաղաւ: Եւ  
 թիկնապահս իւր՝ զինու հանդերձ, ՚ի  
 զաւակացն խոսայ Հայկայնոյ՝ արս ըն  
 տիրս՝ և քաջս, նիզակաւորս՝ և սուսե  
 բաւորս. և զլուխ նահապետութեան  
 նոցա՝ զՄաղսազ ոմն, այր բարի՝ և  
 սրտեայ. բայց՝ անուն ազգին զնախ  
 նականն պահէ: Իսկ զԲատ՝ որ ՚ի զա  
 ւակէ Գառնիկայ՝ որ ՚ի Գեղամայ, ՚ի  
 վերայ որոց Արքունականաց կարգէ.  
 որոյ որդի եղեալ Արաթ, յանունն ի  
 անունն Սզզն: Բայց՝ այս զկնի յաւուրս  
 Արտաշեսի: Եւ զԳաբաղ ոմն անուն, ՚ի  
 վն կուտից: և զԱբել՝ սպասարար, և  
 զահաւոր, և շէնս պարգևէ նց, յորոց  
 անուն կոչին սապէս՝ և նախարարու  
 թիբն՝ Գարեղեանք, և Աբելեանք:  
 Եւ զԱրծրունիսդ՝ գիտեմ ոչ՝ Արծր

րունիս, այլ Արծուի ունիս. որք ա-  
 աջի նի կրէին : Թողում զառասպե-  
 լացն բաջաղմունս՝ որ ՚ի Հաղամակեր-  
 սին պատմի, մանկան ներհելոյ՝ անձ-  
 րե՛ և արե հակառակեալ. և հովա-  
 նի Թաչնոյն պատանւոյ Թալիացելոյ :  
 Գիտեմ և զԳնունիսո՞ղ՝ զինի ունիս,  
 զարժանի Թաղաւորին պատրաստել  
 ըմպելիս. որ սքանչելի իմն գիպեալ և  
 լե ըստ գործոյն՝ և անունն : Քանզի  
 պատրաստէր զըմպելիս Արքայի, յըն-  
 սիր՝ և ՚ի համեղ զինեաց, ունէր՝ և կո-  
 չումն անուանն՝ Գին. ընդ որ՝ կարի մե-  
 ճապէս սերախացեալ՝ ամենամեծապէս  
 Աղարշակ կարգէ ՚ի Թիւնախարարու  
 Թե աղղաց : Եւ են այս երկու տունքս՝  
 ՚ի զաւակէ Սենեքերիմոյ, Արծրու-  
 նիք՝ և Գնունիք : Ասեմ, և զՍպանդ-  
 ունիսո՞ղ ՚ի վերայ Չենարանաց. և ըզ  
 Հաւ ունիսո՞ղ՝ Բաղէակալս՝ յաղազս ՚ի  
 մայրիս բնակելոյ : և եթէ՛ առ ցոփս  
 ինչ՝ ո՛չ ունիցիս, և զձիւնականսզ ա-  
 մարանոցաց պահակս՝ և ձիւնակիրս :  
 և յառաջադիմութի ազատացեալս՝ ոսյ  
 ընտանիք Թաղաւորաց : Եւ Գունդս՝  
 և Պահապանս դրան Արքունի՝ կարգէ  
 զչորսս, զմի մի՛ իւրաքանչիւր բիւրովք  
 վառելովք, ՚ի նոյն հին ՚ի զարմից Թա-  
 զաւորացն, որք ՚ի մերոյ նախնւոյն Հայ  
 կայ՝ որ բուն ոստանն անուանեալ. որք  
 ընդ ժամանակս ժամանակս՝ ժառան-

դու թի՛ ի Հարցն ընկալեալ զեօղս՝ և  
 զաստակերոս : Իսկ աստ ուրեմն՝ Պար  
 սից Թագաւորութեն այլս ոմանս յա  
 բուցեալ գունդս, և ստանն անուա  
 նեալ. ոչ գիտեմ թէ՛ վն ընդգիծու  
 թն իրիք արդեօք, նշկահեալ և ի բաց  
 ընկեցեալ զազգն, զայլս ի տեղի նոցա  
 յարուցին գունդս՝ անուամբ Արբու  
 նի : Այլ առաջին ի զարմից Թագա  
 ւորացն առաջնոց հաստատի . ույ և  
 այժմ ի Արաց աշխարհին՝ որ Սեփե  
 ծու ին կոչի : Նաև՝ ներքինիս ի նոյն  
 ազգէ խզել՝ հրամայեաց . և Նահա  
 պետ նոցա՝ զՀայրիշխանն, մասն ինչ  
 Ատրպատականէ՝ մինչև ցՃաւալ և  
 ցՆախճաւանն . և նահապետութն ազ  
 գին Սամեծարոյ : Բայց թէ՛ սրպէս  
 կամ սրբ՝ սորա իրիք անյիշատակելի .  
 ես ոչ գիտեմ : Բայց՝ յետ կարգե  
 լոյ զՏուն Թագաւորին, Երկրորդ  
 Թագաւորութեն լինէր ի զաւակէ Ա  
 դահակայ Մարաց եղելոյ Թագաւո  
 ռի՝ որ այժմ, Մուրացեանդ կոչենն :  
 Բանդի՝ ոչ ասեն նահապետաց ազգին  
 Մուրացեան Տէր, այլ՝ Մուրացեացն  
 Տէր : և Թողու ի վերայ նորա զամ  
 շէնս՝ որք ի գերութենէն Մարաց :  
 Եւ յարեւելայ կողմանէ՝ զեզերր Հայ  
 կական խօսիցս՝ Կողմնակալս բիւրա  
 ւորս . զերկուս ի Յեղից տանց Նահա  
 պետութնց, զԱրտակեանսդ, և որ ի

Կաղմեայ տանէն. զորոց զանուանս 'ի  
 միում, 'ի յառաջագունից ասացեալ ճա  
 ռիցն՝ կարգեցաք: Յետ սորա՝ մեծ,  
 և անուանի՝ և բազմաբիւր զարեւելեայ  
 հիւսիսոյ կողմանն՝ կարգէ Կողմնակա  
 լութի. զայր անուանի, և յիմ դործ  
 յառաքութե՝ և հանճարոյ՝ և գործոյ  
 պատերազմի, և խորհրդականութե՝  
 Առաջին, զԱռան, մեծաւ դետողն՝  
 որ հաստանէ զգաշան մեծ՝ որ անունի  
 Կուր: Բայց զայս գիտեա՛, զի զՅեզս  
 զայստսիկ մեծամեծս՝ և անուանիս՝ Տո  
 աացումն եղև մեզ՝ յառաջնումն Մա  
 տենին՝ յիշատակել: ՂԳունդն՝ որ 'ի  
 Սիսակայ, որ ժառանգեաց զգաշան  
 Աղուանից՝ և զԷսնակողմն նորին գաշ  
 աի, որ 'ի գետոյն Երասխայ մինչև  
 յԱմուրն, որ կոչի՝ Հունարակերտ. և  
 սշխարհն՝ յանուն բաղցրուե բարուցն՝  
 որ անուանեցաւ՝ Աղուանք. զի աղու  
 ձայնէին զնա՝ զն բաղցրութեան բա  
 րուցն. և 'ի սորա ծննդոց՝ այս Առան,  
 անուանիս՝ և բաշտ կարգեցաւ կողմ  
 նակալ բիւրուոր 'ի Պարթևէն Վա  
 զարշակոյ: 'ի սորա զուակաց ասեն՝  
 սերեալ զազն Օգեացոց՝ և Գարգ  
 մանաշոց, և Տողացոց, և Գար  
 գարացոց իշխանութիան: Իսկ Գու  
 շարայ՝ որ յորդոցն Հարայի՝ ժառան  
 գեաց հաւասար բնակութեան իւրոյ՝  
 զԷստն մթին, որէ կանգարք, և ըզ

կէս մասին՝ Չաւաղայ, զկողմն զԾոր  
 զԶոր, մինչև Մասուն Հունարակերտ  
 բայց՝ զտերութեն Աշոցայ՝ և սեպհա  
 կանութեն Տաշրաց՝ կարգէ Վաղար-  
 շակ՝ ի զաւակաց Գուշարայ՝ Հայկազ  
 նոյ։ Իսկ ընդդէմ լերինն կաւկասայ  
 կողմնակալ հիւսիսոյ՝ զմեծ՝ և զհզոր  
 ազգն՝ և Նահապետութեանուն կար  
 զայրգեալն Գուգարացոց, որ էր  
 լեալ ի զաւակէ Միհրդատայ, Գա-  
 բեհի Նախարարի, զոր ամեալ Աղեբ  
 սանդրի՝ Թողաւ իշխան ի վերայ գերու-  
 թեն ի Վերիացոց ազգացն, զոր էած  
 Նաբուգոդոնոսոր, որպէս Արիւղե  
 նոս պատմէ՝ այսպէս ասելով։

Մեծագորն Նաբուգոդոնոսոր՝ ուժգ  
 նագոյն էր՝ քան զՀերակլէս ի Աե-  
 բեացոց։ Ի Վերիացոց աշխարհն՝ զ-  
 բաժողով լեալ հասանէր, և վա-  
 նեալ՝ վտանկեալ ընդ ձեռամբ նոյն  
 ձեր. և զմասն մի՝ ի նոցանէ՝ յաջակողմ  
 Պոնտոս ծովու տարեալ բնակեցուցա-  
 նէր. և է վերին այն՝ յեղբերկրի յարե-  
 մուտ։ Իսկ ի հովտին մեծի Բասե-  
 նոյ, կարգէ Նահապետութի, զոր  
 Գունին անուանեալ՝ որ ի զաւակացն  
 Հայկայ։ Իսկ զայր խոժոտագեղ՝ և  
 բարձր՝ կոպտատարազ անձն, և տա-  
 փակարիթ, խորակն, և զժնահայեաց,  
 ի զաւակէ Պասրամայ, ի Հայկայ Թոս-  
 նէ. Տարբ անուն կոչեցեալ. որ վն

առաւել ժաշագիմութեն՝ կոչէին Ան  
 գեղեայ. վիթխարի հասակաւ և ու  
 ժով, հաստատե կուսակալ արեմտից .  
 և յերեսացն անպիտանութենէ՝ կոչե  
 զանուն ազգին՝ Անգեղաուն : Բայց՝  
 էթէ կամիս, և ստեմ վն նր, անյաջ  
 և փցուն, ուն և Պարսիկք՝ վն Ռուսո  
 ճայ Սաճկի՝ ճ և Ե փղոյ ուժել՝ ասեն .  
 կարի աննմանագոյնս թուեն՝ և նմա  
 երգ բանից՝ վն ուժեղութն, և սրբ  
 տեայ լինելոյ . որք ո՛չ Սամփասնի, և  
 ո՛չ Հերակլեայ՝ և ո՛չ Սաճկին, նմա  
 ենն այն զոյցք : Քանզի երգէին նմա՝  
 բուռն հարկանել զորձաբար վիմաց ձե  
 ոօք, սւր ո՛չ գեղութն, և ճնշուլ  
 ըստ կամաց մեծ՝ և փոքր . և բերել  
 եղնգամբքն՝ և կաղմել ուն տախտակ .  
 և գրել՝ նոյնպէս՝ եղնգամբք Արծ  
 սիս, և այլս այսպիսիս : և յեզեր ծո  
 վուն մեծի Պանոսսի, գիպեալ նաւաց  
 թշնամեացն՝ գիմէ ՚ի վերայ . և ՚ի խա  
 զալ նց ՚ի խորն . իբր սասարէզս՝ ութ  
 ու տասն, և սա ո՛չ ժամանեալ՝ առ  
 նու (ասեն) վէմա բոլորածեա՝ և ձգէ  
 զկնի . և ՚ի սասարիկ պատառմանե  
 ջուրցն, ընկղինն նաւք՝ ո՛չ սակաք .  
 և ամբարձումն ալեացն՝ որ ՚ի պատառ  
 մանե ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն՝  
 բազում մղոնս : Կարի է առասպելս,  
 այլ և՛ առասպելաց առասպել : Բայց  
 բեզ զի՛ն . քանզի էր արդարև՝ սաս

տիկ հզօր՝ և այսպիսեաց արժանաւոր :  
 Բայց զինի դորա՝ հաստատեւ զմեծ Նա-  
 խարարութիւն ճոփաց՝ ՚ի Չորրորդն  
 կօնեցեալ Հայս : Այլ՝ զՆախարարու-  
 թիւն Ապահանեաց , և զՄանուաղ-  
 նեանն , և զԲզնեանականն , ՚ի նոյն զա-  
 ւակաց Հայկայ՝ ՚ի բնակչացն գտեալ  
 զպերճադոյնան , Տեարս կարգէ՝ յա-  
 նուն շինից՝ և դաւառաց կոչելով :  
 Այլ՝ մտացաք զդժնեայ՝ զՍաքն ան-  
 ուանեալ այր , զոր ոչ կարեմ հաւաս-  
 տեաւ ասել ՚ի Հայկայ , թէ յառաջա-  
 գունից քան զնա եղելոց յաշխարհիս ,  
 զոր հին զրոյցքն պատմեն՝ լինիլ . բայց  
 էր այր քաջ : կարգէ զսա՝ տակաւ ա-  
 բամբք՝ պահել զլեառնն , և որսալ բլ-  
 բոշանն՝ որք անուանեցան Ակունիք :  
 Այսպէս՝ և ՚ի նոյն իրս զՄիանդակն  
 անդառնալի , և ՚ի սմանէ՝ Մանդակու-  
 նիք : Բայց յորդւոցն Ահազանի՝ գը-  
 տեալ արս , որք ինքնակամ ինդրեցին  
 զՄեհենից պաշտամունն՝ պատուէ  
 մեծապէս , ՚ի ձեռն տալով նց զԲըր-  
 մութիւն : և կարգէ ընդ առաջին Նա-  
 խարարութիւս , և անուն կոչէ՝ Ահա-  
 նիս : Սա պէս՝ և զԱռաւելնեանն՝ և  
 զԱրեհաւանեանն , գտեալ ՚ի Չարսից  
 Առաջնոց Թաղաւորացն , կարգէ ՚ի  
 նոյն անուանան : Ի՞նչ զՇարեշան՝ ՚ի  
 տանէ Սարասարայ՝ հաստատեւ Բզե-  
 աշխ մեծ , և կուտակալ յարեմտից Հա-


բաւոյ՝ յեզերս սահմանացն Ասորես-  
 տանի, առ ափն Տիգրիս գետոյ: գա-  
 ւառս արարդ և ելով զԱրձն, և որ շուրջ  
 զնսլաւ՝ և զԼեւանն Տորաս, և որ՝ Սիւ,  
 և զԿէսուրն ամ: Իսկ զՄոկացին ՚ի  
 նոյն գաւառէ գտեալ՝ այր, որունէր  
 ընդ իւրև Սրիկայս բաղումս՝ Նախա-  
 բարութի՛ն հաստատէ: նոյնպէս՝ և ըզ-  
 կորդուացիս՝ և զԱնձեացիս, և զԱ-  
 կեացիս ՚ի նոյն գաւառաց: Իսկ ըզ-  
 Ռուշաունիս, և զԳողթնեցիս՝ գտի  
 պատմեալ ՚ի Սիսականէն արդարև հա-  
 տած. ոչ գիտեմ, թէ յանուն Արան  
 ցրն՝ զԳաւառսն անուանեալ՝ և թէ  
 յԱնուն Գաւառացն՝ զՆախաբարու-  
 թի՛սն կոչեցեալ: Իսկ յետ այսր ամի՛-  
 Սեհեան շինեալ Զարմաիր, Անդ-  
 րիս հաստատէ արեգական՝ և լուսնի,  
 և իւրոց Նախնեացն: Եւ աղերսել՝  
 որ ՚ի Հրէիցն Համբայ Բագարատ, որ  
 և Թագազիր՝ և Ասպետ, հանգերձ  
 հարկեցուցանող բանիւք՝ թողուլ զօ-  
 րէնս Հրէութենն, և պաշտել զԿուռս.  
 զոր ոչ առեալ յանձն, թողուլ ըստ  
 կամաց զնա Արքայն Վաղարշակ: Հը-  
 բաման տուեալ զքաղաքն Համիրամայ  
 նորոգել, և յայլ բազում տեղիս՝ շի-  
 նել բազմս բաղմաքնակս, և շէնս  
 զիսաորս, և մարդախիտս: և օրէնս  
 իմն հաստատէ ՚ի Թագաւորութեանն  
 իւրոյ. և ժամս որոշէ, ել և մտից,

և խորհրդոց՝ և խրատականութեց՝ և զքօսանաց : Եւ կարգս զինսնորութեց . և նոցանց , Առաջինս՝ և Երկրորդս՝ և Երրորդս , և որ ՚ի կարգին է : Եւ զՅիշեցուցանօղս Երկուս ՚ի ձեռն գրոյ . այլ ոմն՝ զբարի յիշողութիս առնելով , և այլ ոմն՝ զվեճիմնոց բութեանց : Եւ բարի Յիշեցուցանողին՝ հրաման տայ , ՚ի բարկութեն Արքայի՝ և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրան , և զճարդասիրելն : Իրաւարարս՝ ՚ի տանն Արքունի . Իրաւարարս՝ և ՚ի Քաղաքս , և Աւանս : Հրաման տայ՝ և Քաղաքացեաց մարդկան՝ կարգ , և պատիւ ունիլ առաւել՝ քան զՔեղզկաց . և Քեղզկաց պատուել զՔաղաքացիս՝ իրիւ զիշխանս . և Քաղաքացեաց՝ մի առաւել առ Քեղզկօքն պերճանալ , այլ եզրայ բարբար վարիլ՝ վասն բարեկարգութեան , և աննախանձատ կենաց՝ որ է խաղաղութն , և շինութն կենաց պատճառ , և որ ինչ նման այսոցիկ : Եւ քանզի՝ բազում ունէր ուստերս , պատշաճ վարկաւ , ոչ ամենեցուն կալ ՚ի Մծրին . վս որոյ՝ առաքէ զնոսա՝ ՚ի Գաւառն Հաշտենից , և ՚ի Չարն՝ որ է նորին սահմանակալ , որ է արտաքոյ Տարօնոյ , ՚ի նոսա թողով զէնս ամենայն հանգերձ յաւելուածով մօիցն առանձինն , և ոսկեաց կարգելոց Ար

բունուստ : Եւ միայն զառաքին որդւոց  
 իւրոց՝ որ կոչէր Արշակ , պահէ առ  
 իւր ի համար Թագաւորութեան . և  
 նորով ուսար՝ զոր անուանեաց Սր  
 տաշէս , զոր յոյժ սիրեաց . Քանզի  
 էր արդարև՝ տղայն կայտառ՝ և հզօր  
 մարմնով , ոսկ զի՛ կարծիս տալ ի հայե  
 ցողաց՝ որ ի նմայն աճելոցն էին արու  
 թիք : Եւ եղև այս՝ յայնմ հետե , և առ  
 յապայ ի մէջ Արշակունեաց՝ միոյ որդ  
 ւոց բնակիլ ընդ Արքայի , Փոխանորդ  
 լինիլ Թագաւորութեն . այլոց ուս  
 տերաց՝ և դատերաց գնալ ի կողմանս  
 Հաշտենից , յաղգին ժառանգութի :  
 Բայց Վաղարշակ՝ յետ այսպիսեաց ա  
 րութեց և քաջութեց՝ և բարեկար  
 գութեց՝ մեռանի ի Մծբին , Թագա  
 ւորեալ ամս՝ քսան և երկու :

Պրակ. 8.

Յուսիս Թեոյ Արշակոյ Աստուծոյ՝ և ն  
 բն գործոց :



Րշակ որդի Վաղարշակայ՝  
 Թագաւորէ ի վր Հայոց՝  
 ամս 47. նախանձաւոր , և  
 հետևող Հայրենեացն լեալ  
 առաքինութեցն . բաղում կարգս ուղ  
 զութե գործեաց՝ պատերազմելով ի

Պանտացիս . և նշան եթող յեզր մեծի  
 ծովուն՝ զնիզակն իւր ասնն՝ զքողորս  
 տեգ , զոր արեամբ զեռնոց ասնն՝ մը  
 խեալ է . ձգեալ ՚ի հեռեակուց՝ նըս  
 տոյց խորագոյնս յերկանաբար արձա  
 նի , զոր կանգնեաց ՚ի ծովեզերն :  
 Չայս արձան՝ պատուեցին բազում ժա  
 մասակս Պանտացիք , ոպ զառ ՚ի Մա  
 տուածոցն գործս : Իսկ ՚ի գոսալն Ար  
 տաշխի միւսանդամ ընդ Պանտացիս .  
 ասնն՝ ընկեցեալ զարձանն ՚ի ծով : Ի  
 սորա աւարս՝ աղմուկ մեծ ՚ի գօտիս  
 մեծի լերինն Կաւկասաւ՝ յաշխարհին  
 Բաւղարաց . և բազումք ՚ի նոցանէ  
 հատուածեալք՝ եկին յաշխարհս մեր .  
 և բնակեցան ներքոյ Կողայ՝ յարգա  
 ւանդահող՝ և հացաւէտ տեղիս , մին  
 չև ՚ի ժամանակս բազումս : Ի ամանէ  
 նեղեալ՝ որդիք Բազարաստայ , վասն  
 կուսս պաշտելոյ . երկուք ոմանք՝ սը  
 բով կատարեցան ՚ի վերայ Չարցն օրի  
 նաց արիաբար , զորս ոչ պատկառիմ  
 ասել՝ հեռեօղ լինիլ Անանիանց՝ և  
 Եղիազարեանց : բայց այլքն՝ յանձն  
 առնուն՝ այնչափ միայն ՚ի շարաթս հե  
 ծանել յորս , և ՚ի պատերազմունս , և  
 զմանեկունս թողուլ անթլիատս՝ յոր  
 ժամ լինիցին . քանզի անկինքն էին , և  
 հրամայեցաւ յԱրշակայ՝ մի՛ տալ նո  
 ջա կանայս՝ յամ Կախարարութեց ,  
 եթէ ոչ ուխտ պայմանի գիցեն՝ թա

զուլ զթլիտաութին . զոր յանձն առ  
նուն՝ զերկուս զայս միայն , այլ ո՛չ և  
զերկրպագութիւն կոոց : Աստանօր՝  
սպասին քանք ճերունւոյն՝ Մարի-  
բառ կատինայ :

Պրակ 9.

Ե՛նէ՛ ռաբի՛ եգիտ զգոթեւեիւնս՝ շնէ՛  
Մ՝տէնէյն՝ Մ՝տի՛բոս կտիւնայ :

 կիզքն արասցուք՝ պատմել  
քեզ ՚ի Հինգերորդ գրոցն՝  
Արիկանստի խամանակա-  
գրի . որում վկայէ՝ Յովսէ  
փոս , և Հիւսիտա , և այլք բազումք  
ի Յունաց . քանզի՝ նա բովանդակ փո  
խադրեաց՝ որ ինչ ՚ի քարտեղս Դիւա-  
նին Եդեսակայ , որ է՝ Արճայ , որ յա  
ղագս՝ մերոյն պատմէր թագաւորաց ,  
որ Մատեանք ՚ի Մծբնայ էին փոխել  
անդր , և ՚ի սինոպայ Պոնտոսէ՝ ՚ի Մե  
հենական պատմութեցն : Մի որ ան  
հաւատասցի , քանզի՝ և մեզէն իսկ ե-  
ղաք Ահանատեւք այնմ Դիւանի . և  
վրայ քեզ ՚ի մօտայ երաշխաւորեցի  
Եկլիսեաստէ զիրք Եւսերի կեսարաց  
ւոյ , զոր ետ թարգմանել Երանելի  
Վարդապետն մեր Մաշտոց՝ ՚ի Հայ  
բեզու : Ինչիք արասցես՝ ՚ի Կեղաբու

նի, 'ի գաւառին Սիւնեաց, և գտցես  
 յառաջին Հաղներգութեն' յերեքաս  
 սան երորդ թուին, զի վկայէ' յեզե  
 սեայ' Դիւան լինիլ' ամ գործոց Ա  
 աջնոցն Թագաւորացն մերոց' մինչև  
 ցԱրգար, և զհինի Արգարու' մինչև  
 ցԵրսիւանդ' որ և այժմ, կարծեմ' զը  
 տանի պահեալ' 'ի նոյն քաղաքի:

Պրակ 10.

Յուշո՛ւ հոյ Արտուտ Աստուծոյ, և  
 յո՛ւշուիւն ընդո՛ւսն:

**Ա**րտաշէս Թագաւորէ Հայոց'  
 փոխանակ Արշակայ' Հոր  
 իւրոյ, 'իքսան և 'ի չորրորդ  
 ամի' Արշակայ Պարսից Ար  
 քայի: և յառաջագեմ եղեալ' ոչ զերկ  
 րորդականն ունի գահ, այլ՝ զաւագու  
 թէ թեկն ամէ: որում հաւանեալ Ար  
 շական յանձն առնու' տալ նմա Նախա  
 գահութիւն. քանզի' երայր հպարտ, և  
 պատերազմատէր. որ և Արքունիս իւր  
 'ի Պարսից աշխարհին շինեաց, և զը  
 բամ առանձին՝ զիւր պատկերն հար  
 կանէր: և զԱրշական ընդ իւրով ձե  
 սամբ կացուցանէր Թագաւոր Պար  
 սից, ուն զՏիգրան' որդի իւր' Հայոց':  
 քայց տայ զՏիգրան' որդի իւր' ցպա  
 տանի ոմն Վարաժ անուն' որդի Դա

տայ'

տայ, որ 'ի զաւակէ Գառնկայ Կեղա  
մեանց ( քղի' էր պատանի' նշաւակ' ի'նե  
տաձգուածի կորովութե ) ուսուցանել  
զՏիգրան . զնա իշխան Արքունակա  
նացն արարեալ որսոց , և շէնս պար  
զեւէ զՀրազդան գետով , յանուննորա  
կոչի ազգն' Արաժնունի : Բայց' ըզ  
դուսար իւր զԱրտաշատայ, տայ կին  
Միհրդատայ ումեմն' Արայ Բղեշի  
մեծի, որ էր 'ի զաւակէ Միհրդատայ'  
'Իարեհի Նախարարի, զոր կացուցել  
էր Աղեքսանդրի' ի վերայ գերութեն  
Աերիացւոց աշխարհին' ոնյ յառաջա  
դոյն պատմեցար . և հաւատայ նմա  
զկողմնակալութիւն Հիւսիսային լե  
րանցն, և Պոնտոս ծովու :

## Պրակ 11.

Խաչըն Արտաշէտի յարեմափս, և յէր  
Բաբելոննէլ շկիւրոս . և ստերեւ  
ընթեմէ Հայոց շղափէրս  
կոչն :


**Ա**նժամ' հրաման տայ Ար  
տաշէտ' զոր յարուցանել յա  
րևելից, և 'ի հիւսիսոյ' բա  
զում յոյժ, մինչ ոչ գիտել  
զհամար նմա . այլ յանցս, և յիջաւանս'  
բար' ըստ մարդութունի' կարկառ, նը  
շան բազմութեն' թողուլ . և խաղայ

այնու՝ յարեմուտս, ձերբակալ առնէ  
 զԿիւրոսս Լիբէացոց. և գտեալ յԱ  
 սիայ՝ պղնձաձոյլ՝ ոսկէզօծ պատկերս  
 զԱրտեմեայ Դից՝ զՀերակլեսայ, և  
 զԱպոլոնի, տայ բերել յաշխարհս մեր,  
 զի կանգնեացեն՝ յԱրմաւիր. զոր ա  
 ռեալ Քրմապետացն՝ որք էին յազգէն  
 Վահունեաց՝ զԱպոլոնի, և զԱրտե  
 մեայ Դիցն՝ կանգնեցին յարմաւիր. իսկ  
 զՀերակլեսայ՝ զԱնապատներն, զոր  
 արարեալ էր ՚ի Սելիլէայ, և ՚ի Դիպո  
 նոսէ կրեացոց զՎահագն իւրեանց  
 Նաթնի վարկանելով՝ կանգնեցին ՚ի  
 Տարօն՝ յիւրեանց սեպհական գեօղն՝  
 յԱշտիշատ, զկնի մահուանն Արտա  
 շիսի: Բայց՝ Արտաշիսի նուաճեալ  
 զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝  
 ըստ զՈվկիանոս բաղմութի նաւուց,  
 ծառայեցուցանել կամեցեալ՝ զբոլոր  
 Արեմուտս. բանդի՝ մեծ յոյզք խոս  
 վութեց եղեալ ՚ի Հառվմէ. ոչ որ նր  
 մա ընդդիմանայր հզորապէս. այլ՝ ոչ  
 դիտեմ ասել՝ յորպիսի ազգմանէ, ա  
 հագին իմն աղմուկ լեալ շփոթից. և  
 բաղմութեան զօրացն՝ զմիմեանս կո  
 տորել: Իսկ Արաաշէս փոխուցեալ  
 մեռանի, որպէս ասի՝ յիւրոց զօրացն.  
 Թագաւորեալամս, 25: Բայց՝ Յելլա  
 դայ առեալ պատկերս, զԴիօնի՝ զԱր  
 տեմիդեսայ՝ զԱթենայ՝ զՀեֆեստու,  
 զԱֆրոդիտեայ, տայ բերել ՚ի Հայս.

որք՝ ոչ ժամանեալ միջամուխ լինիլ  
յաշխարհս՝ լսեն զբօլթ մահ ունն Ա/  
տաշխի, և փախուցեալ ընկենուն ըզ  
պատկերսն յԱմրոցն յԱնի. և քուրմ  
նոցա՝ զհետ լինելով, դադարեն առ  
նոսա:

## Պատկ 12.

Այսպէս Տիեզեր-ի-աւետեանն Ար.  
քաշիտի, և ի-դեւոյն շկիւրտս՝ յայ  
լոյ Պատմագրոց:

 Այս ասացեալ Պատմա-  
գրացն Յունաց, ոչ միայ  
կամ երկուց, այլ բազմաց.  
ընդ որ տարակուսեալ մեր  
բազում խոյզ խնդրոյ արարարք. քան  
զի՛ լուսաբ ՚ի պատմութեց ոմանց, կիւ  
րոսի սպանեալ զկիւրոսս, և բարձել  
զԹադաւորութիւն Լիդացւոց: և դար  
ձեալ պատմի առարկութիւն կրիդի-  
մեայ, և Նեքտանեբեայ: և է նեքտա  
նեբոսս այս՝ Վերջին Թադաւոր Ե-  
դիպտացւոց, ՚ի Մանեթոսէ պատ-  
մեալ, զոր ոմանք՝ Հայր Անեքսանդ-  
րի ասացին: և դոմանեմք զժամանակս  
կիւրոսի՝ երկերիւր ամաւ՝ յառաջ  
քան զՆեքտանեբայ. իսկ՝ զՆեքտա-  
նեբայն՝ երկերիւր ամաւ՝ յառաջ Ե-  
ղեալ քան զԱռաջնոցն Արտաշխի՛

Թագաւորի Հայոց: Բայց՝ քանզի բազումք են, որք ասեն զԿիւրսոս մերոյ Արտաշիսի կալեալ. և ոճով ինն՝ պատմեն, եւ հաւանեալ եմ. քանզի ասէ Պօղիկրատէս՝ այսպէս. մէջ ինձ Արտաշէս Պարթև, քան զՄակեդոնացիին Աղեքսանդր. զի կալով յերում աշխարհին, իշխեաց Օկերայ՝ և Բաբելոնի. և չե՛ ընդ ալիս՝ դեռ անցեալ՝ զԼիբէականն սասակեաց զչորս, և կալաւ զԿիւրսոս. և յառաջ քան զԱսիա հասանելն՝ Մատիկէ գղեկին քարոզեցաւ: Աւաղ բախտին, միայն թէ՛ ՚ի Տերաթեն, և ո՛չ ՚ի փախտեանն՝ եր փախձանեալ: Ասէ հանգոյն դ.մին՝ և Ազարս, փորք՝ Աղեքսանդրի, և Դարեհի՛ պատերազմն, առ Արտաշիսին բաղդատեալ. քանզի՛ նոցայն, ո՛չ ՚ի փոշոյն մարտը երևէր լոյս արնընջեանն. այլ՝ սաճածկեաց նեառձգութիւն, և ստուերացոյց զարեգակն. ձեռագործ գիշեր զմիջօրէի՛ արարել: ո՛չ փախտեաց Համբաւարեր ՚ի Լիբէացւոցն թողեալ. այլ՝ և զԹագաւորն Լիբէացւոց զԿիւրսոս՝ ի ապակի հրամայեաց կացուցանել: Վստորա՛ և ո՛չ ուղիք զգետոյն ստուարացոցին արբմամբ ՚ի ձմեռնային նեղութն իջուցանելով. Վստի՛ և զթուոց եցոյց արկար լինիլ բաղձութի՛ զորայն, մինչդի՛ չափոյ պէտք եղեն առաւել՝ քան զՏա

մարտի : նա՛ ընդ այս ո՛չ հպարտացաւ .  
այլ՝ արտաստ՛ւեաց ասելով . անաղ փա  
ռացս անցաւ որի : Գրէ ևս Կամաղ-  
րոս այսպէս , խարկեանք լինէին հպար  
տացելոյն Լիւրեացոց . Կրիսեայ ,  
Թեւեախա հարցուին պատասխանելով .  
Կիրոսս անցեալ ընդ ալիս դեռ , քա  
կեացէ զիշխանութիս . զոր նա զօտա  
րաց կարծեալ՝ զինքն քակակ : քանզի՛  
կալեալ զնա Պարթևին Արտաշեսի՛  
հրամայեաց յերկաթեղէն տապակ հա  
նել : Իսկ՝ Կիրոսսի յիշեալ զքանան  
Սիդոնի Աթենացոյ՝ ասէ յիւր լե  
զուն : ո՛վ Սիդոն Սիդոն , զեզեցիկս  
բարբառեցար՝ ո՛չ երանել զբարեբախ  
տութի՛ մարդոյ՝ մինչև ՚ի վախճան .  
Իսկ լուեալ որք մերձն կային՝ պատմե  
ցին Արտաշեսի , եթէ զնոր ինն Աճ  
կարդայ Կիրոսս : և զթացեալ Արտա  
շեսի՛ հրամայեաց ամել : և հարցեալ՝ և  
ուսեալ՝ թէ զի՛նչէ՛ որ աղաղակեացն .  
հրամայեաց ներել զաանջաման : գրէ  
և Փիզոնիսս , ամենեցուն Թագաւո  
րաց՝ հուժիու եղեալ Պարթևն Ար  
տաշէս , ո՛չ միայն զԼիրեացիսն վա  
նեալ՝ և զԿիրոսս կապեաց , այլ՝ ՚ի  
Հելեպպոնտոսն , և ՚ի Թրակիէ՛ զտա  
րերցն փոխեաց զընութիս . ծովագը  
նաց ընդ երկիր՝ բերեալ լինէր , և ի  
ծով՝ հեռեակելով . Թե տաղացոցն  
տպառնալով՝ համբառն հիացուցանէր

զ Հելլենականն . կործանեաց զԼակե-  
 դեմոնացիս . փախոյց զՓոկեացիս .  
 Ղոզկիացիք եղեն անձնատուրք . Բիւ-  
 տացիք մասն են ՚ի կալուածոյ նր : ընդ  
 ամենեսին նմա Հելլադայ մատուցա-  
 նէր զասն . յետ փոքու ժամանակի ա-  
 ղէան անցին զամենեքուքք : ոչ այն  
 այնքան թշուառացաւ Կիւրոս ը Մաս-  
 քութա պատերազմելով . ոչ այսպիսի  
 կիրս կրեաց Դարեհ՝ յիսկի թացւոցն  
 փախուսան . ոչ Կամբիսէս յԵթով-  
 պացիս՝ փոքր՝ և քսերքսին Հելլա-  
 դայ զօրու երթալն . թողլով նոցա ըզ-  
 գանձս՝ և ղխորանս , միայն կենդանի  
 փախուցեալ մազապուրայլ՝ Սամեծա  
 մեծ յաղթականօք պանծացել . յիւրաց  
 զօրացն խողխողի : Արդ՝ ես հաւատար-  
 մութն արեանի համարիմ , զայսօսիկ  
 պատմութիւն և զայն Կիւրոսս՝ որ առ  
 Կիւրոսի , կամ Նեքրոանի բեաւն պատ-  
 մեն , կամ սուրբ լեալք , և կամ միով  
 անուամբ՝ բազմաց վարեալ թագաւո-  
 րաց : ուր յուրից է սովորութի :



Պրակ 13.

Յուզու թագաւորութեան Տէրունայ  
 Միջնայ՝ և ընդդէմ Կալոյ շրջն  
 Յունաց, և ՂԱՒԵՏԱՆԻ շինե  
 լոյ. և սրչաւանս սանեւ  
 'ի Պաշտօնի :

 Եւս՝ Արտաշեսի Ասաջնոյ  
 թագաւորի Տիգրան՝ որդի  
 նորա 'ի քառասուն՝ և յինն  
 երորդ ամի Արշակայ՝ Թա  
 գաւորի Պարսից. և ժողովեալ զգօրս  
 Հայոց՝ ընդդէմ երթայ զօրացն Յու  
 նաց. որք յետ մահուան Հօրնի՝ Ար  
 տաշեսի՝ և զրուելոյ զօրացն, հետա  
 մուտ լեալ՝ գային յաշխարհս մեր. ո  
 ղոյ ընդդէմ պատահեալ Տիգրանայ՝  
 արգելեալ 'ի վերջ պահանջի. և 'ի բեռ  
 այր իւր Միհրդատ հաւատացեալ ըզ  
 Մատար, և զհոգս միջերկրեայցն. և  
 զօր բազում թողեալ առ նմա, դառ  
 նայ յաշխարհս մեր. Ասաջին գօրծ՝  
 զՄեհնանս շինել կամեցեալ : Իսկ  
 Քրմացն՝ որ 'ի Յունաց զմտաւ անեալ  
 զն մի՝ 'ի խորագոյն Հայս վարիցին.  
 պատճառեցան զըզմութիւնս, իբր թէ՝  
 'ի իրն անդէն կախիցին զքնակութիւն.  
 որում հաւանեալ Տիգրան՝ կանգնեալ  
 ՂԱՒԵՏԱՆԻ պատկերն Ղաւթի յԱ

մարն յԱնի. և զԱթենայն՝ ՚ի Ռիլա,  
 և զԱրտեմիդեայ զմիւս պատկերն՝ յԵ-  
 բիզայ. և զԵֆեսոսուն՝ ՚ի Բագաոսին զ-  
 բայց զԱֆրոզիսեայ պատկերն՝ իր-  
 ըն Հերակլեայ՝ տարփաւորի առ նո-  
 ՚րին պատկերին Հերակլեայ՝ հրամայ-  
 եաց կանգնել յաշտից տեղիսն : Եւ  
 ցասուցեալ Է Վահանիսն՝ եթէ ընդ  
 էր յիւրեանց սեպհականին իշխեցին  
 կանգնել զպատկերն Հերակլի՝ զառա-  
 քեալն ՚ի նորուն հօրէ, ընկենու զնա  
 ՚ի Քրմաթէն՝ հանգերձ զգեօղսն յԱր-  
 քունիսն ունելով, յորում պատկերքն  
 կանգնեցան : Եւ այսպէս՝ Մեհեանս  
 շինեալ, և առաջին Մեհենիցն՝ Բա-  
 գինս կանգնեալ, զոհս ամ Նախարա-  
 րացն՝ հրամայէ մատուցանել երկրպա-  
 գութի. զոր շտեալ յանձն՝ Արանց  
 Ազգին Բագրատունեաց, յորոց ըզ-  
 միոյ ունեմն՝ զլեզուն հատեալ, որում  
 անուն էր՝ Ասուգ : Վն պատկերացն  
 անարգանաց, ոչ այլ ՚ի իր խաշտան-  
 գէ. բանդի՝ յանձն առին ուտել ՚ի զո-  
 հիցն Արքայի, և զմիս իողի. Թէպէտ  
 և ոչ ինքեանք զոհեցին երկրպագու-  
 թի. վասն որոյ՝ ահնու ՚ի նոցանէ  
 դիշխանութի զօրուն. բայց միայն ըզ-  
 Թագակապ Ասպետութիւն՝ ոչ հա-  
 նէ : Ինքն իջանէ ՚ի Միջագետս, և  
 զտեալ անդ՝ զԲարշաբնայ զպատ-  
 կերն. զոր պատկեր՝ ՚ի փլոսկրէ, և



## Պրակ 14.

ԴՆՏԱՆԻ Ի ԿԷ ՊՆՏԵԻ ԶՆՈՎՄԱՅԵՅՈՅ  
 ԶՈՐՈՎՆՐԻՒ Ե ԱՆՆԱԼ ԶՄՈՒՄԻ . Ե  
 ԵՆՑ ՄԻՆԻՏՄՈՅ :




Այնմ ժամանակի Պոմպէոս  
 ԶՆՈՎՄԱՅԵՅՈՅ ՉՕՐԱՎԱՐ՝  
 զՕՐՕՔ ԲԱՂՎՈՔ ԵԿԵՈՂ ՏԱ-  
 ՍԵՈՂ Ի ՄԷՋ ԵՐԿՐԵԱՅԱ . ԸՂ  
 ՍԿՈՐՈՍ ՂՄԱՐԱՐԱՅԵԱՆ ԻՐ ՊԱՐԻՍ  
 ԱՍԱՐԺԻ՝ ՄԱՂ ԱՅԱՆԵՐԱՂՈՎ ԸՆԴ ՏԻՂՐԱ  
 ՆԱՅ : ԲԱՆՂԻ՝ ԷՐ զԱՐՁՆՈՂ ՃԻՐ ԱՂ-  
 ԽԱՐՀՆ՝ ՎՄԽԱՆ ԶԱՊԱՆՆԱՅ յԵՐԱՂԱԿԻՆ .  
 ԱՆԵՆՈՂ ՍԿՈՐՈՍԻ Ի ԴԱՄԻԱՍԿՈՍ՝ Ե  
 ՍԵՆՍԵՈՂ զՐԱՂԱՐՆՆ ԱՍԵՈՂ Ի ՄԵՍՐԱ  
 ՂԱՅ՝ Ե Ի ՂԱՂԱՅ . զՆՈՍԱ ՏԱՐԱԾԵՈՂ  
 ՏՆՂՆ՝ Ի ԶՐԷԱՍՏԱՆ ՓՈՒԹԱՅՐ՝ ՏԱՍԱ  
 ՆԵՂ Ի ՎԵՐԱՅ ԱՐԽԱՍԱՐԱՂԻ , յՕՂՆԱ-  
 ԿԱՆՈՒԹԻՆ ԵՂՐՕՐ ՆՕՐԱ ԵՐԻԿՈՒ ԶԻՐ  
 ԿԱՆՈՒ ՔԱՏԱՆԱՅԱՅԵԱՐԻ՝ ՕՂԷՍՅ Ա-  
 ՂԵՐՍԱՆՂՐԻ : Իսկ Պոմպէի պատերազ  
 մեալ ընդ Միհրդատայ , տեսանէ ըզ  
 սաստիկ ընդ զիմակացուԹԻ՝ Ե զաՏա  
 զին մարտս , Ե վտանգի յոյժ . սա-  
 կայն՝ բազմուԹԻՆ յաղԹեալ , փախս-  
 տական վնի Միհրդատ Ի կողմանս  
 Պոնտոսի : յարմէ իրրև զերժանելով  
 Ե զեալ Պոմպէոս , որում ակն ո՛չ ու-  
 նէր՝ Ե առեալ զՄաժար , Ե կալեալ  
 զՕՐՂԻ ՆՕՐԱ ՂՄԻՏՐՂԱՍ , նստուցա-

նէ 'ի բաղարին զօր, և ինքն ոչ հետա  
մուտ լինի նմա, և ընդ Ասորիս 'ի Հը  
րեաստան փութայր հասանել . և 'ի  
ձեռն հօրն Պիղատոսի Պոնտացոյ՝ ըզ  
Միհրդատ սպանանէ՝ Թունաւոր զե  
զօր : Վկայէ այսմ բանից՝ և Զովսե  
փոս՝ 'ի Ճառին, որ վասն Ապրսամին  
պատմէ, այսպէս ասելով . Պոնտէի  
մտ Զերիբով հասանեն ակեօիք մա  
հունն Միհրդատայ :

Պրակ 15.

Յուզոյ յորձնելոյ Տեփրանոյ 'ի վերայ  
չորոց Հորվայեցոց, և իոյս Կու  
Գուբնոսի, և որձնել ըն  
նոյն Միհրդատ :



Մ' Թագաւորին Հայոց  
Տեգբան, զգերութին Հը  
րեից նստուցեալ յԱրմա  
ւիր՝ և յԱւանին Վարդգէ  
սի, որ 'ի վերայ Քասաղ գետոյ : և զյե  
լուզական բնաջինջ արարեալ 'ի լեռ  
նէն, և զսուգ Միհրդատայ կատա  
րեալ . խաղայ զնայ յԱսորիս, 'ի վե  
րայ զօրացն հասմայեցոց՝ առ 'ի վե  
րէժա պահանջել : Ընդգէմ նորա զայ  
Գարիանոս Սպարապետ զօրացն հը  
ռովմայեցոց, զոր թողեալ էր Պոն  
տէի 'ի գնան իւրում 'ի հոսմ. և Գու

բխանաս ո՛չ իշխեաց 'ի դիմի հարկա-  
նել Տիգրանայ, դառնայ Տեփրատայ,  
զՊատղոմէաս անելով պատճառս . և  
գաղտնի հաշտութիւն խօսեցեալ ընդ  
Տիգրանայ, տայ զքեռորդին նր' զպա-  
տանին Միհրդատ . զորդին Միհրդատ  
տայ, զոր կաշեալ էր Պոմպէի 'ի Մա-  
ժաք' ասելով, թէ՛ գաղտնաց :

## Պրակ. 16.

Պատերազմ կրօնայ, և ստախոսն նորի՛ն  
'ի Տեգրանայ :



Կասկած առեալ հասովմայն-  
ցոց՝ զԳարինոս փոխեն, և  
զԿրասոս փոխանակ առա-  
քեն : որոյ եկեալ և առեալ  
զմտ գանձս՝ գտեալս 'ի տաճարին Այ  
Տէմ, խաղայ 'ի վերայ Տիգրանայ . և  
անցեալ ընդ Եփրատ, սատակի ամե-  
նայն զօրօքն հանդերձ՝ 'ի պատերազ-  
մելն՝ 'ի Տիգրանայ . զորոյ գանձան ժո-  
ղովեալ Տիգրանայ՝ դառնայ 'ի հայս :



## Պրակ 17.

Թե՛ որդե կրտսի՛ն՝ ընդդէմօց եղի  
Տիգրանոյ . և Միհրդատոյ ազգոս  
Բել՝ և շինել շկտորե :

Չարելի Հասկմայեցւոց՝ առա  
ջին զկրասոս անթիւ զօրօք .  
Սա եկեալ՝ և ընդդէմ կա  
ցեալ , չտայ թողլ զօրացն  
հայոց՝ անցանել ընդ Եփրատ , և առ  
պատակել յԱսորիս : Չայտա ժամ  
նակա՝ թերահաւատութի լեալ Տիգ  
րանայ ՚ի պատանին Միհրդատ , ոչ  
զիւր կարծելով քեռ որդի՝ չտայ նմա  
մասն ինչ իշխանութի , այլ՝ և ոչ զիւր  
աշխարհն Վրաց . և Միհրդատայ ար  
համարհութի կրեալ ՚ի Քեանուշնիւր  
և Տիգրանայ , ապստամբութի անկա  
նի առ կեսար , իշխանութի գտեալ  
զՊերգեայ քաղաքի , զօրավիզն օգնա  
կանութի լինի՝ Անտիպատրոսի հօր հե  
րովդի , կեսարու հրամանաւ : Սա՛ շի  
նել զՄաժար , ընդարձակագոյն , և  
պայծառ շինուածովք , և անուանել կե  
սարեալ ՚ի պատիւ կեսարու . և յայնմ  
հետէ՝ բարձեալ լինի իշխանութիւնն  
Հայոց ՚ի քաղաքէն յայնմանէ :

## Պրակ 18.


Յուզու գոթանութի Տեգրանայ՝ և Ար-  
 շէշի, և սաստել սոցոտի՝ ՚ի Պարս-  
 քիէ, և գերութի Հիւրիւնո-  
 թիւնայ-դեմի, և ոչ  
 քուլտութիւն հրէից :

Եւ այսր իմի՝ ՚ի հիւանդու-  
 թն եղեալ Տեգրանայ, ա-  
 ղերսէ՝ ՚ի սէր զԱրշէզ Ար-  
 թայ Պարսից, յաղաղս հը  
 պարտութե հօրն՝ հանելով ՚ի նոցանէ  
 զնախագահութիւն : Իսկ սա իւրովք  
 կամօք ղերկորդականն ունելով՝ ըստ  
 իրաւանց, դարձուցանէ ՚ի նա զնախ-  
 գահութիւն. և ՚ի հաշտութի անեալ  
 զԱրշէզ, առնու ՚ի նմանէ զօր յօգնա-  
 կանութի ինքեան : Յայնմ ժամանա-  
 կի՝ առեալ Տեգրանայ զՔաղաքիւրան՝  
 Նահապետ Ռըշտունեաց նախարա-  
 րութիւն՝ Սպարապետ կաշուցանէ զօ-  
 րացն հայոց, և Պարսից, և առաքէ  
 ՚ի վերայ զօրացն հռովմայեցւոց. հրա-  
 ման տուեալ՝ զքնակիչս աշխարհին Ա-  
 սորուց, և Պաղեստինացւոց՝ ՚ի հաշ-  
 տութի հաւանութն խօսիլ : Նմա ընդ  
 առաջ լինի՝ Պակարոս ոմն անուծ, ո-  
 թայ հայրն լեալ Թադաւոս Ասորուց,  
 և ինքն ինա՛րի Անախոսի Արիստա-



երկրայինս, և յարև Արշէղի, և Տեղ  
բանայ: Ընդ որ մտաւ հացեալ հիւրկա  
նոս, թողու զհերովդէս 'ի վերայ է-  
րուսացեմի, և զփասայելոս՝ զերէց եզ  
բայր հերովդի, առեալ ընդ իւր գայ  
առ Բազափրան 'ի ծովեղերն, 'ի դեօզն՝  
որ կողի էրափսն: և Բազափրան խո  
բանանկա թի սաառէր զնս, և ինքն  
յանկարծակի անտի զնացեալ, մնացե  
լոյ զօրացն հրաման տայր, 'ի բուռն  
առնուլ զնոսա, և 'ի ձեռն Անտիգո-  
նի մամնել: և Անտիգոնոս 'ի վերայ  
հիւրկանոս անկեալ՝ զականջս նի ատա  
մանքն 'ի բաց կարէր. զի թէ՛ և սյլ  
ժամանակ փոխեացի, անհնար լիցի նը  
մա զՔահանայապետութիւն ունիլ.  
բանդի՝ օրէնքն զողջանդաման՝ հրա  
մայեն կացուցանել Քահանայս: և  
Փասայիլի եղբայր՝ հերովդի խրովի  
զարկեալ զիւր գլուխն զքարի, առա  
քեցաւ բժիշկ Անտիգոնեայ, իրր թէ՛  
բժշկել զնա՝ ելից զվերն նորա թունա  
ւոր գեղովք, և վախճանեցոյց 'ի ՚ Բա  
զափրանայ հրաման տուեալ Գնէլոյ՝  
Տակառապետի Արքայի Հայոց յեկմ  
զհերովդէս որսալ. իսկ Գնէլ զհերով  
դէս՝ արտաքս քան զպարիսպն ելա  
նել պատրէր. զոր շտուեալ յանձն հե  
րովդի, և ոչ ևս՝ կալ 'ի բաղաքին իշ  
խեաց, երկուցեալ 'ի պատառմանէ Ան  
տիգոնեանցն, 'ի զիշերի ծածուկ ընտա

նեօքն հանդերձ՝ առ Եղովայեցիսն  
 փախչէր, ՚ի Մասանդան յամարն . Թո  
 ղեալ զընտանիսն, ինքն ՚ի հռոմ փա  
 թայր հասանել : Բայց՝ զօրքն հայոց  
 ձեռն տա՛ռութեամբ Անտիգոնեանցն՝  
 յԵլմ մտանէին, ո՛չ ինչ ումք փա  
 սեալ . բայց միայն զհիւրկանու զինչն  
 առնուին աւելի քան՝ 300 քանքար .  
 և ընդ դաւառսն ասպատակեալ ըզ  
 հիւրկանեանսն աւերէին . և զՄա  
 ղիկացւոց քաղաքն գերի առեալ՝ Թա  
 դաւոր կացուցանէին զԱնտիգոնոս .  
 կապեալ զհիւրկանոս՝ ածեն Տիգ  
 րանայ՝ հանդերձ գերութեամբն . և  
 Տիգրան հրաման տայ Բաղասիրանայ՝  
 նստուցանել զգերին Հրէից՝ որ ՚ի Սա  
 մարացւոց, ՚ի քաղաքին Շամիրամայ :  
 և Տիգրանայ ո՛չ աւելի բաւեալ քան  
 զերկեամ մի՝ յեւ այսորիկ վախճանի :  
 Թաղաւորեալ ամս՝ 33 :



## Պրակ 19.

Այլ դասերակ շայոց, ընդ զորս հասն  
 շայոցոց. և դասուին Սէշնի՝ և  
 Բենդեգէտոյ:






 Երավդէս անցեալ 'ի Տոսմ,  




 առաջի Անտոնիոսի՝ և Կե  




 սարու՝ և Սինկլիտոսին, զին  
 քեան միամտութի՝ առ հը  
 ոսվմայեցիսն պատմէ, և Թադաւոր  
 հրէաստանի յԱնտոնիոսէ եղեալ, առ  
 նաւ իւր զօրավիզն օգնականութեան՝  
 զԲենդեգէտոս հոսմայեցւոց Սպարս  
 պեան զօրօք պատերազմել ընդ զօրս  
 շայոց՝ մերձ Եփրատ. և 'ի զՊակա  
 րոս սպանեալ՝ դառնայ Երուսաղէմ  
 'ի վերայ Անտիոնի: Իսկ շայոց միւս  
 անգամ օգնութիւն զօրու 'ի պար  
 սից դտնալ՝ զիմեալ 'ի վերայ Սէզո  
 նի, և փախտատական զնա 'ի Բենդե  
 գէտոս արկանեն, հեղձունս արեանց  
 առնելով անբաւս:



Պրակ 20.

Ե՛կե՛ զի ուր Անտոնիոս Իրեմիէ Դիմու  
 'ի Քերոյ շրջն հոյոյ՝ առնաւ շէ  
 Հ-Տի-Գ :

Չարեալ Անտոնիոս՝ Իւր  
 'ի հասանէ իմ զօրօք հոս  
 մայեցւոց . և հասեալ 'ի Համ  
 բաղ , լսէ զմահն Տիգրա  
 նայ , և առեալ զքաղաքն , և թողեալ  
 Ղասիա՝ զօրավիզն հերովդի՝ մարտ  
 դնելով ընդ Երուսաղիմի՝ 'ի վն Ան  
 տիգոնի , ինքն 'ի ձմերոցս գնայ յԵ  
 զիպոսս , վառթայր հասանել ըստ  
 շամբշութն առն կնամուլոյ՝ ցանկա  
 թք վառեալ 'ի կղեպատարայ՝ զչխոյն  
 Եզիպոսացւոց : Այս կղեպատարա՝  
 դուսարէ Պատղումէոս Դիմիսի , թառն  
 Պատղեմայիդ կղեպատարայ՝ և սիրե  
 լի յոյժ հերովդի . վն որոյ , առաւել  
 ևս՝ յանձնէ Անտոնիոս Սասիայ . որ  
 և մարտացեալ իսկ քաջապէս՝ առ  
 նա զԵրուսաղիմ . և սպանեալ զԱն  
 տիգոնոս՝ թաղաւորեցուցանէ զհե  
 րովդէս ամենայն հրեատարնի , և Գա  
 լիլեայ :



## Պատկ 21:

Յարգու Քահարէլայն Արտաւազդայ,  
 և գաբերաշէլ ընդ հովհայեցի:

**Ա**յոց թագաւորէ Արտաւազդ՝ որդի Տիգրանայ: սա ժառանգեցաւցնէ զեղբորս իւր, և զքորս ի գաւառին Աղւոյտովի, և Առբերանայ, թող լով ի նոսա զմասն Արքունի՝ որ ի շէնան այնց գաւառաց, հանդերձ առանձին մտից, և ռոճկաց. ըստ օրինակի ազգականացն՝ որ ի կողմանց հաշտենից: ուն՝ զի լինիլ նոցա պատուականագոյն, և առաւել թագաւորազն՝ թան զայլն Արշակունիս: միայն օրինադրէ, ո՛չ կեալ յԱրարատ ի բնակութիս Արքայի: Բայց՝ այլ ո՛չ գործարութիւն, և քաջութիւն եցոյց. այլ ուտելաց՝ և ըմպելաց պարսպեալ. մօրից՝ և եղեգնապարակաց թափ առեալ շրջէր՝ և առապարաց, զիշավայրիս, և զխողս արածելով. զիմաստութենէ, և զքաջութիւն, և զքարի յիշատակաց՝ անօրյթ արարեալ. ծառայ և սարուկ որովայնի լինելով, արդարև զաղբիս մեծացուցանէր: Սարասրելով յիւրոց զօրացն՝ վն առաւել պրզերդութիւն՝ և սաստիկ որկրամուտութիւն, մանաւանդ զի և միջագետս ասորոց՝

Անտոնիասի հանեալ էր ՚ի նմանէ . ք  
որ զայրացեալ Արտաւազդ, հրաման  
տայր՝ զօր յարուցանել զբերաւորս  
Ատրպատական նահանգին, և զհնա  
կիւս լերինն կաւկասու հանդերձ Ա  
զուանօք, և Աբօք . խաղայ՝ իջանէ ՚ի  
Միջագետս, և հարածականս առնէ  
զգօրս հռօմայեցոց :

Պրակ 22 :

ՉԵՐԲ-Ի-Լ ԵՆԵԼ ՂԱՐԻՆՆԻՒՆԷ ԱԵԻՆ  
ՆԵՅ :

**Մ**ԻՆԵՆԵԱԼ առիւծարար գաղտ  
նութիւն Անտոնիաս, առա  
ւել ևս՝ Թունեալ ՚ի կրկո  
պատրայ : Քանզի՝ քեն պա  
հեալ էր՝ վն լեկանաց իւրոյ հանուոյնս,  
որ ՚ի Տիգրանայ . և ոչ միայն Հայոց,  
այլ՝ բազմաց այլոց Թագաւորաց լի  
նէր մահաբեր, զի՝ նոցայոցն տիրես  
ցէ իշխանութեց . սակս որոյ՝ բազում  
Թագաւորս սպանեալ Անտոնիաս, կը  
զէոպատրայ հաւատայ՝ զնոցա իշխա  
նութիւնս, բայց ՚ի Տիգրոսէ, և ՚ի Աե  
զոփեէ, և որ միանգամ՝ ընդ Ազատ  
գետոփն էին : Ե՛ւ առեալ զբազմութի  
զօրացն՝ զիսէ ՚ի վերայ Արտաւազդայ,  
և անցեալ ընդ Միջագետս՝ կատարե  
անհնարին զգօրս հայոց, և ձերբակալ

առնէ զԱրքայն նոցա . և դարձեալ  
 յԵզիպատս՝ պարգևէ Կղեոպատրայ  
 զԱրտաւազդ՝ որդի Տիգրանայ՝ հան-  
 դերձ բազում ընչիւք յանկածէ պատն  
 բազմին :

Պրակ 23.

Յուզոս Բագարտելոյն Արշակոյ՝ և շա-  
 քանն Տաւուսոս հարնէ Հայոց Հը-  
 ւովոյեցոց : Եւ որ յիստորի հիւ-  
 րանս քահանայադէտի . և վան-  
 նորն՝ վանգ ուզին Բագար-  
 տուանէսց :

Քահաներորդի ամբ, 'ի կատա  
 բունն աւուրց թագաւորու  
 թնն Արշակ, ժողովեալ  
 զօրք հայոց՝ հրամանաւ նո-  
 րին՝ թագաւորեցուցին 'ի վր ինքեանց՝  
 զԱրշակ, որ և Արշակ, որդի Արտա-  
 շակ՝ Եզրայր Տիգրանայ՝ հայր Ար-  
 զարա : զսա սմանք կոչեցին յասոր-  
 ւոց՝ Մանովազայ . ըստ յայտնից սո-  
 վորութն կրկին ունելով անսուանս .  
 ուն հերովդէս աղբիպաւ, և ուն Տիտոս  
 անսանինս, և կի՛ Տիտոս Յուստուս :  
 Բայց՝ քանդի 'ի նմին ամբ վախճանե-  
 յաւ Արշակ՝ թողով զթագաւորու-  
 թնն պարսից՝ որդւոյ իւրում Արշորի՝  
 մանկան՝ փոքրիկան՝ յոյժ աղայոյ . ո՛չ

որ էր՝ որ օգնէր Արշամայ՝ ըզէմ կալ  
 հռովմայեցւոց . խօսի ընդ նմ՝ ի հաշ-  
 տաւթի խաղաղութե, տալով զհարկս  
 ի Միջագետ Ասորւոց, և ի կողմանց  
 կեսարս՝ ի ձեռս հերովդի : այս ե-  
 կղև սկիզբն՝ հայոց մասնաւորիւ ընդ  
 հարկաւ հռովմայեցւոց : Չայսու ժա-  
 մանակաւ՝ եղև մեծ ցասումն ի վերայ  
 Ենանոսի Ասպետի իւրումն թաղա-  
 կապի . քանզի՝ նա արձակեաց զհիւր-  
 կանոս հրէից Քահանայապետ, զոր  
 զերեալ էր Բաղափրան Ռշտունոյ՝  
 յաւուրս Տիգրանայ : Իսկ՝ Ենանոս  
 պատճառի առ արքայի ասելով . եթէ  
 փրկանա խոստացաւ՝ 100 . քանքար,  
 ակն ունելով առնուլ ի նմանէ, յանձն  
 էառ տալ, վս որոյ՝ ժամադրութի ի  
 վերայ նր սահմանէ Արշամ . և նորա  
 առաքեալ զմի յեղբարց իւրոց ի հը  
 բկաստան, որում անուն էր՝ Սենե-  
 քիայ, առ Հիւրկանոս՝ զի տացէ ինչս  
 յաղաղս իւրոյ փրկութենն . և երթայ  
 առաքեալն Ենանոսէ, պատասէ ըս-  
 պանեալ զհիւրկանոս Հերովդի, զի մի՝  
 ինչ դառ նորա թաղաւորութենն լինի-  
 ցի : արդ՝ իբրև և հաս ժամադրութինն,  
 և շտայ դանձա փրկանացն հիւրկանոս  
 Ենանոս, քարկայաւ ի վր նր Արշամ,  
 և ընկեցեալ ի պատուոցն, հրամայէ զը  
 նել ի քանափ : Յայնմ ժամանակի՝ քառ  
 թի մատուցանէ զնմանէ արքայի Չու-

րայ՝ Նահապետ աղգին Գնունեաց՝ ա-  
 սելով: Գիտեալ Արքայ՝ զի ապստամ-  
 բել ՚ի բէն կամեցաւ Ենանոս, խոր-  
 հարգ ընդ իս բերելով, զի երգումն  
 ինդրեսցաւ ՚ի հերովդէ Թաղաւորէ  
 հրէաստանի, իբր ընդունել զմեզ՝ և  
 տալ ժառանգութիւն ՚ի բնիկ երկրի մե-  
 րում: Բանդի՝ նորահատուտ ծանակեցար  
 յաշխարհիս յայսմիկ. և իմ ո՛չ յանձն  
 առնելով՝ ասեմ ջնա. ընդէ՛ր պատ-  
 րիմք զբուցօք վաղնջուց, և պատաւել  
 առասպելեօք՝ Պաղեստինացիս զմեզ  
 վարկանելով: և նորա անյուսացեալ  
 յինէն, նմին իրի իսկ՝ առաքեաց զՔա-  
 հանայապետն հիւրկանոս, և առաւել  
 ևս՝ ՚ի հերովդէէ անյուսացաւ. սա-  
 կայն ո՛չ մեկնի ՚ի դրժողութեան քա-  
 րուցն, եթէ ո՛չ՝ Արքայդ աճապա-  
 րեսցես նմա: Այսմ քուժնց հաւա-  
 նեալ Արշամայ, և հաւատացեալ, հը-  
 րամայեաց տանջանս պէսպէս՝ ՚ի վերայ  
 Ենանոսի կուտել: Եւ վախճան գոր-  
 ծոյն՝ կամ, Թողով իսպառ զօրէնս հը-  
 րութիւնն, և երկիր պազանել արեգա-  
 կան, և պաշտել զկուռս արքայի, ի-  
 նոր վստահացեալ արքայի՝ տացէ նմա  
 զնոյն իշխանութիւն. կամ կախիւ զփայ-  
 տէ, և բնաջինջ լինիւ աղգի դորա:  
 և սպանեալ զմի յաղգականաց առաջի  
 նորա՝ որում անուն էր Սարիս. և առ-  
 ընթեր զորդիսն մատուցեալ ՚ի տեղի

ապանմանն, որոց անուններն՝ Սափա-  
տիա, և Ազարիա. յերկիւղէ մահուան  
որդւոցն՝ և ՚ի Թափաւնձելոյ կանանցն.  
կատարե զկամս Արքայի՝ հանդերձ ամ  
ազգատոհմաւ, և յառաջին պատիւն  
իւր հաստատի. սակայն՝ ո՛չ ամենեկին  
վստահանայ ՚ի նա արքայ, հաւատա-  
լով նմա զաշխարհն. զի ՚ի Միջագե-  
տաց միայն հեռացուցէ զնա:

Պրակ 24.

ԳՆԻՆԻՒՆԻ ՀԵՐԵՄԻՒՆԻ ԸՆԴ ԱՐԶՄԱՅ՝ Լ  
ՍԻՄՅԱՅ ԿՆՆՆՆԻՆԻՆԻՆԻ:

**Ե**տ այսր՝ եղև խոսիւթի  
՚ի մէջ Հերովդի՝ արքայի հը  
րեաստանի՝ ընդ մերոյ ար-  
քային Արշամայ. բանզի Հե  
րովդէս՝ յետ բազում դործոց արու-  
թեանց, ձեռնամուխ լինի ՚ի բարեգոր  
ծութիս. շինուածս բազումս առնե-  
լով բազում քաղաքաց, սկսեալ ՚ի Հը  
ռովմէ՝ մինչև ց՛րամասկոս. խնդրեաց  
Արշամայ բազմութի արանց՝ անա-  
րուեալից Գործաւորաց, որովք զԱ  
սորոց զԱնտիոքայ՝ զանանց, և զան-  
կոխ հրապարական ՚ի խոհերոց, և ՚ի արշ  
մոց լցցէ. զոր ո՛չ առեալ յանձն Ար  
շամայ, զորս ժողովէ ընդդիմանալ Հե  
րովդի. և ՚ի ձեռն հրեշտակաց՝ յէ

առ կայսր 'ի հռոմ, զի մի՛ զնա ընդ  
 իշխանութեամբ հերովդի արասցէ .  
 իսկ՝ կայսրն, ո՛չ միայն զԱրշամ շաղա  
 տէ իշխանութենէ հերովդի, այլ և՛  
 զամենայն Միջերկրեայս նմա հաւա  
 տայ : Յայնմ ժամանակի, հերովդէս՝  
 զաներ Աղեքսանդրի որդւոյ իւրոյ՝ որ  
 էր 'ի հօրէ Տիմոնէ՛ և՛ 'ի մօրէ՛ 'ի Թա  
 գաւորութենէ Մարաց, 'ի զաւակաց  
 Աշղահակայ վիշապասպեանց, ընդ իւ  
 րով ձեռամբ Թագաւոր Միջերկրեայ  
 ցըն կացուցանէր . առեալ իւր՝ 'ի սպա  
 սաւորութի գունդ՝ զԳաղատացւոց,  
 և զՊոնտացւոց : Տեսեալ զայն Ար  
 շամայ՝ երկրպագէ Հերովդի՛ երբև  
 Տեառն, անմի՛ իսկ տալով նմա, զոր  
 ինչրէր՝ Գործաւորս . որովք լցեալ  
 զհրապարակսն Անտիոքացւոց՝ քսան  
 վտաւանաւ երկայնութեամբ յատա  
 կեաց՝ սպիտակ կճեայ սալայատակօք .  
 զի ուխաւորք յատակացն դիւրագոյն  
 կարգեացնն առ ո՛չ ինչ վնաս առնել :  
 Բայց՝ Արշամայ վարեալ զԹագաւո  
 րութին անս քսան՝ վախճանեցաւ :



Պրակ 25.

Թագաւորութիւն Աբգարու , և հասնել  
 Բուրբուրէի Հայոց՝ ընդ հարկաւ Հառ  
 հայեցաց . և գաւերալ ընդ հերով  
 ՚ի շրացն . և գաւնանել շէշբոս  
 րքի նորա՝ շԵ՛՛՛՛՛՛ :

 Ազաւորե Աբգար՝ որդի Աբ  
 շամայ՝ Երսաներորդ ամի Աբ  
 շորայ՝ Թագաւորի Պար  
 սից : այս Աբգարոս կոչուի  
 Աւագայր , վս առաւել հեղութնն՝ և  
 իմաստութնն . որում յետոյ՝ և տիրն .  
 զայս՝ ո՛չ կարելով ուղղակի խօսիլ Ա  
 սորոց՝ և Յունաց , կոչեցին՝ Աբգա  
 րոս : Ի սորա երկրորդ ամի Թագաւո  
 րութնն՝ հարկին Հռոմայեցւոց բոյր  
 բովիմք՝ ամ կողմանց Հայոց : Քանզի՝  
 հրամայեալ յՕգոստոս կայսերէ , ոնչ  
 ասի ՚ի Ղուկայ Աւետարանին , աշխար  
 հադիր առնել՝ ընդ ամ տիեզերս . վս  
 որոյ՝ ՚ի Հայս առաքեալ Գործակալը  
 Հռովմայեցւոց , բերելով զպատկերն  
 Օգոստոսի կայսեր՝ կանգնեցին յամ  
 Մեհեանս : Զայսու ժամանակաւ՝ լի  
 նի ծնեալ՝ ՓՐԿԻՉՆ , մեր Յս Բս  
 Որդի Այ՝ ՚ի Հրեաստանի : Զամին ա  
 ուրբբ՝ լինի խռովութի ՚ի մէջ Աբգա  
 րու , և Հերովդի . զի հերովդի հրա


մայեալ, զիւր պատկերն՝ հուպ ՚ի կայ  
 սերական պատկերն կանգնել՝ ՚ի Մե  
 հեանս Հայոց . զոր ջառեալ յանձն  
 Արգարու, պատճառս ՚ի վերայ նորա  
 յուզէ հերովդէս, առաքէ զզօրս Թրա  
 կացոց, և Գերմանացոց՝ ասպատա  
 կաւ հինից՝ յերկիրն Պարսից, հրաման  
 տուեալ ընդ աշխարհն Արգարու ան  
 ցանել : Իսկ՝ Արգար ոչ հաւանեալ,  
 ընդ գիմանայ՝ ասելով . եթէ ընդ անա  
 պատ՝ է հրաման կայսեր՝ անցանել զօ  
 բացդ ՚ի Պարսս . ընդ որ յոյժ դառ  
 նացեալ Հերովդէս, անձամբ ինչ ոչ  
 կարէր վճարել՝ պէս պէս ցաւոց զնա  
 ըմբռնեալ, վնգի ՚ի Քն համարձակե  
 ցաւ, որդանց ՚ի նմա եւացեալ՝ որպէս  
 պատմէ Յովսէփոս . առաքէ զեղբօր  
 որդի իւր զՅովսէփ՝ որում տուեալ  
 զգուտար իւր, որ յառաջ էր կին Փե  
 բուրի՝ եղբօր իւրոյ : և նորա առեալ  
 զբաղմութի զօրացն՝ գայ հասանէ յաշ  
 խարհն Միջագետաց . պատասէ Ար  
 գարու ՚ի զօրանիտ գաւառին Բուզ  
 նան, և մարտուցել մեռանի ՚ի զօրացն  
 Արգարու, և զօրքն փախստական լի  
 նին : Նոյն հետոյն՝ վախճանի և Հե  
 բողէս . և Հրէից ազգապետ զԱրթե  
 լաւոս՝ նորին որդի Օգոստոս կացու  
 ցանէ :

## Պրակ 26.

Հինգուցից Երկուցից սաղարթի, և յիշատակ  
 յառն սաղարթի՝ աղբի հերոյ Լուս  
 արիւն :

Կնի ոչ բաղում առուրց՝ վախ  
 ճանի Օգոստոս, և փոխա  
 նակ նի թագաւորէ Հոօ  
 մայեցւոց՝ Տիրեր. և Գեր  
 մանիկոս՝ Կեսար եղեալ, ձաղեաց զա  
 ռաբեալան ի հոօմ, զիշխանան Արշո  
 թի, և Արգարու՝ յաղաղս պատերազ  
 մի նից, յորում սպանին զեղբօր որդին  
 հերովդի. ընդ որ խտտացեալ Արգա  
 րու՝ խորհի ապստամբութի, և պատ  
 բաստութի պատերազմի. յայնժամ  
 շինէ բաղար՝ զտեղի պահպանութեան  
 գնիգն Հայոց՝ ուր յառաջագոյն զգու  
 շանային Եփրատու ի կրաստսէ, որ կո  
 յի՝ Եղեակա. և փոխէ ի նա զարքու  
 նիսն իւր՝ որ ի Մծրին. և զկուռս  
 իւր՝ զՆարազ, և զԲէլ՝ և զԲաթնի  
 բաղ՝ և զԹարաթայ, և զՄատեանս  
 Մեհենից Արժարանին, և միանդա  
 մայն զԴիւանս թագաւորացն. Յետ  
 այսր՝ Տոեալ Արշաւիր, թագաւորէ  
 ի վի Պարսից Արտաշէս՝ որդի նորա.  
 Արդ՝ թէպէտ և ոչ է կարգ պատմու  
 թէս ի ժամանակի. և ոչ ըստ կարգի

է զոր ասելու ձեռնարկեցաք . այլ՝ քան  
 զի սերունդք Արշորի Թագաւորի՝ են  
 որ հայոց ազինս հաւատոց եղեն ա-  
 ռիթ , և Արտաշեսի՝ որդւոյ նր հա-  
 թաղատութի : Սիկոն արասցուք՝ յա-  
 ղադս սատուահանութեանն մարդ-  
 կանն՝ նախախարդեալ ՚ի գիրսս առ ըն-  
 թեր Արտաշեսի , զի իմացին՝ որք  
 ընթեանուն , եթէ համադդիք՝ Քա-  
 ջին են . իսկ զինի ապա նշանակեա-  
 ղուք զժամանակս՝ դալտեան հարց-  
 նոցա ՚ի հայս , որք են կարենեանք .  
 յորմէ Սրն Գրիգոր , և յորմէ՝ կամսա-  
 բականք . յորժամ՝ ՚ի շարի կարգին հա-  
 սանիցեմք Թագաւորին , որ զնոսայն  
 ընկալաւ : Բայց՝ Արգարու սէ ա-  
 շողեցաւ իորհուրդն ապստամբու-  
 թեան . զի իստվութեանկեալ ՚ի մէջ  
 աղգականացն իւրոց Թագաւորութեն  
 Պարսից , զօրս ժողովեալ՝ անդ շու-  
 էր՝ համոզել զնոսա , և դադարեցու-  
 ցանել :



## Պրակ 27.

Յուզոս երեւոյն Աբգարու յարեւել, և  
 Բագարեդոսոյնեւ Պրոսպի շարտ  
 շե : Եւ Բե' շե-րտ ի-բգե-ոյ շեշ  
 քոս ի-բ, յոսոյ հե Լոսոս-բեի՛ն,  
 և ոչգոնոյ ի-բ :

 Երթեալ Արգարու յարեւել՝  
 գտանե թագաւորեալ Պար  
 սից զԱրտաշէս՝ որդի Ար-  
 շորի, և ընդդիմացեալ նմա  
 զեղբարս իւր : քանզի նա խորհէր՝ ազ  
 դաւ ՚ի վերայ նոցա թագաւորել, և  
 նորա ոչ աւնուին յանձն. վն որոյ՝  
 պաշարեալ զնս Արտաշիսի, և երկիւզ  
 մահաւ եղել ՚ի վրնց, բողոմ պատառ-  
 մունք, և անվարանութիք զօրացն, և  
 այլոց ազգականաց լինեին. քանզի՝ Ար  
 շորի թգւորի էին որդիք ք, և զուսար  
 մի : առաջին, նոյն ինքն արքայ Արտա  
 շէս. երկրորդ՝ Կարէն. երրորդ՝ Սու-  
 բէն : և բոլրնոցին՝ որ անուանեալ կո  
 շիւր՝ Կոչմ, կին զօրավարին ամ արեաց  
 ՚ի հօրէն կարգեալ : իսկ՝ Արգարու հա  
 մոզեալ զնսսա խաղաղանալ, ՚ի մեջ ա-  
 մենեցուն հաստատէր զայն ինչ սահ-  
 մանելով, թագաւորել Արտաշիսի  
 հանգերն իւրովք ծննդովք, ոսկ խոր-  
 հեցաւ : և զեղբարս անուանել՝ Պալ-

հաւս՝ յանուն քաղաքին իւրեանց, և  
 աշխարհին մեծի՝ և քաղաքերոյ . ունի  
 զի լինիլ նոցա պատահանազոյն, և  
 Առաքին՝ քան զամ Կախարարութեւ  
 Պարսից, ունի արդարև Չարմա թագա-  
 ւորաց : Եւ զաշինս՝ և երզմունս՝ ի  
 միջի հաստատեալ, զի թէ՛ զէպ լիցի  
 սպառիլ Չարմից Արտաշեսի պատա-  
 նեաց, նորա մատիցնն՝ ի թագաւորու-  
 թի : Եւ արտաքոյ Յնդին նորա՝ թա-  
 գաւորնցելոյ ցեղս որոշեալ զնս, և  
 բիս կոչմամբ այսպիսեալ՝ Կարեննի պալ-  
 հաւ . Սուրենի պալհաւ, և զբոյրն  
 Ասպահապետի պալհաւ . յանուն Տա-  
 նուտերութե՛ն և զնորա անուն որո-  
 շեալ : Եւ ասեն՝ զՍուրբն Գրիգոր՝ ի  
 Սուրենեան պալհաւ, և զԿամսարա-  
 կանն, ի Կարենեան պալհաւն : Այլ  
 զայսք գոչոյն զորպիսութե՛ն, ի կար-  
 զին պատմեացուք . միայն պատմելով  
 այժմ առնթեր Արտաշեսի . զի ծա-  
 նիցես զազգս զայս մեծ, թէ հաւաս-  
 տի արևն Աղարշակայ են . ք՝ Չարմ  
 Առշակայ մեծի՝ եղբոր Աղարշակայ :  
 Եւ այսոցիկ՝ այսպէս կարգեցելոյ, և  
 զդիր ուխտին՝ ընդ իւր առեալ Ար-  
 զարու, զառնայ՝ ոչ առողջ մարմնով,  
 այլ շարաշար ցաւովք՝ արտացեալ :

## Պրակ 28.

Իսրայի Աբգարոս յարեւելից, և քաւ օգն-  
 նախնանքի Արեւոյ 'ի յարո' ընդդէմ  
 Հերձի Զորորդադի:



Բրև դարձաւ Աբգար յա-  
 րեւելից, լուաւ նա զհասնայ  
 եցոց' թէ 'ի կասկածանս  
 անկեալ են' վասն նորա, իբ-  
 րև' թէ զկնի զօրու զնաց յարեւելս .  
 վն որոյ' գրեաց առ դօրծակալս հաս-  
 ճայեցոց զպատճառս երթալոյն նր' ի  
 Պարսս . միանդամայն և զգիր ուխտին,  
 որ ընդ Արտաշեսի, և ընդ Էզրարս նր'  
 տայ տանել, և նորա ոչ հաւատային  
 նմա . վն զի' և թշնամիք շարախօսք էին  
 զնմանէ, սիղատոս, և հերովդէս Զոր-  
 րորդապետ . և Լիւսինա Փիլիպպոս .  
 իսկ Աբգարու եկեալ 'ի քաղաքն իւր  
 յԵզեսեսայ, միաբանեաց ընդ Արե-  
 տայ' աբբային Պատրիարքոց, սատարս  
 նմա տալով 'ի ձեռն խորենայ ումնն  
 Արծրունոյ՝ մարանել ընդ հերովդի:  
 քանզի' նախ զգուսոր Արեւոյ ար-  
 բայի' կին առեալ հերովդի, և ապա  
 անարդեալ 'ի բաց եթող. զի զհերով-  
 դիադայ մեկնեալ յառնէն իւրմէ կեն  
 դանւոյ 'ի բաց եհան . յաղաչս որոյ  
 ստեպ յանդիմանեալ 'ի Յովհաննէ Մը-  
 կրտէ, այնք աղաղաւ' էսպան զՅով

հաննէս Մկրտիչ : Եւ եղև պատե-  
րազմ ընդ նա, և ընդ Արեւտ արքայ  
վասն անարգանաց դատերն . յորում  
սաստկապէս հարեալ սաստկեցան  
զօրքն հերովդի՝ յօգնականութի քա-  
ջացն հայոց . ոպ յԱճային ինն գող-  
ցես տեսութի՝ վրէժս հատուցանել  
ընդ մահուանն Յովհաննու Մկրտչի :

## Պրակ. 29.

Առաւելու իշխանացն Աբգարու առ  
Մատնու, յորում տեղն շփրիւն  
գր քն . սուտ ելն սիւրբ  
հասարցն Աբգարու :



Նդ այն ժամանակս և կաց ՚ի  
գործ հաղարապետութեան  
կայսեր, ՚ի վերայ Փիւնիկե  
ցոց, և Պաղեստինացոց .  
Ասորոց, Միջագետաց, Մատինոս  
որդի Սորոզեայ : Ասոր առաքեաց  
Արգարսս երկուս ՚ի գլխաւորաց իւ-  
րոց . զՄարիճաք՝ Բղեաշին Ազը-  
նեաց, և զՀամշադրամ Նահապետ  
Ապահունեաց Տոհին, և զԱնն հա-  
ւատարիմ իւր, ՚ի քաղաքն Բեթքու-  
րին, զգացուցանել նմա զպատճառս  
երթալոյն իւրոյ յարևելա, ցուցանե-  
լով նմա զգիր ուխտին՝ որ ընդ Արտա-

չէս՝ և ընդ եզրարս իւր, և առնել ըզ  
նա Թիկունս օգնականութն. որոց է  
կել զտին զնա յԵրեթերոյսօրիս: Եւ  
նորա ընկալեալ զնոսա խաղաղութի՛ն  
և մեծարանօք. առնէ պատասխանի  
Արգարու. մի՛ կասկածել ՚ի կոյսերէ  
սակս այնր, միայն զհարկէն՝ լիօվ փու  
թասցի: Եւ նոցա զարձեալ անտի և  
լին յԵրուսաղէմ, տեսանել զֆրկինն  
մեր՝ Քս, վս լրոյ համբաւոց սքանչե  
լագործութեցն. որում և տկանա  
տես եղևալ՝ պատմեցին Արգարու: Է  
որ՝ զարմացեալ Արգարու, հաւատաց  
համարտապէս՝ իբր արդարեւ Որդի Այ.  
և առէ. այն զօրութիք Այ են, և ո՛չ  
մարդոյ. զի չիք որ ՚ի մարդկանէ՝ որ  
կարէ յարուցանել զմեռեալս՝ բայց մի  
այն Աճ: և քանզի ապականեալ էր մար  
մին նր ՚ի չար ցաւոց՝ որ պատահեցին  
նմա ՚ի պարտից աշխարհին՝ յառաջ և ս  
քան զեօթն ամ, որ ՚ի մարդկանէ ո՛չ  
եղև նմա հնարս բժշկութն: Եւ առ  
նել առ նմա Թուզթ աղաւանաց, գալ  
և բժշկել զնա ՚ի ցաւոցն, օրինակ զայս:

Թուշի Աբգուսու առ Փրկիչ Քս:

Արգար Արշամայ, Իշխան աշխարհի.  
Մա ՅԻՍՈՒՍ ՓՐԿԻՉ ՔԱՐԵ  
ՐԱՐ, որ երևեցար յԵրուսաղիմացոց  
աշխարհիզ, Ողջոյն: Լուե՛լ է իմ վս քո.  
և վս բժշկութեցդ՝ որ վնին ՚ի ձեռս

բո, առանց դեղոց՝ և արմատոց. զի  
 սպասի, տաս դու կուրաց տեսանել  
 և կաղաց դնալ, և զբարտու սրբես, և  
 զայսս պիղծս՝ և զդու հանես. և որ  
 միանգամ շարչարեալ են յերկար հի-  
 ւանդութիւնք՝ բժշկես, դու՝ և զմե-  
 ուաւս յարուցանես: Եւ իբրև լուսայ  
 վն բո զայս ամ, եղի իմախ իմում, մի  
 յերկուց. կամ թէ՛ դու իցես ԱՏ Ի-  
 ջնէ՛ յերկնից՝ և դարձես զայդ, կի՛ թէ՛  
 դու իցես Որդի ԱՅ, և զայդ առ-  
 նես: Արդ՝ վն այնորիկ գրեցի ես առ  
 բեզ, ազաւել զբեզ՝ զի աշխատ լինի-  
 ցիս, և եկեսցես առիս՝ և բժշկեսցես  
 զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: նաև  
 լուսայ՝ զի և հրէայք արտունջ են զբէն,  
 և կամին շարչարել զբեզ. բայց՝ բա-  
 զար մի փոքրիկ, և գեղեցիկ է իմ, և  
 բաւական է մեզ երկոցունցս: Արոց  
 տարեալ զթուղթն՝ պատահեցին նմա  
 յերուսաղէմ: զայս վկայէ՛ և Աւետա-  
 բանական Բանն. և թէ՛ էին ոմանք, և  
 ՚ի հեթանոսաց յելելոց առ նա: վասն  
 որոյ՝ ոչ համարձակին, որք լուանն՝ ա-  
 սել ԳՅ՝. այլ՝ ասեն ԳՓիւիպպոս, և  
 ԳԱնդրէաս. Անդրէաս՝ և Փիւիպպոս  
 ասեն ԳՅ՝: իսկ՝ ինքն Փրկիչն մեր՝  
 յայնմ ժամանակի, յորում կոչեացն ըզ-  
 նա՝ ոչ էառ յանձն, բայց՝ թղթոյ ար-  
 ժանի արար զնա, որ ունի օրինակ  
 դայս:

Պատուով Քրիստոս Ազգայն , զբնակաց  
 Թաւրոս Առաքելի հրահանու  
 փրկելն :

**Լ**րանի իցէ այնմ , որ հաւատայ յիս ,  
 իբր՝ ոչ իցէ նի տեսնալ զիս . զի  
 գրեալ է վն իմ այսպէս . զի՝ որք տեսա  
 նեն զիս՝ ոչ հաւատայցեն յիս , և որք  
 ոչն տեսանիցեն զիս՝ նորա հաւատա  
 ցեն՝ և կեցցեն : Իսկ վն այնր՝ զի գը  
 րեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ ,  
 արժան է ինձ՝ աստ կատարել զիմ ինչ .  
 վասն որոյ առաքեցայ յԵրուսաղէմ :  
 Իբրև կատարեցից զայս , ապա համ  
 բարձայց առ այն՝ որ առաքեացն զիս .  
 և յորժամ համբարձայց , առաքեցից  
 զմի յաշակերտաց աստի իմոց՝ զի ըզ  
 քո ցաւսդ բժշկեսցէ , և կեանքեզ ,  
 և որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ :  
 Չայս՝ Թուղթ երեր Ենան՝ Սուրհան  
 զակ Արզարու , ընդ որում՝ և զկեն  
 ղանազրու թի ֆրիչական սրտակերին ,  
 որ կայ յԵզեւացւոց քաղաքին :



## Պրակ 30.

Քորուսի Յերեմայ՝ Աստուծոյն թոշակի, և գործեն իշխոյն հնգից :

Այց՝ յետ համբառնալոյն  
 Բ Փրկչին մերոյ, թողմաս ա-  
 աքեալ մի յԵրկոտասա-  
 նիցն, առաքեաց զԹադէոս՝  
 որ էր մի յԵօթանասնից անտի, 'իբր  
 զարն յԵդեսեայ՝ բժշկել զԱբգար .  
 և տեսարանել ըստ բանին Տն : Որոյ  
 եկեալ՝ եմուտ 'ի տուն իշխանի Հրէից .  
 զոր ասեն՝ լինիլ յազգէն Բաղրատու  
 նեաց . որոյ խօսեալ յԱրշամայ, ոչ  
 ուրացաւ զՀրէութիւն՝ ընդ այլ ազգա-  
 կանս իւր, այլ՝ նովին օրինօք եկաց՝  
 մինչև հաւատալ 'ի Քն . և ել համբա-  
 նր՝ ընդ ամ քաղաքն : Լուեալ Աբգա-  
 րու ասէ . նա է, վասն որոյ գրեացն  
 Յն . և իսկոյն կոչեաց զնա : և եղև  
 'ի մտաներն թադէի, տեսիլ սքանչե-  
 լի երևեցաւ յերեսան թադէի : Յա-  
 բուցեալ անկաւ առ սոս նորա 'ի գա-  
 հոյիցն 'ի վր երեսաց իւրոց՝ և երկիր  
 եպագնմա . և զարմացան ամ իշխանքն՝  
 որք շուրջ կային, զի ոչ գիտացին ըս-  
 տեսին : Եւ ասէ ցնա Աբգար, ե-  
 թէ՛ դու իցես արդարև՝ Աշակերտ Օրհ  
 նելոյն Յն, և կարող իցես բժշկել ըս

ցաւս իմ: Պատասխանի եւս նմա թա  
 դէ . եթէ հաւատասցես 'ի Յս քս  
 Արդի Այ, տացին բեզ ինդրուածք  
 սրտի քոյ: Ասէ ցնա Աբգար, ես հա  
 ւատացի 'ի Նա' և 'ի Հայր նորա . վս  
 որոյ' կամեցայ առնուլ զգօրս, և դալ  
 կոտորել զՀրէայսն՝ որք խաչեցին զնա,  
 եթէ ոչ էր իմ արդեւեալ՝ վս թագա  
 ւորութենն Հռօմայեցոց: Եւ յայսմ  
 բանից սկիզբն արարեալ թագէի, ա  
 ւետարանեաց նմա՝ 'ի քաղաքին նորա .  
 և եղեալ ձեռն 'ի վերայ' բժշկեց զնա,  
 և զԱբգիու Պատագրոս՝ իշխան քա  
 ղաքին՝ պատուական յամ տանն ար  
 քայի . նաև՝ զամ, որք էին 'ի քաղաքին'  
 հիւանդք, և ախտաժեւք, բժշկեաց .  
 և հաւատացին ամենեքեան . և մկրտե  
 ցաւ ինքն Աբգար՝ և ամ քաղաքն . և  
 զդուրս տաճարաց կռօցն փակեցին .  
 և որք 'ի վր քաղնին' և սեանն կային  
 պատկերքն, ծածկեալ պատեցին եղե  
 դամբ: բայց ոչ զոր ամէր բռնու թք  
 'ի հաւատս . այլ՝ օր ըստ օրէ յաւելել  
 'ի հաւատսն բաղմանային: Իսկ առա  
 բելոյն թագէի զԽոհարար ոմն՝ Մե  
 տաքսադոր՝ մկրտեալ, և յանուն կռ  
 չեցեալ Ադդէ՝ ձեռնադրեալ 'ի վերայ  
 Եղեսեայ, փոխանակ իւր թողու՝ առ  
 արքայի . և իւր առեալ հրովարտակ  
 յԱբգարէ՝ զի ամքն լուիցենն աւետարա  
 նին Քրիստոսի . գայ առ Սանատրուկ՝

Քեռ որդի նորին, որ կարգեալ էր 'ի վն աշխարհիս' և զօրաց: Բայց Աբգար յօժարեցաւ գրել թուղթ՝ առ Տէրեր, որ ունի օրինակ զայս:

Թուղթ Աբգարս՝ առ Տէրեր:

Երգար Աբգար շայոց, Տեառն ի մօտ Տիրերի՝ կայսեր շնորհայեցողոյ՝ խնդալ: Գիտելով իմ և թե՛ ոչ ինչ ծածկի իբրումէ թագաւորութեանդ. այլ իբրև զմտերիմ քո՝ աւելի ևս իմացուցանել 'ի ձեռն գրոյ. զի շքեայք, որք բնակեալք են 'ի Գաւառս պաշտօնախնայոց, ժողովեալ խաչեցին զքն՝ առանց իբիք յանցանաց 'ի վերայ մեծամեծ երախտեացն, զորարար առ նոսա, նշանս' և սքանչելիս. մինչև՝ զմեռեալս միանգամայն յարուցանել: Եւ՝ գիտեալ, զի զօրութիքս այս՝ ոչ են սոսկ մարդոյ, այլ Այ. զի՛ և 'ի ժամանակին, յորում խաչեցին զնա, արեգակն խաւարեցաւ, և երկիր շարժեալ տատանեցաւ. և ինքն յետ երից աւուրց յարեալ 'ի մեռելոց. և երևեցաւ բազմաց. և այժմ, անուն նորա յամ տեղիս 'ի ձեռն աշակերտաց նորին՝ սքանչելիս մեծամեծս կատարեար՝ և առ իս եցոյց յայտնապէս: Եւ՝ արդ՝ այսուհետև Տերութիք քո գիտեհրամայել 'ի վերայ ժողովրդեանն

Տրեից,

հրէից, որք զայն դորձեցին. և գրել  
ընդ ամ տիեզերս. զի Երկիրպապադես-  
ցեն Քրիստոսի՝ իբրև ճշմարտի Աս-  
տուծոյ. Աղջլեր :

Պատմութիւնք Բլերոյն Աբգարոս ' Ի Տե-  
բերէ :

**Տ**իբեր Կայսր Հռոմայեցոց, Աբ-  
գարու թագաւորի խնդալ :  
Ձ թուղթ մտերմու թէ՛ քոյ ընթերցան  
առաջի իմ, վասն որոյ՝ չնորհակալու  
թի՛ի մենջ քեզ հասցէ : Թէպէտ՝ և՛ ի  
բազմաց յառաջագոյն լուեալ է մեր  
զայդ : Եցոյց ստուգապէս և պիղատոս՝  
վասն նշանաց նր՝, և եթէ՛ յետ յարու  
թէն՝ ի մեռելոց՝ հաւատարիմ եղև՝ թէ  
Աճ է : վասն որոյ՝ և ես կամեցայ առ-  
նել զայդ՝ զոր դուդ խորհեցար. այլ  
բանզի սուխորու թի է Հռոմայեցոց,  
Աճ միայն ի հրամանէ թագաւորին՝ ո՛չ  
նստուցանել՝ մինչև ո՛չ փորձեալ քնր  
նեսցի նա՛ ի Սինկլիստսէն. վասն որոյ՝  
և իմ յայտնեալ զբանս զայս Սինկլի-  
տոսին, արհամարեաց Սինկլիստոսն՝ զի  
ո՛չ քննեցաւ նա յառաջագոյն ի նմա-  
նէ. այլ՝ մեր տուաք հրաման ամ ու-  
մեք, որում և հաճոյ թուեցի Յի-  
սուս՝ ընկալցի զնա ընդ Աճս. և մահ  
այնոցիկ սպառնացեալ, որք շարախօս  
կայցեն զՔրիստոսնէից : Եւ՛ վս՝ ժողո  
վրդեանն հրէից՝ որք յանդգնեցան իա

լել զնա, զորմէ լսեմ եթէ՝ ոչ արժա  
նի խաչի երնա, այլ պատուի՝ և երկր  
պագութեան: յարժամ, առից պարա  
պունն՝ ի պատերազմէ Սպանիացոց՝  
ապստամբողաց յինէն, քննեալ հա  
տուցից նոցա զարժանն:

Դարձեւ Գրե Բարձր Աբգոս  
Տէր:

Աբգար արքայ Հայոց, Տեառն ի  
ձեռն Տիրերի՝ կայսեր հռոմայե  
ցոց՝ ինզալ: Զթուղթ գրեալ՝ ըստ  
արժանի քոյ տէրութեդ՝ տեսի. և լի  
հրաման մտածութեդ քո՝ ուրախացայ.  
և եթէ՝ ոչ ինձ ցասնուցուս, զործ  
Սինկլիտոսիդ է յոյժ այպանելի. քան  
զի՛ առ դոսա, ի քննութենէ մարդ  
կան՝ տուեալ լինի Ածութիւն: Եւ  
արդ՝ այսուհետև եթէ՝ ոչ լինիցի Ած  
հաճոյ մարդկան, Աստուած լինիլ նա  
ոչ կարէ, և իբրև՝ յայսմանէ մարդոյն՝  
արժանէ քաւել զԱճն: Բայց՝ բեզ  
Տեառն իմում հաճոյ թուեցի առա  
քել Եէմ, փոխանակ Պիղատոսի, զի  
լուծցի նա յիշխանութենէն՝ զոր կար  
գեցեր զնա. վասն զի՛ արար զկամս  
հրէիցն, և խաչեաց զՔրիստոսապար  
տուց՝ առանց քոյոյ հրամանի. ողջ  
լինիլ բեզ ըղձանամ: Զայս գրել Աբ  
գարու՝ զհաւասար թղթոյն, եզ ի

Իրիանի իւրում, ունի և զայլն: Գրեաց  
և առ Ներսէս, Մանուկ արքայ Ա.  
սորենտանի Ի Բարեւոն:

Թ. Ե. Զ. Ա Բ Գ Ե Զ Է Ը Թ Կ Ը Կ:

Արգար արքայ հայոց, որդւոյ իմոյ  
Ներսէսի ինդալ: Զգիր սղջունի  
բոյ տեսի, և զՊերոզ լուծի Ի կապա-  
նաց, և զՆաս նորա թողի. և եթէ  
կամ իցէ քեզ՝ կարգեսցես զնա Ի Ա.  
րակացութի Նինուէի, ունի և կամիս:  
Այլ վասն այնր զի՝ գրեցերն առ իս,  
եթէ տար անել զայրդ Բ. Ժ. Զ. Կ., որ  
զնշանսդ առնէ, և քարոզէ այլ Ա.  
տուած՝ որ Ի վեր է քան զՏար, և  
զՋար. զի տեսից՝ և լուսայց զմա: նա  
ոչ էր բ. Ժ. Զ. Կ. ըստ արուեստից մարդ-  
կան, այլ աշակերտ Որդւոյն Ա. Ե. Ա.  
րարին հրոյ՝ և ջրոյ, և վիճակ հա-  
սեալ՝ Ի կողմանս հայոց առաքեցաւ:  
Բայց՝ յընկերաց նորա գլխաւորաց՝ Սե-  
ման անուն, անդր՝ Ի կողմանս պար-  
սից առաքեցեալ է, ինդիր արարեալ  
լուսիցես նմա. յորժամ, և հայրն քո  
Արտաշէս. և նա բ. Ժ. Զ. Կ. սցէ զմձ հի-  
ւանդութիւնս, և ճանապարհ կենաց  
ցուցցէ: Եւ յաւել ևս՝ գրել առ Ա.  
րտաշէս արքայ պարսից՝ օրինակ զայս:

Թանգ Աբգարու — Աբգարու :

Աբգար արքայ հայոց, Արտաշեսի եղ  
բոր ինչ՝ արքայից արքայի, խըն  
գալ : Գիտեմ, զի արդ՝ լուեալ է վս  
Յն Քե, Որդւոյն Աստուծոյ, զոր խա  
չեցին հրեայք : որ յարեաւն ՚ի մեռե  
լոց, և առաքեաց զաշակերտան իւր  
ընդ իմ տիեզերս ուսուցանել ընդ  
հանուր : և մի յաշակերտաց նորա զը  
խաւորացն՝ Սիմոն անուն՝ է ՚ի կողմանս  
բոյ ՏերուԹեղ : Արդ՝ ինչիր արա  
րեալ՝ գտցես զնա, և նա բժշկեսցէ  
զամենայն աստա հիւանդուԹեց՝ որ ՚ի  
ձեզ, և ճանապարհ կենաց ցուցցէ :  
և հաւատացես բանի նորա դու՝ և  
Եղբարք բո, և իմ՝ որք հնազանդին  
բեզ կամաւ : զի ասորԹելի է ինձ, ըզ  
ձեզ ըստ մարմնոյ ազգականս իմ, լի  
նիլ ինձ մտերիմ հարազատս՝ և ըստ  
հոգւոյ : Եւ մինչ գեռ՝ պատասխանի  
այսց ԹղԹոց ոչ էր ընկալեալ, վախ  
ճանի Աբգարոս, Թագաւորեալ  
ամս 38 :



Պրակ 31.

Յ-ը-ի- Ս-ի-յ-ի-ի-ի- Ա-ս-ե-լ-յ-ն- Տ-ը-ո-յ

Եւ մահուանն Ազարու՝ բա  
**Յ** ժանի թաղաւորութիւն հայ  
 ոց յերկուս : քանզի՝ Անան,  
 որդի նորա՝ թագ. կապեաց  
 թաղաւորել յԵդեսեաց. և Սանատ-  
 առի՝ քեռ. որդի նորա՝ ՚ի հայս : Գը-  
 տանի՝ որ ինչ առ սոցա ժամանակաւ՝  
 յառաջագոյն գրեալ յԱյլոց : զդա-  
 յուստ Առաքելոյն թաղէի ՚ի հայս .  
 և հաւատալ Սանատրիոյ . և թողուլ  
 զհաւատան՝ յերկիւղէ Նախարարացն  
 հայոց . և կատարումն առաքելոյն , և  
 որք ընդ նմա՝ ՚ի Գաւառին Հաւարչան-  
 որ այժմ կոչի՝ Արտաղ : և պատառումն  
 քարին , և յիրեարս դալ՝ և ընդունիլ  
 զմարմին առաքելոյն , և առնուլ ան-  
 տի աշակերտացն՝ և թաղել ՚ի գաշ-  
 աին : և մարտիրոսանալ Գասերն ար-  
 բայի՝ Սանգխատոյ՝ հուսլ ՚ի ճանապարհն :  
 և աստ ուրեմն՝ յայտնել նշխարաց եր-  
 կոցունց՝ և փոխելն յառապարն :

Այս ամ , որպէս ասացաք , յԱյլոց  
 պատմեալ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ  
 ինչ կարեարագոյն համարեցաք , երկ-  
 րորդել յճով : Դոյնուկս՝ և որ ինչ վն  
 կատարմանն Աղդէի՝ աշակերտի Առա

քելոյն՝ յԵզեսեայ յորդուոյն Արգա-  
 բու գտանի, յԱյոց պատմեալ՝ յառա-  
 քագոյն քան զմեզ : Որ իբրև թագա-  
 ւորեաց՝ յետ հօրն մահուան, ոչ եղև  
 ժառանգորդ՝ հայրենի առաքինու-  
 թեն . այլ երաց զտաճար կոոյն, և  
 կալաւ զպաշտօն հեթանոսութեն . և  
 յղեաց Ադդէ, զի արասցէ նմա խոյր  
 բեհեղեայ, անկուածոյ ոսկւոյ՝ որպէս  
 յառաքագոյն առնէիր հօր ինոյ : Եւ  
 պատասխանի ընկալաւ, եթէ՛ ոչ ա-  
 բասցեն ձեռք իմ խոյր դադաթան ա-  
 նարժանի, որ՝ ոչ երկրպագէ Քսի .  
 կենդանւոյ Այ : և իսկոյն՝ հրամայ-  
 եաց զինակրացն՝ կտրել զոտան նի սը-  
 բով, որոյ երթեալ և տեսեալ զնա,  
 զի նստէր յաթոս վարդապետութեն՝  
 կած սուսերաւ, և իբրաց կտրեաց ըզ-  
 սրունս նորա . և նոյնժամայն՝ աւան-  
 դեաց զհոգին : Չայս ծայրաքաղ արա-  
 բեալ համառօտ յիշատակեցաք, ոյց  
 զառ ՚ի յԱյոց պատմեալ նախկին .  
 Բայց վիճակեցաւ հայոց և Բարդու-  
 ղուէոս Առաքեալ, որ և կատարեցաւ  
 առ մեզ Յարևբենոս բաղաբի : Իսկ  
 զԱրմօնէ՛ որ պարսիցն վիճակեցաւ .  
 ոչ զհաւաստին կարեմ պատմել, թէ՛  
 զինչ դորժեաց, և կամ, ոչ բկատարե-  
 ցաւ . քանզի պատմի Ռմանց՝ Արմօ-  
 նի ումնն առաքելոյ՝ կատարիլ ՚ի Աե-  
 բրաֆորա . եթէ՛ նա իցէ ճշմարտի .

և Եթէ՛ է՞ր աղաղաւ դալուստ նորա  
անդր, ո՛չ գիտեմ . այլ՛ միայն նշանա  
կեցի, զի գիտացես՝ Եթէ՛ ոչինչ  
մնաց, ՚ի մէջ բանից պատմել քեզ զամ,  
որ ինչ անկէ :

## Պրակ 32.

Վնն Սնաբնոյ Բագաորուիքն, և շո  
ղանձան ծննդոյն Աբգարու . և ՎՇ  
Հեւթեոյ Տիկնու :

 Սնատրուկ թողաւ որել՛, զորս  
ժողովէ ՚ի ձեռն Բաջայն  
Բադրատունեաց՝ և Արծ  
րունեաց՝ դայեկաց իւրոց .  
իջանել՛ տալ պատերազմ ընդ որդիան  
Աբգարու . զի՛ բոլորումս արեւոցէ  
հայոց թագաւորութեն : Եւ մինչդեռ  
նա յայտ էր, Ածային իմն ակնարկու  
թի՛ ինդրեցաւ վրէժ մահուանն Ադ  
գէի որդւոյն Աբգարու : Քանզի՛ սիւն  
կճեայ կանգնել տայր յԵդեսեայ ՚ի  
վերնատունս ապարանից իւրոց . և ինքն  
ի ներքոյ կալով՛ հրամայէր զորպէսն  
առնել . որ զերծեալ յունողացն, ան  
կաւ ՚ի վր նր՛ և խորտակեաց զատան,  
և սատակեաց : Եւ իսկոյն պատգամ  
բնակչաց քաղաքին եկն առ Սանատ  
րուկ՝ ինդրել պայման ուխտի, զի մի  
վրդովեացէ զնոսա ՚ի հաւատոց Քրիս

տանէից , և նորա տայցեն նմա դրա-  
 զարն 'ի ձեռս , և զգանձս թագաւո-  
 ըն , զոր արարեալ յետոյ ստեայ ,  
 նաև՝ զամ զուակ տանն Արգարու մա-  
 շեաց սրով՝ բաց յաղջկանց , զորս է-  
 ճան 'ի բաղարէն , բնակիլ 'ի կողմանս  
 հաշտենից : Սասնա՝ և զշուխ կա-  
 նանցն Արգարու՝ որում անուն էր Հե-  
 ղինէ , առաքեաց բնակիլ 'ի Խառան՝  
 յիւրոյն բաղարն , թողով նմա Տեկ-  
 նութին ամենայն միջազետաց , փոխա-  
 նակ բարեացն , զորս գտեալ էր ընդ  
 ձեռն նորա՝ յԱրգարէ : Այս Հեղինէ  
 զարդարեալ հաւատովք , ոնց և զայր  
 իւր , ոչ հանդուրժեաց բնակիլ 'ի մէջ  
 կառայաշտիցն , այլ չողաւ յէրուսա-  
 ղէմ , յաւարս կրուղեայ 'ի սովին զոր  
 մարգարէացաւ Ագարոս , և տանազ  
 զգանձս իւր զամենայն յԵգիպտոս՝ զը-  
 նեաց ցորեան բազում յոյժ , և բաշ-  
 խեաց յամենայն կարօտելոց : որում  
 մկայէ՝ և Յովսէփոս : որոյ շիրիմ նշա-  
 նաւոր կայ առաջի դրանն Եկմ' մին-  
 չև ցայսօր :



## Պրակ 33.

Յազոգս նորոգման Մծբին սաղսի . և  
 ոնանանիւն-ԲԷն Սնաբրիոյ , և հա  
 հանան նորին :

ՅԼ՝ որ ինչ գործք եղևն Սա  
 նատրկոյ , ոչ ինչ արժանի յի  
 շատակի համարեցաք , քաց  
 ի շինուածոյ Մծբին քաղա  
 բի . զի ի շարժմանէ խախտել՝ քաղեաց ,  
 և վերստին շինեաց պայծառագոյն . և  
 պարսպեաց պարսպով՝ կրկին պատուա  
 բով . և զինքն Անդրի ի մէջ հաստեաց ,  
 մին դրամ ի ձեռինն աւնելով , որ նշնկէ  
 այսպիսի ինչ . թէ՛ ի շինել քաղաքիս .  
 ամ գանձքս ծախեցան , և այս միայն  
 մնաց : Բայց թէ ընդէ՛ր Սանատրուկ  
 կոչեցաւ , ասելի է . քանզի յաւուրս  
 ձմերայնոյ՝ ճանապարհորդեալ քոյր  
 Արդարու՝ Օդէ ի հայս , պատահէ  
 բքոյ ի լերինն Կորդուաց , ցրուեաց  
 զամենեանն մրրիկ , մինչ՝ ոչ զիտե  
 լով ընդ որ վարեցաւ այր զընկեր : Իսկ  
 Գայեկի նորա՝ Սանտայ , քեռ Բիւ  
 բատեայ Բազրատունոյ՝ կնոջ Խորե  
 նայ Արծրունոյ՝ առեալ զմանուկն ,  
 քանզի՝ տղայ էր . եղ ի մէջ ստեանց  
 իւրոց՝ մնալով ի ներքոյ ձեան , զերիս  
 տիւս՝ և զերիս գիշերս : զորմէ առաս

պերարանեն թէ՛ կենդանի իմն նորա-  
 ճրաչ սպիտակ՝ յԱծոցն առաքեալ, պա-  
 ճէր զմանուկն : Բայց որչափ մեք ե-  
 զաք վերահասու՝ այսպիսի է . շուն ըս-  
 պիտակ՝ ընդ ինդրակնն լեալ պատա-  
 ճեաց մանկանն , և զտյեկին : Արդ կո-  
 մեցաւ Սանատրուկ , ՚ի Դայեկէն զա-  
 նուանակոչութի՛ն առեալ՝ որպէս թէ՛  
 Տուրք Սանատայ : Սա թաղաւորեալ  
 յերկատասաներորդ ամի Արտաշեսի  
 արքայի Պարսից . կեցեալ ամս՝ 30 . մե-  
 ռաւ յորս , նեափ ուրուք զխպեալ փո-  
 թառեացն . իբրև թէ փրկմս հասու-  
 ցեալ՝ ընդ շարչարանս Սրբոյ Դատերն  
 իւրոյ Սանդխտոյ : Ղերուքնայ որդի  
 Ափշազարայ Դպրի՛ գրեաց զամենայն  
 գործս՝ որ ինչ յաւուրս Արգարու՝ և  
 Սանատրկոյ , և եզ ՚ի Դիւանին յե-  
 զեսեայ :

## Պրակ 34

Թագաւորէլ Երթմնոյ , և Կարէլ Եր-  
 րթմն Սնապոյ , և շերթմնէլ Ար-  
 րաշիտի Կարէլ :



Եւ յաճուանն Սանատրկոյ  
 Արքայի , շիտթի իմն թա-  
 զաւորութիւնն : քանզի՛ Եր-  
 ուանդ ունի՛ որդի կնոջ Ար-  
 շակունոյ՝ թաղաւորէ յութերորդ ամի՛

մի՛ Դարևո՛հի Պարսից արքայի Վերջ-  
նոյ : և ունի զրոյց յազազս սորա՛ այս  
պէս . կինն ոսն՛ յաղգէ Արշակունեաց,  
անձամբ հարստի և խոշորագեղ՛ վա-  
րար , զոր ոչ որ դիմագրաւեաց առ-  
նութԷ : Ճնանի երկուս մանկունս՝  
յանկարդ խառնակութէ , ոսի՛ Փասի-  
փայ զՄոնոգորսս : Եւ՛ ՚ի զարգանայ  
մանկանցն՛ կոչեն անուանս , Երուանդ,  
և Երուանդ : և ՚ի շափ հասեալ Երուան-  
դայ , լինի սրտեայ , և անդամօք յաղթ-  
սա՛ և ՚ի բազում իրս վերակացու ա-  
ռաջնորդութԷ առաքեալ ՚ի Սանատր-  
կոյ , զսանի երևելի . մինչև՛ Առաջին  
Նախարարացն լինիլ ամենայն Հայոց  
զօրացն . և խոնարհութԷ , և առա-  
տաձեռնութԷ զիս՛ որ յանկուցեալ  
լինին յարեցոյց : Եւ՛ ՚ի մեռանիլ Սա-  
նատրկոյ , միաբանեալ թագաւորեցու-  
ցին զնա , առանց արանց աղգին Բաղ-  
րատունեաց լինիլ Թագադիր : Բայց ՚ի  
Թիւորելն իւրում Երուանդ , կասկած  
ունելով յորդուցն Սանատրկոյ , կատ-  
րէ զամենեւեան . թուի՛ վրէժս հա-  
տուցաւ սպանման որդուցն Աբդա-  
րու : Բայց մի ոսն սղայ՛ Արտաշէս  
անուն , զոր առեալ Սանատի նորա՛  
փախեաւ ՚ի կողմանս Հերայ , ՚ի վանս  
հովանայ՛ վասն մաղխազանի . լուր առ-  
նելով Դայեկի նորա Սմբատայ՛ որդ-  
ւոյ Բիւրատայ Բաղրատունոյ , ՚ի

Սպեր Գաւառի, 'ի շէնն Սմբատաւա  
նի : Արդ՝ իբրև լսէ Սմբատ՝ որդի  
Բիւրատայ՝ զբօթն Սանատրկոյ, և ըզ  
գոյժ կոտորման որդւոց նր. առեալ  
զերկուս դստերս իւր զՍմբատ անոյշ  
և զՍմբատ ուհի՝ նստուցանէ 'ի Բայ  
բերդի : արս քաջս թողլով 'ի վերայ  
ամրոցին . և ինքն հանդերձ կնաւ իւ  
րով՝ և սակաւ արամբք , գայ անցա  
նէ՝ 'ի ինդիր Մանկանն Արտաշեսի :  
Որում իրազգած եղեալ արքային Է  
րուանդայ՝ Հետայոյղս առաքէ . վասն  
որոյ բովանդակ ժամանակս՝ ընդ Է  
րեսս լերանց , և դաշտաց , այլակեր  
պեալ շրջելով հետի՝ հանդերձ Ման  
կամբն , սնուցանէ 'ի հովուաց վանս ,  
և յանդէորդս , մինչև պարսպ գտեալ  
ժամանեաց առ Դարեհ արքայ Պար  
սից : և քանզի՝ այր քաջ էր Սմբատ ,  
և ծանօթ յառաջագոյն , պատուի մե  
ծապէս ընդ Զօրազլուխն Պարսից :  
սապէս՝ և Մանուկն ընդ որդիս թա  
գաւորին , տեղի բնակութն առեալ  
զԲատ , և զՈղ՝ ոմն կոչեցեալ Գա  
ւառ :



## Պրակ 35.

Որ Ինչ ըն իշրաննայ՝ զանն ՚ի բառն  
 նանայ շահանն Սրտաշէս . և ՚ի  
 Բոյ Բոշայ շՄ՚իջգեթս :

Այց Երուանդայ զմտաւա  
 թեալ թէ, որպիսի չար նյ  
 թաղաւորութեն՝ սնանի ՚ի  
 Մարս . խեթ ՚ի սրաի լինե  
 լով՝ ոչ հեշտալի լինէրնմա բունն . հա  
 նապաղ յարթութե՝ յայն հոգալով .  
 նաև ՚իբուն՝ անուրջս ասագին նմին  
 իրի տեսանէր : զմ որոյ ՚ի ձեռն Հրեշ  
 տակաց, և պատարաղաց՝ ինդրէր հաշ  
 տեցուցանել զսրբայն Պարսից, տալ ՚ի  
 ձեռս զՂրտաշէս . ասելով, թէ՛ ա  
 բիւն իմ, և հարազատութի, ընդ էր  
 սնուցանես զՄարդ՝ զՂրտաշէս՝ հա  
 կառակ իմոյ թաղաւորութես, լան  
 լով բանից Սմբատայ ելուզակի, որ ա  
 սե, թէ՛ որդի է Ղրտաշէս Սանատ  
 կոյ . և զորդի Հովուաց՝ և Անդէոր  
 դաց՝ ջանայ առնել Արշակունի, և  
 արիւնքս, և հարազատութի . համ  
 բաւելով զնմանէ, թէ չէ իսկ որդի Սա  
 նատրկոյ, այլ ընդ իւրս գտեալ Սըմ  
 բատայ զՄարսն՝ տղայ բաջաղի : նոյն  
 պէս՝ և առ Սմբատ յղէր բազում ան  
 դամ, թէ ընդ էր այդբան սնտաի աշխա

տաթի կրեա՛ խաբեալ ՚ի Ստեփանոսէզ,  
 սնուցանես զորդի Մարիզ՝ հակառակ  
 ինձ : Եւ լսէ՛ ոչ սիրելի բանս պա-  
 տասխանեաց . յայնժամ՝ առաքէ Ե-  
 բրուանդ, և սատակէ զքաջսն ՚ի Բայ-  
 բերդի . գերելով զդատերան Սմբատայ՝  
 պահէ յամբողին յԱնի . ոչինչ վատթա-  
 բապէս : Բայց թիկունս առնելով Ե-  
 բրուանդայ զՀռոմայեցիս, ոչինչ վտան-  
 գի ՚ի Թագաւորութենն Աեսպագիանոս  
 սի, և Տրոսսի . Թողով ՚ի նոսա զՄի-  
 ջազեսոս . և յայնմհետէ բարձաւ իշ-  
 խանութիւն Հայոց ՚ի Միջագետաց .  
 և հարկս և սակերագոյնս ապր ՚ի Հայ-  
 ոց Եբրուանդ : Իսկ Հռոմայեցւոց  
 Գործակալաց՝ մեծապէս հանգերձեալ  
 զքաղաքն Եդեսեայ, ՚ի նմա հաստա-  
 տել զտունս դանձուց՝ հարկայն ժո-  
 ղովելոց ՚ի Հայոց՝ Միջագետաց՝ և  
 յԱսորեստանեաց : և Ժողովեն ՚ի նա  
 զամենայն Գիւանս . և կարգեն զքա-  
 ղոցս՝ Էերիս . մին՝ զբունն իւրեանց  
 զԱսորին, և միւսն ևս՝ զՅոյնն : և ըզ-  
 Գիւանն հարկաց՝ և զՄեհենականն .  
 որ կայր ՚ի Սինոպ Պանտաղոսոյ՝ անդր  
 փոխեն :



## Պրակ 36.

Յուզոս Հիւսիսոյ Երուանդոս  
սուրբ :



Սորա աւուրս՝ փոխին Ար-  
քունիքն Սրմաւիրն անուա  
նեալ բլրոյ . քանզի էր հե-  
ռացեալ գեան Երասխ , և  
'ի յերկարել ձմերայնոյն՝ 'ի դառնա-  
հոս փլմանէ Հիւսիսոյ՝ պաղեցեալ՝ ձու-  
լեալ վտակն , ոչ սաստեք արբուցումն  
Թագաւորականին դասնիւր տեղոյ :  
Ընդ որ՝ նեղեալ Երուանդոս , նաև  
ամրագունի ևս տեղոյ ելեալ խնդիր ,  
փոխէ զարքունիան յարեմուտս կոյս՝  
'ի բարակաուր մի բլուր , զորով պատա-  
ռեալ Երասխոյ՝ ընդգէմ Ասուրեան  
հոսի գեա . պարսպէ զբլուրն , և 'ի  
ներքսագոյն քան զբլուրն պարհասն ,  
ընդ բաղում տեղիս՝ կտրեալ զբա-  
րինան մինչև՝ 'ի յատակս բլրոյն հա-  
ւասար գետոյն , մինչև 'ի գիմել ջուրոյ  
գետոյն՝ 'ի փորումն յընկելեաց պատ-  
րաստութիւն . զմիջնաբերթն ամրա-  
ցուցանէր՝ բարձր պարսպօք . և զը-  
րունս պլնծիս կանգնէր 'ի միջոցի պար-  
բասին . և ելանելիս երկաթիս ներ-  
քուսս՝ 'ի վեր , մինչև 'ի գունուն .  
և 'ի նմա որոգայթս ինն ծածուկս՝ ընդ

մէջ աստիճանացն , ունի՛ զի ըմբռնեալ  
ցի . եւ թէ որ գաղտեւ լանելով՝ դաւել  
կամիցի զարքայն : Եւ կրասեն՝ երկդի  
մի : ունի , զի՛ մինն լիցի Ստաստարաց  
Արքունի , եւ նմ ել եւ մտից՝ ճանա-  
պարհ տունջենային : Իսկ՛ միւսն զիշե  
րային՝ եւ մարդադատաց :

## Պրակ. 37.

ԵՒ՛Է՛ - ԲԵ՛Է՛ շԷ՛Է՛-ց շԲ՛-Գ՛-Բ՛-ն ի-դ-ս-  
Կ-ց :

**Ա**յ երուանդայ շինեալ ըզ  
բաղաքն իւր , եւ փոխեալ  
անդր զնմ ինչ Արմաիրայ  
ուրայն ՚ի Կոստն . զորս ո՛չ  
օգուտ իւր համարեալ՝ յիւրն փոխել է  
բաղաքն . զի մի՛ ՚ի գալ եւ ՚ի զսեւեւանդր  
աշխարհի՛ ո՛չ զգուշութի՛ պահեսցի բա  
ղաքն . այլ՝ հեռագոյն ՚ի նմանէ , իբր  
բառասուն ասպարիզու , զշիւսիսեալ  
նման իւրոյ բաղաքին՝ շինեաց բաղաք  
փոքր՝ ՚ի վի՛ գետոյն Ախուրենայ , եւ  
անսուանեաց Բաղարան , այսինքն՝ թէ  
՚ի նմա զԲաղանացն յօրինեալ է զկազ  
մութիւն : եւ փոխեաց անդր զնմ ըզ  
կուսան՝ որ Արմաիր . եւ Մեհեանա  
շինեալ՝ զեղբայր իւր զերուաղ՝ Քրմա  
պետ կացուցանէր :

## Պրակ 38.

Վասն փնէլէլոյ զանփառն՝ որ հուլի Տննոց :



Ննկէ և Մայրի մեծ՝ ցՀիւսի  
սոյ կողմանէ գետոյն, և որ  
մովք ամրացուցանէ. արգել  
լով՝ իներքս այծեմունս ե-  
րագունս, և զեղանց՝ և զեղջերունաց  
ազգ՝ և ցիռս՝ և վարազս, որք ի բազ  
մութի աճեցեալ՝ լցին զանտառն. ո-  
րովք ուրախանայր թագաւորն յա-  
ւուրս որսոց. և անուննէ զանտառն  
Տննոց :

## Պրակ 39:

Վասն Չեռակերտի՝ որ հուլի Երուան-  
րակերտ :



Վոցր է ինձ ասել՝ և յաղազս  
գեղեցիկ Չեռակերտին ե-  
րունդակերտի, զոր յօրի-  
նեաց նոյն ինքն երունդ-  
գեղեցիկ՝ և չքնաղ յօրինունածովք :  
քանզի՝ զմիջոցն հովտին լնու մարդ-  
կութի՝ և պայծառ շինունածովք, լու-  
սաւոր, ուն՝ ական բիր : Իսկ՝ շուրջ ըզ  
մարդկութի՝ ճաղկոցաց, և Հոտա-  
րանոց կազմութի, ուն՝ որ շուրջ ըզ

բրան, զայլ բոլորակութիւն ական :  
 իսկ զբազմութիւն այդևատան, այն, իբր  
 զարևանաց խիտ, և գեղեցիկ ծիր-  
 որոյ Հիւսիսային կողմանն՝ դիր նկա-  
 բան, արդարև Գեղարկոս Կուսից յո-  
 նից դարևանդաց համեստ. իսկ ՚ի Հա-  
 բառոյ դաշտաց, ծնօտից գեղեցիկութիւն  
 պարզութիւն. իսկ գետն բերանարա-  
 գեալ դարբանդօր արանցն, զերկ  
 թերթիսն նշանակէ շրթունս : Եւ այս  
 պիտի գեղեցիկութիւն դիր՝ անբթթեւի  
 իմն զողջեա՝ ՚ի բարձրաւանդակ թա-  
 դարանիսան զհայեցուածս ունի. և  
 արդարև՝ բերրի, և թագարական  
 Կաստակերտ : Զայս ան զործեցեալս  
 նրուանդայ, պարզեւէ Մեծն Տրդատ  
 մարդկան ազգին կամարականաց, ուր  
 զՄանրեաց՝ և Արևանց կցորդաց՝ Ազ-  
 գին Արշակունեաց, զոր յերում տեղ  
 ւոցն՝ պատմեսցաւք : Բայց ասեն, զԵ-  
 բրուանդայ՝ ի հմայից՝ զժնեայ գոլ՝ ա-  
 կան հայեցուածով. զնորոյ՝ ի այգա-  
 նալ աշալրջոցն՝ սովորութիւն ունիլ ա-  
 սեն՝ Սպասարայն արբունի, զէմս  
 օրձարարեայս ունիլ ընդդէմ երուան  
 գետ, և ՚ի հայեցուածէ ասեն՝ զժնեու-  
 թիւն, սրայթիլ օրձարար զիմացն. բայց  
 այս՝ կամ եղիցի սուտ՝ և առասպել-  
 և կամ, այժ գիւտկանս առ իւր ունիլ  
 զօրութիւնս. զի՝ այսպէս, հայեցուածոյ  
 անուամբ, զնասեսցէ զորս կամի :

Պրակ 47.

Թե որդե՛ Սխառայ տնայանս իւր =  
 րորեւ Նտորութի Պորտից . Ինք  
 րե Բագորտիցոյսնել ՆԱր-  
 րալի :

Այց ՚ի դարդանալ մանկանն  
 Արտաշեսի, և ՚ի բազում բա-  
 ջուածիս արուածն ցուցանել  
 Գայեկին Սքասայ, հա-  
 ճեալ ընդ նա Նախարարք Արեաց,  
 մայթեցին զԹագաւորն՝ տալ նմա  
 պարգևս՝ զինչ և ինչրեսցէ . և յանձն  
 առեալ Թագաւորին, ասէ ցՆախա-  
 րարսն . ասէք թէ՛ զի՛նչ կամօցի Արն  
 Բաջ . և նորա ասեն, անմահ բարե-  
 բարութիւնք բո . այլ ո՛չինչ կամի Սըմ-  
 բատ, քան թէ՛ զարիւնքս, և զհարա  
 զատութի զԱրտաշէս՝ որդի Սանաոր-  
 կոյ՝ զմերժեալն ՚ի Թագաւորութի իւր  
 մէ՛ հաստատել յիւրում Թագաւորու-  
 թենն : Եւ յանձն առեալ Արքային Ար-  
 քայից . տայ ՚ի ձեռս Սքասայ մասն  
 ինչ՝ ՚ի զօրացն Ատրեւտանի, և զզօրս  
 Ատրպատականի, զի տարեալ զԱր-  
 տաշէս՝ հաստատեցեն ՚ի Գահն Հայ-  
 ըննի ,

## Պրակ 41.

Յուզուի լեւոյ Երուանդայ լիւն Ար-  
տուշիտի . և գումարել լարս ՚ի գոր-  
տապարտի գորեհուշի :

Ասանկ լուր առ Երուանդ  
Մուտեացւոց գաւառին, և  
Թէ՛ գումարեաց Արթայն  
Պարսից զօրս բազումս ՚ի  
ձեռս Սմբատայ . զի ՚ի վի՛րքոյ խաղա-  
ցեալ՝ անցե զՄանուկն Արտաշէս ՚ի  
Թաղաւորութիւն իւր : Չայս լուեալ  
Երուանդայ՝ և Թողանդէն զբազումս ՚ի  
Կախարարացն Կողմնապահս, և ինքն  
զնաց ՚ի բաղաբն իւր փութանակի .  
կուտել առ ինքն զզօրս Չայոց, զՎը-  
րաց, և զկողմանցն Կեսարու : այլ և ըզ  
Միջագետաց, աղերսօք՝ և արուլթ .  
և էին աւարք գարնայնոյ . վի՛րքոյ  
Երազ Ժողովեցան զօրքն ամենայն .  
նաև՝ Արգամ Տանուտէր Մուրա-  
ցեան, որ ՚ի Տննդոցն Աժգահակայ  
ամբոխ հետեակու . բանդի գարձու-  
ցեալ էր Երուանդայ ՚ի նա զՔահն  
Երկրորդական, զոր հանեալ էր ՚ի նո-  
ցանկ Տիգրանայ, և տուեալ իւրում  
բեռան՝ Միհրդատայ . ոչ ումեք  
տուեալ լինէր, մինչև՝ Երուանդայ գա-  
լուցանել զնա առ Արգամ . և ոչ մի-  
այն նմա, այլև՝ ամենայն Կախարա-

բացն տայր պատիւս , և զօրացն ամն  
նեցուն պարգևս :

Պրակ 42.

ԵՔԷ՝ ԵՂԷ՝ ԸՆԴ Ժ-ՊՆ ԱՐԹ-ՆԻ-Ի ԵԻ-Բ  
-ՆԻ-ԲԻ՝ Ե-Զ-ԵԵԵ-Ց-ԵՐԾՆ :

Սկ Սմբատ հանդերձ Ման  
Ի կամբն Արտաշեսի՝ ամա-  
պարէր հասանել 'ի սահ-  
մանս Ռետէացոց . ընդ ա-  
ռաջ նորա ելին զօրք կողմանցն այնր .  
նակ՝ Նախարարքն , զորս եթող ևր-  
ո՛ւանդ : Զայն իբրև լուսն այլ Նա-  
խարարք Զայոց , լուծանէին , լքա-  
նէին , և զաաչիլ յերո՛ւանդայ խոր-  
հէին . նակ՝ զայն ևս տեսանէին , թէ  
զօրք Զաօմայեցւոց ո՛չ հասին նմա 'ի  
թիկունս : Իսկ երո՛ւանդ առաւել յոյ՝  
զադոյն տայր զպարգևսն , և բաշխէր  
միոյ միոյ 'ի նոցանէ զգանձսն . և որ-  
չափ շատ տայր՝ շատ ևս ատելի լինէր .  
քանզի՝ գիտէին ամենեքեան , եթէ ո՛չ  
առ առատութե՛ն , այլ՝ առ երկիւղի վառ  
նէ : և ո՛չ այնչափ սիրելի զայնստիկ  
առնէր՝ որոց շատն տայր , քան թէ՛  
թշնամի : և քան զնոսա՝ զայնս՝ որոց  
ոչն տայր , էր տեսանել լաւադոյնս :

## Պրակ 43.

Երանդոյ գտերւոյն ընդ Աստուծոյ  
 և Բարսի, և սուսն սուսի  
 նորին և հու:

**Ա**յ Սմբատ, հանդերձ ման  
 կամքն Արտաշիսի, ելանե  
 առ ամեն ծովուն Կեղամայ,  
 զԹիկամբն Արագածն կո  
 շեցեալ լերինն՝ ածապարէին հասանել  
 ՚ի քանակն Երուանդայ. առ ոչինչ հա  
 մարեալ զբազմութի զօրացնն. միայն  
 ակն ածէին ՚ի Մուրացեանէն Արգա  
 մայ. զի այր Քաջ էր, և քաղմայ Տէր  
 Տիգաւորաց: Եւ Ճամբարն Երուան  
 դայ էր քացազոյն ՚ի քաղաքէ նորին,  
 աւելի քան զերեք հարիւր ասպարի  
 զառ՝ ՚ի Հիւսիսոյ ՚ի վր զեւոյն, Ախու  
 բեան: զայն իբրև լսէր Երուանդ,  
 հաներ ի առաջ զբազմութի զօրացն.  
 և ճակատեր ոչ հետի յիւրնէ քանա  
 կէն: Իսկ Արտաշիսի արձակեալ պառ  
 գամ առ Արգամ, Նահապետ Մու  
 րացեան, հանդերձ քաղում երգմամբք  
 Թողուլ ՚ի վր նորա, զորինչ գտեալ էր  
 յԵրուանդայ, և կրկին այլ յաւե  
 լուլ. միայն, զի զԵրուանդ Թողուլ  
 ՚ի քաց գնասցէ: և իբրև յանդիման ճա  
 կատուն Երուանդայ ելին նշանակի

Արտաշէսի, Արդամայ առեալ զբաղ  
 թուլթի հեռեակացն՝ ի կողմն ելանէր :  
 և Սմբատ հրամայէր՝ զփողոսն պղնձիս  
 դռնեցոցանել . և յառաջ առեալ ըզ  
 ճակատն իւր, իբրև զարծուի յերամ  
 կաքաւուց խոյանայր : Իսկ Նախա  
 բարբն Հայոց, որ յաջ՝ և որ յահեակ  
 թեան էին, ի նա խառնեալ միանային :  
 և զօրք Աբայ, հանդերձ Արքայիւն  
 իւրեանց Փարսմանաւ՝ թէպէտ և յան  
 դուզն յառաջեալ բախէին երազա  
 պէս, այլ դառնային ի միւս կողմն փա  
 խուցեալ : և անդ էր տեսանել կոտո  
 բաժ անհնարին Երուանդայ, և զզօ  
 բայ Միջագետաց : Եւ ի խառնակել  
 այսպիսի ճակատուց, պատահեն Ար  
 տաշէսի արք բաջբ Տօրացիք, որոց զօ  
 դիս իւրեանց եղեալ երուանդայ, պայ  
 մանեալ՝ սպանանել զԱրտաշէս : որոց  
 դիպեալ ի հեաի, ընդ մեջ անցանէ Գի  
 սակ՝ որդի Ստնտուին Արտաշէսի, և  
 սատակեալ զնոսա . ուր՝ և զկէս դի  
 մացն ի վայր բերեալ սուսերաւ, և  
 յաղթուլթի դործեցեալ մեռանի ի վր  
 այսպիսեաց . և մնացեալ զօրքն ի փա  
 խուսս դառնային : Իսկ երուանդ ի  
 բով ձիաւ բովանդակ ասպարէզս ան  
 ցեալ, ելանէ ի խորանս կանդնեալս՝ ի  
 բանակէն ի բմէ ի քաղաքն իւր, հե  
 ծեալ ի նոր ձիս, հանդոյց ի հանդու  
 ցէ փախել : Եւ Քաջին Սմբատայ՝

զհետ մտեալ, սաստկագոյն զնա վա-  
 րեալ 'ի գիշերի' մինչև ցդուռն քաղա-  
 քին . և Մարաց զօրացն անցեալ 'ի  
 կողմն Երուանդական զնդին , նաե-  
 մա 'ի վր գիականցն բանակէին : Իսկ  
 Արտաշիսի հասեալ 'ի յերուանդայ շր-  
 ջապատեալ առադասան , 'ի կաշեայ' և  
 'ի կառեայ պարսպին էջ , և 'ի խորանի  
 եօրա բնակեցաւ զայն գիշեր . և այ-  
 զուռն եղելոյ՝ Տիրաբար արարեալ՝ ըզ-  
 սպանեալսն թաղել հրամայեաց . և  
 անուանեաց զհովիտն՝ որ 'ի վերայ դիա-  
 կանցն բանակեցան , Մարաց Մարդ ,  
 և զտեղի Ճամբարուն , Երուանդայ  
 Վան . և կողի մինչև ցայսօր ժամանա-  
 կի . ք է՝ թէ յայտ տեղոջ՝ վանեաց  
 զերուանդ , և ինքն շուեաց 'ի քաղաքն  
 երուանդայ . յառաջ բան զՄիջօրեայ  
 հասեալ 'ի դաստակերն երուանդայ ,  
 և միաբան զուղմամբ՝ հրամայեաց աղս-  
 զակել զօրացն , Մար Ամատ . որ  
 թարգմանի՝ Մարս եկն . յիշելով ըզ-  
 թշնամանս՝ զոր յէջ Երուանդ առ  
 Թաղաւորն Պարսից՝ և առ Սմբատ ,  
 Մար զնա կողելով : Յայս 'ի սոյն ձայն  
 անուանեցաւ դաստակերան՝ Մարմիա-  
 իբր՝ 'ի կամաց Արտաշիսի , բառնալ  
 զանուն երուանդայ 'ի տեղոջէն . այս  
 պատճառ է անուանակոչու թէ դաս-  
 տակերսին : Բայց Սմբատայ՝ զիշե-  
 րայն զհետ Երուանդայ եկեալ՝ սա-

կաւ վաշականաւ, զդուռն քաղաքին պա-  
 Տէ . մինչև 'ի դաշն Արտաշեսի' և զօ-  
 րացն ամենեցուն . և 'ի մարտնչիլ Քա-  
 ջացն ամենեցուն . անձնատուրք եղեն  
 մարդիկք ամրոցին, բանան զդուռն քա-  
 ղաքին : Բայց մի ոմն 'ի զինուորացն'  
 մտեալ, էհար վաղերք զգլուխն Եր-  
 ուանդայ, և ցրեաց զուզեղն յատակս  
 տանն . և այսպիսի ջախմամբ՝ վախճա-  
 նեցաւ, կաշեալ զԹագաւորութիւնն՝  
 ամս քսան : Բայց Արտաշեսի յիշեալ  
 Թէ, խառնուած Արշակունւոյ է Ե-  
 րուանդ, հրամայէ՝ զգի նորա Թաղել  
 Մահարձանօք :

## Պրակ 44.

ԹԵՐԵՆԵՐԵԼ ԱՐԲԵԼԻՒՒՒՆ ԵՒ ԱՆԵԼ ԲՈՐԻ  
 ԻՐՈՅ ԵՐԵՒԹԱՆԵՐՈՅՆ :

Ետ մահուանն Երուանդայ՝  
 3 մտեալ Սմբատայ զարքու-  
 նականն՝ յուզել զգանձսն,  
 և գտեալ զԹագն Սանատր-  
 կոյ Արքայի՝ զնէ 'ի գլուխն Արտաշի-  
 սի, և Թագաւորեցուցանէ 'ի վերայ  
 ամ երկրիս Հայոց, 'ի քսան և իննե-  
 րորդի ամի՝ Դարեհի Պարսից Ար-  
 քայի : Իսկ Արտաշեսի առեալ զԹա-  
 գաւորութիւն, տայ պարգևս Չորացն  
 պարսից՝ և Մարաց, և արձակեաց

յաշխարհ ի բնանց . տայ՝ և ասն Քա-  
 ջի , և Պատուականի՝ Արքամայ՝ զնոս  
 տայեալ Գահն Երկրորդական , և Պը-  
 տակ Յակնթական . և Գինգ՝ յերկ-  
 սին ականջան , և կարմիր զգեստ՝ մոյ  
 սահնն . Գորդալ ունիլ սակի , և պատա-  
 սաքաղ . և սակեղնութ ընպել նուա-  
 դօք : Եւ՝ ո՛չինչ ընդհատ յայսց՝ պա-  
 տուոյ տայ Գայեկին ի բոյ Սմբատայ .  
 ըայց միայն՝ յերկուց գնդայն՝ և՛ ի կար-  
 միր կոչիկ . և ասելի քան զՀայրականն  
 ի բ՛ թագականայ ստղետութեանն , և  
 Վշխանութի արեւմտեայ զօրուն . Տա-  
 ւատայ ՚ի նա զնա՛ զօրս Հայոց , և ըզ-  
 բոյր աշխարհիս Գործակալս , և զհա-  
 մօրէն Տունն Արքայի : Եւ՝ զՆերսէս՝  
 որդի Արդւոյ Սանտաի ի բոյ՝ Գիտա-  
 կայ , ազգ զնա սերելով՝ անուն կոչի  
 զնահատակութեցն՝ զհօրն Գիմակի-  
 սեան . քանզի՝ ույ սասցաք , զկես գի-  
 մայն ՚ի վայր բերին Սուսերաւ՝ ՚ի վի-  
 Արտաշիսի . պատմի սորա ՚ի նոյն ա-  
 ւուրս սերեալ ազգ : Եւ՝ զորդիս Տա-  
 րայ պատանիս հինգ՝ հանդերձ տա-  
 սամբ , յանուն հօրն ի բնանց՝ Տրու-  
 նիս . ո՛չ վնարութե ինչ գործոց , ալ  
 միայն վն քսութե հօր նց , զոր սունեք  
 ՚ի տանէն Արքայի առ Սմբատ . քանզի  
 Ընտանի էր Երուանդայ , սակս նորին ,  
 և սպանաւ ՚ի նմանէ :

Պրակ 45.



Սղանուն Երանազայ, և շինել Կոստյ Բա-  
գրանի. և հարիել Արտաշատի 'ի  
Հարձմայեցոց :

Կնի այսորիկ՝ հրաման տայ  
**Ձ** Սմբատայ՝ երթալ յամառն  
 Բաղարան, որ հուպ 'ի քա  
 դարն երուանդայ՝ 'ի վերայ  
 Ախուրեան գետոյ, զի սպանցե զե-  
 րուադ՝ զեղբայր երուանդայ. զոր կա  
 ընալ Սմբատայ՝ երկան զուլանե՝ հրա  
 մայե կապել, և ընկենուլ 'ի պտոյս մի  
 գետոյն. և 'ի տեղի նորա, 'ի վի Բաղ  
 նայն՝ կացուցանե զընտանի Արտաշի  
 սի՝ աշակերտ Մողի ումնն երազահա  
 նի. որ յայս սակս՝ և Մոզապաշտի՝  
 անուն կարդային : Եւ ապա՝ աւա-  
 րեալ զգանձս երուազայ, և ծառայս  
 անձինս հինգ հարիւր. նաև՝ զընտիր  
 ընտիր գանձուց Մեհենայն բերե Ար  
 տաշտի : և Արտաշէս պարզ և և Սմբա  
 տայ զծառայս երուազայ. քայց ըզ  
 գանձն հրամայե տանել Դարնհի Ար  
 քայի Պարսից՝ հանդերձ յաւերմա՛ր  
 յիրոց գանձուցն, 'ի շնորհակալութե  
 պատի՛ իրրև Հօր, և Օդնականի :  
 Զայնմ ալ Սմբատայ զծառայսն երուա  
 զայ, զոր գերեաց 'ի Բաղարանե տա  
 ընալ՝

րեալ՝ բնակեցուցանէ՝ ի թիկանց Մասեաց, ի նոյն անուանակոչելով՝ զձեռակերան : Ինքն անցանէ՝ ի Պարսս Ընծայ առար Դարեհի, ոչինչ փոյթ առնելով զՀառովմայեցոց Տերութեն : Իսկ ի գնալն Սմբատայ ի Պարսս, հասանեն Հարկահանք կայսեր, և Սպայ ծանր՝ ի սահմանս Հայոց . զորս մաղթեալ Արտաշեսի, և կրկին տուեալ զհարկսն՝ հաշտեցուցանէ : Եւ զայս՝ մեզ ստուգապէս պատմէ Օլիպ Բուրմ Հանոյ, զբող Մեհենական պատմութեց . և զայլ բազում գործս՝ զորս սելկայ մեզ առաջի . որում և Պարսից Մասեանքն վկայեն, և Հայոց երգն Վիպասանաց :

Պրակ 46.

Յուսէ՝ Շինուծոյ Արտաշատ տառի :


 Բտաշեսի Վերջնոյ՝ գործք  

**Ա**բաղումք, յայտնի են քեզ ի  

 Վիպասանայն, որք պատմին՝ ի Գողթան . շինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս, և Տնունդք Չարսիցն, և իբր՝ տրտիանք Սաթինկան լէ Վիշապաղունսն, առասպել լարար . այսինքն՝ լէ Չարմս Աժդահակայ . որք ունին զմտ զառ ըստորտառն Մասեաց : մարտ ընդ նս,

և

և բայրայուն յիշխանութեն, և սպա  
 նունն նոյ, և հրկիղութի շինուածոյն,  
 և նախանձ որդւոցն Արտաշիսի . և  
 դրդութի ընդ միմեանս՝ ի ձեռն կա  
 նանցն : այս ամ, ուն ասացաք՝ յայտնի  
 են քեզ՝ յերգս Ախայասանացն . բայց  
 յիշատակեսցուք և մեք կարճառօտիք,  
 և զաշխարհութիւն ճշմարտեսցուք :  
 Երթել Արտաշիսի ի տեղին՝ ուրխա  
 նին Երասխ և Մեծածոր . և հաճեցել  
 Արտաշիսի ընդ բլուրն, շինէ քաղաք՝  
 յիւր անուն, անուանեալ՝ Արտաշատ :  
 ձեռնառու լինի՝ և Երասխ՝ նմա փայ  
 տիւք Մայրեաց . վս որոյ՝ անաշխատ  
 և երազ շինեալ, կանգնէ ի նմա Մե  
 ճեան . և փոխէ ի նա ի Բազարա  
 նէ զպատկերն Արտեմիդեայ, և զնմ  
 զԿուռս Հայրենիս . բայց զԱյոզոնի  
 պատկերն՝ արտաքոյ քաղաքին կանգ  
 նէ՝ հուսլ ի ճանապարհն . և յարու  
 ցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերու  
 թիս Հրէկոյն, որք փոխեալ էին անդր  
 յԱրմաւիրայ . և նստուցանէ զնոսա  
 յԱրտաշատ . նաև՝ զնմ վայելութի  
 քաղաքին Երուանդայ՝ զոր տարեալ  
 էր յԱրմաւիրայ, և զոր անդէն արա  
 բեալ նոր, փոխէ յԱրտաշատ . և առա  
 լել ևս՝ յինքենէ, իբրև զՔաղաք  
 Արքայանիստ :

## Պատմ 47.

Յորչիւնն Աւնայ 'ի հիւ' և պարտն ,  
 և ինձսնի Արտնիւն շնտն :

Այսու մամանակաւ՝ միաբա  
 նեալ Աւանք լեռնականօք  
 ամենայնիւ՝ յինքեանս ար-  
 կանելով և զկէս Արաց աշ-  
 խարհին , մեծաւ անբոխի՝ տարածեալ  
 ընդ աշխարհս մեր : Եւզովէ և Արտա  
 շէս զիւրոց զօրացն բազմուիս , և լինի  
 պատերազմ 'ի մեջ երկոցունց Ազգացն  
 Քաջաց Ազննաւորաց . սակաւ ինչ  
 տեղի տայ Ազգ Աւանաց , և գնացել  
 անցանէ ընդ գետն Մեծ կուր , և բա-  
 նակի առ եղերբ գետոյն՝ ըստ հիւսի-  
 սոյ : և հասեալ Արտաշէս բանակի  
 ցՀարաւոյ , և գետն ընդ մեջ նոցա :  
 Բայց բանդի՝ զՈրդի Աւանաց Ար-  
 բայի՝ ձերբակալ արարեալ Չօրացն  
 Հայոց , ամին առ Արտաշէս , զիս-  
 զազութի ինդրէր Արքայն Աւանաց .  
 տալ Արտաշիսի՝ զինչ և ինդրիցէ . և  
 երգմունս՝ և գաշինս ասէր՝ հաստա-  
 տել մշանջննաւորս . որպէս՝ զի մի՛ ևս  
 Մանկունք Աւանաց՝ ասպատակաւ հի-  
 նից՝ ելլեն յաշխարհս Հայոց : Եւ՝ 'ի  
 լառնուլ յանձն Արտաշիսի՝ առ 'ի տալ  
 զՊատանին , զայ Քոյր Պատանուոյն

յափն գետոյն, 'ի դարաւանդ մի մեծ,  
 'ի ձեռն Թարգմանաց' ձայնէ 'ի բա-  
 նակն Արտաշեսի: Քնն ասեմ, Արիդ  
 Քաջ Արտաշէս, որ յաղթեցեր Քաջ  
 Ազգաց Ալանաց, եկ հաւանեաց բա-  
 նից Աւագեղոյ Դսաերս Ալանաց  
 տալ զՊատանիդ, զի վն միոյ քինու-  
 ո՛ւն է օրէն Դիւցաղանց՝ զայլոց Դիւցա  
 զանց Չարսից բառնալ զկենդանու-  
 թի, կամ ծառայեցուցանելով՝ 'ի Սար  
 կաց պահել 'ի կարգի, և Թշնամութի  
 յաւիտենական՝ 'ի մէջ երկոցունց ազ-  
 դացս Քաջաց հաստատել: Եւ լու՛նէ  
 Արտաշեսի զայսպիսի իմաստութեան  
 բանս, գնաց յեզր գետոյն, և տե-  
 սեալ զԿոյսն Գեղեցիկ, և լու՛նալ 'ի  
 նմանէ բանս իմաստունս, ցանկացաւ  
 Կուսին: և կոչեցեալ զԴայեակն իւր՝  
 զՍմբատ, յայտնէ նմա զկամս սրտի  
 իւրոյ, առնուլ զՕրիորդն Ալանաց  
 իւր կնութէ, և դաշինս՝ և ուխտս հաս-  
 տատել ընդ աղդի Քաջացն, և արձա-  
 կել խաղաղութիւն. և հաճոյ Թու՛նցաւ  
 Սմբատայ: յդէ առ արքայն Ալանաց՝  
 տալ զՏիկին Օրիորդն Ալանաց՝ զՍա-  
 թինիկ՝ Արտաշեսի կնութէ: Եւ ասէ  
 արքայն Ալանաց. և ուստի՞ տացէ Քաջ  
 արին Արտաշէս՝ բիւրս 'ի բիւրուց, և հա-  
 զարս 'ի հաղարաց Է Քաջազգւոյ Կոյս  
 Օրիորդիս Ալանաց: Չայս տեղի ա-  
 ռասպելարանելով Վիպասանքն՝ յեր-

գերն իւրեանց՝ ասեն: Հեծաւ արի ար  
 բայն Արտաշէս՝ ի Սեան Գեղեցիկ .  
 և հանեալ զոսկի օղ շիկափոկ պարանն,  
 և անցեալ ուն զարծուի սրաթե՛ւ՝ ընդ  
 գեան, և ձգեալ զոսկի օղ շիկափոկ  
 ներդերն, ընկէց՝ ի մէջ Օրիորդին Ալա  
 նաց, և շատ ցաւեցոյց զմէջ Փափուկ  
 Օրիորդին, արագ հասուցանելով Կ  
 բանակն Արտաշիսի: Որ ճշմարտութի  
 ունի՝ այսպէս. քանզի՛ պատուեալ առ  
 Ալանս՝ մորթ կարմիր, լայքայ շատ,  
 և ոսկի բազում՝ ի վարձանս տուեալ  
 առնուլ զՏիկին Օրիորդն Սաթինիկ .  
 այս է՝ ոսկի օղ շիկափոկ պարանն .  
 Գոյնպէս՝ և զհարստանեացն առասպե  
 լեալ, երգեն այսպէս՝ ասելով: Տեղ  
 ոսկի՛ տեղայր ՚ի Փեսայութեն Արտա  
 շիսի: Քանզի սովորութի իսկ էր թա  
 գաւորացն մերոց՝ Փեսայութեամբ ՚ի  
 դուռն հաճարին հասանիլ՝ զասեկանս  
 ճսպաղել, իբրև զՀիւպատեանն Հոռ  
 մայեցւոց. ստպէս՝ և թագուհեացն  
 յառազատին մարգարիտ: այս է ճը  
 մարտութի բանից: Սա, առաջին ե  
 ղեալ Կանանցն Արտաշիսի, ծնանի  
 նմա զարտաւազդ, և զայլս բազումս,  
 զորս ոչ կարևոր համարեցաք՝ ան  
 սլամբ թուել: բայց՝ զկնիսն, յորժամ  
 ՚ի գործ ինչ հասանիցիմք:

## Պրակ 48.

Սղանուն Առօրեայ, և որդեաց նորո :

Չափ հասեալ Արտաւազ  
 դայ՝ որդւոյ Արտաշիսի, և  
 զև այր Քաջ՝ Անձնահաճ,  
 և Հարութ : և նախանձ բե  
 բելով ընդ ծառայսն արգամայ, հրա  
 պարեաց զհայր իւր՝ ցաննուլ արդա  
 մայ, ոսկ թէ՛ թաղաւորել ՚ի վերայ  
 ամենայնի խորհիցի . այսպէս՝ ընկե  
 ցեալ զնա ՚ի պատուոյն, ինքն առնու  
 զերկրորդութիւն : Յետ այսորիկ՝ եր  
 թալով Արտաշէս ՚ի ճաշ արգամայ,  
 կասկած իմն անկեալ, որպէս թէ՛ դա  
 ւել զարքայն խորհիցին . յարուցանեն  
 որդիք արքային արշառ, և անդէն իսկ  
 ՚ի հացին՝ քարշեն զալիսն արգամայ . և  
 խռովութիւն մեծաւ եկեալ յարտաշատ  
 արքային : Դարձեալ արձակեաց՝ զոր  
 դի իւր՝ զՄաժան մեծաւ զնդաւ, և  
 զբազումս յաղգէն Մուրացեան սպա  
 նանել հրամայեաց, և զապարանսն  
 արգամայ՝ այրել . և զՀարձս նորա,  
 որ կարի չքնաղ էր զեղով և քնացեալ  
 զնացիւք ոտից, զոր կոչէին՝ Ման  
 դու՝ ածել ՚ի Հարձութիւն Արտաշի  
 սի : զորս՝ դարձեալ նուաճեալ՝ յետ  
 երկուց ամաց՝ տալ ՚ի բաց զինչսն՝ հը

բամայէ, բայ 'ի հարձէն: Իսկ արտա  
ւազդայ՝ ո՛չ շատացաւ առնուլ 'ի նո-  
ցանէ զերկրորդականն պատիւ, յաւե  
լու և ս' հանել և զՆախճաւան, և ը  
Հիւսիսոյ երասխայ զամենայն դեօղս,  
յորում և ապարանս իւր՝ և բերդս  
'ի նոցանէ շինէ ժառանգութեան:  
Այսմ ո՛չ կարացեալ համբերել որդ-  
ւոցն արգամայ. ընդդիմանան նմա պա-  
տերազմաւ. բայց՝ յաղթէ արքայոր-  
դին, և սատակէ զամենայն ծնունդս  
արգամայ՝ հանդերձ Հարբն, և որք  
Ֆիանդամ, երևելիք էին յազգէ Մու-  
րացեան. և դրաւէ յինքն զէնս նյ՝,  
և զնմ իշխանութիս նոցա. և ո՛չ որ  
ապրեաց 'ի նոցանէն, բայց աննշանք  
ոմանք, և կրսերք փախուցեալք առ  
Արտաշէս՝ ապրեցան 'ի դրան արքու-  
նի: Այս Արգամ է, որ յառասպե-  
լին Արգաւանն անուանեն. և այս  
պատճառ պատերազմին ընդ Արտա-  
ւազդայ:



## Պրակ 49.

Երեւոյն զի ինչ ասել՝ և վասն  
 Գրակ 49. և զի նշն Աւան-  
 Գրակ 49. և ինչն Աւան-  
 Գրակ 49.:


 Սիրելի է ինչ ասել՝ և վասն  
 Քաջին Սմբատայ. քանզի  
 արդարեւ ըստ առասպելին,  
 ոչինչ կարի հետի ՚ի ճշմար  
 տութենէն. որ ունէր հասակ ան-  
 դամոց՝ համեմատ քաջութեն. և ա-  
 ռարինութե՛ն ողւոյն՝ որսորդ, և զե-  
 ղեցկութե՛ն ալեօր՝ վայելչացեալ, ա-  
 կաւ ինչ արեան նիշ ունելով յաշն,  
 ունի Գրակնաթիկոն ՚ի վերայ ոսկւոյ, և  
 ՚ի մէջ մարդարոց՝ ծաղկոյ ՚ի վր շոյա-  
 անձին՝ և մարմնոյ. զգոյշ յամի. և  
 տուչութի յաջողութեաց ունէր ՚ի մարտ  
 առաւել՝ քան զիմ որ. զի յետ այն-  
 չափ արութեանց, օգնական Եղբօրն  
 Սաթրնկան՝ յաշխարհն Աւանաց, հան  
 զերձ զօրու երթայր՝ հրամանաւ Ար-  
 տաշխի: Քանզի՛ մեռաւ հայր Սա-  
 թրնկանն, և այլ ոմն բռնացեալ թա-  
 դաւորեաց աշխարհին ալանաց, և հա-  
 լածէր զեղբայրն Սաթրնկան. զորս վա-  
 նեալ՝ հերքէ Սմբատ, և տիրացուցա-  
 նէ ՚ի վերայ աղգին՝ զեղբայրն Սաթրն-  
 կան. և զերկիր հակառակորդացն ա-  
 լերեալ զիմ միահամուռ անէ զերի

սաստիկ յարտաշատ : և հրամայեալ  
Արտաշեսի բնակեցուցանել զնոսա՝ ի  
Հարաւոյ յարեւելից կուսէ Մասեաց,  
որ կոչի՝ Հաւարշական Գաւառ . ի վե  
րայ պահելով զբնիկ անուան՝ Արտազ :  
և քանդի՝ և աշխարհն , ուստի գերե  
ցանն՝ արտող կոչի՝ մինչև ցայսօր Ժա  
մանակի :

## Պրակ 50.

Ասորոն կոսովց . և գրգռութիւն ընդ  
Մեծոյ Զորոցն Ասորոցի :

**Ե**ւս մեռանելոյ Աերջնոյ Ար  
շակայ՝ Թագաւորի Պար  
սից . Թափերեցուցանէ մերս  
Արտաշէս՝ զՀամանուն իւր  
զԱրտաշէս՝ որդի նորին՝ ի վն Պար  
սից աշխարհին : և ոչ կամեցան հնա  
զանդիլ նմա բնակիլ ը վերինն , որ ան  
ուանեալ կոչի՝ Պատիժահար Գա  
ւառ , որ է՝ զիմաց վեառն , և ծովե  
ղերք , և այսր ևս՝ քան զնս . նաև՝ կաս  
պից երկիրն յայն սակա ապստամբէին  
ի նմանէ , ի մերոյն Արքայէ : վն որոյ՝  
առաքէ ի վերայ նոցա Արտաշէս ըզ  
Սմբատ ամ զօրօք Հայոց . ինքն Ար  
քայ՝ յաղիարկ երթալով զաւարս  
եօթն . իսկ Սմբատայ երթեալ՝ հը  
նազանդէ զամենեւեան Բայց զերկիրն

Պարսից ակերեալ առաւել քան զԱր-  
 դաղեան՝ գերին ամէկ՝ ի Հայս . Է որս  
 և զՉարդման ոմն անուն՝ Թադաւոր  
 նոցին . վն որոյ՝ արժանի վատտակոցն՝  
 կարգեւէ նմա Արտաշէս զման ար-  
 չունի՝ որ ի շէնս Գողթման, և զուղ-  
 սու ակունան . և առ սյսորիւք՝ և ըզ-  
 րքն ամ ի վն նորա Թողու : Ընդ որ  
 նախանձեալ Արտաւազդ՝ կամեցաւ սը-  
 պանանել զԱմբաստ . և յայտնեալ խոր  
 հրդոյն՝ բաղում խոսովու թն լինէր՝ յա-  
 զագս այնր Հօրն : Իսկ՝ Ամբաստայ ան  
 ղի տունեալ՝ գնաց ղկողմամբք Ասորես-  
 տանի . իւրովք կամօք՝ Թողով զիջեա  
 նու թն զօրացն Հայոց, ընդ որ խան-  
 տայրն Արտաւազդ, հրամանաւ Ար-  
 տաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կո-  
 ջի՝ Կորդրիք . ի յԱլկի նատուցեալ ըզ-  
 բաղմու թն գերւոյն . քանզի՝ եր ի ծե-  
 բու թն կինն արարեալ յԱսորեստա-  
 նեայց՝ հուսլ ի յայն կողմանս, զոր յոյժ  
 սիրեաց . և վն այնորիկ՝ և ղնորին կող-  
 մամբք բնակեցաւ : Իսկ Արտաւազդ՝  
 յետ գնալոյն Ամբաստայ, առնու ի հօ-  
 բէն՝ որում ցանկայրն՝ զիջեանու թն  
 զօրացն ամենեցուն : Ին նախանձ բե-  
 բելով ընդ նմա եղբարցն, ի գրդու  
 թենէ կանանց իւրեանց . վասն որոյ՝  
 կարգէ Արտաշէս զԱրոյր Հազարա-  
 պետ, զայր իմաստուն, և բանաստեղծ .  
 հաւատարմով ի նա զամ գործ Տանն

Արքունի : և զՄաթան կարգէ Բրնա պետ 'ի Սնի' Դեցն Արամաղղայ . ըստ Ժանէ Արտաշէս և ղիշխանութի զօրուն' ընդ չորս : ղԱրևելեայ զօրն թողաւ 'ի վր' Արտաւաղղայ . և ղԱրևմտեայն' ապ Տիրանայ . ղՀարաւայինն 'ի Սրատ հաստայ . և ղՀիւսիսայինն 'ի Չարեհ : Եւ Չարեհ էր' այր սեղ . և յորս էրեոց Նահատակ իսկ առ'ի պատերազմունս վատ' և տաղտուկ . զորոյ ըզփորձ առեալ Քարձամայ ուրումն Արքայի' ապստամբեցուցանէ ղերկիրն . և կալել ղՉարեհ 'ի բանտի զննէ 'ի Կապաս , ընդ որում պատերազմեալ Արտաւաղղայ , և Տիրանայ' հանդերձ Սրատաւ , դարձուցանեն ղեղբայրն 'ի Մեծէ Կարակն :

Պրակ 51 .

Պատերազմ ընդ չորս Դուռի-նուրի  
'ի Բու-ե-ան :

 Ղմուկ շիտթի ինն լեալ Արևմուտս : ընդ որ վատահացեալ Արտաշէս , նշկահեալ ընդդիմանայր Հռոմայեցւոց Տերունն' ոչ տալով հարկս . իսկ Դամասիանոսի Կայսեր ցասուցեալ , զորս 'ի վր' Արտաշիսի առաքէ : որոյ հասեալ 'ի կողմանս Կեսարու ,

զՏի

զՏիրան, և զգորսն Արևմտայ՝ առա  
 թի արկեալ՝ ածեն տաղնապառ մինչև  
 ի բաջ ընդարձակ հովիտն Բաակնայ :  
 Արու՛մ ընդդէմ գիպեալ Արտաւազգ  
 Արևելեայ՝ և Հիսիսային զօրօքն, և  
 հանգերձ ամ սրղւոյքն Արքայի պա  
 տերազմեալ՝ սաստկապէս վտանգին :  
 Յորոց ՚ի վերջս պատերազմին հասնի  
 Սիրաս, Հարաւային զօրօքն՝ ընդ մեջ  
 անցեալ սպրեցուցանէր զսրղլին ար  
 քայի . յաղթուի՛ն, և զհաւ պատերազ  
 մին արարեալ : Չի թէ և՛ ծերագոյն  
 էր՝ Երիտասարդ արեաց, և մղեաց  
 զճակատն, և հեռամտա եղեալ՝ հա  
 լածեաց զգորս Հաճայեցւոց մինչև ՚ի  
 սահմանս Կեսարա : Չայս կամելով  
 երգել՝ յառասպելս . Դոմէտ զոմն ա  
 սեն, և կեալ որ է ինքն Կայսրն Դոմի  
 տիանոս : ո՛չ ինքն և կեալ այսր, այլ ըզ  
 հրամանն նր, և զգորս՝ այլաբանելով  
 յանունն նր կոչեն : Բայց՝ ըստ բախ  
 տի եղեալ Արտաշիսի, մեռանի ՚ի նմին  
 ժամանակի՝ Դոմիտիանոս ՚ի Հաճ, և  
 զկնի նր՝ Ներվաս՝ ո՛չ աւելի թաղաւո  
 բեալ, քան զի՛ ամ : ընդ որ առաւել  
 հպարտացեալ զօրացն Հայոց՝ և Պար  
 սից, ապառտակ և ս՚ի Յոյնս արաբին :  
 Ընդ սոսա հայելով Եզիպտացւոց՝ և  
 կողմանց Պաղեստինացւոց, արդելուի՛ն  
 և նորս զհարկին Հաճայեցւոց :

Պրակ 52.

Յուզոց Տրոյեանոսի՝ և նորն գործոց . և  
Տոհունն Մծանոյ՝ յէշխարհն :



Այսու ժամանակաւ՝ Թագա  
գաւորեալ լինի Հռոմայեց  
Տրայիանոս . և խաղաղեցու  
ցեալ զիսմ արեմատս , զի  
մեալ 'ի վերայ Եդիպտացոց՝ և Պա  
ղեստինացոց , և նսնանալ զնոսս  
ընդ իւրով ձեռամբ . խաղայ յարեւելս  
'ի վր Պարսից : Աստ անապարեալ Ար  
տաշէս մեծապէս՝ ընծայիւք ընդ առաջ  
նորա իջանէ , զմեղանս յանձնառեալ  
հանդերձ հարկօք անցելոց ամացն՝  
լինի առաջի նր . և Թողուծի 'ի նմա  
նէ գտեալ զառնայ յաշխարհս Հայոց :  
Եւ՝ Տրայիանոսի անցեալ 'ի Պարսս ,  
և զիսմ զկամս իւր կատարեալ զառ  
նայ ընդ Ասորիս . ընդ առաջ նր ի  
ջեալ Մաթան , մատնուծի զեղբարցն  
առնէր : Գիտեալ առէ՝ Արքայ , և Թէ  
զԱրտաւազդ , և զՏիրան վարսանդի  
ոչ արասցեն , և զգորս Հայոց՝ Չարե  
հի ոչ հաւատասցեն , հարկքն անաշ  
խատ առ քեզ ոչ եկեսցեն : Չայս ա  
րար Մաթան , քէն պահեալ զն Սըմ  
բատայ , զի՝ և զնա նորա սնուցեալ  
էր : ընդ նմին՝ և զՏիրան խորհեցաւ

հանել, զի ինքն լիցի Քրիստոսեան միան  
 զանայն՝ և Սպարապետ արևմտից :  
 Չորով՝ ոչինչ փոյթ արարեալ Տրայ-  
 իանու, արձակե սուայն, Բայց՝ Ար-  
 տաւաղոյ, և Տերանայ՝ ինացեալ ըզ-  
 խորհուրդն նո՛ր, զարան դորձեալ յորս  
 սպանին զՄաժան, զոր տարեալ Թա-  
 ղեցին ՚ի Բազմաց Աւանի, իբրև ըզ-  
 Քրիստոս : Իսկ Արտաշէս յայնմհե-  
 տէ՝ անսայթաք հարկեաց Տրայիանու,  
 և յետ նորա՝ Հաղրիանոսի Կայսեր՝  
 զնմ աւուրս իւր :

Պրակ 55 :

Թե՛ որդեք քաջամարդորոյց Արտ-  
 շէսիս, և սոյնան հասարակաց :

 Ետ ամ ուղղութնց Արտա-  
 շէսի՝ հրամայե զսահմանս  
 գեօղից, և աղարակաց՝ ո-  
 բոշէլ : Քննզի բազմամարդա-  
 ցոյց զաշխարհս Հայոց . եկամուտս  
 բազումս ամելով աղգս, և բնակեցու-  
 ցանելով ՚ի յերկնս, և ՚ի հովիտս, և ՚ի  
 դաշտս . և նշան սահմանացն հաստա-  
 տեաց՝ այսպէս : հրաման տալով՝ քա-  
 ղինս կոփել՝ չորեքկուսիս, և պնակա-  
 ձև փակել զնոն՝ ծածկելով յերկրի . և  
 չորեքկուսի ՚ի վերայ յարուցանել ամ  
 բարտակս՝ սակաւ ինչ բարձրագոյն :

յերկրէ : Ընդ որ նախանձեալ Ար-  
տաշի՛ որդւոյ Սասանայ . զնոյն նը-  
ման՝ հրամայէ առնել և՛ ի Պարսից աշ-  
խարհին , և յիւր անուն անուանել , զի  
մի և ա՛ յիշեացի անունն Արտաշիսի :  
Բայց առի , ի ժամանակս Արտաշի-  
սի՛ ոչ գտանել երկիր անգործ յաշ-  
խարհիս Հայոց , ոչ լեռնային՝ և ոչ  
գաշտային :

## Պրակ 54.

Յուզգո Նոխարուսեան Սմարտեաց :


 Առւր սորա , առն՝ և կեալ  
զաղգ Ամատունեաց ՚ի կող-  
մանց արևելից Արեաց աշ-  
խարհին : Բայց են սոքա բը-  
տութեամբ Հրէայ , ՚ի Մանուկայ ու-  
նիսէ , որոյ որդի էր Մեծահասակ  
և ուժեղ՝ Սամսոն անուն կոչեցեալ .  
որպէս սովորութի է Հրէից՝ ըսա յու-  
ոյ զՆախնեացն կոչել զանուանս :  
Բայց՛ է ճշմարիտ , ուն՝ և այժմ իսկ է  
տեսանել ՚ի զարմս Ամատունեաց . քան  
չի՛ Անձնեայք , և Բարեձեք ը պատ-  
շաճի՛ վայելին ճմ իբօք , և ուժեղք :  
Տարեալս են նոքա յԱրշակայ Առաջին՝  
ի Պարթևաց թագաւորեցելոյն . և  
յառաջագիտութի անդէն ՚ի յԱրեաց  
աշխարհին՝ ՚ի պատիւ հասեալք ՚ի կող-

մանս Ամատանի : Բայց եթէ՛ յինչ պատճառանայ այսր գալուստ նոցա , ես ո՛չ գիտեմ : այլ՝ պատուին յԱրտա շիակ գեղիւք , և դաստակերտօք . և անուանին Ամատունիք , որպէս թէ՛ եկք : և կէսք ՚ի Պարսից՝ Մանուկան՝ զնն կոչելով , յանուն Նախնոցն :

Պրակ 55.

Յ-Լ-Գ՝ Ա-ս-ե-լնայ Տ-հ/ն , Բէ՛ ու-  
 րի -ե-րե-ւ = ւ-լ-գ :

 Սորա աւուրս՝ և Աաւե զեանքդ յազգէ Ալանայ մերձաւորց Սաթինկան՝ ըզ հետ նորա եկեալք , կարգեցան յԱզգ , և ՚ի Նախարարութիւն աշխարհիս Հայոց , ուն Հարազատք Թագուհւոյն Մեծի . և ՚ի ժամանակս խոսրովու՝ Հօր Տրդատայ՝ ինամա ցեալ ընդ ու մե մն Բաջի Բասւլացն եկեալ հատուածի ,



## Պրակ 56.

Որ ինչ արժեքեաց գիտութի յասորս  
Արտաշէտի:

Անդի՛ բազում ինչ յաւուրս  
Քրտաշխի գործեցաւ: զի  
այնորիկ՛ բազում ճառս կո  
տորեցաք. զի մի՛ երկայնու  
թիւն բանից՛ տաղտկու թի ընթերցո  
ղացն լիցի. որոյ վերջին ճառս՛ այսպէ  
սի ինչ յիշատակել, և զայսն՛ որ ինչ՛ է  
ժամանակս Արտաշխի: Օհ թէպէտ՛  
և այլն ամ, զոր յիշատակեցաք յառա  
ջագոյն ճառիցն. կարգք, և սովորու  
թիք զեղեցիկք հաստատեցան ՚ի Աս  
ղարշայ, և յայլոց Առաջնոց թագաւ  
ւորացն. այլ՛ ՚ի մեծամեծ արուեստից,  
և գիտութեց ունայնացեալք էին. որ  
պէս՛ հինից, և ասպատակաց պարա  
պեալ. և այսպիսի գիտութեց՛ կամ  
անփոյթ արարեալ՛ և կամ ո՛չ հասելք  
զարաթուց ասեմ, և զամսոց, և ըզ  
տարեաց բոլորմանց. քանզի՛ ո՛չ այս  
պիսի ճանաչիւր առ նոսա. այլոց ազ  
գաց վարելով: և ո՛չ ՚ի ծովակս աշ  
խարհիս նարազնացու թիւնք, և ո՛չ  
ի վր զետոց ճանապարհորդութիք  
փ, կամուրջք, և ո՛չ գործիք ձկանց  
որսոց. այլ՛ և ո՛չ յամ տեղիս երկրա

գործութիւնք, բայց՝ դոյնն ուրեք . այլ  
 լն օրինակի Հիւսիսականացն կողմանց՝  
 շաղկակերութիւն, և այլ այսպիսեօք կե-  
 ցեալ: Եւ այս ամ յօրինի յառաջս  
 Արտաշեսի:

## Պրակ 57.

Յուզու հահունն Արտաշեսի:

Եղեցիկ իմն պատմէ Եւա-  
 րիստոն Փելլացի, յաղագս  
 մահունն Արտաշեսի: Քան  
 զի՛ ի ժամանակին, ունի՛ ապս-  
 տամբեցին Հրեայք յԱգրիանոսէ՝ Հը-  
 ոսմայեցոց Թագաւորէ . և ետուն  
 պատերազմ ընդ Բոթոսի Հեպարթո-  
 սի, առաջնորդութիւն առն ուրումն ա-  
 լազակի, որում անուն էր՝ Բարթո-  
 բայ . ի՛նչ՝ Աստեղորդի . որ էր գործովք  
 չարագործ՝ և սպանող . բայց՝ անուամբ  
 իրով մեծարանեալ պարծէր, ունի՛ թէ՛  
 յերկնաց ծագեաց նոցա Փրկիչ, իր  
 նեղելոց, և գերեաց: Եւ այնքան սաստ-  
 կացոյց զմարան, մինչև ՚ի նա հայե-  
 լով՝ իբաց կացին հարկելոյ Հոսմայ-  
 եցոց՝ Ասորիք, և Միջագետք, և  
 Պարսք ամ. քանզի՛ էր և լուեալ ե-  
 թէ, եմուտ յԱգրիանոս յախտ ուր-  
 կութիւն: Բայց մերն Արտաշես՝ ո՛չ երկ-  
 մտեաց ՚ի նմանէ: Եւ եղև ընդ նոյն

Ժամն նակս՝ հասանել Ազրիանոսի 'ի  
 Պալեստինէ՝ և սատակել զապստամբ  
 սըն՝ պաշարմամբ 'ի քաղաքի մի փոքու՝  
 հուսյ յԵփմ . վն սրոյ՝ և ամ ազգին  
 Հրէից հրամայեաց՝ մերժել 'ի Հայրե  
 տաշրի՝ ոչ հնազանդի Հապհոյ՝ որդ-  
 ւոյ նր: և 'ի մարտնելն 'ի բազում պա-  
 տերազմունս՝ յաղծի: և 'ի Մտերմաց  
 Հապհոյ դեղակուր եղեալ մեռանի:  
 Առ նովին Ժամանակաւ՝ այլ ոմն կա  
 ցեալ Վրդընդ Խաքան, որ Թշնամու-  
 թեամբ ընդ Կամսարայ՝ որդւոյ նորա՝  
 վարէր: իսկ Կամսարոյ դժուարին  
 վարկուցեալ՝ 'ի մէջ երկուց հօրաց  
 բնակիլ Թշնամութեամբ: մանաւանդ՝  
 զի և եղբարքն ոչ միարանեցան ընդ  
 նմա, խաղացեալ ճմ ընտանեօք իւ-  
 բովք՝ և աղիւի՛, գայ առ Տրդատ մեր  
 Թագաւոր: եղբօր նր առ Հապուհ  
 երթալով: Այս Կամսար՝ ահագին քա  
 ջուծի նահատակեալ առ Հարբն 'ի  
 պատերազմունս, 'ի շահատակելն իւ-

բում, հարկանի յուսմանե սակերբ դը  
 լուին. և վերացուցեալ մասն ինչ յոս  
 կերէ սկաւառակին, բժշկեալ ՚ի դե  
 ղոց, պակաս դտաւ բուրբութի զա  
 զաթանն, անուանեցաւ Կամսար՝ այ  
 նորիկ աղաղաւ: Բայց՝ Տրդատայ իւր  
 հաստատեալ ղեօթն պարսպեանն Եկ  
 բասան՝ Երկրորդ, և Վերակացուս  
 յինքննէ թողեալ՝ դառնայ ՚ի Հայս,  
 ընդ իւր ածելով զԿամսար անիւքն:  
 Բանդի՝ Հայուհ աղալեաց զՅաղ  
 թօղն Կոստանդիանոս՝ ինզրել զհար  
 տութի, և զխաղաղութի մշանջենա  
 ւոր, զոր արար իսկ՝ Սուրբն Կոստան  
 դիանոս: Յետ այսորիկ՝ առաքեաց  
 զԷկեմնէ՝ զՄայր իւր յԵՃՃ, ՚ի խըն  
 դիր Պատմական խաչին. զոր և Ե  
 ղիս իսկ զՓրկական Փայտն, հան  
 բերձ հինգ Բեկոօր, ՚ի ձեռն Յու  
 ղայի Հրէի, որ ապա եկաց Եպիսկո  
 պոս յԵՃՃ:



## Պրակ 85.

Պարտուք Լիլիանսի, և Ժիտուք Ար-  
տանէոյն ՚ի Հորի. և շնեւ Կո-  
տանէոսոց ՚ի :

**Բ**առնալ Այ զբանաորս  
ամ յերեսաց Կաստանդիա-  
նոսի, Տեճարեաց նա զԼի-  
լիանէ Տեճութի յոյժ. և  
ետ նմա ՚ի կնութե՛զ զոյր իւր՝ ո՛չ հա-  
մամայր. ծիրանեաւ և պտակաւ Կե-  
սարական զարդարեաց զնա. և յերկ-  
րորդականս հասուցեալ պատիւս. Ար-  
բայ ամենայն Արևելից կացոյց : Բայց  
զոր Աստուածայինն Բան առ Հեր-  
բայեցինն, անհնարին համարեալ լի-  
նիլ չարութենն փոփոխումն, նոյնպէս՝  
և աստանօր պատասէ : Ընծու՝ անկա-  
րելի է՝ զկայտուցն փոխել, և Եթով-  
պացւոյ՝ զթխութենն. նոյնպէս՝ և մար-  
դոյ ամպարչօի զբարսն : Բանդի՝ սա-  
նախ առ Հաւատսն գտանի՝ դժբող.  
և երկրորդ՝ առ բարեգործն իւր ա-  
պստամբ : յարոյց հալածանս Եկե-  
ղեցւոյ, և նենգութի՛ն դաղանի ընդ-  
դէմ Կաստանդիանոսի. նա և՛ չարիս  
բաղմազանս հասոյց ամենեցուն, որ  
ընդ իւրով իշխանութի էին : Յանկա-  
սերս այս, և դարչելի Ալեոր՝ ներ-

կածոյ ունելով զՏերս . որ և զկին իւր  
 'ի մեծ նեղութի արգել, սակս' տար-  
 փութն Երանելուն Գլաֆիլեայ . վն  
 որոյ' ետպան զՍուրբն Վասիլէոս' Ա  
 մասիոյ Եպիսկոպոս : Եւ իբրև յայտ  
 նեցաւ դանն , և զհտաց , եթէ' նմա  
 լուռ ոչ լինի Կաստանդիանոս . Ժող  
 վեաց զօրս' ընդդիմանալ տատերազ-  
 մաւ . և ցրտացեալ 'ի սիրոյն Տրդա-  
 տայ Մեր Թագաւորին' որպէս ար-  
 զարև 'ի Թշնամոյ : Քանզի գիտէր ,  
 թէ ասելի է Արդարոյն իմ Ամպա-  
 թիշտ : Իսկ իբրև և կն Զաղթօզն Կաս-  
 տանդիանոս , մատնեաց ԱՏ 'ի ձեռս  
 նորա զԼիւիանէս , յոր ինայեալ ույ  
 'ի Տերունի , և 'ի Քեռայր , եւ տա-  
 նել 'ի Գաղիուս' հանդերձ երկաթի  
 կապանօք դնել 'ի մետաղս , զի աղօթես  
 ցէ առ ԱՏ , որում մեղան , Թերևս'  
 երկայնամիտ լիցի առ նա . և ինքն հան  
 դերձ որդւովքն' զինն Թագաւոր Հը  
 ոսմայեցւոց ցուցեալ , զքսանեմեակն  
 'ի Նիկոմեդացւոց քաղաքին կատարեց :  
 զի 'ի շորրորդ ամէ հալածանացն' սկը  
 սեալ Թագաւորել , մինչև յերջտա-  
 տաներորդ ամն Թաղաղութն , զոր և'  
 այսօր տօնէ յաշխարհ : Եւ ոչ պարտ  
 վարկուցեալ' դառնալ 'ի Հոսմ , այլ  
 'ի Բիւզանդիոփն անցեալ' հաստատէ  
 զԼորունիսն , յանրջական ինն տեսու  
 թնց հրամայեալ . գերապայծառս իմն

առնելով շինուածս, հինգ պատիկ յա  
 լելեալ՝ մեծացուցանէ. քանզի՝ յ՛ջ ու  
 բեք Մեծի Թագաւորի կայր ՚ի նմա  
 ձեռնարկութեք այսպիսիք, բաց ՚ի սա  
 կաւուց ինչ իրաց. ունի՝ Տիեզերակալին  
 Ալեկսանդրի Մակեդոնացւոյ, յոր  
 ժամ՝ անտի ընդդէմ Դարեհի սպա  
 ռազմեցաւ: և սակս այնորիկ՝ շինեաց  
 ՚ի յիշատակ իւր զՍտրատիդինն ասա  
 ցեալ. քանզի՝ ՚ի նմա զպատերազմա  
 կանան յորինեաց զկտզմութիւն, զոր յե  
 տոյ՝ Սևերիոս Արբայ Հռոմայեցւոց  
 նորոգեաց: և ինքն շինեաց զբազա  
 նիսն ՚ի տեղւոջ սեանն, որ ունէր ըս  
 տորագիր խորհրդական անուն Արե  
 դակն, ըստ Թրակացւոց բարբառի՝  
 զԷւքսիպոն, որոյ կոչմամբ յորջորջե  
 ցան՝ և բազանիքն: Սա շինեաց և զՏե  
 տարանն, և զԳազանամարտն խաղալ  
 կոց, և զՉիլնթացսն, յ՛ջ կատար  
 մամբ. այլ կոստանդիանոսի ամենա  
 պատիկ յորինեալ, անուանեաց՝ Նոր  
 Հռովմ. այլ աշխարհ կոչեաց զնա՝  
 կոստանդինու Քաղաք: Ասնն և զայս,  
 թէ գաղտնի եհան ՚ի Հռովմէ զասա  
 ցեալն՝ Պալլագիոֆէ բերածոյ, և ետ  
 զնա ՚ի փորոնին ներքոյ սեանն՝ որ առ  
 ՚ի յիւրմէ կանգնեալ: Այս մեզ անհա  
 շատալի է, այլոց՝ ունի կամք իցեն:

## Պատմ 86.

Յուզոս Արեւոյ Չորտաւոյ, և յայն  
 շնորհիւ որ ելին ինն յորա ՚Նիւիւոյ.  
 և ստանլիւիւոյն, որք երեւոյն  
 ՚ի Գրեթորիոս :

Նշ ալն ժամանակս՝ երևե-  
 լաւ Արիսա Աղեքսանդրա-  
 ցի, որ ուսոյց շարաշար ամ  
 պարշաւել, ոչ գող զՈրդի  
 Հաւասար Հօր, և ոչ ՚ի Բնութեանէ  
 Հօր, և յԵութի. և ոչ ճնեալ ՚ի  
 Հօրէ՛ յառաջ քան զյաւիտեանս. այլ  
 օտար զամն, և արարած, և կրսեր, և  
 յետ ժամանակի գոյացեալ, որ ըստ  
 արժանեացիւոյ՝ ամպարիչասայս Ա  
 րիսա, ՚ի գարշեւան ընկալաւ զսասա  
 կումն : Այ՛ որոյ՝ ել Տրաման յԻնքնա  
 կալին Կաստանդիանոսէ՛ ժողով լի-  
 նիլ բազմութե՛ն Եպիսկոպոսաց ՚ի Նի  
 կիա Բիւթանացոց : Եւ ժողովեցան՝  
 Բիտումն, և Բեկենդի Երիցունք ՚ի  
 Հոսի Բողաբէ, ձեռնարկութիւն Սր  
 բոյն Սեղրեսարոսի. Աղեքսանդրոս՝  
 Աղեքսանդրի. Եւստատիոս՝ Անտիո  
 քայ : Մակարիձո՝ Եհմի. Աղեկսանդ  
 րոս՝ Կաստանդնուպոլսի Եպիսկոպոսք :  
 Յայնժամ զայ Տրովարտակ Ինքնա  
 կալին՝ առ մեր Արքայն Տրդատ, զի

զՍուրբն

զՍուրբն Գրիգոր առեալ ընդ իւր ՚ի  
 Ժողովն երթիցէ. զոր ո՛չ էառ յանձն՝  
 Տրդատ: Քանզի՛ լուծեալ էր զհնամա  
 նալն Հապհոյ ընդ Հընդկաց Թաղա  
 ւորին, և ընդ Արևելեայն Սաքանայ:  
 և զԶօրավարէն Ներսէհի. որ և նա  
 Թաղաւորեաց՝ ամս 9. և Որմզի, որ  
 ապա՝ և նա Թաղաւորեաց ամս՝ 3.  
 նահատակութիւն: Եւ ՚ի կասկածի և  
 ղեալ՝ զի մի՛ արդեօք պայմանին ստես  
 ցէ՛ ըստ սովորութեան հեթանոսու  
 թեն. վն այսորիկ՝ ո՛չ էթող առանց  
 իւր զաշխարհս: Բայց՝ և ո՛չ Սուրբն  
 Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի մի՛  
 զառաւել պատիւ՝ վն խոստովանողա  
 կան Անուանն՝ ՚ի Ժողովոյն ընկալցի.  
 Իբր՝ զի այնպէս փափաքանօք, և մե  
 ծաւ փութով կոչէին: այլ՝ նօքա առա  
 բնն Փոխանորդ իւրեանց զԱխտա  
 կէս, հանդերձ Ճշմարիտ խոստովա  
 նութիւն Երկոցունց գրով: Որոյ եր  
 թեալ՝ հասանէ Մեծին Ղևոնդի. և  
 հանդիպի յայնմ Ժամու, զի մկրտէր  
 զԳրիգոր՝ զՀայր Գրիգորի Աստու  
 ծաբանի. որ իբրև էլ ՚ի ջրոյն, լոյս  
 շուրջ փայլատակեաց, զոր ո՛չ որ ՚ի  
 բազմաց կտես, բայց միայն Ղևոն  
 դիս, և մերն Ախտակէս. և Աւթա  
 լոյ՝ Եղեսեայ, և Յակովբ՝ Մծբնայ,  
 և Յոհան՝ Պարսից Եպիսկոպոս, որք  
 նոյն շաւղօք՝ ուղևորէին ՚ի Ժողովն:

## Պրակ 87.

Իսկ Արեւոյից ՚ի Նիկիոյ՝ և հաս-  
 քու Ազգոնցն, և որ ինչ ՚ի  
 Գոռնի շինուծոյ :

**ՐԹԵՆԱԼ ԱՐԻՍՏՈՒՄԵՆ** ընդ  
**ՄԵԾԻՆ ՂԵՆՈՒՂԻ** հասանէ  
 ՚ի քաղաքն Նիկիացոց, որ  
 եղեն ժողովեալ Հարք՝ 318.  
 ՚ի քակտումն Արիանոսաց, զորս նդո-  
 վեալ ժերտեցին ՚ի հաղորդութե Նիկե  
 ղեցոյ. սոյնպէս՝ և ինքնական ար-  
 տաստահանեաց ՚ի Մետաղա : Ապա՝  
 դարձեալ Արիստակէս արժանա-հա-  
 շատ բանի, և քսան տահանեալ գրե-  
 խով կանոնաց խողովոյն, գայ հան-  
 դիպի Հորն, և Արքայի ՚ի Վաղարշա-  
 պատ քաղաքի. ընդ որ՝ յոյժ արախա-  
 ցեալ Սրբոյն Գրիգորի, սուշ ինչ յին  
 բնեկ ՚ի կանոնս խողովոյն յաւելաւ,  
 վն առաւել զգուշութե իւրոյ Վեհա-  
 կին : Յայնժամ Ազգային նոցա կամ-  
 սար՝ մկրտի իւրովքն հանդերձ ՚ի Մե-  
 ծեն Գրիգորե. Արքայի ընդունելով  
 ՚ի ջրոյն : տայ ժառանգութի նմա զմեծ  
 Դաստակերուն Արտաշեսի, որ այժմ  
 ասի՝ Դաստակերտ, և զԳաւառն  
 Հերակ, ուն՝ ազգականի իւրում, և  
 Մտերիմ Հարազատի. այլ՝ նա ոչ ա-

լելի բաւեալ՝ բան ղեօթն աւուրս ,  
 յետ մկրտութեն՝ վախճանի : Բայց՝  
 Թագաւորին Տրդատայ միթարեալ  
 զգլուխ օրդւոցն կամսարայ ղԱրշա-  
 լիք, զինքն փօխմնակ ճնողին սահմա-  
 նելով . ազգ զնա սերել յանուն Հօրն ,  
 և կարգէ ՚ի թի՛ Կախարարութեանց .  
 յաւելու և այլ պարգևս՝ զքաղաքն Ե-  
 րուանդայ , և զնորուն Գաւառն , մին  
 լև ցկատար ձորոյն մեծի . միայն , զի ՚ի  
 մտաց նորա հեռացուցէ ղյիշատակ  
 բնիկ աշխարհին՝ որ Պալհաւն կոչի .  
 սպ՝ զի անվրդով զհաւատն պահեցէ :  
 Իսկ՝ Արշալիր առաւել սիրեալ ղԳա-  
 ւառն , յիւր անուն անուանէր՝ Արշա-  
 բունիս . բանդի յառաջ Երասխաձոր  
 կոչիւր : ահա՝ ասացաք զպատճառս  
 գալատեան երկուց Յեղեցն Պար-  
 թեաց՝ և Պալհաւկաց : Զայսու ժա-  
 մանակաւ կատարէ Տրդատ զճնուածս  
 ամբողջին Գառնոյ , զոր որձաքար՝ և  
 կոփածոյ վիժօք , երկաթագամ , և կա-  
 պարաւ մածուցեալ . յորում շինեալ  
 և տուն հովանոց մահարձանօք՝ սրան  
 լելի գրօշուածովք՝ բարձր բանդակովք  
 ՚ի համար բեռ իւրոյ Խոսրովիդխոսոյ .  
 և գրեալ ՚ի նմա ղյիշատակ իւր Հելլե-  
 նացի գրով : Բայց՝ Սրբոյն Գրիգորի  
 դարձեալ ՚ի նոյն լերինս , ոչ ումեք  
 յետ սյնր յաւել երևիլ՝ մինչև ՚ի վախ-  
 ճան :

## Պատմ 83-

Յարգու Տահման Գրեգորի, և Արեւո-  
 իտայ. և ինքն էր ուղղուս իւրի լեռան՝  
 Մանկայ Արեւ:

**Յ**ԵՐՈՅԸ և տանկարգի ամբ  
 թաղարուծեն Տրդատայ,  
 դասք նստել յԱթոս Ար-  
 բոյ Առաքելոյն թաթեա-  
 սի զՀայրն մեր, և ըստ Աւետարա-  
 նի՝ ճնօղ: Յեա լուսաւորելոյ դամն  
 նայն Հայս Լուսով Անդիտուծէ, և  
 քնքելոյ զնաւար կառաւորուծեն, և  
 ինչոյ զմտ կողմանս Էպիսկոպոսօք, և  
 Վարդապետօք, սիրեցեալ զերինս՝ և  
 զյամայուծի, և զհանդարտուծք մը  
 տայն՝ յինքեան կեալ, զի խօսեսցի Է  
 Այ անդբաղապէս. Փոխանորդ իւր  
 թողլով զորդին իւր՝ զԱսիտաակէս,  
 ինքն կալով ի Գաւառին Գարանա-  
 ղեաց, ի լերինն՝ որ կոչի Մանկայ  
 Այրս: Այլ ասասցաւ թէ, կ'ը ա-  
 զագաւ կոչի՝ Մանկայ Այրք: Քան  
 զի՛ կին ոմն, անուն՝ Մանի, Քնկե-  
 րաց Արբոյ Հռիփսիմեանց, որպէս՝  
 Ղնունի Վրաց Վարդապետուհի. որ  
 ոչ շուծափեաց հետեիլ նոյ՝ ի գալն  
 առ մեզ, գիտելով զմտ տեղիս Այ-  
 բնակեցաւ ի լերինն յայնմիկ՝ ի յայրս

քնն քարանց . վս որոյ կոչեցաւ անուն  
 լերինն՝ Մանեայ Արք . յոր Արք  
 բնակեցաւ յետոյ Սուրբն Գրիգոր .  
 Առ թէպէտ՝ և բնակեցաւ անդ , սա  
 կայն՝ չ ժամանակս ժամանակս յայտ  
 նեալ շքեք չ աշխարհս , հաստատել  
 ՚ի Հաւատս դաշակերտեալն : Բայց՝  
 յորժամ եկն նորին որդին Առիստա  
 կէս ՚ի Դողոփոյն Նիկիայ , յայնմհետե  
 ոչ երևեցաւ յայտնիլ ումք Սուրբն  
 Գրիգորիոս . վս որոյ յիսկզբան Քա  
 հանայանալոյն նր՝ յեօթն և ՚ի տասն  
 երորդ յամէ Թաղաւորութնն Տրդա  
 տայ՝ մինչև ցբառասուն և վեցերորդ  
 ամն նորին , յորմէհետե ոչ ևս յաւե  
 լու՝ ումք երևիլ Գրիգորիոս . համա  
 բեալ թուին ամբ՝ 30 : Եւ յետ նորա՝  
 Առիստակէս , ամս՝ 7 : ՚ի քառասուն  
 և յեօթներորդ յամէն Տրդատայ մին  
 չև ցյիսուն և երորդ ամն նորին , յո  
 բում եղև կատարումն Սրբոյն Առիս  
 տակեայ . զի արդարև՝ սուտեր էր հո  
 գևոր՝ ըստ ասացելումն : Վս որոյ և  
 Արշեղայոս , որ կարգեալ էր ՚ի Աե  
 բակացութիւն Չորրորդն կոչեցեալ  
 Հայոց , կշտամբեալ ՚ի նմանէ , սպա  
 սեաց զիպօզ աւուր , և պատահեաց  
 նմա ՚ի Տանապարհի ՚ի Ծոփաց Գաւա  
 ռին . էտպան զԵրանելին սրով , և  
 ինքն գնաց փախատական ՚ի Տաւրոս  
 կիւլիկեցոց : Իսկ՝ զմարմինն Սրբոյն

բարձեալ Աշակերտաց նորին, բերին  
 յԵկեղեց, հանգուցանել ՚ի Թիա իւ-  
 բում Աւանին: Եւ յաջորդեաց զա-  
 թոսն Էրեցեղոսայր նորին Վրթանէս,  
 ՚ի յիսուն և ՚ի շորորդ յառն Տրդա-  
 տայ և անդր: Բայց Սրբոյն Գրեղո-  
 սի ՚ի Մանէ Այս կեցեալ աներևու-  
 թաբարամս բազումս՝ փոխի մահումը  
 ՚ի կարգս Հրեշտակաց, և հովուաց  
 գտեալ զնա վաախճանեալ, ՚ի նոյն տե-  
 ղոս թաղեցին, ոչ գիտելով՝ ո՞վ որ  
 նա իցէ: Վայելէր իսկ նց, որք Փրչ-  
 յին Մերոյ եղևն խորհրդածուր, և  
 նիլ և Աշակերտին յուզարկմանն Սպա-  
 սաւորք: Եւ ծածկեալ ամս բազումս՝  
 Ածային ինն գողցես Տեսչութիւն, իբ-  
 բև՝ զՄովսէսն զայն ՚ի հնումս. զի  
 մի ՚ի Պաշտօն գեոասաւառ մարդկան  
 ՚ի Բարբարոսացս առցի ազգաց: Իսկ  
 յորժամ սերտեալ՝ հիմեցան Հա-  
 ւասօք կողմանցս այսոցիկ՝ զկնի յեռ-  
 բազում ամաց՝ յայտնեցաւ Ճգնաւո-  
 թի ումնին՝ Գառնիկ անուն կոչեցե-  
 լոյ. և բերեալ եղաւ ՚ի գետոյն Թոր-  
 դան Նշխարք Սրբոյն Գրեղոսի: Սա-  
 որպէս յայտնի է ամենեցունց՝ Աշխար-  
 հաւ Պարթև, Գաւառաւ Պաշխաւ,  
 յազգէ Թազաւորեցելոյ զաւուցեալ  
 Աշակունի, ՚ի Յեզէ Սարենական,  
 ՚ի հօրէ Անակ կոչեցեալ: յԱրևելից  
 կողմանց Հայոց աշխարհիս՝ Արևել

Ճշմարիտ ծագեալ, և իմանալի արե-  
 դակն, և հոգևոր ճառագայթ 'ի խո-  
 բին չարութի կապառչութեն. Երա-  
 նութեն և շինութեն հոգևորի առիթ.  
 Աճային արդարև արմատեն տնկեալ  
 'ի Տան Տն, և 'ի Գաւթիս Այ ծաղ-  
 կեալ: Եւ այսպիսեօք՝ և այս քանեօք  
 ժողովրդովք բազմացեալ, ժողովեաց  
 զմեզ զամենեւեան 'ի Փառս' և 'ի Գո-  
 վեսաս Աստուծոյ:

Պրակ 89.

Յ-Դ-Գ- Է-Ի-Տ-Ն-Ի Մ-Ե-Ժ-Ի Թ-Գ-Մ-Ի-Ն  
 Տ-Ե-Դ-Մ-Յ: Ը-Դ-Դ-Մ-Յ Լ-Ղ-Բ-Ե-Դ-Ի-Ն  
 Կ-Դ-Դ-Ե-Մ-Ի-Ն Ա-Լ-Գ-Ի-Ն Հ-Դ-Յ:



Սրբոյ, և զմեծէ, և զԵրկ-  
 րորդ Նահատակէ, և զմե-  
 ռոյ Լուսաւորութեց Հո-  
 գևոր Աերակացուէ ճառե-  
 լով զ'ի Քնէ հանուր եղելոցս Ճշմա-  
 րիտ Թագաւորէ, հքառափառագու-  
 նիս պարտէրանցանել քանի՛. որպէս  
 զԳործակցէ, և զհաւատար Ճգնողէ  
 թրոյ Նախաշաղկի և Լուսաւորու-  
 թեց Նահապետի, որպէս Թունեցաւ  
 հաճոյ Հոգւոյն Սրբոյ Երեցացու-  
 ցանել զիմ Լուսաւորին՝ վկայութեն  
 մայն վիճակաւ, 'ի վիթ բերեմ, թէ և  
 Աւաբելութեն: Իսկ՝ որ ինչ զ'նի այ


սորիկ , զուգարան՝ և հաւատարա-  
 գործ , այլ՝ զառաւելութի՛ն ասեմ ըզ-  
 Թազաւորին . բանդի՛ խորհիլն յա-  
 զագս Այ , և Ճգնազգեցիկ լինիլ՝ զոյդ  
 երկոցունց : Իսկ՝ նու՛սանել հաւանո-  
 զական , կամ բռնաւորական բանիւք՝  
 առաւել Թազաւորին Շնորհ . բան-  
 զի ըստ հաւատոցն ո՛ւնիւն կասեցուցա-  
 նէր զգործան . այսորիկ աղաղաւ՝ կո-  
 շեմ զնա՛ Նախաշաւիղ Ճանապարհ , և  
 Լուսաւորութե՛ն մեր Հայր Երկրորդ :  
 Բայց՝ զի պատմութեց , և ո՛չ գովեա-  
 տիցէ ժամանակս . մանաւանդ՝ զի և  
 հազնէրգութեա լիւրաբանիւր պատ-  
 մազբայց արտասանութեց՝ և ո՛չ յա-  
 տուկ ՚ի մէնջ շարազրեցաւ . անցյաւք  
 ՚ի կարգ բանից , որ ինչ՝ յազագս նի՛ :  
 Սա՛ յեա հաւատոցն՝ որ ՚ի Քն , ամ-  
 առաքինութի՛ր բացափայլեալ՝ և ս բան  
 զևս յաճախէր , որ ինչ յազագս Քի  
 գործ , և բան . սաստելով և հաւա-  
 նեցուցանելով զՄեծ Նախարարն ,  
 միանգամայն և զմտ բազմութի՛ս Իրամ  
 կին՝ լինիլ արդարև Քի . սոյ՛ զի վկայ-  
 եացին ըստ հաւատոցն ամենեցուն և  
 գործքն : Այլ՝ զհաստարտութի՛ կամիմ  
 ասել , թէ և՛ զամբարհաւածութիւն  
 մերոյ Ազգիս , յիսկզբանն՝ և այսր .  
 սոյ անհամբոյր քարոյ՛ և Տշմարտու-  
 թն՝ անհարազատ , կամ թէ՛ բնութի-  
 ունելով զհարձրոյցնութիւն , և կա-

մակարութիւն . ընդդիմանան կամաց  
 Թագաւորին՝ յաղագս կրօնից Քրիստոս  
 կանաց , զհետ երթալով կամաց կա  
 նանց՝ և հարձից : Որում ոչ կամեցել  
 ներել Թագաւորին՝ ընկեցել զերկրա  
 ւոր Պսակն , զհետ ընթանայր Երկնա  
 ւորին . արագ հասանելով ՚ի տեղին՝ ուր  
 Ճգնաւոր Չինուորն Քի՛ ծակամուտ  
 լեռնակեցիկ եղեալ : Ատանօր ամա  
 լեմ ասել զՃմարտութիւն , մանաւանդ  
 թէ՛ զանօրէնութի՛ն , և զամպարշտու  
 թի՛ն Ազգիս մերոյ . զմեծի ողբոց՝ և  
 արտասուաց արժանի՛ զսոցա զգործս :  
 բանդի՛ զհետ առաքեալ՝ կուեն զնա՛  
 Սուրբ Թնիլ ըստ կամաց նորա , և ու  
 նիլ զԹագաւորութիւն : Իսկ՝ ՚ի չհա  
 ւանիլ Սրբոյ , տան նմա արբուին՝ որ  
 պէս անդ ուրեմն ՚ի հնուին՝ զԱսկրա  
 տայ զմուտիինգան . և կամ թէ՛ զմեր  
 իսկ ասել՝ կատաղեալ Երբայեցիք ,  
 ընկելի լեղեալ խառնեալ Այ՛ Սե  
 բոյ : Եւ զայս արարեալ շիջուցին յին  
 բեանց զբազմախայլ Ճառագայթ  
 Ածապաշտութե՛ն նր՛ : Անայսորիկ՝ ես  
 ՚ի վերայ իմոցս ողբալով ասեմ , ոնչ  
 Պողոս՝ յաղագս իւրոց , և թշնամեաց  
 խաչին Քի՛ . բայց ասեմ , ոչ զիմ բանս .  
 այլ՝ զՀոգւոյն Սրբոյ . Ազգ թիւր , և  
 Դառնացող՝ ( ասէ ) աղգ՝ որ ոչ ուզ  
 դեաց զսիրտ իւր , և ոչ հաւատարմա  
 ցաւ Ատուծոյ ոգի նորա :

Լ'բք Արամեանք՝ մինչև յե՛րբ էք ծան  
 բասիրաք : Ընդէ՛ր սիրէք զանօրէ-  
 նութի՛ն և զանանձու.թի՛ն . որք ո՛չ ծա-  
 նեայք , զի սքանչելացոյց Տ՞ր զԱուրբն  
 իւր : Եւ՛ ո՛չ Տէր լուիցէ ձեզ՝ յազա-  
 զակել ձերում առ նա . զի բարկա-  
 ցեալք մեզայք , և յանկողինս ձեր ո՛չ  
 զզջացարուք . քանզի՛ զենու.թն անօրէ-  
 նութի՛ն զենէք , և գյուսացեալն ՚ի Տ՞ր  
 արհամարհեցիք : Այ՛ ախորիկ՝ եկես-  
 ցէ ձեզ որոգայթ , զոր ո՛չ ծանեայք ,  
 և որսն՝ զոր որսայցէք , ըմբռնեցէ  
 զձեզ՝ և նորին որոգայթիւ անկջիք .  
 այլ անձն նորա ցնծացէ Տերամք՝ ու-  
 բախասցի ՚ի հանգստեան իւրում , և  
 ամիւ ինքեան անձամբ ատացէ՛ Տ՞ր  
 ո՛ նման է քեզ : Եւ՛ զի՛ ախորիկ ճըշ-  
 մարիտք այսպէս , և մեք մխթարես  
 ցուք մերովք վտանգիւքն : Զի թէ՛  
 ընդ փայտ դալար այս է՝ ասէր Քս .  
 իսկ՝ ընդ չորն , զի՛նչ լինիցի : Արդ՝  
 եթէ ընդ Աուրբն Այ՛ , և որք ՚ի խա-  
 դաւորութէ՛ն զինքեանս՝ յազագս Այ՛  
 նուստացուցին՝ այսքան . զի՛նչ բան  
 մեր առ Այ՛ յազագս ՚ի ձէնջ վտան-  
 գիցս . որոց վտանգք՝ և աղբաառ-  
 թի՛ն սեպհականէ : Այլ սակայն՝ ա-  
 սացից . ո՛վ որ ՚ի ձէնջ թողակս՝ յա-  
 զագս մեր . ո՛վ որ վարդապետացն  
 մաղթանս . ո՛վ որ՝ բան յօժարեցու-  
 ցանօղ , կամ յորդորական . ո՛վ որ՝


յերթան մերում բեռնաբարձ . ո՛վ  
 որ՝ ՚ի դան մերում հանգիստ . ո՛վ  
 որ՝ տուն , կամ օթանոց մեզ պատ-  
 րաստեաց . Թողից զայլն : Չի՛ և ո՛չ  
 զլեզուս շարս՝ և զագիտութեն՝ հան-  
 դերձ անտի փառամտութի՛ն , և կա-  
 տաղի լեզուանութի՛ն սանձահարեցիք .  
 այլ նիւթ նոցա անմտութեն՝ զձեր սե-  
 սունաստեացդ տալով բարս , բորբո-  
 բեցեք առաւել՝ քան զԲարելիսն Տը-  
 նոցն : Վասն որոյ՝ իւրաքանչիւրք  
 առանձին է քուրմ , և Պաշտօն , ո՛յ  
 ասէ Գիր . որ է ըստ այժմուցս ՚ի  
 դէպ , որ բազում Խոսողք ՂԱտաւա-  
 ծայնոցն՝ և զօրութե՛ն մտացն ո՛չ հա-  
 սուք . և Խոսողք՝ ո՛չ ըստ հաճոյից  
 Հոգւոյն , այլ՝ ըստ օտարին : Վա՛ն  
 որոյ հրացումն է ճառքս , և սարսափն  
 լի իմն՝ որոց միաս ունին . քանզի խօ-  
 սի , որ խօսին զՂԱտաւծոյ՝ և զԼ՛ծայ-  
 ինսն , և խորհուրդք Խոսողին հայի-  
 յօտարս : զի՛ ո՛չ յազազս որոյ խօսին՝  
 կրէ զաշխատութի՛ն , և ո՛չ մեղմով՝ և  
 հեզիկ , ո՛յ ուսան՝ թէ մի՛ որ լուի-  
 ցէ արտաքոյ զբարբառնորս . այլ յա-  
 զազս փառաց Մարդկայնոյ , և ճայ-  
 թելով՝ հնչեցուցանեն ՚ի լսելիս մարդ-  
 կան : Ար շատ խօսութե՛ն քանք՝ իր լե-  
 յաղբիւրէ բղիւնն , ո՛յ՛ ասացն ոմն ՚ի  
 Հնոցն , և զկեցուցանեն զգինար-  
 բուս՝ և զՀրապարակս : Ո՛վ որ՝ զսօ

առ ոչ սղբացէ՛ որ միտս ունիցի . և  
 եթէ՛ ոչ որ զլարիցի ասեմ . թէ և՛ որք  
 յորդորեն զնոսա՛ աշտպխիս լինիլ՝ ար  
 գելում , ասելով զՔրիստոսին . տալ  
 վրէժս յարենէն Արեւի Արդարայ , մին  
 յև յարենն Չարարիայ . որ կայ ՚ի մէջ  
 Տաճարին՝ և Սեղանոյն : Այլ՝ աստա  
 նոր դադարեացէ բանս , ուր աշխատու  
 թի կրեալ յականջս լինիլ ի սուեցեալ  
 մեռելոց : Այլ՝ Պատմութիս յազազս  
 Սրբոյն Տրդատայ Տշմարիտէ . բանզի  
 արբուցեալ նմա դեղ մահու , զրկե  
 ցան ՚ի Լուսոյ Ընորհաց Ճառագայ  
 թից նորա . որ Թաղաւորեաց ամս  
 յիսուն և վեց :









# ՆՄՏՈՐ ԵՐՐՈՐԳ

Պրակ 1.

Մովսէսի Խորենացւոյ՝ Ասորոսքանութի  
Գրոյ Հայրենեաց :



**Չ ՀՆԱԽՕՍՈՒ**


Թիք եղևալ մերոց աշխարհիս, և ո՛չ ընդ ամ ընդունականսն անցանելատակեալ՝ սակս կարճու թե ժամանակիս. նա և՛ ո՛չ Մատենադրութիք Ինտորի հուպ են առ մեզ. զի՛ ի նմա պահելով զակն անմուռաց՝ ընդ բնաւն անցանկաք. զի՛ մի՛ ինչ ՚ի մեղէն մնացե՛ ի գլխաւորաց՝ և ՚ի պիտանեաց, և արժանի յիշատակի մերոց Հարադրութեցս. այլ՝ որչափ ջան, և յօժարութի բաւեցին՝ պատմեցաք ստուգապէս, ՚ի Մեծէն Աղեք :

սանդ.

սանդրէ՛ մինչև ցվախճանն Արբոյն Տըր  
 դատայ, յոյժ կանուխ՛ և հեռի ժամա  
 նակօր: մի՛ սրոյ՝ մի՛ զնեզ այսպանեալ  
 պարսաւիցես. զի ահա՛ որ ինչ առ մե  
 ղովոս ժամանակօրս եղև. կամ՝ դոյզն  
 ինչ հեռի, զբուցեցից քեզ անտալ:  
 Երրորդ անելով զիրս, որ ինչ յեա  
 Արբոյն Տրդատայ՝ մինչև ՚ի սպառիւ  
 Արշակունեաց ազգին՝ ՚ի Թադաւորու  
 թենէն. և Զաւակի Արբոյն Գրիգօ  
 թի ՚ի Բահանայու թէ. հասարակաց  
 կօսիք անցանելով ընդ Պատմութիս.  
 որպէս՝ զի մի՛ երեսցուք ՚ի պերճաբա  
 նութիւնս գրաւել առ փափազ. այլ  
 ճշմարտութե՛ք քանից մերոց կարօտեալ  
 ստէ՛պ ստէ՛պ՝ և անյազ աննիցեն՝ զըն  
 թերցումն Պատմութեց մերոց Հայ  
 բնեացն:

## Պրակ 2.

Որ ինչ յեւ լիճանն Տրդատայ՝ ընդ  
 Մեծն Արմենիս, և ընդ Երեւ  
 Նոսիսիսիսն անց:



Ժամանակի Աւախճանի Տըր  
 դատայ՝ հինգիսկեցաւ Մեծն  
 Արթանէս ՚ի Ակայարանի  
 Արբոյն Զօհաննու, որ ՚ի  
 Հօրե նորին՝ շնորհեալ էր ՚ի Տարօն.

ուր նենդ դործեալ լերինն այնորիկ  
 Բնակչաց ՚ի սաղրելոյ Նախարարացն,  
 կամեցան սպանանել. որք անըմբռնե  
 լի ձեռամբ կապեալ՝ որպէս առ Եղի  
 սեբն այնուիկ ՚ի Հնումն, կամ՝ առ  
 նորին ինքեան քե՛ն Աստուծոյ մերոյ  
 դարկուցեալ Հրեայքն: անվտիտ ան  
 ցեալ՝ զնայր յԵկեղէց Գաւառ՝ ՚ի  
 Թիւն յԱւանն, որ էր հանգստարան  
 նորին եղբօրն Արիստակեայ. և սգա  
 ցեալ ՚ի վր աշխարհիս Հայոց՝ որք յան  
 իշխանութն մեացեալք, յարեան ազգ  
 յազգի վր՝ կոտորել զմեանս. ուս  
 տի՛ երեք Տոհմն, որք զԲզնունա  
 կանն, և Մանաւազեանն, և որ Դու  
 նին անսուանկին, սպառեալ՝ բարձան  
 ՚ի միջոյ:

Պրակ 3.

Կ-Գ-Ե-Ր-Ե ՍԵՐՅՆ ԳԵՒԳՕՐԷ Ի Բ-Ե  
 Բ-Ե-Ե-Ե-Ե:

**Մ**Ե՞ծաւ սնտութի՛ն առնէր վը  
 թէ՛ մնացրութի՛ն հաւատոց՝ և  
 վարուց՝ Երանելին Տրդատ.  
 առաւել այնոցիկ՝ որք ՚ի բա  
 ցեայ կողմանքն էին՝ յիբում իշխանա  
 թնն: վասն որոյ՝ եկեալ Գործակալք  
 կողմանցն Արևելից Հիւսիսոյ. Ա՛ւ-

րակացուք հետաւոր բաղարին, որ կո  
 կոչի՝ Փայտակարան, ասին ցԱբբայ.  
 եթէ կամիցիս ուղղութիւն վարել կող  
 մանցն այնոցիկ, ըստ այսմ հաւատոյ՝  
 առաքեալ նց Եպիսկոպոս ՚ի Չաւակէ  
 Սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափաքե  
 լով խնդրեն. և դիտեմք հաւատոյ,  
 զի ՚ի հռչակեալ անուանեն Գրիգորի,  
 ակն ածիցեն և ՚ի նորին Չաւակացն:  
 Այսմ հաւանեալ Երանելին Տրդատ,  
 տայ նոցա Եպիսկոպոս զՄանուկն  
 Գրիգորիս՝ զԵրեցորդին Աթանիսի.  
 Թէպէտ՝ և յանկուծի աւուրցն հայե  
 լով պարականոն զիւրն վարկանէր,  
 այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութի.  
 զնտաւ ածեալ զՍողոմոն Երկոտասան  
 ամեայ Թադատրեալ իլին. առաքե բա  
 զում համարձակութի՝ հանդերձ Սա  
 նատրկաւ սմամբ յիւրե՛ ազգէն Ար  
 չակունեաց: Արոյ երթեալ օրինակ բա  
 րեաց լինէր. հայրենականօքն վարելով  
 առաքինութիւն. այլ՝ կուսութիւն գեր ՚ի  
 վերոյ՝ բուն զՉարսն. և պատժականաւ՝  
 զոյգ լի թգւրին իսկ՝ ՚ի հասանիլ համ  
 բաւոյ վախճանին Տրդատոյ, ՚ի դաւե  
 լոյ նորին Սանատրկոյ, և այլոց ոմանց  
 հանապազատաւտ արանց Աղուանից,  
 սպանին զԵրանելին ընթադրել ձիովք  
 Բարբարոսն ՚ի Ատանիանեան դաշ  
 տին՝ մերձ ՚ի Կասպիականն կոչեցեալ  
 ծով. զոր բարձեալ Սարկաւազացն նո

բուն՝ բերեալ ՚ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարէն Աւանին : Իսկ Սանատրիոյ՝ թաղ կապեալ ինքեան՝ ունի ըզքաղաքն Փայտակերան, զորու թ ք օտար ազգաց՝ խորհէր տիրել բոլորումս Հայոց :

## Պրակ 4 :

Որչառն Բախուր Բարեշիտ ՚ի Բաբանուրէ Հայոց . և Իորհուրդ Նիւրուրոյն՝ Բագուորեցոյցանել շխորու :

**Ո**րպէս՝ յԱՏայինսն գտանեմք ասացեալ Պատմութիւն Երբայական ազգին, յետ Դատաւորացն ՚ի Ժամանակի անիշխանութեն, և առանց խաղաղութեն յինելոյ թագաւոր, և առն ըստ Տաշից իւրոց գնալ . սապէս և ՚ի մերումս էր տեսանել աշխարհիս : Քանզի՝ յետ վախճանի Էրանելոյն Տրդատայ, մեծ իշխանն Բակուր, որ՝ Բըդեաշի Արմենաց կոչիր, տեսեալ ըզՍանատրուկ թագաւորեալ ՚ի Փայտակերան, զնոյն ինքն խորհեցաւ . թէ պէտ՝ և ոչ թագաւորել, զի՝ ոչ Արշակունի էր, այլ՝ Տիրագլուխ կամեցեալ լինիլ : Ճեղքեալ ՚ի միաբանութե Հայոց, ձեռս ետ յԱրմիզդ՝ Պարսից Արքայ . ուստի՝ ուշ ՚ի կուրծս անկել,

և իմիաս եկե՛լ Նախարարացն Հայոց,  
 Ժողովեցան առ Մեծն Վրթանէս . և  
 առաքեցին երկուս ՚ի պատուական իշ-  
 խանաց , զՄար՝ իշխանն Ծոփաց , և  
 զԳաղ՝ իշխանն Հաշտենից , երթալ  
 ՚ի Նախագահ Քաղաքն՝ առ Կայսր  
 Կոստանդոս՝ որդի Կոստանդիանոսի՝  
 հանդերձ պատարագօք , և թղթով՝ որ  
 ունէր օրինակ զայս :

## Պրակ 5.

Պատճէն Թշնայն Հայոց :



Պրակսպատալեա Վրթանէս՝  
 և որք ընդ նովա Եպիսկո-  
 պոսուներ , և իմ Նախարարք  
 Հայոց Մեծաց . Տեսան մե-  
 ռոյ ինքնակալի Կոստանդեայ Կայսեր՝  
 ինդալ : Յօւշ լիցի քեզ պայման ուխ-  
 տի Հօրքոյ Կոստանդիանոսի , որ առ  
 մերում թագաւորին Տրդատայ : և մի-  
 տայցեա զաշխարհս քո Պարսից անաս  
 տուածից . այլ օգնեսցեա մեզ զօրօք՝  
 թագաւորեցուցանել զորդի Տրդա-  
 տայ՝ զԽասրով : Քանզի՝ Աճ ոչ մի-  
 այն զձեզ Երօպայ , այլ և՛ իմ Մի-  
 ջերկրեայցս Տիրեցոյց . և ա՛յ զօրու-  
 թե՛ն ձերոյ և՛հաս մինչև ՚ի ծագս երկ-  
 րի : Եւ՛ մեք ինդրեմք առաւել քան զա-

աւել տիրել ձեզ՝ ո՛ղջ լերուք : Այսմ  
լսող եղեալ Կոստանդեայ՝ առարեաց  
զԱնտիոքոս՝ Յարդարիչ իւրոյ Պալա  
տանն զօրու ծանու, և ծիրանիս հան  
դերս Պսակաւ, և Թուզթ՝ որ ունէր  
օրինակ զայս :

Թուզթ Կոստանդէոյ :

**(**Չոստոս ինքնակալ Կայսր Կոս  
տանդոս . Մեծի Արթանիսի՝ և  
համօրէն աշխարհականաց քոց ինչոյ :  
Առաքեցի ձեզ զօր յօգնականութի .  
և հրաման՝ Թագաւորեցուցանել ձեզ  
զԽոսրով՝ որդի Արթայի ձերոյ Տրդա  
տայ . ուն զի՝ ի բարեկարգութի հաս  
հաստատեալ՝ մեզ ետուայեօքիք մտեր  
մութի . ո՛ղջ լերուք :

Պրակ 6.

Գալաստն Անտիոքոս՝ և գործի նորն :

Կեալ Անտիոքոս՝ Թագաւո  
րեցոյց զԽոսրով, և չորե  
սին Սպարապետսն մատոյց  
ի նոյն իշխանութի զօրու,  
զօրս կացուցել էր Տրդատայ յիւրում  
կենդանութեն՝ յետ մեռանելոյ Դայե  
կին իւրոյ Արտաւազգայ Մանգակուն  
ւոյ, որ Միազ լսապետ էր իմ Հայոց  
Զօրավար : Առաջին՝ Բագարատ աւ

պետ, զորավար ամ գնդին Արևմտեայ  
հողմանն. Երկրորդ՝ Միհրան Առաջ  
նորդ Արաց՝ և Բզեաշի Գուգարաց  
ւոյ՝ Սպարապետ Հիստիային զօրուն.  
Երրորդ՝ Ահսան Նահապետ Ամա  
տունեայ՝ զորավար Արևելեայ գըն  
դին. Չորրորդ՝ Մանածիհո Ռշտու  
նեայ՝ Սպարապետ Հարաւային զօ  
րուն: Եւ բաժանել ետ նոյ զիւրաքան  
իւր զօրս. և առաքեաց զՄանածիհո  
Հարաւային զօրօք, և զԿիլիկիեցիս զօրս  
ընդ նմա՝ զհողմամբք Ասորեստանի, և  
Միջագետաց, և զԱհսան Նահապետ  
Ամատունեայ՝ Արևելեայ գնդան, և  
զԳաղատացի զօրս ընդ նմա, առա  
քեաց Ասորստական ՚ի սլահ ունիլ  
Արքայէն Պարսից. և իւր թողեալ  
զԱմադաւորն Խասրով քանզի փոքր  
էր յանձնէ, և անօր սսկերօք, և ոչ  
գոյ ՚ի նմանութի պատերազմական հա  
սակի. առեալ ընդ իւր զՄիհրան, և  
զԲաղարատ իւրեանց զօրօք, միահա  
մուռ ամ Յունականան իաղայ ՚ի վր  
Սանատրիոյ: Իսկ նորա Պարսկական  
զօրօք ցեալ զքաղաքն Փայտակարան.  
Ինքն առ Էւպուհ փութացեալ ան  
հանի՝ հանդերձ Աղուանից Նախա  
րարօցն: Չորտեսեալ Անտիոքայ, և  
թէ ոչ ՚ի խաղաղութի հնազանդու  
թն նուձնեցան, հրաման տայ առ իւր  
զիշխանութի պատակառեւոցն նուձն

ցուցանել . և իւր ժողովեալ զհարկս՝  
 առ կայսրն գնաց :

Պրակ 7.

Յանցանք Մանաճիհի -- Մեծն Յ-  
 ի-բ՝ և Տնի :

**Ը**րթեալ Մանաճիհի Հայոց  
 Հարաւային գնդաւն , և կի  
 լիկեցւոց զօրօք՝ զկողմամբ  
 Ասորեստանի . ճակատս  
 տուեալ ընդ Բակուր Բրեշիի , սատա  
 կէ զնա՝ և զգօրս նորա , և զՊարսիկս՝  
 օգնականս եկեալ նմա՝ հալածականս  
 առնէ . և զորդի Բակրոյ զՀեշայ՝ ձեր  
 բախալ արարեալ՝ հանդերձ երկաթի  
 կապանօք առաքէ Խոսրովայ . և զգա  
 լառս իշխանութե նոցա սրով դատէ  
 յանինայ . ոչ միայն զՄարտիկան , այլ  
 և՝ զՌամիկ շինականս . և բազում գե  
 ռիս առեալ ՚ի կողմանցն Մծրնայ :  
 Ընդ որս՝ և սարկաւազունս ութ՝ սըր  
 բոյ Եպիսկոպոսին Յակովբայ . զորոց  
 զհետ եկեալ Յակովբայ , համոզէ ըզ  
 Մանաճիհի՝ արձակել զգերութիւնն  
 Ռամիին , իրբև զո՛չինչ մեղուցելոց :  
 Արում ոչ հաւանեալ Մանաճիհի ,  
 պատճառէ զԱրբայ : և Յակոբու գէմ  
 եղեալ առ Արբայ , առաւել ևս զգա  
 ռի Մանաճիհի , և ՚ի սաղրելոյ Գաւա

ապականացն՝ զութեօքն՝ Սարգիսապուն  
 սըն նթ, որք ՚ի կալանան՝ հրամայէ ՚ի  
 ծով ընկենու. զոր լուալ մեծին Յա  
 կովբայ՝ դառնայ ՚ի տեղի իւր լի բար  
 կութք, ու Մովսէան յերեսաց Փա  
 րաւոնի: և ելեալ ՚ի լեառն ինչ՝ յա  
 րում երևէր Գաւառն ամ, անէծ ըզ  
 մանաճիհք, և զգաւառն ամ: Իւ ոչ  
 յամեցին Դատաստանք Ածայինք հա  
 սանիլ ՚ի վթ. և նման Հերովդի սատա  
 կի մանաճիհք. և պողարերութի ջրա  
 ւորաց գաւառին՝ դարձաւ յաղտաղ  
 տուկ. եղևալ ՚ի վթ երկինք պղնձի լի  
 գրեցելուին. և ծով հակառակեալ  
 ինքն ընդունէր զսահմանս անդաստա  
 նաց: Զոր լուեալ մեծին Արթանայ՝ և  
 Արբային խորովայ, ցասուցեալ հը  
 րամայեն արձակել զգերեալսն, և առ  
 նոյն պր մաղթել ապաշխարութք, զի  
 դարձցի սրտմտութիւն Տն. զոր յեռ  
 ելից Յակովբայ յաշխարհէս ժառան  
 գորդի մանաճիհի գեղեցիկ ապաշխա  
 րութք՝ ուժգին արտասուօք՝ և հա  
 ապամաք, նորին բարեխօսութք զը  
 տեալ ըժշկութի ինքեան, և գաւա  
 ռին:



## Պրակ 3.

Յուզուս Բագասարելոյն խորհուրդն ,  
 և խորհելոյ զարտանիւն՝ և զնկելոյ  
 զնպաստն :

Երկրորդ ամի Յազկերտի՝ Սր  
 քայի Պարսից , և յութե  
 րորդ ամի Ինքնակալութեն  
 կաստանդեայ , յօգնականու  
 թէ նորին Թագաւորեաց Խոսրով :  
 ոչինչ արութիւն քաջութե ցուցեալ ,  
 ուն զՀայրն , այլ և ոչ վն հատուա  
 ծեւոյ կողմանցն հակառակեցաւ ինչ  
 յետ միոյ նուագին , զոր ՚ի Յունակա  
 նացն կրեցին զօրացն . այլ ՚ի կամս Թո  
 ղեալ զարքայն Պարսից՝ խաղաղութե  
 ընդ նմա առնէ . բաւական համարեալ  
 մնացելոց սահմանացս օիրել . ամե  
 նեին ոչ ունելով փարել ազնուա  
 կան մտածութիւնս . զի Թէպէտ էր  
 մարմնով փոքր , այլ ոչ ուն յ՝ակեղով  
 նացին Աղէքսանդր , որ միայն երկոյ  
 կանգնոց ունելով շափ հասակի . և ոչ  
 զհոգւոյն իտափանէր ածխոյծս : Իսկ  
 նորա զքաջութե , և զբարի յիշատա  
 կաց անփոյթ արարեալ . զքօսանաց՝ և  
 հաւորութեց , և այլոց որոց սարա  
 պեալ . նորին աղազաւ և անտառս առ  
 Աղատ գետոջն անկէ , որ յանուն նր

կոչի մինչև ցայսօր ժամանակի : նաև զարբունիսն վերայ անտառին փոխ յատ մի , ապարանս հովանաւորս շինեալ որ ըստ Պարսկական լեզուին Դուին կոչի , որ Թարգմանի Բլուր : Բանդի 'ի ժամանակի յայնմիկ' Արէս ուղեկցեալ արեգական , և օղբ ջերմայինք պղտորեալ ժանտաստաթք փչէին . յորմէ ոչ կարացեալ ժամել որք Սրտաշատ բնակեալ էին , կամաւ յանձն առին զփոփոխումն :

Պրակ 9.

Որ էլ յաւարս սրտ 'ի Հիւսիսիւնոց  
 ուղոց որչաւնէ 'ի Բլ , և Նիւր  
 իտմէ վահանոյ Աստուանոյ :

Սուրսորա՝ միարանել Հիւսիսոյ Բնակիչք կաւկասաւ , գիտացեալ զԹուրսորաւ թի նորա . և առաւել 'ի Տրապուրեղոյ մաղթանաց Սանտարկոյ գաղտնի 'ի հրամանէ Շապհոյ Պարսից Արքայի , արշաւեալ 'ի միջոց աշխարհիս մեծաւ ամբոխի , ուն թէ՛ երիւք բիւրովք : Որոց պատահեալ պատերազմաւ Արևելեաց , և Արևմտեաց մեր զօրուն Հայոց՝ հանդերձ Չօրապետօքն Բաղարատաւ Սպեւորի , և Վահանաւ Ամատանեաց Նահապե-

տիւ: զի Հարաւային մեր զօրք՝ առ ար  
բային Խոսրոսայ էին յաշխարհին Տո  
փայ . և ՂԱ՛իհրան սպանեալ, և ըզ  
Հիւսիսային մեր գունդն հարեալ՝ ի  
Թիկունսն կեցեալ Թշնամեացն, և հա  
սեալ ի գրունս Վաղարշապատու՝ սպ  
շարէին: Որոյ յանկարծ ի վի՛ հասեալ  
Արեւմտեայ՝ և Արեւելեայ մեր զօ  
րուն, և անտի մերժեալ զօշական ա  
ռապարան՝ ոչ էտուն ժամանել՝ ճա  
պաղել ի նետաձգութիւնս, ըստ օրինի  
իւրեանց սովորութեն, երազել սաստ  
կապէս՝ զհետունելով քաջածիտցն ի  
դժոճարս քարանց՝ և ի վի՛մաւ տե  
ղիս . մինչև յո՛չ կամայ դուժարեալ  
Թշնամեացն ի ճակատ . և Զօրագլուխ  
նիզակաւորաց լեալ անարի, ոնս Սկայ  
վառել թաղաւ կաճեայ՝ բոլորով ա  
մենայնիւ՝ սարածածկեցեալ՝ շահատա  
կեր ի միջ զօրացն . յորմէ ակնակառոյց  
լեալ՝ մինչև զօրավիզն օգնականութե  
ն՝ զինչ կարէին վնասել . քանզի՛ հարել  
նիզակաւ՝ ճախր առնոյր կաճեայն:  
Յայնժամ, Քաջին Վահանայ Ամա  
տունոյ՝ հայեցեալ յէկեղեցին կա  
թուղիկէ, ասէ՛ օգնեալ ինձ ԱՃ, որ  
զԲաւթեայն սարաքարն դիպեցու  
ցեր ճակատու Այլազգոյ՝ խորխոր  
ցելոյն Գողիազու . ուղղեալ և զնի  
զակս իմ ական հզօրիս այսորիկ: և ո՛չ  
վերկեցաւ ի ինդրոյն՝ ի գաւակ ձիոյն

հարեալ յերկիր կործանեաց զահա-  
 գին վերադն : Այսպիսի դիպում ՚ի փա-  
 խաւսոյ յորդորեաց զԹնամիսն , և ՚ի  
 յաղթութիւն զՀայոց գունդն զօրա-  
 ցոյց : Եւ աստի դարձեալ յաշխարհն  
 ծոփաց՝ Բագարատ , վկայ հաստա-  
 տուն՝ առանց նախանձու՝ ինի առ Ար-  
 քայի՝ Վահանայ քաջութեցն՝ և առա-  
 քինութե՛ դիպումածոցն : վասն որոյ՝  
 պարգևէ նմա Արքայ զտեղի հակա-  
 տուն՝ զՕրական , ուր ինքնահամ գի-  
 մադրաւ նահատակ եղև . և փոխա-  
 նախ Միհրանայ կարգէ զԳարջուլ  
 Նահապետ Խոսրոսունեաց ՚ի վերայ  
 զօրուն :

## Պրայ 10.

Վիճան Խոսրոսու , և գոտերով Հայոց  
 ընդ Պարս :



Ետ այսր՝ գիտացեալ Խոս-  
 րոսու՝ թէ ձեռն Հայհոյ  
 Պարսից Արքայի՝ է ի թը-  
 նամիսն , լուծանէ զխաղաղութիւն՝  
 որ լինմա . և զմասնաւոր հարկն  
 արգելու ՚ի նմանէ , տալով և զայն կայ-  
 սեր . և ածեալ զօրս Յունաց՝ ընդգի-  
 մանայ Արքային Պարսից . բայց՝ ոչ  
 յերկարեալ զկեանս իւր . վախճանի  
 թագաւորեալ ամս ինն . և բարձեալ

զնա՝

զնա՝ Թաղեցին յԱնի առ Հօրն : Եւ  
 Ժողովեալ մեծին Արթանիսի զամ Նա  
 խարարս Հայոց, հանդերձ զօրք՝ և  
 զօրապետօք, յանան առնէ զաշխարհս  
 Առջօրի կամսարականի, ոնց Գլխաւօ  
 բէ, և յոյժ Պատուականի՝ յետ Ար  
 բայի. և իւր առեալ զՏիրան օրդի  
 Խօսրովա՝ զնայ առ կայսր, զի Թ.  
 գաւոր Հայոց՝ ՚ի տեղի Հօր իւրոյ կա  
 ցուցէ : Բայց՝ Արքայն Պարսից շա  
 պուհ, իրբև լուա զմահն Խօսրո  
 վայ, և եթէ՝ օրդի նորա Տիրան առ  
 կայսր զնայ, գումարէ զօրս բազումս  
 ՚ի ձեռն Ներսէհի Եզօօր իւրոյ, ոնց՝  
 զի Թագաւորեցաւցանել զնա Հայոց  
 խորհեցել. և առաքէ յաշխարհս մեր,  
 իրր Անառաջնորդ զնա վարկուցել :  
 Արոց պատահեալ Առջօրի կամսարա  
 կանի՝ հանդերձ ամ Հայաստանեայց  
 Զօրօք, հակառակեալ ՚ի Մատուհն ան  
 ուանել զաշտի. և Թէպէտ՝ և բազումս  
 ՚ի Նախարարացն անկան ՚ի պատերազ  
 մին, սակայն յաղթեալ զնդին Հայոց  
 փախստական առնէին զզօրս Պարսիցն.  
 և պահեն զաշխարհս՝ մինչև ցգայն  
 Տիրանայ ՚ի Հայս :



## Պատկ 11.

Յաշտոն Բագասորէլոյն Տէրանայ, և Ժ-  
 Իէլոյ յաշտորհէն Մեծին Վրթանէ-  
 ոյ, և ԺԺանորդէլոյ շԱԲոան  
 Սրէոյ Յոսիան:

**Յ**ԵՕԹԵՆ և 'ի տասն ամի ինը-  
 նակալութե՛ն իւրում, Օգոս-  
 տոս Կոստանդեայ՝ օրդի Կոս-  
 տանդիանոսի, Թաղաւորե-  
 ցուցանէ զՏէրան՝ օրդի Խոսրոպու,  
 և առաքէ 'ի Հայս՝ հանդերձ Մեծաւ  
 Վրթանաւ: Արոյ եկեալ՝ ունի զաշ-  
 խարհսս մեր խաղաղութիւն. հաշտութի  
 չ Պարսս առնելով, և ոչ պատերազ-  
 մունս. հարկելով Յունաց, այլև՝ մաս-  
 նաւորինչ Պարսից: Կայր 'ի հանդար-  
 տութե՛ն իրրև զՀայր իւր. ոչինչ ա-  
 րութի քաջութե՛ն և սորա ցուցեալ,  
 և ոչ Հայրենի առաքինութեանն հե-  
 տեկեալ. այլ՝ Թուրացեալ յիմ բարե-  
 պաշտութե՛ն, զազանի՛ ոչ իշխելով հա-  
 մարձակ պատուել զախան՝ 'ի մեծէն  
 Վրթանայ: Իսկ՝ յետ ինչոյ տասն, և  
 հինգ ամ Եպիսկոպոսութե՛ն Մեծին  
 Վրթանայ, փոխի յաշխարհէս՝ յեր-  
 րորդ ամի Տէրանայ. և 'ի հրամանէ նո-  
 րին, տարեալ հանդուցանեն 'ի Քեօզն  
 Թորդան: Իրր՝ Մարգարեական ա-

կամք հայեցեալ. որ զկնի բաղում ժա  
մանակաց, և Հօրն՝ ՚ի նոյն տեղոց  
հանգուցան Նշխարքն: Եւ յաջորդէ  
զԱթոսն՝ Յասիկ՝ նորին որդի ՚ի չոր  
բորդ ամի Տիրանայ՝ յոյժ հեռեւօղ և  
տեւօղ եղեալ Հարցն առարկնութն:

## Պրակ 12.

ՊԻՏԵՐԱՆԸ ԸՆԴԻՅ ԸՆԴ ԿՈՒՄԱՆԴԵՍԻ:

**Ա**յց Հապուհ Յորմզղեան՝  
առ Տիրան մեր Արքայի՝ ա  
ռաւել սէր հաստատեաց,  
մինչև զօրաշիրն օղնակա  
նութն եղեալ թափէ զնա յարձակմա  
նէ Հիւսիսականացն աղջաց, որք միա  
բանեալ ելին արտաքս՝ քան զկապանն  
Ճորայ, և բնակեցան ՚ի տահամանս  
Աղունից՝ ամս չորս: Եւ զայլս յո  
ւղս թագաւորս նաւաճեալ Հապուհ,  
և զազոս Բարբարոսայ՝ բազումս ՚ի  
սատարութի կալեալ, յարձակեցաւ ՚ի  
Միջերկրեայս և ՚ի Պաղեստինէ: Իսկ  
Կոստանդեայ արարնալ Կեսար զՅու  
լիանոս՝ սպառազինեցաւ Քզէմ Պար  
սից, և տուեալ Տակասոս՝ երկօրին կող  
մունքն պարտեցան. քանզի՝ բաղումք  
յերկաքանչիւրոյն, և ոչ մի՝ ՚ի միւսոյ  
Թիկունս դարձոյց. մինչև ՚ի հաւա  
նութի եկեալ, արարին խաղաղութն:

ամս սակաւս : և դարձեալ 'ի Պարսից  
 կոստանդեայ՝ հիւանդացեալ յերկար ,  
 վախճանեցաւ 'ի Մովսէսասին քա-  
 ղաքի կիւրիկեցոց , թագաւորեալ ամս  
 23 : 'ի սորա աւուրս՝ երեւցաւ խաչ  
 լուսեղէն յերկնից յԵՃՄ , իմ քաղաքին ,  
 հաւատացելոց՝ և անհաւատից , առ  
 Երանելեան կիւրղի :

Պրակ 13.

Ե՞նէ շիւրտ Տիւրն Իլեւ ընդ ---  
 Յուլիանոսի՝ դարձնէր քոյ :

**Ա**յսու ժամանակաւ թագա  
 ւորեաց Յունաց՝ Ամարիշ  
 տրն Յուլիանոս , և ուրա-  
 ցաւ նա զԱԾ , և պաշտեաց  
 շկուս , և յարոյց հաւածանս 'ի իւր  
 սովութի Եկեղեցոյ . և բազմադիմի  
 քանայր շիջուցանել զՀաւատ քրիս-  
 տոնէութի . բայց՝ ոչ բռնութի հա-  
 ւանեցուցանէր , այլ՝ խորամանկեալ  
 հնարէր , զի զքի Պաշտօնն խափա-  
 նեացէ՝ և Գիւաց երկրպագեցին : Եւ  
 յորժամ , զնա ընդդէմ Պարսից իրա-  
 ւունքն դիմեցին , և անցեալ ընդ կիւ-  
 լիկիայ՝ հանանէր 'ի Միջագետս . և  
 զօրացն Պարսից կողմնապահաց՝ հա-  
 տեալ զսուան կաւս՝ կամրջին Եփրա-  
 տու , զգոչանային անցիցն : Իսկ Տի

րան մեր Թագաւոր՝ իջեալ ընդ առաջ  
 Զուլիանու, գիմէ ՚ի վր Պարսիցն զօ-  
 րաց՝ և հալածական առնէ . և հարեալ  
 սպասաւորութի՝ անցուցանէ զամբա-  
 րիչան Զուլիանոս՝ հանդերձ բաղձոս  
 Թք այրուծիոյն, և մեծարի ՚ի նմանէ  
 յոյժ . և խնդիրս առնէ՝ զի մի տարցէ  
 զնա ՚ի Պարսս Է իւր, իբր անկարգու  
 ձիաւարել . և յանձն առեալ Զուլիա-  
 նոս՝ խնդրելով ՚ի նմանէ զօրս՝ և սա-  
 տանդս, և Տիրանայ խնայեալ յԱր-  
 շակ՝ որդի իւր Երկրորդ, տայ զնա զոր  
 զի իւր՝ զՏրդատ զԵրրորդ, հանդերձ  
 կնաւ՝ և որդւովք . և զԹոռն իւր ըզ  
 Տիրիթ, զորդի մեռելոյն Արտաշիսի՝  
 որդւոյ իւրոյ Անդրանիկանն . զօրս ա-  
 ռեալ Զուլիանու՝ հետայն առաքէ ՚ի  
 Բիւզանդիոն . և զՏիրան արձակէ յիւր  
 յաշխարհս . և տայ զիւր պատկերն՝ նը  
 կարեալ ՚ի տախտակս, յորում և զգի-  
 լաց ոմանց ընդ նմա . և հրամայէ ՚ի  
 կեղեցսոջ կանգնել յԱրևելից կուսէ,  
 ասելով Թէ որք միանգամ ընդ Հոօ  
 մայեցւոց իշխանութիւն են՝ զոյնպէս  
 առնել : Զոր յանձին կալեալ Տիրա-  
 նայ՝ առեալ բերէ, ո՛չ ամելով զճը  
 տաւ, եթէ խարէութի՝ Դիւաց երկը  
 պազին սլատկերը :

## Պրակ 14.

Այսպէս Սրբոյ Յուսկանն , և Դու-  
նիւն :

Սրբ' հասեալ Տերանայ 'ի գա-  
ւառն Ճարտայ' յարում Ար-  
քայական Եկեղեցոջն կա-  
մեցաւ կանդնել զպատկերն .  
զոր յախշտակեալ Սրբոյ Յուսկանն 'ի  
ձեռաց Արքայի , և ընկեցեալ յերկիր  
կոխեալ մանրեաց , զդացուցանելով  
Արքայի զիրին խորամանկու թիւն . ու-  
րում ոչնչ անկնդիր եղև Տերան , ըզ-  
մտաւածեալ 'ի Յուսկանոսէ ինքն մե-  
ռանիլ , իբրև զկոխող Թագաւորա-  
կան Պատկնրի : Եւ յաւելեալ բորոք  
բում շարութենն՝ զոր անէր ընդ Ար-  
բոյ Յուսկանն , յազագս հանապազորդ  
յանդիմանու թէ իբրոց յանցանաց . հը-  
րամայեաց՝ քալափեր հարկանել յեր-  
կար , մնչև 'ի հարկանելն աւանդեաց  
զհոգին . և յետ կատարման նր , թշնա-  
մանեալ լինէր անիծիք Տերան 'ի Տե-  
րունոյ Քահանայէն Գանիելէ , որ էր  
աշակերտ Արբոյն Գրիգորի . և Հիւպե-  
րետ հրամայեաց զնա ինզղամահ առ-  
նել . զոր բարձեալ աշակերտացն՝ Թա-  
ղեցին 'ի Միայնարանի նորին , որ կո-  
չի Հացեաց Գրախտ . իսկ զմարմնն

Սրոյ Յուսկանն՝ բարձեալ տարան  
առ Հայրն, ՚ի դեօղն թորդան. որե-  
կաց յԵպիսկոպոսապետունն՝ ամս 6:

Պրակ 15.

Ե՛կե շէ՛րք Զորայի ստեալ զորոն՝  
Դանայ, ՚ի Յուլիանոսէ, և սորայի  
— շէ՛րք — :

 Ուր սպանման Սրոյ Յուս-  
կանն, և քրտննջել Նախա-  
բարացն՝ եհաա առ Նահա-  
պետ Ռշտունեաց Զու-  
րայն. որ փոխանակ Մանաճհրի՝ Սպա-  
րապետ էր Հայոց՝ Հարաւային դըն-  
դին, և հրամանաւ Տերանայ՝ զօրօք  
դհեա Յուլիանոսի. որոյ լուեալ զայս  
պիսի համբաւ, ասէ ցզօրս իւր. մի՛  
վարեցցուք հրամանաւ այնորիկ, որ  
զայթակղութիւն արկանէ յԵրկրպա-  
ղութիւն ՔԻ, և սպանանէ զՍթանն.  
և մի՛ ճանապարհակցեցցուք այսմ ամ-  
ցարիչա թաղաորի: և համակամ իւր  
արարեալ զզօրոն՝ դառնայ, և եկեալ  
ամբանայ ՚ի Տնօրիս՝ մինչև տեսցէ,  
թէ զի՛նչ արասցեն այլ Նախարարն.  
Եայց՝ սուրհանդակքն Յուլիանոս յա-  
ռաջ ժամանեն քան՝ զգալն նորա, բե-  
րելով Տերանայ թուղթ, որ ունէր օրի-  
նակ այսպէս:

Թուրքի Յուստինոսի -- Տէրն :

**Ի**նքնակալ Յուստինոս՝ ճնուող ՚ի  
 Նաբարայ Արտամաղղայ որդի, և  
 յանմահութի ճակատադրեալ. Տէրա  
 նայ Գործակալի մերում խնդալ: Ըզ  
 զորս՝ զոր արձակեցեր ընդ մզ, ա  
 ռեալ Զորագլխի նոցին՝ ՚ի բաց դար  
 ձաւ. և մեք բաւական էաք յանթի  
 գնդաց մերոց զհետ առաքել՝ ունիլ  
 զնա, այլ թոյլ տուաք՝ վասն երկուց  
 պատճառաց. առաջին, զի մի՛ ասա  
 ցեն զհենջ Պարտիկք, եթէ բանութի.  
 և ոչ կամաւ ածեր զչորսն. երկրորդ,  
 փորձեալ զբո միամտութիդ: արդ՝ ե  
 թէ ոչ՝ ՚ի բունմէ կամաց արարնա զայն.  
 սատակեսցես զնա ազգաւմբ՝ առ ՚ի  
 չթողուլ մնացորդ, ապա թէ ոչ՝ եր  
 դուել ՚ի Ռաս, որ զթագաւորութե  
 շնորհեաց մզ, և յԱթենաս՝ որ զյազ  
 թութին, զի ՚ի դառնայն իմում՝ ան  
 պարտելի զորութի իմով վանեցից ըզ  
 քեզ՝ և զաշխարհդ: Տեսեալ զայս Տէ  
 րանայ՝ և յոյժ զարհուրեալ, առաքե  
 զՄարդպետն կոչեցեալ Զայր, հան  
 դերձ երդամբ, և կոչէ առինքն ըզ  
 Զորա: Իսկ զորաց նք տեսեալ ե  
 թէ լուեալ կան ամ Նախարարքն, ը  
 սովորական անմութութի մերոյ աշ  
 դիս, ցրուեցան ի բարանելիք ՚ի տունա

ի բեանց, և միայնացեալ Ջուրայ՝ դայ  
 առ Արքայ ս' չ կամաւ . և Արքայի ըլ  
 Ջուրա ի բուռն առեալ, ունի և զա  
 մուր նոցին զԱղթամար, և բառնայ  
 զամենեւին սատակմամբ : բայց զմա  
 նուկ մի՛ որդի Մեհնդակայ եզբօր  
 նի, փախուցեալ Դայեկացն՝ ապրե  
 յուցին . իսկ Արքայ փոխանակ նորա  
 կարգէ զԱաղմուծ՝ Տէր Անձաայ :

Պրակ 16.

Յազգս Լուսնն որդւոց Յասիւնն, և  
 յ-ըրրելոյ շԱԲ-նն փ-նէր-եհի :

Այց ի Տերանայ խնդրեն Նա  
 ի արարք Հայոց՝ այր արժա  
 նի կացուցանել յԵպիսկո  
 պոսուծի, փոխանակ Յուս  
 կանն . բանդի՛ որդւոց նորին ս' չ գո  
 վելի վարս ստացեալ, անարժանք ե  
 դեն Առաքելականին այնորիկ շնորհի  
 այլև՝ մահ և ս հասեալ նց յաւուրն  
 յայնս . յոյժ ահագին, և սարսափման  
 Լսողաց արժանաւոր : ի միում տեղ  
 ւոր շանթահար լեալ երկոցունց, ո  
 թոց Պապ, և Աթանազինէ կոչէին ա  
 նուանք . ս' չ թողուվ զաւակ հասա  
 կեայ՝ պատշաճ այնժ : Բայց մանուկ  
 մի՛ որդի Աթանազինի, որում Ներ-

սէս անուն ճանաչիւր, որ 'ի Կեօարիայ  
 էր 'ի հրահանգս. և զայնու ժամանկաւ  
 զնացեալ 'ի Բեզանդիոն՝ առնուլ կին  
 զգուսար Ապիոնիայ ուրուին Մեծի Իշ  
 խանի. և զն ս'չ կալոյ այր յաղգե Գրի  
 դորի, ընարեցին զՓառնեբեհն ոմն  
 յԱշտիշատից Տարօնոյ. և կացուցին  
 Քահանայապետ՝ 'ի տասներորդ ամի  
 Տիրանայ, որ կալաւ զԱթոռն ամս օր:

Պրակ 17.

ԵՒԷ շէ-ՇՐ 'ի Հ-դիոյ Ի-թեց-Սերուն՝  
 երթ-լի 'ի Ի-ն Երս, և Ի-ու-ոյ-ս-  
 'ի Ն-նէ:

 Եւ այսր ամի, ամբարիշտն  
 3 Յուլիանոս՝ արժանի շարի  
 թոյ խորհրդոցն, վերս ըն-  
 կալեալ 'ի փորատին՝ սատա-  
 կի 'ի Պարսս. զարձեալ Թագաւոր ու  
 նելով զՅովրիանոս, որ 'ի ճանապար  
 հի վախճանեալ՝ ս'չ ժամանեաց 'ի Բե-  
 զանդիոն: Իսկ Արքային Պարսից  
 Հապհոյ՝ զհեա նոյ կրթեալ, և խաբ-  
 կանօք կուէ զՏիրան առ Ինքն. զընելով  
 Թուղթ՝ այսպէս:

Թուղթ Հ-դիոյ ս-Սերուն:

Մաղգեզանց Քաջ, և Բարձակից  
 արեղական Հապոհ՝ Արքայից Ար

քայլ ի բարեօրոյ մերում յիշեալ, եղբայր  
 սիրելի Տիրան Հայոց Արքայ, ողջոյն  
 շատ: Այնպիսի ի վեր հասարակ թե ըզ  
 սերն հաստատուն պահեցեր՝ ոչ զա  
 լով ընդ կայսեր յաշխարհս Պարսից  
 այլև՝ զգունդն, զոր էառ ի քէն՝ ըզ  
 հետ յղեալ կողեցեր ի բաց: և զառա  
 ջինն՝ զոր արարերն, գիտեմք՝ զի մի ընդ  
 աշխարհ քո անցանիցէ՝ արարեր, զոր  
 ինքն իսկ առնելոց էր. ուստի՝ և մեր  
 պահապանքն գնդին վատարտեալ ի  
 բաց եկին՝ զքեզ պատճառելով. վն  
 որոյ՝ մեր ցատուցեալ, սալարի նոյ ցլու  
 արինն արբուցար. և քում թագաւո  
 րութեդ ոչինչ փասեցար, երդուեալ  
 ի Մեհր՝ մեծ Աճ. միայն փութաւ տե  
 սանել զմեզ, զի խորհեալ ինչ թողցուք  
 զքեզ՝ վն հասարակաց օգտի: Հայս  
 տեսեալ Տիրանայ, իսկ լողարեալ գնաց  
 առ նա. քանզի՝ արժանն տանէր զնա ի  
 տեղի հատուցմանն. զոր տեսեալ Հայ  
 հոյ՝ կշտամբեաց զնա բանիւք յանդի  
 ման իւրոց զօրայն. և զաչս նոյ կուրա  
 ցոյց՝ ուն զՍեդեկիային: Այնու թեկե  
 արդեօք՝ վրէժս ընդ Սրբոյ Առնն այ  
 նորիկ պահանքեցաւ, որով լուսաւոր  
 իւր աշխարհ, ըստ Աւետարանին ձայ  
 նի՝ գոչ Լոյս աշխարհի. յորմէ խաւա  
 րեցոյց Տիրան զՀայս, խաւարեցաւ և  
 ինքն. կալեալ զթագաւորութիւն՝ ամս  
 տասն և վեց:

## Պրակ 18.

Յաւագո՛ւ Ռաֆայէլայիցոցն էլ Շաղկոյ  
 շնորհիւ, Էսրայիցն է Յոնն :

**Այց** Հայոց թագաւորն  
 ցոյց փոխանակ Տերանայ՝ զոր  
 դի նորին զԱրշակ, ակնա-  
 ծելով ՚ի զորացն Հայոց . դի  
 մի՛ փոխանիչ առաջի արկելոց իւրոց  
 գործացն լինելին . այսպէս իմն պատեհ  
 համարեալ : Բարեբարութիւն անելով  
 իւր հաստատելով զարխարհս . նուա  
 ճեաց և զազգ Նախորդացն՝ պատանդս  
 առնելով յամենեցունց . և փոխանակ  
 Վահանայ Ամատունւոյ, Սպարապետ  
 կացուցեալ Հայոց արևելեայ դորուն՝  
 զհաւատարմ իւր զՎաղէնակ Սիւնի,  
 և նմա յանձն արարեալ զՀայս, ինքն  
 զհետ Յունական դորուն կրթեր : Եւ  
 հասեալ ՚ի Բիթանիա, և նստեր ա-  
 մրսս յաշովս . և ոչինչ կարացեալ առ-  
 նել . սին առ ծովուն կանդնէ՛ և առ-  
 իւծ ՚ի վր դնէ՛ մատեան ընդ ստիքն  
 ունելով . որ նշանակէ այսպիսի ինչ :  
 Քանզի՛ առ իւծ հզոր է ՚ի զազանս,  
 նոյնպէս և Պարսկականն՝ ՚ի թագա-  
 ւորս . և մատեան՝ ժողովիչ է իմա-  
 տութեան, որպէս Հաովմայելոց  
 Տերութիւնն :

## Պրակ 19.

Թե՛ որդե՛ս արհամարհեաց Արշա՛ն շմա-  
հասորն՝ Զու՛նաց :

**Ա**յն անուխի ապա ժամանակս՝  
յարեաւ խառվաթի Շայ  
հոյ Արքայի Պարսից՝ ի Հիւ-  
սիսականաց ազգաց . և Յու-  
նաց թագաւորեալ Վաղենտինեանոս .  
և գումարտակ ՚ի մէջերկրեայսս առա-  
քեալ՝ հալածական առնէ զզօրս Պար-  
սից . ապա՛ առաքէ առ Արշակ մեր թա-  
գաւոր թուղթ :

Թառ՛նի Վաղենտինեանոսի՛ սա Արշա՛ն :

**Ա**նքնակալ Վաղենտինեանոս Օգոս-  
տոս, հանդերձ աթոռակցաւ մե-  
րով, և թագակցաւ Վաղէսի՛ն Կայսե-  
րաւ . Արշակայ Հայոց Արքայի՛ իրն  
գալ : Պարտ է յիշել քեզ զլարիսն՝ որք  
անցին ընդ ձեզ ՚ի Պարսից անածից .  
և զերախտիսն՝ որ ՚ի մէջ ՚ի վաղնջուց  
մինչև ցքեզ . և հեռանալ ՚ի նոցանէ,  
՚ի մօտիլ ՚ի մեզ . ոպ՛ զի խառնեալ ընդ  
զօրս մեր՝ մարտիցես ընդ նոսա . և հան-  
դերձ գոհացողական բանիւք մերոց զօ-  
րավարացդ՝ առաքեսցես զհարկս աշ-  
խարհիդ . և առեալ զեղբայր քո, և որ  
ընդ սմա վտարանդիքս՝ ՚ի բաց անցին :

ո՛ղջ լեր՝ իմ հնազանդութիւն շատ  
 մայեցւոց Տէրութեա : իսկ Արշակ  
 և ո՛չ պատասխանի առնէ թղթոյն ,  
 այլ նշկահեալ արհամարհեաց զսա-  
 սա : նաև ո՛չ զհետ Հայոց միակցա-  
 ամենայն սրտի , այլ անձնահաճ և  
 զեալ պարծելով հանապազ ՚ի գիներ  
 բուս և յերդս վարձեանաց , քաջ , և  
 արի երեւիլ քան զԱքիլաս , իսկ ար-  
 զեամբք թերսրտեաց նմանեալ կա-  
 ղի , և սրագիւոց : վտարանդեալ մի-  
 րոց Նախագիւոցն , մինչև զամբար-  
 տաւանութեն ընկալա վարձ :

## Պրակ 20


3-ը-4- Սեբոյն Ներսէս և Բարեմու-  
 4-ս-Բեւնն՝ ոչ ինձնէ :

Երրորդ անի Թագաւորու-  
 թեն Արշակայ , եկաց Եպիս-  
 3 կոպոսապետ Հայոց՝ Մեծն  
 Ներսէս , Որդի Աթանազի-  
 նի , Որդւոյ Յուսկանն , Որդւոյ Վեր-  
 թանայ , Որդւոյ Սրբոյն Գրեգորի : և  
 զարձեւ ՚ի Բիւզանդիոյ՝ ՚ի կեսարիայ ,  
 և եկեալ ՚ի Հայս , զմմա կարգս ուղ-  
 զութեան իւրոց Հայրենեացն՝ նորո-  
 զեաց . այլ և՛ առաւել ևս . քանզի ըզ-  
 բարեպաշտութի Յունաց աշխարհին՝  
 զոր ևսևս , մանաւանդ ՚ի Թագաւո-

րեալ

րեալ քաղաքն, 'ի սմա նորոզէ: Ժո-  
 զով արարեալ Եպիսկոպոսաց՝ և հա-  
 մօրէն աշխարհականօք, կանոնական  
 սահմանադրութիւն հաստատեաց՝ զոզօր  
 մածութիւն. իբլլով և զանգթութենն  
 արմատ, որ բնաբար սովորութիւն էր  
 յերկիրս մերում: Բանդի՝ բորոտք հա-  
 լածեալ լինէին, իբր պիղծ յօրինացն  
 համարեալ. զուրուկս փախստեայտ առ  
 նէին, զի մի՛ յայլս փոխեցի ախան.  
 որոց դադար՝ անապատք, և անայիք.  
 և ծածկոյթ՝ վէճք, և մացառք. ոչ  
 յունքէ գտանելով միթարութիւն  
 թշուառութեանց: առ այսպիսիք՝ և  
 Հաշմք անդամովք՝ ոչ հաշուեալ լի-  
 նէին. և Հիւրք անծանօթք՝ ոչ ընդու-  
 նէին. և Օտարք՝ ոչ ժողովէին: Իսկ  
 նորա հրամայեալ ըստ դատաւաց դա-  
 ւառաց շինել Աղբատանոցս՝ 'ի իտլշս,  
 և 'ի զերծս տեղիս. զի փոխանակ Հի-  
 լանդանոցացն Յունաց՝ լինիցին 'ի մը  
 իթարութիւն մարմնոց վշտացելոց. և  
 բաժանեաց 'ի նոսա զաւանս՝ և զազա-  
 բակս, պողաբերեալ յարգեանց ան-  
 դատանաց, և 'ի կթաց արտականաց,  
 և 'ի զեղմից. զի պաշտիցեն զնս հար-  
 կա բացէ 'ի բաց. և նորա մի՛ ելցեն  
 ըստ բնակութեն իւրեանց. և յանձն ա-  
 բար Խազայ ումեմն, որ էր 'ի Մար-  
 դաց կարնայ՝ Սարգաւազ իւր:  
 Սահմանէ և յամ գեօղս՝ Աննս շի-

նել, զի լիցի Օտարանոցը, և Տեղի  
 Մենդեան Որրոց՝ և Այրեաց, և ան  
 ունոզաց տաժուսն: Ընեկ և յանա-  
 պատս և յանմարդ տեղիս՝ Եղբայրա-  
 նոցս, և Մենաստանս, և առանձնա-  
 կեաց խրճիթս. և Հայր՝ և Տեսուչ  
 նոցա կարգէ զՀաղիտս, և զԵպի-  
 փան, և զԵփրեմ, և զԳինգ՝ որ յազ-  
 գէն Ալիուսեաց, և զայլս ոմանաբա-  
 զումս: Եւ զերկուսս զայսոսիկ՝ Եւ  
 խարարութեց բառնայ յազգաց. մի՛  
 զմերձաւորաց ինամութն, զոր վնա-  
 շահելոյ ակփհական ազատութեանն՝  
 առնէին. և միւս՝ որ ՚ի վերայ մեռե-  
 լոց գործէին օճիրս՝ ըստ սովորական  
 հեթանոսութենն. և էր այնուհետև  
 տեսանել զաշխարհս մեր, ոչ որպէս  
 զբարբարոսս աշխարհակալ, այլ իբրև  
 զաղաքացիս համեստացեալ:



Պրակ 21.

Սղակունի ՏԵՐՄՈՅ, ԵԶԵՅԻ ԱՐԶՈՒՄ,  
 և ԵՐԵՄԻ ԱՐԲՈՅՆ ՆԵՐՈՒՆԻ Ի ԲԻ-  
 շակիսն՝ և ԳՐԵՅՈՒՆԵՆԸ ԶԳՐ-  
 ԳՆԵՐԱՆ :



Աստիկ, և յոյժ ահաւոր էր  
 ՚ի վերայ սնիրուաց Վաղէն,  
 տինեանոս : ուստի՝ և զլու-  
 զում իջեանա վն յափշտա-  
 կութեան սատակեաց . և զՏրոգոնոս  
 Ներքինապետ՝ այրեաց կենդանւոյն .  
 քանզի՝ երիցս հրամայեալ, ոչ զար-  
 ձոյց զյափշտակութի կնոջ միոյ այր-  
 ւոյ : Եւ ՚ի նմին առար՝ հասեալ այնց  
 հրեշտակաց, զորս ՚ի Հայսն առարեաց,  
 ցատուցեալ առաւել՝ զուցով խորի-  
 տալսն Արշակայ . և վն զի՝ ՚ի ժաման  
 յայնմիկ՝ առ ձեռն ունէր զբարկու-  
 թին, հրամայէ՝ զՏրգաա եզրայր նո-  
 րա զՀայր Գնէլոյ սպանանել : և Թէո-  
 դոսի՝ զօրու ծանու ՚ի վն Հայոց դի-  
 մել . որոյ հասեալ ՚ի սահմանս Հայոց՝  
 զարհուրի Արշակ . և առաքէ ընդ ա-  
 ռաջ նորա՝ զՄեծն Ներսէս . որոյ եր-  
 թեալ՝ և ՚ի հանդարտութի զԹաղա-  
 ւորն շրջեալ, մեծարի ՚ի նոցանէ յոյժ-  
 նա և՝ զպատանդսն ինդրեալ, առնու  
 և դառնայ : և կոյս մի՝ անուն Օլով-

պիտոյայ յազգէ կայսեր՝ կին անէ Ար  
շահայ: Բայց՝ կայսերն բարերարու  
թի արարեալ Մանկանն Գնէլոյ՝ յա  
ղագս զուր ՚ի նոցանէ մահաւ հօրն նո  
րա Տրդատայ . տայ նմա զպատիւ Հի  
պատտութե՛ն , և գանձա յորովս : Ընդ  
որ խանդացեալ Տիրիթ , խորհեր նմա  
չարիս հանապաղ , սպասելով ՚ի զիպօղ  
աւուր :

Պրակ 22.

Ենէ՛ որդե՛ ելի Խառլոս-Բիւն Արշակոյ  
ընդ Գնէլոյ , և խն Տիրանոյ :

Սի՛ Գնէլ եկեալ յաւանն  
Խ կուսալ , որ յտփն Արա  
գանն կոչեցեալ լերինն՝ առ  
կուրացեալ հօրն իւր Տիրան,  
զի ցախժամ կենդանի էր , և Տիրա  
նայ սգացեալ՝ ողբալով դառնապէս ըզ  
Տրդատ որդի իւր՝ զՀայր Գնէլոյ , իւր  
զինքն ունելով պատճառս սպանման  
նր . վն որոյ՝ տայ Գնէլոյ զնժ ինչ իւր ,  
և զկալուածս զիւզից՝ և Դաստակեր  
տաց . և ՚ի նմին աւանի ՚ի կուսալ հրա  
ճայէ բնակիլ : Ապա առնու Գնէլ իւր  
կին՝ զՓառանձեմ ոմն անուն՝ յազգէն  
Սիւնեաց , և թաղաւ որպպէս արարել  
հարսանիս , տայ առատապէս պար  
զևս ամենայն Նախարարացն . որոց

Հաճեալ չ նա, և սիրեալ՝ ետուն զզա  
 ւակս իւրեանց, զորս առեալ մեծա  
 պէս հանդերձեաց զինու, և զարդու .  
 և յաւելին ևս սիրել զնա : Աստանօր՝  
 եգիտ Տիրիթ պատճառս քու թէ . և  
 մատուցեալ առ Արքայն՝ հանդերձ բա  
 րեկամաւ իրով Վարդանաւ՝ Չինակը  
 բաւ Արքայի, որ ՚ի Մամիկոնեան Տոհ  
 մէն էր, ասեն . ոչ գիտես՝ զի խորհել  
 է Գնեւոյ՝ սպանանել զքեզ, զի ինքն  
 փոխանակ թագաւորեսցէ . ահա՛ տես  
 Արքայ՝ զնշան իրին, զի բնակեցաւ  
 յԱյրարատ՝ ի կալուածս ձեր թագա  
 ւորաց . և սիրտ ամ Նախարարացն  
 եղև ընդ նմա . քանզի՝ կայսերքն նիւ  
 թելով զայդ, ետուն նմա զպատի  
 Հիւպատոսութեդ . և դանձս սաս  
 տիկս, որով պատրեաց զՆախարարսն :  
 Երդնոյր Վարդան յարեն Արքայի և  
 ասէր, իմովս ականջօք լուայ ՚ի Գնե  
 ւոյ՝ զի ասէր . թէ՛ ոչ թողում Հօր  
 Էդքօր իմում՝ զվրէժ մահուան Հօր  
 իմոյ՝ որ վս զորա եղև : Այսմ հաւա  
 տացեալ Արշակ, յղէ զնոյն իսկ Վար  
 դան առ Գնեւ, թէ՛ ընդէ՞ր բնակե  
 կեցար յԱյրարատ, և լուծէր զկարդ  
 Հայրենեաց : Քանզի՝ սովորութիւն  
 էր յԱյրարատ բնակիլ միայն Արքայի,  
 և որդւոյ նր միոյ՝ զոր փոխանորդ թա  
 գաւորին պահէին, և այլոց Արշակ  
 ունեաց բնակիլ ՚ի Գաւառս Հաշտե

նից, և Ազիոսից, և Առերանուց,  
 Հանդերձ ոսկեօք, և մտովք յարքու-  
 նուստ: և արդ՝ ընտրելի է բեղ, կամ  
 ընգունիլ զմահ, կամ գնալ յԱյրա-  
 բատոյ, և արձակել զուստերս Նախա-  
 բարացդ՝ ի բէն: զայս լուեալ Գնէլոյ՝  
 արար զհրամանս Արքայի, և գնաց յԱ-  
 զիովիտ և յԱռերանի: Բայց՝ Տերան  
 հայր նորա՝ պատգամս խիտս յղեաց  
 առ որդին իւր Արշակ: վն որոյ՝ հեղ  
 ձամահ եղև յիւրոց Սենեկապետացն՝  
 ի գաղանի հրամանէ Արքայի, և ի նը-  
 մն աւանի կուսալ թաղեցաւ, ոչ ար-  
 ժանի եղևալ հարցն գերեզմանաց: Թէ  
 արդեօք՝ զփոխարէն Դանիէլի առնն  
 Ա՛ջ հատոյց: որովք չափով չափեաց,  
 չափեցեալ եղև ըստ գրոյն:

Պատկ 23:

Դարձեալ ի սէրու Արշակոյ ընդ Գնէ-  
 ւոյ, և ողորոնել զնս:

**Պ**ա՛ ելանէ Արքայ զթի-  
 կամբք Մասեաց՝ առնել  
 որս յիւրում սիրեցեալ գա-  
 լառի՝ ի կովգայովաի, և ե-  
 ղեալ որս սաստիկ, ուրախացեալ Ար-  
 շակ՝ ի գինիս պարծէր, ոչ այլոյ ու-  
 բուր ի թագաւորաց՝ մեզանիւ այնչափ  
 բազմութիւն էրէաց՝ ի փում ժամու:

Ատանօր՝ նորոգեն զնենգութիւնն՝  
 Տիրիթ, և Աարդան՝ ասելով, Գնէ-  
 լայ բազում էրէս՝ քան զայս ունիւ-  
 ընդ նոյն առուս՝ յիւրում լերինն, որ  
 Հասապիվան անուանի. որ իմայրենի  
 հառչն իւրոյ՝ Գնէլայ Գնոււնոյ հա-  
 սեալ էր ցնա. վն որոյ՝ առաքէ առ  
 նա հրովարտակ այսպէս: Արշակ Ար-  
 քայ՝ Հայոց Տեճաց Գնէլայ որդւոյ ի-  
 մոյ խնդաւ: Տեսցես տեղիս բաղէրէս  
 ՚ի լերինս ծաղկաց զպուրակացիր ջրով-  
 և պատրաստեսցես. զի եկեալ ըն ար-  
 ժանեաց թաղւորաց՝ հանդիպեսցաւք  
 որսոց: Եւ երազ զհետ հրովարտա-  
 կին երթեալ Արշակայ. խորհէր՝ եթէ  
 ոչ ըստ հրամանին գտցէ որարեալ  
 Գնէլայ, պատճառս ՚ի վերայ եղեալ  
 իբր թէ՛ չարակնեաց զուրախանանն ար-  
 քայի՛ կապեսցէ զնա: Այլ իբրև ետես  
 զոր չէր երբէք տեսեալ այնպիսի պատ-  
 րաստութի՛ որսոց, և բազմութի՛ է-  
 րեոց, խոցեալ խորհրդովք նախանձու՛  
 և կասկածանաց, հրամայեաց ՚ի նոյն  
 որսին սպանանել զԳնէլ. իբր թէ, ը  
 խաբս ինչ՝ վրիպակաւ էրէոյ կամ լով  
 ձգել, նմա պատահեաց նեան. որոյ  
 առեալ զայսպիսի հրաման՝ վազվազա-  
 կի կատարէ. ոչ այնչափ յաղագս հրա-  
 մանի թաղւորին, քան թէ վն կա-  
 մացն Տիրիթայ՝ իւրոյ սիրելւոյ: Իսկ  
 Արշակայ հանդերձ՝ Նախարարօքն

իջուցեալ ՚ի դաշտ մի Աղիսփոսի, զորն  
Գնեւոյ՝ Թաղեաց Սրբունական Քա  
ղաքին Ջարիշատի, ՚ի չմեղիկս եղեալ  
կոծ մեծ առնէ :

## Պատկ 24.

Երէ՛ ո՛րդե՛ ժգրեցա՛ւ Արշի՛ սանու  
լի՛ն Գնեւոյ, յորէ՛ ելի՛ Պոգ :

Եպէտ՝ և Արշակ կարծեաց  
Թ զործել զանխուլ զշարիան,  
այն՝ որ ո՛չն ծածկի յամենա  
տեսականէն Այ, յայտնի  
և աշխարհի՛ առ ՚ի մեղուցելոյն պակու  
ցուին, ույ զմահն Տիրանայ՝ և Գնե  
ւոյ : Քանզի՛ գիտացեալ իմ սրբաբ,  
իմացաւ զայս և Մեծն Ներսէս, և  
անէծ զԱրշակ՝ և զառիթ սպանմանն.  
և գնացեալ նստաւ ՚ի սուգ զաւարս  
բազումս՝ ույ Սամուէլ զմ Սաւուղայ :  
Իսկ Արշակ՝ ո՛չ զզջացեալ ապաշա  
ւեաց, այլ անամօթեալ՝ ազահելով  
՚ի գանձս սպանելոյն, և ՚ի ժառանգու  
թի. յաւել՝ առնուլ զկին նորին զՓա  
ռանձեմ, յորիկ եղև պատանի մի՛ որ  
անուանեցաւ Պապ : Այս Փառան  
ձեմ զործեաց՝ և զանլուր և զանկաս  
կածելի շարիս, և զսարսափման լսե  
լեաց արժանաւորս : անարժանի՛ ո  
մամբ սուտ անուն Քահանայի՛, ՚ի կե

նաց Դեղն՝ զմահացուն խառնեալ, եւ  
 Օլոմպիադայ՝ առաքին կնոջ Արշա-  
 կայ, եւ ելոյծ ՚ի կենցաղոյս՝ սակս տիկ  
 նութեն մախանաց : Նոյնպէս՝ զՎաղի  
 նակ տայ Արշակայ սպանանել, եւ փո  
 խանակ կարգել զԽր Տայրն՝ զԱնտիո  
 քոս :

Պրակ 25 :

ՍԴՆՆՈՒՆ ՏԻՐԻՒՄ :

**Ի** Բրեւ ելև խաղաղութի շատ  
 Տոյ ՚ի Տիտիսականաց աղ-  
 զաց, եւ պարսպ առեալ ՚ի  
 պատերազմացն յայտնեցաւ  
 զցասումն՝ զոր ունէր առ Արշակ՝ զն  
 ոչ նմա, այլ Կայսեր Տարկելոյ զայն  
 քան ամս . սակս որոյ՝ առաքե առ նա  
 Արշակ զՏիրիթ՝ եւ զնորին սիրեցեալն  
 Վարդան, արժանի պատարադօք՝ ինդ  
 բել զՏաշտութի : Բայց քանզի՝ քինս  
 ինդիր անցելոց մարտից կամեցեալ  
 լինի Շապուհ, ինքն ելանէ պատե-  
 րազմել Է Յոյնս . որոյ աղագաւ՝ ինդ  
 բէ զԱրշակ մեր Թագաւոր՝ Տանդերձ  
 մմ զօրօքն ընդ իւր լինիլ : Իսկ Ար-  
 շակ՝ ոչ կամեցաւ իւրովի երթալ, այլ  
 բարուրս եղեալ՝ առաքե գոյզն գունդ-  
 զկնի Շապուհոյ . եւ իւր բարկացեալ Տի-  
 րիթայ՝ ընկեմու զնա ՚ի պատուոյն .

որպէս զի՝ թէ՛ ի նորա հրապուրանաց  
 եղև այն՝ յաղագս ատելու թէ՛ն՝ զոր  
 ունէր առ Յոյնս . և առաւել ևս՝ գր  
 դրակ զԱրքայ՝ Վասակ զինակիր նորա ,  
 նախանձ պահելով ընդ եղբօրն՝ վասն  
 ազգեան միոյ հարձի : Վա՛ որոյ՝ նախա  
 տեաց զնոսա Արքայ՝ ամօթալեօք բա  
 նիք՝ և կսկծեցուցանողօք : Արոյ ո՛չ  
 կարացեալ տանել՝ այնպիսում վատ  
 թարութե՛ն և պարսաւանաց , դէմ ե  
 դեալ զնացին առ Հապուհ հատուած :  
 Ընդ որ՝ առաւել ևս զայրագնեալ  
 Արշակ , հրամայէ նոյն Վասակայ՝ ըզ  
 հետ կրթել քաղմաձեռն գնդաւ , զի  
 ուր և հասցէ՝ սպանցէ զնա . զոր ո՛չ  
 հեղգացաւ կատարել Վասակ , թէ  
 պէտ՝ և եղբայր նի էր Վարդան : Եւ  
 ինդրեցաւ արիւն անպարտ ՚ի Տրեթ  
 թայ ամպարչուէ՝ ըստ անիծիցն՝ Ներ  
 սիսի . և Վարդանայ ՚ի հարազատէն  
 իւրմէ՝ մեռանիլ յեղբօրէ :



Պրակ 26.

Պ ԵՐԵՐԵ ԸՆԴԵՅ ' Ի ՏԻՔՐԱՆՆԻԿԵՐԻ :

**ՅԷ** Հայրս հայ հասանե  
 ' Ի Տիգրանակերտ՝ մեր բա  
 ղար : կան ընդդէմ նր քա  
 ղաքացիքն՝ հանդերձ գա  
 մարտակ գնդան . քանզի՝ Անտիոքոս  
 Նասապետ Սիւնեաց, որ աներ էր Ար  
 շակոյ՝ և Աերակացոս քաղաքին, հրա  
 մայեաց աղիել ընդդէմ շապհոյ : և  
 ո՛չ միայն արգել, այլ և ո՛չ հրեշտակ  
 ապաքեաց առնա, և ո՛չ զնորայնն ըն  
 կալա : Եւ հզօր կռուոյ եղելոյ՝ գրա  
 զուսն 'ի պարսիցն սպանանեն . և 'ի  
 պարտութեն մատնեալ գնդին շապհոյ,  
 դառնայ անդրէն 'ի Մծրին . և հան  
 գիտ առեալ զօրացն՝ և արծարծեալ  
 յաշխատութեն, խնդրէր առնուլ ըն  
 Տիգրանակերտ . և ո՛չ թուլացուցին  
 նմա յառաջախաղաց դունդբ, և Լըր  
 տեսք՝ պատաղել զայնոս, իբր թէ  
 Զունաց հանդարտիցի գործ . և Հայ  
 հոյ յառաջ անցեալ, գրէ առնս՝ օրե  
 նակ զայս :

Մազդեզանց քաջ Հայրս՝ Ար  
 բայից Արբայ, Տիգրանակերտեցեաց,  
 որք ո՛չ ևս էր անուանելոց 'ի մէջ ա  
 թեաց՝ և անարեաց : Ես կամեի 'ի ձեռն

սկսեալ յամ առաջի կայ քաղաքս իա  
 զաղու թի՛ր և քաջօրէն աղատութի՛ր ըզ  
 Տուան առնել. և եթէ դուք Տիգրա  
 նակերտեայք՝ որք առաջին էք, ո՛չ շա  
 չատանութի՛ր ասեմ, այլ ՚ի մտէ ու  
 ղե որութե՛ս՝ ընդդէմ կացէք ինձ. ՚ի  
 ձէնք ուսցին և այլք՝ զդոյն առնել.  
 այլ ՚ի դարձին իմամ, այնպէս բարկու  
 թի՛ր վանեցից զձեզ, զի կրկին եղեջիք  
 օրինակ խեռեալ ստահակելոց:

## Պրակ 27.

Ե՛կէ ո՛րդէ Արշալուստան շինեցա՛ն և ի  
 րօրէցա՛ն, և սաս Ա՛նի:


 Այ՛ց՝ Արշակ և ս ժարհեցաւ  
 առնել զործ անմտութե՛ն ՚ի  
 թիկանց կուսէ շերինն Մա  
 սեայ՝ շինէ Չեռակերտ, ժո  
 ղով մարդկան մեղաորաց: և ս հրա  
 ման, որ որ անկեալ՝ անդր բնակիցէ,  
 մի՛ լիցին ՚ի վերայ նորս իրաւունք դա  
 տաստանի. և նոյն ժամայն՝ ծովացեալ  
 լցաւ մարդկութի՛ր հոյիանն ամ. բան  
 զի՛ Աւանդաուք, և Պարտականք, և  
 Տաուայք, և Վնասակարք, և Գողք,  
 և Սպանօղք, և Վրահանք, և այլք  
 այսպիսիք՝ փախուցեալք անդր անկա  
 շէին, և ո՛չ կայր նոյ՛ այց՝ և խնդիր:

և բազում անգամ բողոքեալ Նախա  
 բարացն, ո՛չինչ լուսա նոցա Արշակ  
 մինչև առ շապուհ ունիլ նոցա բողոք:  
 Եւ եղև ՚ի դառնալն շապհոյ ՚ի Յու  
 նաց, առաքեաց զի ՚ի Սպարապետաց  
 իւրոց, և Հայ գունդ ընդ նմա, թէ  
 դէպ լինիլ ունիլ զԱրշակ. և նա խոյս  
 եա ՚ի նոցանէ զկողմամբ Կաւկասայ՝  
 Վրաց միաբանելով իսկ Սպարապետն  
 Գարսից ելեալ ՚ի Հայս, ՚ի ձեռնառու  
 լինելոյ Նախարարացն, առնա զա  
 մուրն Անի. և գերե զնմ գանձա ար  
 բունի՝ որ ՚ի նմա. այլև՝ զոսկերս Թոթա  
 ւորացն. ո՛չ դիտեմ թէ՛ վն նախաարինս  
 առնելոյ Արշակայ, եթէ՛ վն Հմայից  
 Հեթանոսականաց. զոր ապա մազ  
 թեալ Նախարարացն՝ Թափեցին, և  
 Թաղեցին յաւանին՝ Սղոս, որ յօտինն  
 Արաղածն կոչեցեալ վերին. քանզի  
 ո՛չ գիտացին ընտրել զոսկերս հեթա  
 նոսացն՝ և հաւատացելոցն, զի ընդ  
 միմեանս էր խառնակեալ Գերոզացն.  
 յազազս այնր՝ ո՛չ արժանի համարե  
 ջան ՚ի գիրս Սրբոցն Թաղել ՚ի Վաղար  
 շապատ քաղաքի: Եւ Նախարարացն  
 Հայոց ժողովեալ՝ դիմեցին ՚ի վերայ  
 Արքունական Չեռակերտին՝ Արքա  
 շակարանի, և հարին զնա արով աւա  
 րի՝ յառնէ մինչև ցկին, բաց ՚ի աղայո  
 ջըն սանդիացեաց. քանզի՛ գառնա  
 ջեալ էին ՚ի վերայ ծառայից իւրեանոյ:

և յանցաւորաց : Չոր թէպէտ՝ վաղ զի տացել Մեծին Ներսիսի, ո՛չ յառաջ քան զկոտորելն՝ ժամանեաց հասանել . այլ ՚ի կատար գործոյն հասեալ եզիս բաժանեալ զտղայս կոտորելոցն, զի վարեացեն ՚ի գերութեն, որպէս ըզհետաւոր թշնամեաց . զորս թափեալ Մեծին Ներսիսի, հրամայէ կրել որթովք ՚ի դամ մի . և դարմանա, և սնուցողս նոցին կարգեալ . որք յետոյ անուանեցեալ անուանեցան Արթը՝ այնորիկ աղաղաւ :

## Պրակ 28.

Առաւել Տեգրուն-իւրոտ՝ և ընթացի յանդուն :

Սկի շապուհ եկեալ ՚ի Տեգրանակերտ, դարձեալ աղիւցին՝ ընդդիմամալ նմա . և եկեալ ՚ի պարիսպն՝ աղաղակին . գնալ ՚ի մէնջ՝ շապուհ, զի մի շարիս յերկրորդումս ընդ քեզ՝ առաւել և սքան զտառաջինն՝ անցուցանիցեմք պատե՛րազմաւ : Եւ նա պատասխանեաց . ո՛վ Քաղթը ՚ի Հայոց, որք զանձինս արդելեալ պահէք չէ պարզս պօք Տեգրանակերտի, և արտաքս ձայն արկանէք սպառնալեաց . զի քաջ ա-

րանց է՝ յընդարձակ, և ՚ի դաշտի կը  
 սուել. և կանանց գործ է՝ արգելուլ  
 փակել զհնքեանս յերկիւղէ՝ առ հան-  
 դերձեալ կտիւն: և զայս սասցեալ  
 զարձաւ առ Յոյնսն գերեալ՝ զհնու-  
 օրս. ասէ՝ թէ ձերով մարտիւ առից  
 զքաղաքս, զամենեւեան զձեզ արարից  
 ազատս՝ հանդերձ ընտանեօք ձերովք:  
 և Պարսկական զօրուն՝ շուրջ զքաղա-  
 քան հրատայեաց ընթանալ և նե-  
 փիք խոցտել զ՚ի վր պարսպին: և  
 Յունացն մատուցեալ բանութի յե-  
 ցուցին ՚ի պարիսպն՝ զկուլեցեալ Էշն.  
 և այս գործի մեքենայից անուառո՛ր  
 յերից երից արանց մղելով տարեալ:  
 ՚ի ներքուստ ակրովք, և երկրերա-  
 նովք, և կոցաւոր մըճովք փորելով  
 զհիմունս. և նդահարս արարել զայն՝  
 որ ՚ի Հայկազնուոյն Տիգրանայ՝ հոճել,  
 և յարմարեալ որճուք, քակեալ ըն-  
 կեցին, և հուրս ՚ի դրունսն վառեալ.  
 և յիմ կողմանց հուր, և բարիք, և  
 նեաք, և տեգք՝ ձգեալ լինէին. և խոցո-  
 տեալ մերքն՝ յապուշ գառնային: Է՛ր ՚ի  
 ներքս մտեալ բուրբ զօրն, և ձեռն  
 Պարսկական սչ զօրէր բազմախողիող  
 երկաթն արեամբ արբուցանել՝ միւ-  
 չև ապաժոյժ արիւն սպանեացն լը-  
 ցեալ ՚ի հիմունս՝ ծաւաւեր: այլ Յու-  
 նականն ձեռն ՚ի բթթել ական՝ հըր  
 ձիգ զամենայն երկիրն առներ զփայլ

տակերտան . և շապուհ զմնացեալն 'ի  
'ի կատարածէն գերեալ , զառնայ չուէ  
'ի Պարս . և հրեշտակս՝ առ որ 'ի Հայս  
գունդքն կին առաքեալ . ապա՝ ազատ  
զԱրմենացն հրամայէ առնել զՏոհմս :

## Պրակ 29.

Յուզո գոթերուի Արշալայ ընդ Ն-  
իւրուրուր , և լուրնորի երեւ-  
ոյն 'ի Բիււնդիւն :

 Արձեալ յարեալ խառվու-  
թի Հապհայ 'ի նոյն ազգաց .  
և խաղաղութի 'ի Յոյնս շրջե-  
ցաւ : սոյ խաղաղութի նոյն խառ-  
վութի , և նոյն խառվութի 'ի սոյն խաղաղու-  
թն . որ զան , վախճան միոյն՝ միւսոյն  
լինին սկզբունք . քանզի հիւանդացել  
Վաղնափնեանս 'ի բերդին՝ որ կոչի  
Բերդխան՝ վճարեցաւ 'ի կենցաղոյս .  
եղբորն փոխանորդելով զտէրութինն .  
յետ բարերախառնոյն Վաղնսի , պա-  
տերազմաւ Գոթացն յաղթութի զար-  
ձին : և սոյն հետայն՝ առաքեալ զոր  
'ի Միշաղեստ , և 'ի Հայս՝ յաղագս  
տուներս զորուն յողնութիւն շապհայ  
բայց՝ Արշակայ եկեալ Արացի գըն-  
դաւ՝ ժողովեալ զսակաւս՝ և յիւր ժը-  
տերմաց , և սոյն պատերազմ ընդ Նա-

Խարարան ընդ այնօսիկ՝ ինդրելով ըս-  
 վրէժ ձեռնակերտին իւրոյ Արշակա-  
 ւանու : Միարանեալ և նոցա՝ առաջ  
 նորդու թի՛ Ներսէ՛հի որդւոյ Կամա-  
 րայ . ընդ գիմանան Արշակայ պատե-  
 րաղմաւ : Եւ հզօր մարտի եղելոյ , բա-  
 զումք յերկաքանչիւրոցն անկան՝ ի կող-  
 մանցն : Քանզի՛ արք զխպեալ արանց ,  
 ոչ որ զպարտութի՛ յանձն առնայր :  
 և մինչ դեռ յայսմ էին՝ հասանին զօրք  
 Կայսերականք . ապա տեսեալ Արշա-  
 կայ՝ եթէ թշնամիք են նի՛ Հապուհ , և  
 Վաղէս , և իւր՝ Նախարարն . տարակու-  
 սել յամենեցունց յղէ առ Մեծն՝ Ներ-  
 սէս՝ բնումանգամ աղաչելով . խոստա-  
 նայր դառնալ յսմ ճանապարհաց ըս-  
 րեաց , և լինիլ ըստ կամաց նի՛ , և ա-  
 պաշխարել ի բուրձ , և ի մոխիր . մի-  
 այն՝ զի նա եկեացէ , և արասցէ իա-  
 զաղութի՛ , և թափեացէ զնա՛ ի ձե-  
 աց հզօրացն Զունաց . սապէս և ի  
 Նախարարացն ստէ՛պ ստէ՛պ զմիմեանց  
 զկնի գային մաղթանքն՝ նորին՝ աղա-  
 քաւ . նաև՝ Եպիսկոպոսաց մողով ա-  
 րարեալ՝ պաղատանս մատուցանէին ,  
 զի մի՛ անխոյժ արասցէ զկորստենէ իւ-  
 րոյն վիճակի : Ապա՛ հաւանեալ Մե-  
 ծին Ներսիսի՛ եկն ի մէջ նոցա , և ա-  
 րար խաղաղութի՛ . լսելով նմա թա-  
 գաւորին , և Նախարարացն , բաց ի  
 Նահապետէն Արծրունեաց Մեհրու

ժանայ, և ՚ի նորին քեռաննէն Վա-  
հանայ Մամիկոնէի, որք անլսող ե-  
ղեալ՝ գնացին առ Հապուհ: Իսկ այլ  
Նախարարք ամ հաստատեցին ուխտ,  
զի յայնմհետէ թաղւորն վարեցի ուղ-  
ղութի, և նորա ծառայեսցեն միամը-  
տութի. և այս ՚ի մէջ նոցա: Եւ առ  
զորսն Զունաց երթեալ Սրբոյն Ներ-  
սիսի, աղաչէր՝ մի ինչ աշխարհիս մե-  
ղանչել: այլ առնուլ զհարկս, և զորդի  
Արշակայ զՊապ՝ հանդերձ ամ Նա-  
խարարացն որդւովք՝ պատանդս, և  
գառնալ: որում լսող եղեալ՝ Քաղոր,  
և Մեծն Թէոդոս Զօրավար, գառ-  
նայ առ կայսրն, պատանդօքն հան-  
դերձ, Է իւր տանելով զՄեծն Ներ-  
սէս՝ թղթով Արշակայ, որ ունէր օրի  
նակ զայս:

### Թուոյն Արշակոյ առ Վաղիս:

Արշակ Արքայ Հայոց Մեծաց՝ և  
ամ Նախարարք Արամեան աղինա:  
Տեառն իմոյ՝ ինքնակալ Վաղեսի Օ-  
գոստոսի, և որդւոյ քում՝ Գրացիա-  
նոսի կայսեր՝ ինդալ: Մի գիցե ինք  
նակալդ ՚ի մտի՝ եթէ առատել զձեզ  
նշահահեցար, կամ իբրև զհզօրս ինչ  
վարկանելով, արձակեցար գունդ՝ հէն  
յիբկիր Զունաց: այլ մեծի խոսովու-  
թեդ՝ որ ՚ի ձերում միջի շարժեցեալ

եղև, գիտակ եղևալ՝ երկուցեալի՝ Հաս  
 հոյ՝ եթէ ոչ ոք թափէ զքեզ՝ ի ձե-  
 ոաց նորա, օգնեցաք նմա դոյղն  
 զնդաւ: այլ ոչ ես ինքն Արշակ՝ եկի  
 ընդ նմա, զվիամտութիւն ձեզ պահե-  
 լով. վնորոյ, աւերեալ՝ գերեալ զաշ-  
 իաբհս մեր, մինչև դոսկերսն անգամ  
 զՀարցն՝ բրեաց ի գերեզմանացն: Եւ  
 Արշ՝ հաւատացեալ ձեր եղելոցս, զա-  
 ոաջին սէրն առ ձեզ հաստատուն պա-  
 հեցէք. և մք՝ առ ձեզ մտերիմն հա-  
 տուցուք ծառայութի: Իսկ Աաղէս՝  
 ոչ զթուղթն ընթերձաւ, և ոչ ետեօ  
 զՄեծն Ներսէս. այլ բացէ՝ իբաց ար-  
 տասահմանել զնա հրամայէ, և սրոյ զա-  
 մնայն պատանդսն մատնել:

Պրակ 30.

Յաւագ արտասահման Լիւելայ Մեծի՛ն Եւ:  
 Ի-Ի, Լ-նի-նիլ Կո-տի-ու-Լ ի ԿլէԻ  
 -նի-նի: Եւ Բե՛ ո՛րդե- իեր-  
 իրե-ու Լիւելն ի Լիւելն ԻԵ  
 ն-մոյն:

Ժամանակին յայնմիկ՝ էր յա  
 թոռ Եպիսկոպոսութեանն  
 Բիւզանդացւոց՝ Հոգէմար  
 տըն Մակեդոնի: Եւ իբրև  
 ել հրաման արքունուստ, սոյ զնրան

գամ

գամ խաբօղ և դրժօղ Արքայի . մա-  
տուցեալ առ նա՝ ոմանց՝ ի Հերձու՛ւ  
ժողաց՝ Աղանդոյն Արիօսի՝ ստեն . և  
Թէ՛ դաւանեա ընդ մեզ . Թափէ զքեզ  
Հայրն մեր Մակեդոնն . որում ոչ հա-  
ւանեալ՝ արտորեցաւ : ՚ի նաւուզիղն  
ինեւրոյ՝ ըստ խտտաշունչ օգոց ձմերաց  
նոցն , ընկեցեալ ՚ի կղզի ինչ անասաւա՛  
քարդեաց զնաւն : և Նաւորդացն՝ ոչ  
իշխեցեալ մակուկաւն նաւել , մնացին  
տաղնասպեալ՝ սուտելով զարմատ ան-  
տասին . այլ ՚ի տեսչութեն Այ՛ կե-  
րակրեալ ինեխն ամիսս ութ ՚ի ձկանց ,  
չորս ծով ընկենոյր կենդանիս : Բայց  
Պապայ յանձն առեալ՝ հանդերձ պա-  
տանդօքն , Թափէ Մակեդոնն :

Պրակ՝ 31 :

Թէ՛ ո՛րդէ՛ ի գրեաց Աբրահ Գեղեցի  
Ն-տ-ր-ր-ն . Եւ՛ ի-ն ի-ր-ո-յ խ-  
ր-ոյ Ե-դ-ի-ն-դ-ո-ի :

 Հեռանալ Մեծին Ներսի-  
սի , ստեաց Արշակ Թմ Նա  
խաբարաց սխաին , զոր եզ  
ընդ նոսա , և ինդրեաց ըզ  
քէն Չեռակերտին իւրոյ՝ Արշակաւա  
նու : Եւ՛ կոտորեաց զբազում Նախա  
բարս : Մանաւանդ՝ զազգն Կամաարա

կանաց բառնայ 'ի միջոյ' շարակնելով  
 ազատեալ յամուրն Արտազէրս, և 'ի  
 քաղաք Ոստանի նոց Երուանդաշատ .  
 և կոչեալ առ ինքն 'ի լեւեալ արքունիսն  
 Արմաւիր' իբր զաղգականս իւր 'ի պատ  
 ճառս պատուոց, և մեծարանաց . միա  
 հաղոյն՝ զարս և զկանայս հանդերձ  
 մանկամբքն, հրամայեաց կոտորել, և  
 ոչ չք 'ի նոցնէ ապրեցաւ : Բայց Սպին  
 դարատ՝ որդի Արշորի, քանզի ունէր  
 երկրորդ կին Արշակունի . որ և բնա  
 կեցաւ 'ի նորին ժառանգութե՛ն, 'ի կող  
 մանս հարօնոյ, և Հաշտենից . իբր  
 տրտունջ զհօր եղբօրէն եղեալ զՆեր  
 սէհէ . որոյ աղագաւ՝ և ոչ 'ի կոտոր  
 ման նոցա զիպեցաւ . այլ ահ զբօթն՝  
 հանդերձ որդւովն Հաւարշաւ, և  
 Գաղաւսեի, և բոլոր բնտանեօք՝ զը  
 նաց փոխատական 'ի Յոյնս :

Բայց 'ի զնախն Մեծի Ներսիսի 'ի  
 Յոյնս, էր ձեռնադրեալ զՍարկա  
 ւազն զԽազ՝ յԵպիսկոպոսութիւն  
 Բազրեանդոյ, և Արշարունեաց, և  
 հաւատաց 'ի նա զգործս Վերակացու  
 թե՛ ամ աշխարհին՝ ցժամանակ իւրոյ  
 դարձին : Այս Խազ՝ յամբ նմանօղ ե  
 ղեալ Մեծին Ներսիսի, առաւել ևս՝  
 'ի տեսչութի՛ն աղքատաց . որոյ և շտե  
 մարանքն իսկ՝ ազրերացան սքանչելա  
 պէս, իբր առ Եղիայի, և Եղիսէի . և  
 'ի յանդիմանել զԱրքայ՝ ահաւորսսս

տիկ էր, և աներկիւղ: Եւ ոչ եղև կա-  
մադիւտ 'ի նմա Սատանայ, բայց՝ առ  
միոյ Նուագի, զի էր պճնօղ՝ առ հան-  
դերձս, և ձիասէր. զոր պարսաւեալ  
այպանէին փոխանակաբանեալ, որք 'ի  
նմանէ յանդիմանեալք լինէին. վասն  
որոյ՝ թողեալ այնուհետև զպերճա-  
գոյն հանդերձան՝ խարաղնազգեստ և  
զեալ՝ իշաւ շրջէր, մինջև ցօր մահ-  
ուան իւրոյ:

## Պրակ 32.

Եթէ որդե՝ Արշի հրճայեաց սարչել  
ւերձելէն շխտ՝ և սարիճել ըն-  
կուէր՝ սոխ յանդիմանութի ի-  
րոյ յանցանաց:

Ի եղև 'ի սատակել Արշա-  
կայ զազգն կամսարականց.  
հրամայեաց զգիակունս նց  
բարչել և ընկենուլ անթաղ  
կերակուր լինիլ շանց. և ինքն ույ մե-  
ծաւ յաղթութի պսակեալ՝ բարեկեն-  
դանութե կատարէր աւուրս. կուտել՝  
մթերել զնոցայն հրամայելով՝ համ-  
բարս. զորոց պեղեալ երկուց խորս  
յոյժ քաջախորս, և սաստկանց լայնս  
որ 'ի շինին Նախճաւանին բերին սայ  
լովք նոցին աւանի: Իսկ Սայրորդացն

տեսեալ զոսկերս մարդկան զաղանա-  
կուր եղևոց՝ ցրուեալս առ եզերք փո-  
սին . հարցեալ ուսան՝ իւրևանցն ի-  
նիչ Տերանց . հաւաքեալ ՚ի սայլան՝ ներ-  
քոյ եղևզանն , բերեալ Թաղեցին ՚ի  
նոյն խորս . զոր զգացեալ Արշակայ ,  
հրամայե՛ զՍայլորդան ՚ի վն խորոցն  
կախել զփայտէ : Բայց Խաղայ՝ ո՛չ պա-  
տահել յառաջնում նուագին , այսու-  
ժամու հասանէ . և սկսեալ կշտանրէ  
զԱրբայ՝ բանիւք յանդիմանուն : հրա-  
մայեաց Արշակ՝ քարշէլ զնա , և քար-  
կոծ առնել : Եւ քանզի՝ էին դասն-  
բաց նորա տագերք ՚ի մեծ նախարա-  
րութեցն , ՚ի կորովի՝ և ՚ի բաջ ազգէ-  
Ապահունեաց . սուսեր հանեալ կի-  
սախողխող զբարշոյան առնէին . և յափշ-  
տակեալ զԽաղ ՚ի ձեռաց նոցա . յի-  
րեանցն զնացին Գաւառ . և Արշա-  
կայ ո՛չ ՚ի հակառակս մտեալ զօղէր .  
զի մի խռովութիւնսմ Նախարարացն  
յուզեացի :



## Պատմ 33.

Յաղագս Ռաբակայի թերգութի Մեծի, և յաղագսն՝ որ ելև լուսն  
Հագեհարդին:

Այց վաղէսի կայսեր, ըստ  
Բարձրանի անօրէն իւրոց խոր  
հրդոց՝ զյախտնական գե  
հենին աստէն բերելով զօրի  
նակ, հրկէզ եղեալ յԱնդրիանուպոլիս՝  
սասակեցաւ. և ասնու զթագն  
Թեոդոս: Սա քակեաց զՄեհեանս  
կառցն՝ մինչև յասակս, զփակեալսն  
միայն ՚ի Սրբոյն կոստանդիանոսէ, զա  
նուանեալն՝ Արեղական, և Արտեմեայ,  
և Աթրոդիոնայ ՚ի Բիւզանդիոլս:  
սաւրեաց նոյնպէս՝ և զտաճարն  
Դամասկոսի, և արար Եկեղեցի  
նոյնպէս՝ և զտաճարն ՚ի Լիուքա  
զաքի, զԼիբանոսի՝ զՄեծ, և զՀռչա  
կաւոր շէրէք քարեանն: Սա դարձոյց  
զմեծ Հարս Սթս, որք յաղագաւ ուզ  
զափառութե՛ն արտասահմանեալք էին,  
և ՚ի Մեոաղս. Է որս և զՄեծն Ներսէս՝  
ածեալ առ իւր ՚ի Բիւզանդիոլս՝  
պահէ մեծաւ պատուով, մինչև ճշմար  
տութեն ստուղեցաւ հաւատ, որք յա  
ղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյ  
ութեցն: զի ո՛չ Տթ խոստովանէր բղ

Հողին Մը, և ոչ երկրպագելի՝ և փա  
 աւորեալ ընդ Հօր, և ընդ Որդւոյ .  
 Այլ՝ Օտար յԱյ բնութեն, և Սա  
 ցական, և Պաշտօնեայ, և Ազգումն  
 ինչ, և ոչ Էութի Անձնաւոր: Եւ ժո  
 ղովեալ Մի Հարքն՝ ի Թագաւորեալն  
 Բիզանդիոն . Դամասոս՝ Հոօնայ .  
 Ներտառիս՝ Կոստանդնուպօլսի . Տի  
 մաթէոս՝ Աղեքսանդրի . Մելիտոս՝  
 Անտիօքու . Կիրղոս՝ Եգիփ . Գրիգոր՝  
 Նիսիա . Բասիլիսոս՝ Կեսարու . Գրի  
 գորիոս՝ Նազիազու, Անթիււաքսիոս՝  
 յիկոնիու . և այլք Եպիսկոպոսք՝ միան  
 գամայն հարիւր և յիսուն Հարք, որք  
 նշովեալ մերժեցին զՄահեդան, և զս  
 մնայն Հոգեմարտս :

Պրակ 34.

Ամեայ երթալ Արշախայ -- Հոգոսհ, և  
 անբարէ լինել :



Արձեալ՝ պարապ առեալ  
 Հապհոյ ի պատերազմացն,  
 առաքէ ի վերայ Արշակայ՝  
 զԱլանայ Ողան սմն, Պալ  
 հաւիկ՝ հզօր գնդաւ, որ էր ազդակից  
 Արշակայ : Իսկ՝ Արշակ Թափուր ի  
 բազմացն մայր նախարարաց . որոց  
 ձեռն տուեալ Ալանայ Ողանն . կա

մաւ երթային առ Հապուհ : աաղտեկա  
ցեալք յիւրեանց Տեառնէն Արշակայ .  
և մեծարեալք 'ի Հապուհ' դառնային  
յաշխարհս մեր : Ուստի աարակուսել  
Արշակայ՝ յէ պատգամ առ իշխան զօ  
րուն Պարսից , եթէ դու արիւն իմ ,  
և հարազատութի , ինչ որ այդպիսեա  
վարեա զիս ջերմութի . թէպէտ՝ և ա  
կամայ զգարուստ քո գիտեմ , ոչ կա  
րացեալ տայթաքել զհրաման Հապ  
ուհ' գալ 'ի վր քո աղգականիս : Այլ  
արդ՝ թուլացո՛ւնն , զօղել ուրեք՝ վայր  
կեան մի ժամանակի , մինչև որ ի ա  
ռեալ կարացից անցանել յերկիր Յու  
նաց . և դու կայցես զաշխարհս , և  
բազմաց յինէն հանդիպիցիս բարու  
թեց , որպէս արդարև 'իմտերիմ Հա  
րազատե : Դարձուցանէ Ալանայ Ո  
զան Արշակայ՝ այսպիսի պատմութեանիս .  
ասէ , թէ դու ոչ ինայեցեր յաղգայ  
կեան մեր կամաարականան , որք առա  
ւել քան զիս կին քեզ հարազատա  
գոյնք , Դենի ձերոյ՝ մասամբ , և աշ  
խարհաւ համարմակաւ . զիսրդ յինէն  
ունիցիս ակն 'ի քեզ ինայել՝ հեռացել  
յինէն Դենի , և բնակութի . և ո  
րով օրինակաւ՝ ես 'ի քոյնս յուսալով  
բարիս , որ անյայտ է՝ թէ առից , ըզ  
գտեալսն յիմէ թաղաւորէն՝ կորու  
սանիցեմ : Ապա՛ այնուհետև Արշակ  
յոյժ նեղեաւ , յոչ կամաց երթայ առ



կաթեղէն շղթայիւք, և սոյ տանել  
յերկիրն խուժաստանի՝ Անյուշն կո  
չեցեալ բերդ. և զոր բազում դու  
մարեալ ՚ի ձեռն Մեհրուժանայ Ար  
ծրունայ, և Վահանայ Մամիկոնէի՝  
Ռերացողաց զԲԾ, արձակէ յաշխարհս  
Հայոց. որք եկեալ նստան շուրջ ըզ  
բերդան Արտազերից: Եւ Թեպէտ  
ս'չինչ կարէին առնել՝ զՍ անմատչելի  
ամրութեն. բայց՝ զի բարկութի Այ  
էր ՚ի վերայ Արշակայ, մարդիկք ամ  
րոցին ս'չ անսացին մեալ համբառն  
Պապայ. այլ անձնատուրք եղեն ՚ի կա  
մաց՝ և ս'չ ՚ի բռնութի. զորս գերեալ  
հանդերձ գանձիւք՝ Տիկնան փառան  
ձեմաւ, խաղացուցին յԱսորեստան.  
և անդ ընդ սոյլիցից հարեալ՝ սատա  
կեցին: ՚ի նմին ժամաւ՝ եհաս հրաման  
ի Հապհոյ Արքայէ, զի բանդեալ ա  
ւակրեսցեն զյսմ ամրութի բաղաքաց,  
և զՀրէայսն՝ խաղացուցանել ՚ի գե  
րութի, և զայն Հրէայսս, որք նս  
վին օրինօք կային ՚ի Վան, Տոսպայ.  
զորս անեալ էր Բաղափրանայ Ռըշ  
տունայ՝ յաւուրս Տիգրանայ. զորս բը  
նակեցոյց Հապուհ Ասպահան, Գե  
րեցին և զայն Հրէայս՝ որք Արտա  
շատ, և ՚ի Վաղարշապատ, զորս ա  
ծեալ էր նոյն Տիգրանայ Արքայի.  
որք յաւուրս Սրբոյն Գրիգոր, և Տեր  
գասայ՝ հաւատացեալ էին ՚ի ԲԾ. Է

որս՝ և զՉուիթայ Էրէց Արաաշա-  
տու : Ի՛նչ մատուցել առ Հապուհ Մեհ-  
րուժանայ՝ շարահօսեաց զՉուիթայ  
Իրիցու Արաաշատու, և թէ յայն սակս  
եկն ընդ գերեարն, զի խրատեսցի  
ընս՝ պինդ ունիլ զհաւատսն Քրիստո-  
նէութն : զի որայ՝ շարչարել զՉուի-  
թայ՝ հրամայեաց Հապուհ, զի թող  
ցէ զօրէնս Քրիստոնէութն : որում  
ս՛չ հաւանեալ՝ կատարեցաւ : Չայս  
ամ աղկտա թշուառութեան տեսեալ  
Արշակայ, Սաւուղարար անձինն ա-  
րար, որ թագաւորեաց ամս՝ 30 :

Պրակ 36.

Անչս ընդ Կէ լարեցն՝ որ ՚ի Մեհրուժ-  
անայ. և Իսգուստիէլ Պաղայ :

**Յ** Եւ մահուանն Արշակայ,  
գուժրեաց Հապուհ զօրբա  
զում ՚ի ձեռն Մեհրուժա-  
նայ՝ և արձակէ ՚ի Հայս, և  
ի նա հաւատայ զաշխարհս, և տուել  
նմա կին՝ զԵսթը Խը զՍրմզդուխտ, և  
Հրովարտակս րազումս շինից, և Իսս  
տակերաց ՚ի Պարսից աշխարհին : և  
խոստացաւ նմա տալ զթագաւորու-  
թին Հայոց, յիայն թէ զՆախարարսն  
նուանեսցէ, և ՚ի գէն Մազեզանց՝  
զաշխարհն դարձուցէ : որայ յանձն ա-

աեալ, և եկեալ զբազում Նախարարաց  
 կանայս կալեալ ՚ի բերդս տայր պահել,  
 զգարձարանցն յուսալով, և զնմ կարգ  
 Քրիստոնէութն ջանայր խափանել,  
 զԵպիսկոպոսունս՝ և զՔահանայս՝  
 հարկաց պատճառաւ՝ կասել, յերկիրն  
 Պարսից տայր տանել: Եւ զոր մանգամ  
 Գիրս գտանէր՝ այրէր. և հրաման տայր  
 մի՝ ուսանիլ զայրութի Յունարէն,  
 այլ Պարսիկ. և մի՝ իշխեսցեն խօսիլ  
 Յոյն՝ կամ Թարգմանել. այսպիսի  
 ինչ պատճառաւ՝ զի ամենեկն մի՝  
 լիցի Հայոց ընդ Յունի ծանօթութի  
 և հազարութի սիրոյ: Բայց ճրմարիտ  
 խափանել զՔրիստոնէութնն ուսումն,  
 զի յայնժամ Գիր Գարութն Հայոց՝  
 չեւս էր լեալ. և Յունա կանան՝  
 կարգք Եկեղեցոյ վարէին: Արդ՝  
 իբրև լուսա Մեծն Ներսէս ըզարփանս,  
 որք հասին ՚ի մի Հայոց, և զմահն  
 Արշակայ, աղաչեաց զինքնա կախ  
 Թեոզոս ինդրելով ՚ի նմանէ օրնական  
 ութի, և Թագաւորեցուցանել զՊապ  
 որդի Արշակայ: Եւ ընդ նմա գումարեաց  
 զոր բազում ՚ի ձեռն Սրբաւոր լատին  
 Մեծի՝ Տերինտիանոսի: և Մեծին  
 Ներսիսի՝ առեալ զնմ Նախարարն՝  
 որք կամակից էին ընդ Տերութնն  
 Պարսից՝ և որք ոչն. և զպրեալն  
 կանաւարական Սպանդարտո՝ մարան  
 ութի ածէ զՊապ յաշխարհս

Հայոց:

Հայոց : Եւ եկեալ զ ասնեն զամբարիչ  
 արն Մեհրուժան, պետացեալ կայն ալ  
 զաշխարհս Հայոց : և հալածական ա-  
 րարեալ յինքեանս Թափեն : Բայց  
 Մեհրուժան հրամայէ Պայկաղն՝ զընթի-  
 ղիցն պարսպաց կախել զկանայս Նա-  
 իարարացն՝ մինչև մռցին : և Թողու-  
 նայնպէս ՚ի կախաղանեն զշիակունան ,  
 զի լուծեալ անկցին զէջ՝ կերակուր  
 լինի Թռնոց :

Պրակ 37.

Յուզս եծի գորտընի՝ որ էլ է ՚ի Չի-  
 բու, և ոտսիտն սխորընի Մեհ-  
 բուժանայ :

 Ա զարարեալ Մեհրուժա-  
 նայ՝ յերկիրն Խորասանայ  
 առ Հապուհ՝ զնմ օգնակա  
 նութի Թեոդոսի, զոր ա-  
 րար առ Պապ : ելանէ հրաման ՚ի Հապ  
 հոյ նմ զօրացն Պարսից՝ երթալ ՚ի պա-  
 տերազմ ընդ Մեհրուժանայ ՚ի Հայս :  
 Դոյնպէս՝ ազդեն ինքնակալին Թեո-  
 դոսի՝ Պապ, և Տերենտիանոս զՀապ  
 հոյ՝ եթէ նմ զօրացն հրամայեաց ելա-  
 նել ՚ի վերայ մեր . քայ միայն ՚ի Դրան-  
 կացն : Ապա՝ և Օգոստոսն Թեոդոս  
 հրամայեաց Ազդէի Կոմսի Մեծի՝ եր

Թալ յօգնականութի Պապայ, առ նուր զմեզ զօրս Յունաց. ոչ զօր Թո զուր զօր ոչ ապե զկնի. այլ և՛ զՏե տեւակս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայս ունէին զվիշապս: Եւ խմբեցաւ պատերազմն 'ի դաշտին' որ կոչի Չիրաւ. և մատեան ճակատ՝ առ ճակատ: և Մանկունք քաղ Նախարարաց Հայոց՝ ինքնական նահատակելք՝ մտին 'ի մէջ ճակատուցն առաջնորդութի Սպարապետին իւրեանց Սմբատայ Ապետի՝ որդւոյ Բազարատայ, որ յազդէն Բազարատունեաց: Ելին՝ և 'ի զօրացն Պարսից համարիք նոցա, և խաղացին 'ի մէջ ճակատուցն, և ցիրք ընդ ցիրս լինէին: Եւ 'ի դառնալ Մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զՏեա նոցա. օրինակ իմն՝ ոչ փոթորիկ յանտառէ տեքեալթափաց. երազ՝ յերիվարացն առեալ նիզակօք՝ զի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նց յիւրեանց ճակատն մտանել: Իսկ յորժամ Պարսիկքն զմերն շրջէին. նոքա 'ի վահանափակն Յունաց՝ իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչինչ Քնաս առնելոյ: քանզի՝ այնպէս արար Քորդխանոս Իշխան հետեակ զօրուն. իբր պարսպօք պատեաց վահանօքն ըզ ճակատն Պապայ. քանզի զօրքն Յունաց վառեալ էին 'ի զէնս ոսկւոյ՝ և արծաթոյ. և երիվարք նոցա՝ նոյնպէս

զարդու : Եւ էր տեսանել իբր զսպ-  
 րիապ ինչ , յորոց յորովք 'ի ջլեայ' և 'ի  
 կաշեայ պահպանակաց զգեստուն ըզ-  
 կարծրութե' վիմայ բերէր երևոյթս .  
 և 'ի վերայ նոցա' անխալատ գէտքնը  
 շանս արձակեալք , իբր զսաղարթս ինչ  
 հովանաւոր ծառայ . բայց զվիշապացն  
 մանուածս' ասաղին բերանարացու-  
 թքուռուցեալ 'ի փմանէ օդոյն , ոչ ինչ  
 ուրեք կարեմ նմանեցուցանել , այլ  
 միայն' իբրև զլեառն ինչ անդաման-  
 զեայ' խոնարհիլ 'ի ծով զբովանդակ  
 ճակատն Յունաց , 'ի Պարսկական զօր-  
 սքն : քանզի' և զնս էր տեսանել որպէս  
 զհզօր ինչ զեա , առ 'ի կողմն' 'ի լայն  
 ծաւալեալ . արդարև' ջրադոյն զրա-  
 հազգեստացն բերէր զնմանութիւն :  
 Ասէ' իբրև ետես Մեծն Ներսէս զայն  
 Իօմ , ել նա' ի կատար լերինն Նպասայ ,  
 և ամբարձ զձեռն իւր յերկինս , ան-  
 խոնարհելի պահելով 'ի ինդրուածս'  
 հանգոյն Նախամարդարեկին Մովսի-  
 սի , մինչև պարտեցաւ երկրորդն Ամա-  
 ղէկ : Իսկ 'ի ծագիլ արեգականն ընդ-  
 դէմ մերոց զօրացն , 'ի պղնձապատ վա-  
 հանայն' նշոյլք զլերամբքն փայլատա-  
 կէին' իբրև յամպոյ մեծէ : և 'ի նոցա  
 նէ' 'ի դուրս ստալէին 'ի մերոց Նախա-  
 բարացն Քաջք զբահաւորք' սիւ փայ-  
 լատակացն ճառագայթք . յորոց 'ի տե-  
 սութե'ն միայն' զանդխտացեալ Պարս-

կական գունդ, սակաւ ինչ՝ և մերն,  
 վն ո՛չ կարել հայել ընդդէմ արեգա-  
 կանն ծագման: Իսկ ՚ի բաղնել զմե-  
 մեանս, եղև ՚ի վերայ հովանի ամպոյ,  
 և հողմ սաստիկ ՚ի մերոցն կուտէ՝ Է-  
 դէմ Պարսկականին փշեալ: և ՚ի խառ-  
 նակել մարտն, պատահե կամարա-  
 կանն Սպանդարատ խմբի մեծի, յո-  
 բում էր Քաջն Շերգիր՝ Ղեկաց Ար-  
 քայ: զգլուխն միջին գնդին՝ պնդու-  
 թք զտեղի ճակատուն կարեալ. և յար-  
 ձակեալ Սպանդարատ, և հերձեալ  
 զխումբն, ուն զանթաճար՝ յերկիր կոր  
 ծանէր զքաջն. և պատուեալ զխումբն,  
 ՚ի փախուստ դարձուցանէր: Եւ այսպս  
 ՚ի վերին օգնականութեն զօրացեալ,  
 առ հասարակ՝ զօրքն Յունաց, և Հայ  
 ոց՝ դիակամբք թշնամեացն լին ըղ-  
 դաշան ամ. և զմնացորդսն ամենայն  
 ՚ի փախուստ շրջեալ՝ հարածեցին: ընդ-  
 որս՝ և զՌուսնայր Աղուանից Արքայ՝  
 խոցուեալ ՚ի Մուշեղայ որդւոյ Վա-  
 սակայ Մամիկոնէի հանին ՚ի պատե-  
 րազմն: Բայց՝ ամբարշտին Մեհրու-  
 ժանայ վիրաւ օրեալ ձին, ո՛չ կարայ և  
 բազել ընդ փախուսեայսն. որում ա-  
 ճապարեալ՝ հասանէ Սպարապետն  
 Հայոց՝ Սմբատ, և զորս ընդ նմայն  
 էին՝ կուտրեալ, ձերբակալ առնէ ըզ-  
 վաաշուէրն՝ յեզեր շամբին կողատվ-  
 օի: և զմտաւածեալ, թէ գուցէ թա-

փիցէ զնա Մեծն Ներսէս , այնորիկ  
 ազագաւ ոչ ածէ 'ի բանակն . այլ ըզ  
 տեղեօքն դտանէ պատրաստական առ  
 'ի կուրուստ ամբարշտին՝ զովանս խո  
 բանաւորս՝ հօր լուցեալ , և շամխօր  
 երկաթի՝ միս խորովելոյ . զոր ջնուս  
 ցեալ՝ կրկնեաց բոլորեալ ուն պսակ ,  
 և յօյժ արտաշէկ արարեալ , առե . պը  
 սակեմ զքեզ Մեհրուժան . քանզի 'ի  
 ինզիր էիր թաղաւորել Հայոց . և  
 ինձ Ասպետիս՝ պարտէ զքեզ պսակել  
 ըստ սովորական իշխանութեանն իմոյ  
 Հայրենեաց : Եւ մինչդեռ՝ տաքն էր  
 երբև զհօր , և գ 'ի գլուխն Մեհրու  
 ժանայ . և այնպէս սատակեաց զւարն .  
 և յայնմհետէ խաղաղացաւ երկիրն՝ Է  
 ձեռամբ Պապայ նուանեալ :

Պրակ 38.

ԵՔԵ ԴԴԵ ՊԵԴԴ՝ ԴԵՂ ԿԿԵ ԱՐԲԵ  
 ՅԵԼ ՍԵՏԴՆ ՆԵՐԻԻԻԻ , Է ԵՆԺ  
 'Ի ԻՆԵՅ :



Իստ սպառելոյ պատերազ  
 մացն , և խաղաղանալոյ երկ  
 րն . Մեծն Ներսէս զնէր  
 վկայութի 'ի մէջ Արքայն  
 Պապայ , և 'ի մէջ Նախարարացն . զբ  
 րաւ յիմ ճանապարհս արդարութն .

զի վկայեսցեն՝ ըստ հաւատոց Քրիս-  
 տոնէութեն՝ և Գործքն . և զի Ար-  
 քայն՝ մի՛ Հօրն խրում նմանեսցի՛ ա-  
 նիրաւել, և զրկել . այլ վարեսցի ուղ-  
 զութի, հայրաբար խնամովք առ Նա-  
 խարարսն . և նոքա մի՛ ևս յաւելցեն  
 վտարանդել նշկահելով զնա . այլ ծա-  
 ոայել միամտութի : Յայնժամ Ար-  
 քայն Հայոց Պապ, զարձոյց ՚ի Կամ-  
 սարահանն Սպանդարատ՝ զամ ինչ, զոր  
 յափշտակեալ էր հօր խրոյ Արշակայ .  
 զԳաւառն Հիրակայ՝ և Աղարուննեց .  
 որ լեալ էին ազգին Կամսարահանաց .  
 ոչ իբրև զանիրաւ ադահութի հօր խ-  
 ռոյ Արշակայ . այլ իբրև պարզեա՛ ը  
 վաստակոց Քաջին Սպանդարատայ .  
 որ էսպան զՂէկաց Արքայն : Բայց  
 և զայլոց Նախարարայն զարձոյց Ըզ-  
 զրկանս, և յոյժ անընչաբար ցուցա-  
 նէր զիւր ախորժակս, և առատաբար  
 կեայր : Բայց՝ զի ամօթալի ախտի՛ զազ-  
 բազործ էր, և յանդիմանեալ կշտամ-  
 ըիւր ՚ի Մեծեն Ներսիսէ, ընդ ահամբ  
 հայեր նմա՛ խորհելով ՚ի շարիս, և ոչ իշ-  
 խէր յնքնակալէն Թեոզոսէ՛ յայտնի  
 ինչ առնել նմա շարութի . զեղ մահու՛  
 զազանի արբուցեալ Սրբոյն Ներսի-  
 սի, ելոյժ ՚ի կենցաղոյս . որ կարաւ  
 զԱթոռ Եպիսկոպոսութեն՝ անս է-  
 րեսուն և չորս : Ի՛ն փոխեալ յաշխար-  
 հէա՛ Երանելին Ներսէս, ՚ի Գաւա-

ոին Եկեղեց , 'ի Գեօղն' որ կոչի Խախ :  
 բարձեալ զմարմին նորա Աբբային Պա  
 պայ' Թաղեաց 'ի Թիլս յԱւանին , զան  
 իւրբար ունելով զեղեալն :

Պրակ 39.

Յուզոս առասիւղսիին Իսահայ , և  
 սղանան Պոպոյ 'ի Թեօրոսէ :

 Պա' տեսեալ Թաղաւորին  
 Պապայ' սղացեալ զամենայն  
 Հայս 'ի վր Երանելոյն Ներ  
 սիսի , հարկաւորեալ յու  
 ղեաց , և եղիս զոմն' յազգէ , և 'ի ժա  
 ոանդութէ Աբբանոսի , որու մանունն  
 Սահակ կոչուր' ոչ հեռի 'ի գոլութէ .  
 զոր կացոյց փոխանակ Ներսիսի , ա  
 ռանց Մեծի Աղեպիսկոպոսին Կե  
 սարու . որ կարաւ զաթոռն' ամս ք .  
 Բայց Պապայ լուեալ , եթէ Մեծն  
 Թէոդոս եւ 'ի Բիզանդիայ' 'ի Հռոմ  
 կոյս , և մտեալ 'ի Թեսաղոնիկ' հան  
 դերձ Սպայիւն . և յաղագս իջալա  
 նաց եղև իռովութի , ընդ նա' և ընդ  
 Քաղաքացիսն , և մարտ իռովու  
 թն . և յաղթեալ Ինքնալին , սատա  
 կեաց 'ի Քաղաքացեացն արս' տասն և  
 հինգ հազարս : Չայս լուեալ Պապայ  
 վարկուցեալ յերկարեալ այսպիսու  
 իռովութեան , արհամարհեալ նշկա .

հեաց. և գրգռեալ զնա՝ կորսեանն իւր, հարստեաց զՏերէնտիանոս հան դերձ զօրօքն, և սկսաւ պատրաստել ի պատերազմ: Եւ հասեալ հրաման ՚ի մեծէն Թէոդոսէ, ընդ կրունկ դարձաւ Քաջն Տերէնտիանոս. և ըստ իրում պատահման բախտի՝ յանկարծա կի անկեալ ՚ի բանակն. և զոմանս կոտորեալ, և զոմանս փախստեայս աւարեալ: ուր սաստկապէս նահատակեալ քաջութիւն՝ ընդդիմամարտ լինէր Գնէլ Նահապետն Անձաւացեաց, և Սպարապետն Պապայ՝ արեւելեայ զօրու. զոր յաղթողին Տերէնտիանոսի իրտիկ արարեալ կիսակտուր զգլուխ նորա. ըմբռնեալ զԹագաւորն զՊապ: և Պապայ յաղերս աղաչակաց անկել զի մի՛ մեռցի, այլ յանդիման լինիւ Արքայի. և քաջին Տերէնտիանոսի դժացեալ շնորհեաց նմա զմաղթանսն. և երկաթեղէն կապանօք՝ երթեալ առաջի Մեծին Թէոդոսի. ըստ իրում անդդամութեն՝ սակրաւ վճարի: Թագաւորեալ, ամս՛ եօթն:



Պրակ 40.

Յուզիս Բագասորելայն Վարազդատայ ,  
 և հարանայ նորին :



Այց Օգոստոս բարեացա-  
 պարուն թէոզոս՝ որ և մեծն .  
 'ի բաներորդի ակին իւրոյ՝  
 թագաւորեցոյց փոխանակ  
 Պապայ՝ զՎարազդատուն 'ի նմին Տոհ-  
 մէ Վրշակունեաց : Այս Վարազդատ-  
 էր տիօք Մանուկ , Սրտեայ , Անձ-  
 նեայ , Ուժեղ , Լի ան դործովք բա-  
 թութն , և յոյժ կարովի Նետանձու-  
 թի . որ 'ի ժամանակի՝ 'ի փախստենէն  
 Հասկոյ՝ զնայեալ 'ի դուռն կայսեր՝  
 նահատակեցաւ : նախ 'ի Պիտակս ըզ-  
 Բանամարտիկան յաղթեալ . դարձեալ  
 'ի Յարեզ քաղաքի Հելլագացոց , որ  
 հասարակի՝ կուտրեաց առ իւծս . որում  
 փառս Օլիմպիա խաղուն հանդիսի՝ Ըժ-  
 բշամարտիկացն երեի , և յարդի : այլ  
 որ առ աղդին Լանկուարտաց՝ նորա ա-  
 թութիւնք բաջութն , համարձակիմ ա-  
 սել հաւասար Սիջն Տրդատայ . քան  
 զի՝ զՏիմոզ Նահատական 'ի թշնամեացն  
 ընդդէմ իւր յարձակեալ՝ 'ի վերայ իրե-  
 րաց հապան սուսերաւ . և 'ի բերդ ինչ  
 զիմեալ՝ 'ի վր պատուարին արս եօթն  
 և տասն նետիւք հարեալ , վերուստ 'ի

վայր հասեաց՝ միմեանց զինի, իբր ՚ի  
 սաստիկ մրրիկ՝ վաղահասուի ՚ի թզե-  
 նեաց: Որ եկեալ յաշխարհս Քրիստի  
 սուն և ՚ի հինգ ամի Հայհայ, առաջին  
 մարտի պատահե Վաղակաց՝ ՚ի զըթ-  
 վարս Դարանաղոյ, և փախտեալ  
 արարեալ՝ հետամուտ լինէր: Իսկ նց  
 անցեալ ընդ նեղուց կամրջին Եփրա-  
 տայ՝ ընկեցին զփայտն զինի իւրեանց.  
 այլ նորս հասեալ՝ վաղեաց զԵփրա-  
 տա՝ առաւել քան զԼալոնացին Քիով  
 նեայ, վազն՝ 22. կանգնաց շափ: և  
 անդ էր տեսանել զոմն Աբիւլեա՝ ը  
 Սկամանդրոս զեա վաղելով. յորմե-  
 զարհուրեալ Վաղակացն՝ ՚ի ձեռս ան  
 կան, ղէն ընկէց լինելով: Յաղագս ո-  
 ղոյ՝ արեալ ՚ի մանկութե՛ն յարութե՛ն,  
 առ այսոքիւք՝ և ՚ի թագաւորութեան,  
 ո՛չ հնազանդէր իրատու Աերակացու  
 թե՛ն Զօրավարացն Յունաց: վն որոյ  
 առաքէ հրեշտակս առ Հազուհ, զժ-  
 տայցէ ՚ի դատերաց իւրոց՝ նմա կնու-  
 թե՛ն, և սա դարձուցէ առ նա զաշ-  
 խարհս Հայոց: զոր զգացեալ Զօրա-  
 վարացն Յունաց՝ ազգ առնեն կայ-  
 սեր: Իսկ կայսրն Թեոդոս՝ հրամայ-  
 եաց զնա ունիլ եթէ ո՛չ իւրովք կա-  
 մօք երթիցէ ՚ի կողն ինքնակալին: Սակս  
 որոյ՝ հարկեալ երթալ իւրովք կամօք,  
 յուսացեալ ՚ի սուտս հանել զՕգոս-  
 տոսն: Այլ կայսրն՝ և ո՛չ տեսուի

արժանի արար, այլ երկաթեղէն կապանօք՝ ետ տանել զնա՛ ՚ի Թուլիս կըր զի Ովկիանու : որ Թագաւորեաց ամս էր : Բայց յերկրորդ ամի Վարազդատայ, եկաց Եպիսկոպոսապետ Հայոց Չաւէն, ՚ի նոյն ազգականութի Աւրիանոսի, ամս՝ չորս :

Պրակ 41.

Թագաւորութի Սուրբ, և Վարդապետ Սուրբ :

**Պ**ա փոխանակ Վարազդատայ Թագաւորեցոյց Հայոց Թէոդոս Մեծ՝ զերկուս որ գիտն Պապայ, զԱրշակ՝ և զՎաղարշակ, այսպիսի ինչ խորհեալ. եթէ ոչ փարանեացին երկօրին յապըս տամբութի. և անդէն պահելով ըզ Մայր Մանկանցն, արձակէ զնս հան գերձ Վերակացուօք յինքենէ, արամբ հաւատարմօք, և զօրու : Որք եկեալ կալան զաշխարհս մեր, և տիրեցին սբ մա արիարար՝ մարտիբ ընդ Պարսս. և առին իւրեանց կանայս, Արշակ՝ զգուտար Բարկան Մունեաց Նահապետին. և Վաղարշակ՝ զգուտար Սահայ Ասպետի, որ ՚ի նմին ամի վախ Տանեցաւ : Բայց յերկրորդ ամի Արշակայ՝ եկաց Եպիսկոպոսութի Հայ-

ոց՝ Ասպուրարէս, ազգական Շահա-  
կայ, և Չաւենայ՝ ամս հինգ: Իսկ Մեծն  
Թեոդոս՝ ելեալ՝ ի պատերազմ՝ ի Մե-  
զուզանոն՝ հիւանդացեալ մեռաւ, թող  
լով զթագաւորութիւն իւր որդւոց իւ-  
րոց, Արկաղեայ՝ զԲիզանդիոն, և  
Հոնորեայ՝ զՀաստանս. որք ո՛չ գո-  
վելիք, և արժանիք Հայրենականացն  
զամն առաքինութեց:

## Պատկ 42.

Յ-ը-գ-բ-ձ-նեւոյ Հոյոյ ընդ երկու-  
՛ն յե-ն երկուց թ-գ-ու-ու-ոյն Ար-  
շի-նեւոյ, ի ձ-ու-ոյ-ն-ի եր-  
կուց Աւիոյ՝ Պ-ու-ոյ, և  
Յ-նեւոյ:

 Թացեալ Շահայ, եթե  
թերուզիչ է Արկաղ, իո-  
սեր ընդ նմա զխաղաղու-  
թիւն. բանզի՛ էր պար-  
տեալ՝ հարեալ ի Հորէն նորա՝ Մեծէն  
Թեոդոսէ: յանձն առնաւ և Արկաղ՝  
առնել զհաշտութի՛ն՝ առաւել յիւրոց  
Չորագլխացն. զի թեպէտ և էր յԱյ  
պարզ և եալ զյաղթութիւն՝ յամս կե-  
նաց երանելոյն Թեոդոսի, սակայն՝  
զորագլուխն վաստակեալ՝ ձանձրա-  
ցեալ լինէին յաշխատութե հանապա-

զորդ պատերազմացն : Վն որոյ՝ հա-  
ւանեալ՝ կամառ յանձնառին բաժա-  
նել զՄիջագետա, և զՀայոց աշխարհս՝  
կրկին սահմանադրութի : Վն որոյ՝  
Թողեալ Արշակայ զԲուն Թագաւո-  
րական Հարց իւրոց Արարատ, և  
զնմ մասն բաժնին Պարսից, զնաց  
տիրել արեւմտեայ կողմանց աշխարհիս  
մերոյ, որ ՚ի մասնի բաժնի Զունաց,  
ոչ մայն Մօրն ազազաւ՝ որ էր ՚ի կայ  
սերական քաղաքին, այլ լաւ համա-  
րեալ նուազ կողմանն Թագաւորել, և  
ծառայել Գրիստոնեայ Թագաւորի,  
բան յոլովից իշխել, և մասնել ընդ  
Թով Հեթանոսաց : Գնացին զկնի նր՝  
հանդերձ կանամբք, և որդւովք՝ և Նա-  
կարարութիւնք, որ ՚ի բաժնի մասինն  
Հայհոյ, Թողով զիւրաքանչիւր ա-  
րարս՝ և զզեօզս՝ և զգաստակերաս : Ը-  
որս զշարացեալ Հայհոյ՝ յդէ առ Ար-  
շակ, Թէ ի՞նչ գրգռեցեր զպատերազմ  
՚ի մէջ իմ, և կայսեր՝ տանելով զՆախա-  
րարութի իմոյ բաժնին : և պնտխանի  
լսէ Արշակայ, և Թէ՛ վն զի ոչ համբե-  
րէին ը Պարսիկ Առաջնորդաւ վարիլ  
եկին զկնի իմ. և արդ՝ և Թէ հաւատաս-  
յիս զմասինդ քո զիշխանութի, ոնկ և  
կայսր՝ զիւրոյս, պատրաստ եմ ՚ի պաշ-  
տել զքեզ՝ ոնկ զկայսր, ապա՝ և Թէ  
ոչ է հաճոյ քեզ այդ, և իւրեանց կա-  
մաւ՝ դարձցին առ քեզ Նախարարքս՝

նչ արգելում : Չայս լուեալ Շապ-  
հայ՝ թագաւորեցոյց, Չայոյ՝ ի վերայ  
իւրոյ բաժնին՝ զԽօսրով ոմն, ի նմին  
ազգէ Արշակունեաց, և առ Նախա-  
բարս իւրոյ մասինն, որ ելեալ էին  
զհետ Արշակայ՝ գրեաց շրովարտակ,  
որ ունէր զայս :

Թուշի Շոգոյ -- Նիւրուրու :

Սիւցաղանց՝ Քաջ Շապուհ, Ար-  
քայից արքայ, Նախարարաց Չայ-  
ոց, որոց կալուած՝ իշխանութն յիս  
բաժինս հասածս, ոչ ջոյն շատ շնոր-  
հեմ ձեզ : Թեպէտ՝ և ձեր ոչ ազատա-  
բար արարեալ՝ թողիք զիւրաքանչիւր  
իշխանութի, և ձեզ ոչինչ նիւազ էր,  
սակայն՝ ըստ տիրարար իմամոց զԹա-  
ցաք ի ձեզ, և յաշխարհս ձեր, զմտա-  
ածեալ, եթէ ոչ կարեն հօտք՝ առանց  
հովուաց լինիլ, և հովիւք՝ առանց բա-  
րւօք Աերակացուի . վս որոյ՝ թագա-  
ւորեցուցաք ձեզ զԽօսրով ոմն՝ ի Դե-  
նէ ձերմէ, և յազգէ բնիկ ձերոյ Տերու-  
թեզ : Արդ՝ դարձեալ ձեր՝ յիւրաքան-  
չիւր արարս իշխեցէք, ոսկ և պղծմ .  
երդուեալ ի հուր՝ և ի ջուր՝ և ի փառս  
անմահից իմոց Նախնեացն, զի առանց  
նենդութե, և պատրանաց արարաք  
զայդ՝ և անչրջելի պահեմք : Իսկ այնք՝  
որք ոչ լուիցեն մերոց հրամանաց, րդ



կաշուածս որդւոյ առ հայր, և ոչ զեղբօր յեղբայր: Բայց էին Ռմանք և ՚ի Նախարարացն, որք ունէին զիշխանութիս իրեանց ՚ի բաժնին Յունաց առ Արշակայ. և խնդրեցին զալ առ Խոսրով. ուն՝ Սահակ Ապուս, որ էր Անբ Աղաարշակայ՝ Եղբօր Արշակայ, ընդ որում ինթիւ հայեր Արշակ հանապաղ, հրապարեալ ՚ի կնոջէն իւրիւ: ուն թէ՛ զարդ արքունական ունիլ նմա՝ ՚ի փեսայէն իւրիւ ըստացեալ: Ապա՝ յայնժամ եղև քսութի գնմանէ սուս՝ յաղգականաց իւրոց ՚ի Սպեր Գաւառէ. վն որոյ շարեանց զնա Արշակ Արքայ, և անկեալ առ Խոսրով. և խորհրդակիցն նոն իրի՝ զարծակցեալ լինէին. Սարէն Խորխոռունի, և Վահան Առւելեան, և Աշխարհայ ոմն յաղգին Դիմակսնից: Բայց ՚ի զնալն նր՝ ոչ ժամանեցին նորա՝ խափանեալ ՚ի զօրացն Արշակայ, թարուցեալ զօրեցին ընդ կեղծաւորութենն առադաստաւ՝ սպասելով զիպօղ աւուր:



## Պրակ 44.

Ե՛կե՛ որդե՛ Գժօրեաց Խօրով շի՛նչ  
Աօդե՛ . և Նօհօսօնօնի՛ս Երբն՝ Ի  
Յեւրօւնի՛ ուղին՝ Վանօնդօցօց :

 Սկ' Խօսքով մեծանգոս ուրախ  
Ի եղև. Է գալն Սահակայ Աս  
պետի, և Սպարապետ զնա  
Ի վր զօրաց ի բոց կարգեաց.  
գարձոյց զնա՝ ի կաշուածս հայրենիս,  
և այլ աւանս՝ հանդերձ ազարակօք՝  
պարզ և եաց նմա յայնոցիկ ժառանգու  
ԹԷ՛ որք՝ ի բաժնոյն Պարսից, որ առ  
Արշակայ մնացին: Զայսու աւուրբբ՝  
Դմանք յազգէն Վանանդացեաց՝ ապս  
տամբ եցին ի Խօսքովայ, և ո՛չ յոք ա  
պաւինեցան, այլ ամբայան ի մայրիս  
Խրեանց լերանցն՝ և յանձուկս տայոց  
բարանց, յերուզակարար արշաւանօք.  
Երչեանու Թիւն երկոցունց Թաղաւո  
րացն Հայոց՝ խռովէին զաշխարհս՝ և  
անհանդ խաւապահէին: Յորոց ի վերայ  
չողաւ Սպարապետն Խօսքովայ՝ Սա  
հակ Ապետ, և զբազումս ինոցանեկ  
սատակեաց, և զբազումս փախաւեաց  
արար ի կողմանս Չորրորդ Հայոց . զի  
ո՛չ յերկիրն Խախաւեաց անկան ի Յոյնս  
ապաւինելով: և ո՛չ առ Թաղաւորն  
Արշակ անցին, այլ՝ իբր զաւաղակս

ամանս,

սմանս, որ ՚ի կողմանս Չորրորդ Հայոց  
էին, ՚ի սահմանս Սարուոց գիւմեցին՝ ա-  
պաստան տանել: Քանզի Վանանդա-  
ցիք՝ զաւազակութե գործ, մեծաւ ցան-  
կութիւն գործէին, ունեւորել իրք՝ օխոր-  
թելի թուէին նոց: Չորոց ձիւ գնէտ մը  
տեալ Սահակայ՝ վարէ յերկար, մինչև  
՚ի սահմանս Մանանաղոց:

## Պատմ 45.

Յուզո՛ւ Գուրո՛ւ սարսու՛ղ, Սուրենո՛յ՝  
Վանանո՛յ՝ և Աշխարհո՛ւյ՝ հանդերձ  
Գուրո՛ւ Արշակո՛յ:



Սարենայ խորխորենայ, և  
Վահանաց Առաւելենի, և  
Աշխարհայ Դիմակտնի՝  
գտեալ ժամ պատեհ, զի էր  
հանեալ զգանձն Արշակայ յամրոցէն  
յԱնայ՝ տանել յաշխարհն Ճուփայ -  
չոր յափշտակեալ՝ և կամեցեալ անցա-  
նել առ Սուրով, ո՛չ ժամանեցին: Քան  
զի՝ անապարեալ Սամուէլի Մամիկո-  
նի՝ մակրմի Արշակայ՝ յարվանն  
զնդաւ, զհետ հասեալ՝ փախստեայս  
արկանէր յայրս ինչ ամաւր, որ ՚ի Գա-  
ւառին Մանանաղոց: յոր մուտ ո՛չ  
գտանէր, բաց ՚ի կողմանէ՝ դոյնն ելք  
էին առ ՚ի թաւալ: և առաջի դրացայ  
բին՝ սեպեր ուղորդ մտապաղաղ: և ՚ի

վերուստ պաղ, անձաւ քուսար՝ որ  
 հայի յանդուեդս խորածորոցն. և որ  
 ինչ զերծանիցի՝ յահագին ուխտ սաստ  
 կուծն անկանի՝ անդադար հարուխմաճ  
 գլեալ, ո՛չ ուրեք գտանել սանկախի:  
 Ան որոյ՝ տարակուսեալ Սամուէլ՝ վա  
 րանէր առ անհնարուծն տեղեացն.  
 և ազդարարել Մրշակայ՝ հրամայեաց  
 արկղ գործել երկաթապատ, և քաջ  
 արանցն ինէրքս մտանել, և այնպէս՝  
 շղթայատող կարիւք իջուցանել վե  
 րուստ ի վայր՝ ի դուրս այրին. սա  
 կայն՝ և ո՛չ ոյն ինչ փասեաց. քան  
 զի՛ յոյժ ի բացեայ պահէր ջերդն: Եւ  
 մինչ զեռ՝ նորա յայնմ էին, լինէր իմն՝  
 ընդ իսրայէլացի բախտի՝ հասանիլ անդր  
 Սահակայ Ապեաթի՝ բովանդակ գըն  
 դան խոսրովայ. որով հետամուտ յե  
 լուզակացն էր, թողեալ զնն՝ գիսն ի  
 վի այնոցիկ՝ որք ընդ այրին մարանչէին.  
 և հաշտանկան արարեալ՝ հանէ զՍու  
 բէն, զԱահան, և զԱշխարադայն՝ հան  
 զերձ գանձիւք՝ փոյլիմ ընդ փոյլիմ հասա  
 նէ առ Արքայ: Իսկ խոսրովայ առնել  
 ի գանձուցն մասն հանէ Հապհայ. և  
 հրամայեալ՝ տալ զեօղս, և դատուա  
 կերտս ընտիրս՝ և յամուրս, յայնոցիկ  
 ի ժառանգութի, որք ի բաժնոցն Պար  
 սից մնացին առ Արշակայ: Եւ այս եղև  
 սկիզբն պատերազմի Արշակայ, և խոս  
 րովայ:

Պրակ 46.

Պատմութեան Արշակ գործեալ է խոր-  
տնի՝ Կիւսիսեացեալ Գրանի :

Իսպիտ՝ և ոչ եղևն ձեռն  
 Թ. Խորհրդայ, և Արշակայ՝ լի  
 նիլ զօրավիդն օգնականու-  
 թն՝ առ ի սալ ընդ միմեանս պատե-  
 րազմ, սակայն՝ և ոչ արգելին զնոսա.  
 և սպառեալ պատգամա որու թեանն,  
 և ժողովեալ Արշակայ զգօրս իւր, իս-  
 զայ ի վր խորհրդայ: Գնայ և խորհրդ  
 ի բանակէն իւրմէ առ եզր ծովուն Գե-  
 ղամայ, զոր Մօրան կոչեն՝ ընդ առաջ  
 Արշակայ, զի մի՝ ի սահմանս իւր իջ-  
 ցէ: և ոչինչ՝ աջնաթ ածապարեաց  
 սատակել, մինչև եզրս զԱրշակ է-  
 ղեալ միւր սահմանս՝ ի Գաւառին Աւ-  
 նանդայ. և պատահին միմեանց ի դաշ-  
 տին, զոր կոչեն Երևել: Եւ՝ տան ք  
 միմեանս պատերազմ սաստիկ յոյժ.  
 հարկանի զօրն Արշակայ. մեռանի և  
 Սպարապետն նր՝ Դարա Սիւնի ի պա-  
 տերազմին, և փախստական լինի Ար-  
 շակ սակաւութ. և զհետ մտեալ նորա  
 Քաջին Սահակայ Ապետին խորհ-  
 լայ՝ վարէր սաստկապէս: Ուրանօր՝  
 ահագին Կահատակութիս յուցեալ՝

Քաղաւո՞քն՝ որդւոյ Սպանդարտաց  
 բազում անգամ, դարձեալ յարձակ-  
 մամբ ցրուէր զհետամուտսն, և տայր  
 պարապ ժամ դնալոյ Արշակայ: Եւ  
 դարձաւ խոսրով ՚ի տեղի իւր, և դնաց  
 Արշակ յԵկեղէց, և հիւանդանայ Մա-  
 շարայական արտիք, քերանի հիւծ-  
 մամբ, Թագաւորեալ ան Հայոց՝ անս  
 հինգ. և կհոյն Հայոց, անս՝ երկուս  
 և կէս: Եւ այնուհետեւ՝ ոչ կացու-  
 ցին Յոյնք ՚ի բաժնի իւրեանց Թագա-  
 ւոր, այլ Առաջնորդ Նախարարաց  
 կողմանցն այնոցիկ՝ Քաջն Քաղաւո՞քն.  
 և աշխարհին իւրեանց մասինն՝ կացու-  
 ցին Յոյնք կովկաս՝ իշխանս:

Պրակ 47.

Յուզ-Էրան-Երան Մեքուլթոյ:



Եսեալ Թէ՝ ՚ի վերջ է հա-  
 սեալ ԹիգրուԹին Հայոց,  
 և զխոսովուԹին՝ նիւթ իւ-  
 րոյ համբերուԹէն գտեալ  
 Մեքուլթոյ, որ էր ՚ի Հացեկաց Տա-  
 րոնոյ, սնեալ և ուսեալ առ Մեծին  
 Ներսիսի. և յետ ելից նի յաշխար-  
 հեա ՚ի դրան Արքունի կարգեալ՝ Քար-  
 տուղար: Սա սիրեաց զսիայնակեցու-  
 ԹԷ վարս. ոսկ ասաց ո՞նն՝ Թէ ՚ի նա-  
 ւահանգիստ փուԹայ նաւ խոսովեալ:

և անձն յուժեղալ ինդրե զանապատ .  
 նոյնպէս՝ և նր փախուցեալ յաշխարհա  
 կան զբաղմանց , և ընկեցեալ յետս  
 զմարմնական պատիւն , զհետ ընթա  
 նայր երկնաւորին : և երթեալ ՚ի Գա  
 առն Գողթան՝ զփախեալեցուն վարս  
 տացեալ բնակի : Եւ որ ՚ի նմա զօրել  
 Աշանդն Հեթանոսական՝ Թարուցել  
 յաւուրցն Տրդատայ՝ մինչև յայն ժա  
 մանակս , և ապա յայտնեցաւ , ՚ի վաս  
 Թարել Թաւորութեն Արշակունեաց ,  
 զայն երարձ օգնականութիւն իշխանի  
 ՚ի աւառին՝ որում անուն էր Համբիթ :  
 որ նշանք Աճայինք լինէին՝ ուր առ  
 Արթուր Գրեգորի , հարածական լեալ  
 մարմնաւոր տեսլեամբ գւերն՝ անկա  
 նէին ՚ի կողմանս Մարայ : և ոչ ինչ  
 պակաս յայնցանէ արարեալ՝ գտանի  
 և ՚ի Սննեաց աշխարհին՝ ձեռնառու  
 Թի իշխանին , որում անուն էր Ազդի  
 նակ : Եւ ՚ի վարդապետել Երանեւրոյն  
 Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վասնգս ,  
 բանդի ինքն էր ընթերցող , և Թարգ  
 մանի . և եթէ այլ որ հանդիպէր՝ որ  
 ընթեանայր , որ նա ոչ լինէր , զան  
 իսալ ՚ի ժողովրդոցն լինէր , յազազս  
 ոչ լինելոյ Թարգմանի : Այս որոյ եզ  
 ՚ի մտի հնարս՝ գտանել նշանադիրս Հայ  
 ոց Լեզուիս . և արկեալ զանձն ՚ի ջան ,  
 պէտպէս հնարիւք տաժանիւք :

Պատկ 48.

Դորիս աւ խորով Նտորուցն՝ որս  
 էն աւ Արշուի :

**Տ**Եսեալ Նախարարացն Հայ-  
 ոց՝ եթէ ոչ կացուցին Յոյնք  
 'ի վրնց թագաւոր . և դըժ  
 ուար վարկուցեալ զանա-  
 աքնորդն լինել , խորհեցան կամաւոր  
 հնազանդ լինել թագաւորին խորո-  
 վու : Ամն իրի՛ դրեն առնա թուղթ  
 օրինակ զայս :

Ստրատելատ Գազաւոն , և նմ Նա-  
 խարարք Հայոց մասին Յունաց . Տն  
 մերոյ խորովայ Արքայի՛ կողման Այ-  
 րարատոյ խնդալ : Ինքնին՝ Տեր դիտես  
 զմիամտութի՛ մեր առ յիշեցեալ թա-  
 գաւորին մերոյ Արշակայ , զոր մինչև  
 ցօր վախճանի եր՛ անշրջելի պահեցաք .  
 և արդ՛ խորհեալ եմք , նոյնպէս ծա-  
 աայել քեզ միամտութի՛ , եթէ հաս-  
 տատեսցես առ մեզ դաշամբք՝ զերիս  
 զայստոսիկ : Առաջին՝ չիշել զյանցան  
 սըն , զոր պատերազմեցաք ընդ քեզ 'ի  
 հարկէ , և ոչ 'ի կամաց . Երկրորդ՝ զի  
 դարձուցես առ մեզ զամ ժառանգու  
 թիս մեր , որք 'ի մասին Պարսից՝ զոր  
 հատեք յարքունիս . Երրորդ՝ հանել ,  
 թափել զմեզ 'ի կայսերէ , զի մի՛ վրդո

վեացն զհնակութիւն մեր, որք ունիմք զիշխանութիւն յայտ բաժնի: Եւ զայս պայման ուխտի գրեալ և խաչ հարըս տեալ կնքեցես, զոր տեսեալ փութացուք ՚ի ծառայութիւն մեր: Ոչ լեր Տ՞ մեր: Գրէ և խորով պատասխանի:

Վաչ Արանց՝ խորով Հայոց Աբբայ, Սորատելատիգ Գաղաւսնի, և ամ Նախարարացո՞ղջոյն շատ: Ուրախ լերուք՝ զի մեր ողջ եմք. զի և մեր ուրախացաք ընդ լուր ողջունի մերոյ. և առաքեցաք ըստ խնդրոյդ մեր՝ զայս պայման ուխտի: Առաջին՝ շիշել զյանցանս մեր, զոր շունեաք առ յանցանս իսկ. այլ՝ առ երախտաորս զմիամտելն առ թագաւորին Արշակունւոյ՝ զոր պաշտեիքն, զոր և առ մեզ զնոյն յուսամք լինիլ: Երկրորդ՝ դարձուցանել ՚ի մեզ զժառանգութիւն մեր՝ զոր ունիմք յարքունիս, բաց յայնմանէ՝ զոր ումեք ումեք պարգևեցաք. զի ոչ շրջին պարգևք թագաւորաց առանց Քասու: Մանաւանդ ՚ի Դիւան Հօրն Մերոյ Տ՞ Հասկոյ Աբբայից Աբբայի՝ եմուտ. այլ՝ փոխանակ ընդ այնր յարքունուստ ըսուք, և զմերոյն պակասութիւն: Երրի՞ թափեմք զմեզ ՚ի գործակալաց Յունաց՝ թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ իսազաղութիւն: Եւ զքեզ Գաղաւսն՝ Ա-

րին իմ , և Հարազատութի . ո՛չ լի  
 վաղնջուց ազգահանութն , այլ ըստ ար  
 դեանս , որ ՚ի Մօրե քու հիկ Արշանու  
 շայ Արշակունւոյ , հաննլ զքեզ ՚ի Հայ  
 բննեց քոց կամսարականաց , և ՚ի Մայ  
 բննիս քոյ՝ իմս առեալ ազգ , Արշա  
 կունի անուամբ պատուեցից : Հայս  
 տեսեալ Գաղաւոնի՝ չ հօւալ զարձու  
 ջանե զքնաւ Նախարարան առ Ար  
 քայն խոսրով . և բարեբախտիկ ե  
 ղեալ՝ քաջախառութի հանգիպի ամ  
 ինդրոյն , և խոստմանցն : Բայց՝ Սա  
 մուիի Մամիկոնեի՝ յինքն ըմբռնեալ  
 զթուղթն խոսրովու , և զՊատճէն  
 թղթոյն Նախարարացն , զատուցեալ  
 ՚ի Նախարարացն՝ զնաց առ կայսրն  
 Արկադ . քանզի՝ եր սպանեալ նի ըզ  
 Հայրն իւր Վարդան՝ յաղթս ուրացու  
 թնն , և զՄայր իւր՝ Տաճատուհի .  
 և երկնելով ՚ի Պարսից՝ և ՚ի Բեռեաց  
 իւրոց Արժրունեաց , ո՛չ ՚ի Յունաց  
 իշխեր զատուիլ : Իսկ՝ Արկադ նմա բա  
 րիս արարեալ , հրամայե զհաւասար  
 թղթոյն՝ Հենդէն գրով ՚ի Դիւան իւր  
 զննլ , զի պահեսցեն յիշատակը ազգաց  
 ապատամբողաց , որկայ մինչև շայտօր :



## Պրակ 49.

Մտնտնէ Զայոց Խոսրովայ, և ունիւ  
 շախմատ Եղիշի-Պատմութի Մտնտն  
 Խոսրովայ:

Բրև տիրեաց Խոսրով ամ  
 Նախարարացն Զայոց՝ որոց  
 ցանկայրն. յդէ առ Արկազ,  
 և ինդրէ 'ի նմանէ հաւա-  
 տալ յինքն զմասն Յունաց՝ որ 'ի Զայո:  
 զորս շէն կալեալ՝ հարկիցեն տալ նմա  
 անսխալ, սպնորին Գործակալաց: Եւ  
 կասկածեալ Արկազեայ 'ի միաբանու  
 թէ Նախարարացն Զայոց, թէ միա-  
 բանութեամբ հատանիցեն 'ի նմանէ 'ի  
 Պարսա՝ զբաժինն զայն, կատարէ զիւրն  
 զիրան Խոսրովայ: Յետ այսորիկ՝ վախ-  
 ճանեալ Եպիսկոպոսապետն Ապու-  
 րակէս, 'ի տեղի նմ յաջորդէ Խոսրով  
 զՍահակ՝ որդի Մեծին Ներսիսի, որդ  
 ւոյ Աթանազիսի, որդւոյ Յուսկանն,  
 որդւոյ Վրթանիսի, որդւոյ Արքայն  
 Գրիգորի: Սա՝ ամ առաքինութի  
 Զարցն նմանեալ, աղօթից մասամբ ա-  
 ռաւելեաց: Քաղի՝ ստացաւ աշակեր-  
 տըս վաթսուն, ըստ նմանութե Մայ  
 բարաղաբացն Սպուդեից. Արք կրօ  
 նաւորք, Խարազնաղզեստ, Երկաթա-  
 պատր, Բոկաղնացք, որք յար ընդ նր

մա շրջէին . որովք մշանջնաւոր սրտ  
տամամբ կատարէր զկանոնն , որպէս  
զայնս , որք յանապատն էին . և հո-  
գայր զաշխարհս , ուն զայնս , որք յաշ-  
խարհի էին : Առ նա եկեալ Մեծոր-  
բայ՝ յաշխարհս Նշանագրաց Հայ-  
ոց , եղիս զնա առաւել փափագող  
այնմ . և յեա բաղում ջանից , և ոչ  
ինչ օգտելոյ , դարձեալ յաղօթն անդ  
ւինեալ՝ յԱյնդրելոյ : Եւ մեկնեալ  
ի միմեանց՝ գնաց Մեծորովք՝ ի դա-  
դարս իւր , և յանձն առեալ զխոտամ-  
բերութիւն վարուց , ճգնէին առաւել  
քան զկար :

Պրակ 50.

Կարգն խորհույ , և փութութիւն ըն-  
թուգն՝ Առն Հարգի եղբայրն :

**Այց** Հայուն էր ցատմամբ  
ընդ խորովայ՝ բարեկամա  
նախն Արկաղեայ անձամբ ,  
և յանհրաման կարգել յԵ-  
պիսկոպոսութիւն զՄեծն խոհակ . զի  
որոյ՝ յղեալ մեղադրութիւն՝ հանդերձ  
սպառնալեօք : Ըմբոսաացաւ խորով ,  
և խորհումամբ վէսական սրտաստիա-  
նեաց , և արձակեաց զՊատգամաւորն  
անարդանօք . և իսկոյն խօսեցաւ ընդ

Արկաղեայ, զի լուծեալ զհարաւ  
 թին ընդ Հայկոյ՝ օգնեցե՛ն նմա զօ-  
 րու, և սա դարձուցե՛ն առ նա զբոլոր  
 աշխարհս: Այլ Հայուհի՛ն հրապարե-  
 լոյ գուշակութի՛ն Նահապետաց մերոյ՝  
 նոյնհետայն առաքե՛ զԱրտաշէր զոր-  
 զի իւր՝ զօրու մեծաւ՝ ի Հայս. և ի  
 հրաժարել Արկաղեայ՝ ի կուսակցե-  
 լոյն Խոսրովայ, և ո՛չ զոր յօտար աղ-  
 քաց գտեալ ի սատարութի, անկարա-  
 ցեալ ընդդիմանալ, կամ խուսել ինք  
 մանէ՛ լողաւ առ նա: և Արտաշէրի  
 ընկեցեալ զնա ի Տերութեն, փոխա-  
 նակ կացուցանելով զՎառ՝ Հայուհի  
 զեղբայր նորին. ո՛չ զՄեծն Իսահակ,  
 և ո՛չ զոր ի Նախարարացն կարգեցե-  
 լոցն ի Խոսրովայ՝ վրդովեաց ի սպառ-  
 ուոյ իւրաքանիւրոյ: Նաև հրամայեաց  
 ևս՝ ընդ Յոյսս զնոյն կարգ ունիլ. և  
 թողեալ գունդ ստաւար, ինքն ի Տիւ-  
 բոն փութայր հասանիլ, ի ծերութե՛ն  
 Հօրն ակն ածեալ. ընդ իւր ունելով  
 զԽոսրով, զնել Անուշն կոչեցեալ  
 բերդին. որոյ թիւորեալ ամս՝ հինգ:  
 Ընդ նմա տարեալ՝ և զԳաղաւոն կապա-  
 նօք, կասկածեալ յառնն քաջութե՛ն.  
 և զտուն նր՝ ունիլ յարբունիս. նոյն  
 պէս՝ և զեղբօր Հաւարչայ, և զՊար-  
 դեայ Ամատունոյ. քանզի զինուո-  
 րօք նկատեալ՝ որսացան զյաջողութի  
 ժամու՝ ի ճանապարհի կարաւանին զեր

ծուցանել զԱրքայն իւրեանց Խոս-  
րով . և ոչ արողեցաւ ՚ի պարաւանդե-  
լոյ ստից նց շղթայս . և հզօր մարտի  
եղելոյ՝ սպանան Հաւարչ, և Ման-  
ուէլ՝ որդի Պարզեայ, և բազումք է-  
նն : Իսկ Պարզեա՝ ՚ի կապանս ընդ-  
նեալ ածաւ առաջի Արուաչրի . և տիկ  
տեսակագործեալ ուսուցմամբ, հրա-  
մայեաց զնել առաջի Խոսրովայ հանա-  
պաղ :

Պրակ 51.

Երբ Մեծն Իսահակայ ՚ի Տեֆն, և  
Երբ Գծ-բանս և գործով :

**Մ**ԱՐՐԵ թմանք՝ և Երևելիք Ա-  
**Ս**աղինք՝ ՚ի Նախարարացն՝ և  
՚ի Վարդապետաց աշխարհիս՝  
լուսաւորութի պատճառք՝  
որդեծնութի իջել ցՄեծն Իսահակ-  
գագարուն եղև ուստերաց նր . ունե-  
լով գուտար մի Իսահակ՝ Անոյշ ա-  
նուն, որ սուսա յամուսնութի Հա-  
մազասպայ Մամիկանի . և ՚ի մեռանիկ  
Քարին Իսահակայ Սպարապետի, ՚ի  
տեղի նր աղաչէր Սրն Իսահակ՝ կար-  
գել զնա Խոսրովայ Արքայի, և զկնի-  
կապանաց նր, եղբօրնր Վառմ Հայ  
հոյ : այլ սա հրատարէր՝ առանց հրա-

մանաց Արքայից Արքայի՛ առնել զայն.  
 յիշելով՝ եթէ սակս այսպիսեաց իրաց  
 կրէ զվիշտս եղբայր նր խոսրով: Այս  
 որոյ՛ առեալ՛ ի նմանէ թուղթս, ի թա  
 խանձէ լոյ Գստերն նորին, չտգաւ առ  
 Արտաշիւր Պարսից Արքայ: (որ յետ  
 եօթանասնամեայ թագաւորութեան  
 Հօրն՛ կալաւ զթագաւորութիւն՛ ամս  
 տրս) և մեծարի՛ ի նմանէ յոյժ. նախ՛  
 վասն Քաջատոհմիկ ազգին Պաշտա  
 կաց. դարձեալ՛ զի և առաջի անհաւա  
 տից՛ Զարդոյ և Պատուական ցոռցա  
 նէ Աճ զժառայս իւր: որոյ զքնան կա  
 տարեալ զի՛նչ իրան. նախ՛ վս՛ փեօայի  
 նր Էամազասպայ. և դարձեալ՛ վս՛ մե  
 զուցելոյ նմա ազգացն Կամաարական  
 և Ամատունի, որք սուղեալք՛ զուղեալ  
 էին յանյայտ տեղիս: Ասան որոյ՛ մազ  
 թեաց զթալ. իբր Աճային հրամանէ՛  
 ոչ համարել որդւոց զյանցանս հարց.  
 մանաւանդ՛ զի և հարքն. որք մեղանն.  
 նսքին սակս այնր՛ և մեռանն. որոց  
 մնացելոցն պարզեկեաց զկեալ: Հրա  
 մայեաց՛ զտունս իւրաքանչիւրոցն ըլ  
 կալեալն յԱրքունիս՛ դարձուցանել  
 ինն. բայց միայն՛ ի դահ Հայրենի ոչ  
 հաստատել, այլ իոնարհ քան զընմս  
 մատուցեալ Նախարարս ի Գահս կր  
 սերադունից պատրաստել: իսկ զազգն  
 Էամազասպայ՛ որ է Տոհմ Մամիկո  
 նեան՛ ի վեր մատուցանել, զի կարգի

ցին սննիլ զհինդերորդ գահ՝ Նախարարացն Հայոց . և ՚ի Գիւճանի իւրում գըրել : Չի զայս զերկուս՝ այսնդս պահէին սովորարար , զի յորժամ նստէր Արքայն , որնոյն ժամայն փոխէին զգրամ գտեալ ՚ի գանձս Արքունի՝ զնորայն տալաւ արելով Պատկեր . և զցիր Գիւճանին՝ յայլ փոխեալ նորա անուամբ՝ սուղ ինչ զանազանեալ՝ ոչ բառնալով զՀինն : Իսկ՝ Եթէ յամեացէ ՚ի Տերութեն ամս բաղումս , և արասցէ աշխարհադէր նոր , Թողուն զայն՝ որ ՚ի Հընոյն փոխեցաւ , զի միայն նորոյն վերադրեացի անուն : Արդ՝ Արտաշէր՝ ոչ ժամանեալ ՚ի կարճութեւ անուրջն յայլ աշխարհադէր , ՚ի յայնմ՝ որ յառաջնոցն փոփոխեաց՝ իւր անուամբն հրամայեաց գրել զայն ան , և սալ գահու , և պատուոյ՝ հանդերձ իշխանութի գիւղից , և դատասկերտաց Համազասպայ , և որում ցանկայրն զԱպարապետութիւն Հայոց . Հրովարտակառ Առամ Հապուհ մեր Թագաւոր՝ գրել զայս :

Սազգեզանց Քաջ Արտաշէր՝ Արքայից Արքայ . առ եզրայր Առամ Հապուհ՝ Թագաւոր Հայոց , ողջոյն շատ : Ընկալայ զգրեալս՝ որ ինչ վն Եպիսկոպոսիս Իսահակայ . և յիշեցի զերախտիս Նախնեաց Հարցն գորա՝ որք էին Նահապետր Սուրենեան Պալհաւայ :

և կամաւ յմեծն առին զՏերութի իմոյ  
 Նախնւոյն, և Համանունն Արտա  
 շարի. և այնչափ սիրեալ զնա քան զիւ  
 րեանց ազգայինսն, մինչ զի՝ ոչ շատա  
 յան միայն ՚ի Պարսից աշխարհիս մարտն  
 յիւ ընդ նմ, այլ և ՚ի ձերդ եկեալ՝ նո  
 րին աղաղաւ, սպանին զԽոսրով քո  
 Նախնին. և զտոյժ սպանութնն իւ  
 րեանց հատուցին մահուանք: Իսկ՝  
 որդի սպանողին Գրիգոր՝ զկեանս, և  
 զվճագարութի կուրուսեալ հիւան  
 դութք հրդատայ՝ վերստին ետ իւ  
 րով բժշկութք. և առաւել առ ձեզ  
 Երախտար. վն որոյ՝ զորդիացեալ  
 դմա զՀամազասպ կացուցես ՚ի վն զօ  
 րացդ Սպարապետ, մեր հրամանաւ.  
 և ազգի դորա տացես զԳահն հինգ  
 երորդ պատուոյ Նախարարացդ. և  
 զգնօզ՝ և զդաստակերտս, զոր տունել  
 է Նախնեաց քոց՝ Հարց գոջա, կալ  
 ցին գոջա. սապէս՝ և զտունս Քա  
 սակարացդ աղգաց, զոր կալար յար  
 քունիս՝ Թողես ՚ի բաց, աներկիւզա  
 բար ժառանգել նոցին մնացորդաց.  
 բայց՝ Գահու Հայրենականաց պատ  
 ուոյն՝ մի՛ արացես արժանի. զի և  
 մեր ՚ի մերում Գիւանի՛ հրամայեցար  
 գրել. ո՞չ լեր: Բայց յորժամ եկն  
 Մեծն իսահակ, և զմմ պարզեւեալսն  
 ՚ի Արտաշիէ հաստատեաց, մեռաւ  
 Արքայն Արտաշիւր. և փոխանակ նր

Թագաւորեաց Վրամ, որ և Կրմանն  
 կոչեցաւ՝ ամս տասն . և զնոյն բարե-  
 կամութի կալաւ ընդ աշխարհիս Հայ-  
 ոց, և ընդ Թագաւորին մերոյ՝ Վրամ  
 Հապհոյ, և ընդ Մեծին իսահակայ .  
 և էր իսողազութի՝ ի մէջ Վրամայ, և  
 Արկաղեայ: Եւ Վրամ Հապուհ՝ ունէր  
 զաշխարհս մեր, և ծառայէր Թագա-  
 ւորացն երկոցունց՝ տալով պէտքս .  
 զմասինն Պարսից՝ Վրամայ . և զմա-  
 սինն Յունաց՝ Արկաղեայ:

Պրակ 52.

Յ-Լ-Գ- Դ-Ե-Ի-Ե-Թ-Ն-Ն-Լ-Ն-Գ-Բ-Գ-Ն-Ի:

 Այնմ ժամանակի հիւանդա-  
 Յ ցեալ Արկաղ . և շարժմանց  
 ասագնից, և հրկիզութեց  
 եղեալ ի Բիւզանդիոն՝ որ  
 յազնս Մեծին Յոհաննու, շիտեւի  
 լինէր Թագաւորութին Յունաց, և  
 զօրքն ընդ միմեանս պատերազմին՝ և  
 ընդ Պարսիցն: Այս որոյ՝ Վրամ հրա-  
 մայեաց՝ Վրամ Հապհոյ մերում Թա-  
 գաւորի, իջանել ի Միջագետս, զի  
 իսողազացուցեալ կարգեսցէ զնոսս .  
 և համար երկաքանչիւրոցն՝ հասցէ  
 Գործակարաց: Եւ իջեալ նի՝ և կար-  
 գեալ զայս ամ, ոչ փոքր ինչ կրէ աշ-  
 իսս:

Իսաաու թի՛ յաղագս Քարաուզարի, զի  
 մինչև դնաց Մեարօք յարքունական  
 գրանէն, ո՛չ որ ՚ի Ճարտարաց գտա-  
 նիւր անդ ՚ի Իպրաց, քանզի՛ Պարս-  
 կականաւ վարէին գրով: Վն որոյ՛ մա-  
 տուցեալ ոմն առ Արքայն Հարէլ ա-  
 նուն կոչեցեալ, խստամայր Հայկա-  
 զանցս առնել Նշանագիր Լեզուացս,  
 յարմարեալ Դանիելէ Եպիսկոպոսէ  
 յիւրմէ մերձաւորէ, զորով անխոյժ  
 արարեալ Արքայի. և ելեալ ՚ի Հայս՛  
 գտանէ ժողովել առ Մեծն Իսահակ,  
 և Մեարօք՛ զԵպիսկոպոսունս ամ, հո-  
 գաւ զգիւտ Իպրու թէ՛ Հայոց. զոր  
 Արքային զգացուցին, և նա պատմեաց  
 զասացեալսն Վանականին. զոր իբրև  
 լուսն, թախանձէին դնա՛ փոյժ զայն  
 պիտեացն առնել պիտոյից: Վն որոյ ա-  
 ռաքեաց հրեշտակու թի՛ զայր մի՛ Պա-  
 տուական յաշեարհիս, և հաւատարիմ  
 իւր՛ Խազունի ազգաւ, Վարճիճ ա-  
 նուն, յոյժ փափագող նորին գործոյ՛  
